Արման Հակոբյան

ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ

MODERN HEBREW

by

Arman Akopian

Ֆ-17
Հշ

Արման Հակոբյան

ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Երկրորդ, լրամշակված հրատարակություն

6412

ԵՐԵՎԱՆ «ՎԱՎ-ՊՐԻՆՏ»
2019

ՀՏԴ 811.411.16
ԳՄԴ 81.2
Հ 177

Հաստատված է ՀՀ գիտության և կրթության նախարարության կողմից որպես դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների արևելագիտության ֆակուլտետների ուսանողների համար

Հակոբյան Արման
Հ 177 Արդի եբրայերեն/ Արման Հակոբյան.- Երկրորդ, լրամշակված հրատարակություն.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2019.- 596 էջ:

"Արդի եբրայերեն" դասագիրքն Իսրայելի պետական լեզվին նվիրված առաջին հայալեզու ձեռնարկն է: Այն բաղկացած է ներածական յոթ և հիմնական ութսուն դասերից, որոնք մատուցում են լեզվի հիմնական քերականությունն ու առավել գործածելի բառապաշարը, պարունակում են մեծ թվով տեքստեր և լեզվական հմտությունները զարգացնող ու ամրագրող վարժություններ: Դասագիրքը պարունակում է նաև քերականական աղյուսակներ, եբրայերեն-հայերեն և հայ-եբրայերեն բառարաններ, ինչպես նաև եբրայերեն լեզվի պատմության համառոտ ակնարկ: Նախաբանում զետեղված են մեթոդաբանական բնույթի պարզաբանումներ ու խորհուրդներ:

Դասագիրքը հասցեագրված է բուհերի արևելագիտական ֆակուլտետների ուսանողներին և սեմագիտությամբ զբաղվող լեզվաբաններին, սակայն կարող է օգտագործվել նաև եբրայերենն ինքնուրույն ուսումնասիրելու համար:

Դասագրքի առաջին հրատարակությունը լույս է տեսել 2003 թվականին:

ՀՏԴ 811.411.16
ԳՄԴ 81.2

ISBN 978-9939-60-573-9

© Հակոբյան Ա., 2019
© ՎՄՎ-Պրինտ, 2019

Բովանդակություն

Առաջին հրատարակության նախաբանից 1
Երկրորդ հրատարակության մասին 6
Երբայերենի պատմության համառոտ ակնարկ 7

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Դաս Ա 31
Ընդհանուր տեղեկություններ եբրայական գրի մասին

Դաս Բ 33
Ձայնավորներ և ձայնանիշներ *(կամաց, ցեռե, խոլամ)* – Բաղաձայններ *(ալեֆ, բեթ, գիմել, դալեթ, հե)* – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Գ 38
Ձայնավորներ և ձայնանիշներ *(պաթախ, սեգոլ, խիրիկ, կուբուց)* – Բաղաձայններ *(վավ, զային, խեթ, տեթ)*

Դաս Դ 42
Բաղաձայններ *(յոդ, քաֆ, լամեդ, մեմ)* – Ձայնանիշներ (համր *շվա*) – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Ե 47
Բաղաձայններ *(նուն, սամեխ, ային, պե)* – Ձայնանիշներ *(խատաֆ-պաթախ, խատաֆ-սեգոլ, խատաֆ-կամաց)* – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Զ 52
Բաղաձայններ *(ցադի, կոֆ, ռեշ, շին, թավ)* – Ձայնանիշներ (ձայնեղ *շվա*) – Շեշտադրում – Քերականական ներածություն

Դաս Է 59
Ամփոփում և լրացուցիչ ծանոթագրություններ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Դաս 1 67
Գոյական անվան սեռը – Ածական անվան սեռը – Դերանուններ – Շաղկապներ – Այլ ծանոթագրություններ – Տեքստ – Թարգմանություն

Դաս 2ա 72
Գոյականների և ածականների հոգնակի թիվը – Հոգնակի թվի հատուկ ձևեր – Հոգնակի թվի անձնական դերանուններ – Հոգնակի թվի ցուցական դերանուն

Դաս 2բ 76
Դերանվանական վերջածանցներ – ך կցական շաղկապի հնչյունափոխությունները – Նախդիրներ – Տեքստ – Թարգմանություն

Դաս 3ա 82
Որոշյալ առում և որոշիչ հոդ

Դաս 3բ 85
Ցուցական դերանուններ – כָּל բառը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ – Թարգմանություն

Դաս 4 90
Հոգնակի թվի դերանվանական վերջածանցներ – שֶׁל ստացական նախդիրը – בְּ նախդիրի գործածությունը որոշիչ հոդի հետ – Տեքստ – Թարգմանություն

Դաս 5 95
ל նախդիրը – Անուղղակի դերանուններ – Ստացական դերանուններ – מן նախդիրը – Անականների համեմատական աստիճան – Թվականներ – Այլ ծանոթագրություններ – Տեքստ և երկխոսություն – Թարգմանություն

Դաս 6ա 103
Բայական արմատներն ու նրանց տեսակները – Բայական կառույցներ – פְּעַל կառույցը – Անորոշ դերբայ

Դաս 6բ 107
פְּעַל կառույցի բայերի ներկա ժամանակը – 2-րդ կոկորդային արմատականով բայերի ներկա ժամանակը – 2-րդ «թույլ» արմատականով բայերի ներկա ժամանակը – Ուղղության արտահայտման ձևերը – בְּ և ל կցական նախդիրների հնչյունափոխությունը – Մակբայներ – Թվականներ – Շարահյուսական ծանոթագրություններ – Այլ ծանոթագրություններ – Տեքստ և երկխոսություն – Թարգմանություն

Դաս 7 115
לא խմբի բայերը פְּעַל կառույցում – לה խմբի բայերը פְּעַל կառույցում – צִיר ածականը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ שרה ודניאל – Երկխոսություն סטודנט ומורה – Թարգմանություն

Դաս 8 119
Բայական ծանոթագրություններ – Քանակական թվականներ – Շարահյուսական ծանոթագրություններ – שׁ հարաբերական շաղկապը – Այլ ծանոթագրություններ – Երկխոսություն דניאל ושרה ברחוב – Երկխոսություն שיחה בטלפון – Թարգմանություն

Դաս 9 125
Բայական ծանոթագրություններ – Դասական թվականներ – כַּאֲשֶׁר ստորադասական շաղկապը – Հորդորման արտահայտում – Տեքստ היום הראשון של שרה במשרד החדש – Երկխոսություն איש חולה – Թարգմանություն

Դաս 10 130
פִּעֵל կառույցը – Բայակերտ գոյականներ – Արական սեռի քանակական թվականներ – Կցական նախդիրների հնչյունափոխությունը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ כביתי־קפה – Թարգմանություն

Դաս 11 136
Երկու սեռերի թվականների ամբողջական ցանկ – «Երկու» թվականը – Տարիքի նրքումը – בְּ և ל կցական նախդիրների հնչյունափոխությունը – Տեքստ המשפחה של אהרון בוראי־שוה – Թարգմանություն

Դաս 12 140
Կապակցված վիճակ – Դերանվանական վերջածանցներն իգական սեռի գոյականների հետ – Երկխոսություն דירה בתל־אביב ובית בעיר קטנה – Թարգմանություն

Դաս 13 147
Բառատառ բայեր – כּוֹל պակասավոր բայը – אֶפְשָׁר մակբայը – Այլ ծանոթագրություններ – Երկխոսություն דירה למכירה – Թարգմանություն

Դաս 14 153
הִפְעִיל կառույցը – Խնդրառական դերանուններ – Երկակի թիվ – «Այն» ցուցական դերանունը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ ארוחת־צהרים במסעדה – Երկխոսություն הם לא אוהבים אותי – Թարգմանություն

Դաս 15 160
נִפְעַל կառույցը – פִּעֵל կառույցի հարակատար դերբայը – Այլ ծանոթագրություններ – Երկխոսություն לאה צריכה רהיטים – Երկխոսություն בדיחה ישנה – Թարգմանություն

Դաս 16 165
Ազգություն նշող ածականների և գոյականների հոգնակի թիվը – Տեքստ ראובן אוהב את ירושלים ודינה אוהבת את תל־אביב – Թարգմանություն

Դաս 17 169
Անցյալ ժամանակ – ע״ו և ע״י բայերն անցյալ ժամանակում – הִפְעִיל ע״י և ע״ו բայերը կառույցի ներկա ժամանակում – הָיָה բայը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ אהרון בבית ובעבודה – Թարգմանություն

Դաս 18 177
פ״נ բայերը הִפְעִיל կառույցի ներկա ժամանակում – Կոկորդային արմատականներով բայերի խոնարհման առանձնահատկություններն անցյալ ժամանակում – Տեքստ המכתב של שושנה – Տեքստ דירה בקומה שלישית – Թարգմանություն

Դաս 19 181
נָתַן բայն անցյալ ժամանակում – Երկրորդ տասնյակի քանակական թվականների ամփոփիչ ցանկ – Այլ ծանոթագրություններ – Տեքստ אהרון, פרופסור קרן והאחות רחל – Թարգմանություն

Դաս 20 184
יֵשׁ לִי - אֵין לִי – կապակցություններն անցյալ ժամանակում – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ האם והילדים – Թարգմանություն

Դաս 21 188
כַּאֲשֶׁר – Գույն նշող ածականները – Թվականներ – Հարաբերական շաղկապի կրճատ ձևը – Այլ ծանոթագրություններ – Երկխոսություն՝ גברת עם סלים – Տեքստ՝ הרהיטים של רבקה – Թարգմանություն

Դաս 22 194
Բայի կառույցի բայերն անցյալ ժամանակում – Հոգնակի և երկակի թվի վերջավորությունները կապակցված վիճակում – כָּ նախդիրը դերանվանական վերջածանցներով – Մասնագիտություն նշող բառերը – Տասնավորներ նշող թվականներ – Տեքստ՝ טיולי שבת – Թարգմանություն

Դաս 23 200
Երկխոսություն՝ השכנים החדשים של משפחת בן־אליעזר – Թարգմանություն

Դաս 24 204
Բայի կառույցը – הִתְפַּעֵל կառույցում – הִתְפַּעֵל կառույցի բայերն անցյալ ժամանակում – Շաբաթվա օրերը – Տեքստ՝ מדוע הם התעוררו כל־כך מוקדם? – Երկխոսություն՝ כשאני מתעורר – Թարգմանություն

Դաս 25 210
Դերանվանական վերջածանցները նախդիրների հետ – Տեքստ՝ שרה ולאה מבקרות בחנויות – Երկխոսություն՝ אצל מוכר מכוניות – Թարգմանություն

Դաս 26 213
Բայերը פִּעֵל կառույցում – Տեքստ՝ ימים באילת – Թարգմանություն

Դաս 27 217
הִתְפַּעֵל կառույցը – Տեքստ՝ דוקטור אביגדור קרן ודודתו – Թարգմանություն

Դաս 28 220
Գոյականների թիվը 10-ից բարձր թվականների հետ – Տեքստ՝ דוד מרדכי מקבל מכתב – Թարգմանություն

Դաս 29 223
Հարյուրական թվականները – Սմիխության կայուն կապակցությունների հոգնակի թիվը – Տեքստ՝ בגמל התעופה – Թարգմանություն

Դաս 30 226
Բայերը הִפְעִיל կառույցում – כָּ կցական նախդիրը – Այլ ծանոթագրություններ – Երկխոսություն՝ האופטימיסט והפסימיסט – Թարգմանություն

Դաս 31 230
Բայերը הִפְעִיל կառույցում (շարունակություն) – הִפְעִיל կառույցի բայերն անցյալ ժամանակում – Անուղղակի և ուղղակի հարցադրում – אֶרֶץ բառի առանձնահատկությունները – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ מה כותבות הבחורות במכתבים? – Թարգմանություն

Դաս 32 235
Բայերը פִּעֵל կառույցում – Բայական այլ ծանոթագրություններ – Ածականների դերադրական աստիճանը – Հապավումներ – Հազարական թվականները – Դասական թվականների ամբողջական ցանկ – Այլ ծանոթություններ – Տեքստ՝ דוד ובת־שבע – Թարգմանություն

Դաս 33 240
Ապառնի ժամանակ – פִּעֵל կառույցն ապառնի ժամանակում – Քառատառ բայերն անցյալ և ապառնի ժամանակներում – בֵּן, בַּת, אַם բառերը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ דניאל ושרה מקבלים הזמנה – Թարգմանություն

Դաս 34 246
הִתְפַּעֵל կառույցի բայերն ապառնի ժամանակում – פָּעַל կառույցի բայերն ապառնի ժամանակում – אָב, אָח բառերը դերանվանական վերջածանցների հետ – מִן նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ איזו שמלה ללבש? – Տեքստ՝ סיפור כמעט מצחיק – Թարգմանություն

Դաս 35 252
פָּעַל կառույցի բայերն ապառնի ժամանակում (շարունակություն) – ע״ו, ע״י բայերը הִפְעִיל կառույցի անցյալ ժամանակում – Հոգնակի թվի գոյականների հետ գործածվող դերանվանական վերջածանցները – אֶל և עַל նախդիրները դերանվանական վերջածանցների հետ – כָּל բառը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ יום הולדתו של יהודה – Թարգմանություն

Դաս 36 258
ע״ו և ע״י բայերն ապառնի ժամանակում – פ״י բայերը הִפְעִיל կառույցում – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ אני אוהב אותך – Թարգմանություն

Դաս 37 261
פ״י բայերն ապառնի ժամանակում – Հրամայական եղանակ – נָא հորդորական մասնիկը – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ מזל טוב! – Թարգմանություն

Դաս 38 267
הִתְפַּעֵל կառույցի բայերի հրամայական եղանակը – Բայական այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ קוקוריקו-ריקו! – Թարգմանություն

Դաս 39 271
הִפְעִיל կառույցի բայերն ապառնի ժամանակում – פ״א բայերը פָּעַל կառույցի ապառնի ժամանակում – ל״ה բայերը פָּעַל կառույցի ապառնի ժամանակում – נָתַן բայն ապառնի

ժամանակը – Քառատառ բայերը התפעל կառույցում – Տեքստ՝ ככה זה – Երկխոսություն՝ מה יש בחטיות? – Թարգմանություն

Դաս 40 278
Բայական ծանոթագրություններ – אי ժխտական մասնիկը – Տեքստ՝ השנה הוא לא שכח – Երկխոսություն՝ הוא צריך הרבה דברים – Թարգմանություն

Դաս 41 282
նפעל կառույցի բայերն ապառնի ժամանակում – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ אל תשים את כל הביצים בסל אחד – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 42 286
Տեքստ՝ אל תמר! – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 43 288
Շարունակական գործողության արտահայտում – Բայական այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ האוצר – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 44 291
פ״ע բայերն ապառնի ժամանակում – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ החכמה – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 45 294
ארבעה סיפורים՝ Տեքստ՝ – Այլ ծանոթագրություններ – դրդ լեզիտն – קצרים՝ ին մասնիկի գործածությունը – Թարգմանություն

Դաս 46 298
פ״ע/ל״ה բայերն ապառնի ժամանակում – ל״ה բայերը פ״ע կառույցի ապառնի ժամանակում – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ על הורים וילדים – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 47 302
Տեքստ՝ איפה לגור? – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 48 304
Բայական ծանոթագրություններ – Ածականով կազմված սմիխության կապակցություններ – Այլ ծանոթագրություններ – Տեքստ՝ עזרת־בית - סטודנט – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 49 307
Տեքստ՝ "נאה שערים" – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 50 309
ל״א բայերը נפעל կառույցում – Տեքստ՝ ים־המלח – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 51 312
«Երբեք» բառը – Տեքստ՝ בגדים ומגזר־האוייר – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 52 315
פ״ע բայերը נפעל կառույցում – Տեքստ՝ נשים... נשים... נשים – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 53 318
Դերբայական դարձվածներ – Բայական ծանոթագրություններ – אשר հարաբերական շաղկապը – כל բառը ժխտական կապակցություններում – Տեքստ՝ מצדה – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 54 322
פ״ע բայերը הפעיל կառույցում – התפעל կառույցի նתפעל ենթատեսակը – Տեքստ՝ הבדווים בישראל – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 55 326
10-ից բարձր դասական թվականներ – בלי նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – Տեքստ՝ ירושלים - עיר דוד המלך – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 56 329
Տեքստ՝ כך נסעו בארץ – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 57 332
ל״ה բայերը הפעיל և נפעל կառույցներում – Տեքստ՝ יוטבתה – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 58 336
בין նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – ש՝ և אשר շաղկապները բարդ ստորադասական նախադասություններում – Տեքստ՝ הספרות היפה בחיי אדם – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 59 339
Տեքստ՝ רק בעברית! – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 60 342
פ״ג բայերը נפעל կառույցում – Տեքստ՝ שלושת אלפים שנה של הספרות העברית – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 61 345
Թվականների նիսմախային ձևերի գործածությունը – Տեքստ՝ מגילות ים־המלח – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 62 348
Անորոշ դերբայն այլ կցական նախդիրների հետ – Տեքստ՝ שבתי צבי – դրդ լեզիտն – Թարգմանություն

Դաս 63 351
Ստորադասական եղանակ – Տեքստ՝ בבנק – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 64 354
Տեքստ՝ במכבסה – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 65 357
Կոտորակներ – Տեքստ՝ משורר, פילוסוף ומתמטיקאי – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 66 361
Տեքստ՝ איך לספר לילדים על המבול – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 67 365
Բայերը פ״ל կառույցում – כמו բառը դերանվանական վերջածանցների հետ ע״א և ע״ר – הנה և הרי բառերը դերանվանական վերջածանցների հետ – לפני նախդիրը դերանվանական վերջածանցների հետ – משל ստացական նախդիրը – Տեքստ՝ האיש שאין – דרך לעיתון – עצבות לפניו – Թարգմանություն

Դաս 68 371
Բայի գործածությունը նախդիրների հետ – Տեքստ՝ מה ההבדל? – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 69 376
Պայմանական նախադասություններ – Տեքստ՝ לו ואילו – דרך לעיתון – Թարգմանություն

Դաս 70 381
Բայերը פ״ל կառույցում – Տեքստ՝ מהלכם העז של החיים – דרך לעיתון – ע״י և ע״ו – פועל կառույցը – Թարգմանություն

Դաս 71 386
Հրամայական եղանակի հատուկ ձև – Տեքստ՝ שירים אהובים – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 72 392
Տեքստ՝ הופעל կառույցը – מן הארכיון הדיפלומטי – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 73 398
Տեքստ՝ מדינה, דת ולאום – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 74 403
Տեքստ՝ הזרה אל העבר – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 75 408
Տեքստ՝ מגילת־העצמאות של מדינת־ישראל – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 76 414
Տեքստ՝ כפר מולדתי – מן העיתונות הישראלית – ואני בכפר מולדתי – Թարգմանություն

Դաս 77 420
Բայական կապակցություններ գործողության շարունակականությունը, զարգացումը կամ կրկնությունն արտահայտելու համար – Տեքստ՝ מיכאל שלי – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 78 427
Տեքստ՝ שירים משירת נתן זך – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 79 432
Տեքստ՝ שירים משירת נתן זך – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Դաս 80 437
Դերանվանական վերջածանցների գործածությունը բայերի հետ – Ժամանակադարձ վավ-ը – Տեքստ՝ השועל והזאב – מן העיתונות הישראלית – Թարգմանություն

Թերականական աղյուսակներ 447
Եբրայերեն-հայերեն բառարան 465
Հայ-եբրայերեն բառարան 545

שלום

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԻՑ

Եբրայերենի սույն դասագիրքը հինգ տարվա աշխատանքի և ավելի քան տասը տարվա դասախոսական փորձի արդյունք է: Եբրայերենն իր կայուն տեղն է գրաղեցրել Երևանի պետական համալսարանում դասավանդվող լեզուների շարքում, և նման մի դասագիրք ունենալու անհրաժեշտությունը ինչպես դասախոսի, այնպես էլ ուսանողի համար հասունացած է թվում:

Եբրայերենին տարբեր լեզուներով նվիրված են տասնյակ դասագրքեր, և տեղին է թվում հարցնել՝ ինչո՞ւ չօգտվել դրանցից որևէ մեկով, ինչո՞ւ դրանց երկար շարքին ավելացնել ևս մեկը: Բանն այն է, որ առկա դասագրքերի ճնշող մեծամասնությունը հասցեագրված է Իսրայել ներգաղթողներին և, հետևաբար, նպատակ ունի հնարավորին կարճ ժամանակում մատուցել ամենատարրական ու անհրաժեշտը: Հասկանալի է, որ այդպիսի դասագրքերը հնարավոր չէ կիրառել համալսարանում, որը կոչված է պատրաստելու լեզվի խոր գիտելիքներ ունեցող պրոֆեսիոնալ լեզվաբանների: Ինչ վերաբերում է սակավաթիվ այն դասագրքերին, որոնք համապատասխանում են «համալսարանական» բնորոշմանը, ապա դրանք՝ հիմված լինելով մեզ համար ոչ ավանդական կրթական մեթոդաբանության և լեզվամտածողության վրա կամ ունենալով այլ լուրջ թերություններ՝ քիչ պիտանի կլինեին հայ ուսանողի համար:

Քերականական նյութը սույն դասագրքում մատուցվում է կարճ, մատչելի լեզվով, միջնակարգ դպրոցի ծրագրից ծանոթ քերականական եզրեր գործածող պարբերություններով, որոնք ուսանողի ու դասախոսի հարմարության համար համարակալված են: Զգտելով ինչքան հնարավոր է պարզեցնել դասագրքի ընդհանուր ոճն ու շարադրանքը՝ մենք, սակայն, երբեք չենք մոռացել, որ այն, ի վերջո, հասցեագրված է համալսարանական արևելագետ ուսանողին, որի աճող մասնագիտական ինքնասիրությունը չարժե վիրավորել անտեղի ու չարդարացված պարզունակեցմամբ:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ դասագիրքն ինքնուսույց չէ և ենթադրում է դասախոսի ներգրավվածություն: Այդուհանդերձ, օգնության ձեռք

ենք մեկնել նրանց, ովքեր կօգտվեն դասագրքից լեզուն ինքնուրույն ուսումնասիրելու համար և առաջին դասերում ընդգրկել ենք հայերեն տառադարձությունը, ինչն այլ պարագաներում պետք է դիտվեր որպես մեթոդաբանության տեսանկյունից չարդարացված քայլ:

Դասագրքի ուսումնական մասը բաղկացած է ութսուն դասերից, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի դասերը (1-ից 40-ը) պարունակում են քերականական նյութի զգալի մասը, իսկ տեքստերը շարադրված են այնպես, որ նրանցում հնարավորինս շատ երևա տվյալ և նախորդող դասերի քերականական և լեզվական նյութը. սա երբեմն կարող է որոշ արհեստականություն ստեղծել: Դիմելով երաժշտական եզրաշարին՝ կարելի է ասել, որ այս տեքստերը յուրատեսակ գամմաներ ու էտյուդներ են, որոնք օգնում են ուսանողին մշակել լեզվական անհրաժեշտ հմտություններ:

Քանի որ քերականական երևույթները յուրացվում են ոչ այնքան նրանց բացատրությունից, որքան օրինակներից, փորձել ենք որքան հնարավոր է շատացնել դրանց թիվը՝ ընդգրկելով օրինակների մեջ տվյալ դասի նոր բառերն ու բառակապակցությունները: Սա հատկապես կարևոր է, եթե նկատի ունենանք, որ նոր բառն ավելի հեշտ է ընկալվում, հիշվում ու յուրացվում բառակապակցության կամ կարճ նախադասության մեջ, քան բառացանկի կազմում:

Երկրորդ մասի դասերում քերականական նյութը նկատելիորեն նվազում է, և առաջ է գալիս տեքստային մասը, որը դառնում է ավելի բնական, բարդ ու ոճապես բազմազան: Այս դասերի կարևոր մասն է «Ճանապարհ դեպի թերթ» բաժինը, որն աստիճանաբար պատրաստում է ուսանողին մամուլի ոճին ու բառապաշարին: Լսարանի պատրաստվածության ու պատրաստակամության դեպքում դասախոսը կարող է ընդլայնել այս բաժինը լրացուցիչ նյութերով:

Դասագրքում ընդգրկել ենք եբրայերենի մի քանի լավագույն դասագրքերի[1] տեքստային նյութը, որը ենթարկվել է զգալի փոփոխությունների ըստ քերականության և բառապաշարի մատուցման տրամաբանության:

Մենք չենք ձգտել հավասարաչափ բաշխել քերականական նյութն ու նոր բառապաշարը դասերի միջև, ինչպես նաև պարտադիր չենք համարել, որ յուրաքանչյուր դաս պարունակի քերականական նոր նյութ: Մի քանի դասեր պարունակում են միայն տեքստային մաս ու վարժություններ, ինչը թույլ է տալիս ուսանողին կրկնել և յուրացնել նախորդ դասերի նյութը:

Թե՛ առաջին, և թե՛ երկրորդ մասերի տեքստերում ուսանողը հանդիպելու է տոպատակերի, որոնք հղում են համապատասխան քերականական նյութը պարունակող պարբերությանը: Նպատակն այն է, որ ուսանողը պարբերաբար թարմացնի հիշողության մեջ անցած նյութը և նոր օրինակների օգնությամբ ավելի լավ յուրացնի և ամրագրի այն: Ուստի կոչ ենք անում ուսանողին չխնայել դասագիրքը և չզլանալ նրա էջերն անընդհատ հետ շրջելուց:

Դասագրքի առանձնահատկություններից է մեխանիկական ոճի վարժությունների սահմանափակ թիվը, քանի որ ուսանողները դրանցից որպես կանոն խուսափում են: Այստեղ մենք ղեկավարվել ենք սեփական դասախոսական փորձից ցոյացած համոզմամբ, որ լավագույն և ուսանողի կողմից առավել սիրված վարժությունը թարգմանությունն է. այն ներգրավում է ուսանողին լեզվակատարման մեջ, ակտիվացնում ու ամրագրում ենթագիտակցության մեջ կուտակվող քերականական գիտելիքներն ու պասիվ բառապաշարը: Դա հատկապես կարևոր է, երբ լեզուն ուսումնասիրվում է համապատասխան լեզվական միջավայրից դուրս: Թարգմանության համար տրվող նախադասությունների կառուցվածքը հաճախ հուշում է եբրայերեն նախադասության ճիշտ շարահյուսությունն ու ձևաբանությունը: Որոշ դեպքերում սա առաջացրել է շարահյուսական և ոճական աղավաղումներ հայերենում, ինչի համար հայցում ենք մայրենիի համար ցավողների ներողամտությունը:

Թարգմանական վարժությունները պետք է կատարվեն և՛ որպես տնային գրավոր աշխատանք, և՛ բանավոր կերպով՝ լսարանում: Վերջին պարագայում դասախոսը կարող է առաջարկել ուսանողին որոշ փոփոխություններ կատարել թարգմանված նախադասության մեջ՝ փոխել ենթակայի սեռը կամ թիվը, ստորոգյալի ժամանակը և այլն: Ելնելով նախադասության իմաստից՝ դասախոսը կարող է հարցեր տալ և ներգրավել ուսանողին խոսակցության մեջ: Կարևոր է, որ դասախոսն օգնի ուսանողին հաղթահարել օտար լեզվով արտահայտվելու վախը՝ բացատրելով, որ օտար լեզվով խոսելիս սխալվելը միանգամայն բնական է և ամենևին ամոթալի չէ: Լսարանում բանավոր թարգմանություններ կատարելիս դասախոսը պետք է ձգտի նրան, որ ուսանողը կենտրոնանա ոչ այնքան քերականորեն ճիշտ կապակցություն արտաբերելու վրա, ինչը միանգամայն տեղին է տնային գրավոր թարգմանության պարագայում, որքան կարողանա հնարավորինս արագ, առանց բարդույթի և անկաշկանդ կերպով միտք արտահայտել ուսումնասիրվող լեզվով:

[1] Էլիեզեր Թիրկել, *Իվրիթ բե-կայուտ* («Ախիասաֆ», 1989), Նեխամա Բարաս, Շլոմիթ Խայաթ, *Իվրիթ խայա* («Ակադեմոն Պրես», 1989), Շոշանա Բլում, Խայիմ Ռաբին, *Իվրիթ խայա* («Իվրուս», 2001), *Միկրաէթոն* («Դյոնոն», 1990), Վարդա Ռեմեզ, Ռութ Քիրշ, *Սիավա բե-իվրիթ կալա* («Թելկոա», 1990), Լիորա Վայսբախ, Էդնա Լաուդեն, *Շեաթ հաիվրիթ* (1991), *Hebrew, so simple!* («Պրոյոզ», 1992), D.J. Kamhi, *Modern Hebrew* (Oxford University Press, 1982):

Դասախոսին խորհուրդ է տրվում յուրաքանչյուր տասը դասից հետո լսարանում գրավոր թեստ անցկացնել, որը կպարունակի թարգմանության համար տրված հայերեն ու եբրայերեն նախադասություններ: Նման տեստերը, որոնք փաստորեն կհանդիսանան միջանկյալ քննություններ, թույլ կտան դասախոսին հստակ պատկերացում կազմել ուսանողի առաջադիմության մասին:

Քանի որ դասագիրքն առաջին հերթին նախատեսված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագետ ուսանողների համար, որոնք եբրայերենն ուսումնասիրում են որպես երկրորդ սեմական լեզու, դասախոսը, եթե տիրապետում է արաբերենին, կարող է քերականական այս կամ այն երևույթը բացատրելիս զուգահեռներ անցկացնել արաբերենի հետ կամ քաջալերել ուսանողներին կռահել նոր բառի իմաստն արաբերենի միջոցով: Սա հետաքրքրություն ու թարմություն է հաղորդում ուսումնական գործընթացին, վստահություն ներշնչում ուսանողներին և հնարավորություն տալիս նրանց կատարելու առաջին քայլերը համեմատական սեմագիտության ասպարեզում:

Երկու խոսք դասագրքում կիրառվող ձայնանշության համակարգի մասին: Եբրայերենի ժամանակակից դասագրքերի մեծամասնությունը խուսափում է ձայնանիշներից. սա ունի գործնական նշանակություն, որն արդեն հիշատակվել է: Համալսարանական դասագիրքն, այնուամենայնիվ, չի կարող անտեսել ու շրջանցել ձայնանիշների գոյությունը, քանի որ եբրայերեն ուսումնասիրող արևելագետ ուսանողը պարտավոր է ծանոթ լինել ձայնանիշների համակարգին և ձայնավորման հիմնական սկզբունքներին: Սակայն քանի որ եբրայերենի ավանդական ձայնավորման հիմքում ընկած է սույն դասագրքի առարկան չհանդիսացող հին եբրայերենի հնչյունական համակարգը, մենք նպատակահարմար ենք գտել չծանրաբեռնել ուսանողին ձայնանիշադրության այն կանոններով, որոնք բացատրելի չեն արդի եբրայերենի հնչյունական առանձնահատկություններով և կարող են միայն խառնաշփոթ առաջացնել և կարծիք ստեղծել, թե լեզուն ավելի բարդ է, քան իրականում է:

Դասագիրքն սկսվում է դասական՝ «պակասավոր» ուղղագրությամբ և ձայնանիշների ողջ հավաքածուով: Ապա ձայնանիշներն աստիճանաբար պակասում են և գրեթե ամբողջությամբ վերանում ուսումնական մասի վերջին տեքստերում: Դրան զուգահեռ՝ «պակասավոր» ուղղագրությունն աստիճանաբար փոխարինվում է Իսրայելում ներկայումս ավելի տարածված «ամբողջական» ուղղագրությամբ: Արդյունքում ուսանողը պետք է մշակի ինչպես ձայնավորված, այնպես էլ չձայնավորված տեքստեր ընթերցելու հմտություններ:

Ուղղագրության հարցն արդի եբրայերենի ամենացավոտ հարցերից է: Եբրայերեն լեզվի ակադեմիայի մշակած ուղղագրության հստակ կանոնները հաճախ անտեսվում են, և Իսրայելում շարունակում է ուղղագրական որոշ խառնաշփոթ տիրել: Այն ներթափանցել է նաև սույն դասագրքի էջերը, սակայն մենք նպատակահարմար ենք գտել չպայքարել դրա դեմ, որպեսզի ուսանողը պատկերացում կազմի այդ ոլորտում տիրող իրական իրավիճակի մասին:

Դասագրքի վերջնամասում ուսանողը կգտնի քերականական աղյուսակներ, որոնք ի մի են բերում եբրայերենի բայական համակարգը, ինչպես նաև քերականական այլ երևույթները: Աղյուսակներում զետեղված են նաև որոշ հազվադեպ հանդիպող բայաձևեր, որոնց անդրադարձ չի արվել ուսումնական մասում:

Դասագրքի կարևոր մասն է եբրայերեն-հայերեն ընդարձակ բառարանը: Այն պարունակում է մեծ թվով բառեր, որոնք չեն հանդիպում դասագրքում, սակայն կարող են դասվել առավել գործածելի բառերի շարքին: Սա թույլ է տալիս հուսալու, որ ուսանողը դասագրքի վերջին էջը պատվով շրջելուց հետո դեռ որոշ ժամանակ կշարունակի օգուտ քաղել նրա բառարանից:

Հայերեն-եբրայերեն բառարանն իր ծավալով զիջում է եբրայերեն-հայերեն բառարանին և հիմնականում կոչված է օգնելու ուսանողին կատարել թարգմանական վարժությունները: Պետք է նկատի ունենալ, որ թեև մենք ջանացել ենք երկու բառարաններում էլ ընդգրկել յուրաքանչյուր բառի հիմնական բոլոր իմաստները, դա չի ընկալվել որպես պարտադիր պայման:

Մենք, անշուշտ, գիտակցում ենք, որ դասագիրքը զերծ չէ թերություններից ու բացթողումներից և կանխավ երախտագիտություն ենք հայտնում նրանց, ովքեր նպատակահարմար կգտնեն հայտնել իրենց դիտողությունների ու առաջարկների մասին:

Արման Հակոբյան, 2002 թ.

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գոհունակությամբ պետք է նշենք, որ առաջին հրատարակությանը հետևած մեկուկես տասնամյակի ընթացքում դասագրքի ողջ տպաքանակը սպառվել էր, և այն բիբլիոգրաֆիական հազվագյուտության է վերածվել: Շարունակվող պահանջարկը համառորեն վերահրատարակում էր թելադրում: Սակայն սույն հրատարակությունը նախորդի կրկնությունը չէ: Երկրորդ հրատարակության համար ամբողջությամբ փոխվել են վերջին 15 դասերը, որոնց տեքստային մասը բարդացվել է: Ավելացվել է «Իսրայելյան մամուլից» բաժինը, որը պարունակում է խմբագրման չենթարկված, սակայն քերականական և այլ պարզաբանումներով ուղեկցված բնագրային տեքստեր: Մյուս դասերում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, ճշտումներ և լրացումներ, շտկվել են վրիպակները, թարմացվել է բառապաշարը: Վերաշարադրվել է եբրայերենի պատմության համառոտ ակնարկը: Դասագիրքը համալրվել է ձայնային ֆայլերով, որոնք հատկապես օգտակար կլինեն լեզուն ինքնուրույն ուսումնասիրողներին[1]: Քանի որ Համացանցը եբրայերենի լեզվանյութն անհամեմատ մատչելի է դարձրել, նպատակահարմար գտանք երկրորդ հրատարակությունում հրաժարվել ընթերցարանից, սակայն եբրայերեն-հայերեն բառարանում պահպանվել է առաջին հրատարակության ընթերցարանի ողջ բառապաշարը: Փոխվել է դասագրքի ֆորմատը, զգալիորեն բարելավվել նրա դիզայնը:

Հուսով ենք, որ երկրորդ հրատարակությունը կնպաստի Հայաստանում եբրայագիտության հետագա զարգացմանը և կարդարացնի իր հետ կապվող ըսպասելիքները:

Ա. Հ., 2019 թ.

[1] Ձայնային ֆայլեր ստանալ ցանկացողները, ինչպես նաև նրանք, ովքեր կցանկանան հայտնել իրենց դիտողությունները դասագրքի վերաբերյալ, կարող են կապվել հեղինակի հետ Ֆեյսբուքի միջոցով (www.facebook.com/arman.akopian1):

ԵԲՐԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՄԵՐ ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

XXIV դ.
Եբրայական ցեղերը Միջագետքից գաղթում են Քանաան:

1200-1020
Եբրայական ցեղերը գրավում են Քանաանը և «դատավորների» առաջնորդությամբ ստեղծում ցեղային միություններ:

1020
Սաուլ մարգարեն Շաուլին օծում է հրեական միացյալ՝ Իսրայելի թագավորության առաջին թագավոր:

Իսրայելի պետական լեզուն՝ եբրայերենը, աշխարհի հնագույն լեզուներից է, որն անցել է զարգացման եզակի ուղի: Պատմության թատերաբեմ մտնելով որպես նահապետական կիսաքոչվոր ցեղախմբի խոսվածք՝ այն դարձավ հուդայականության ու քրիստոնեության սրբազան գրքի՝ Հին Կտակարանի լեզուն և ստացավ հին աշխարհի դասական լեզուներին հավասար կարգավիճակ: Մոտ մեկ հազարամյակ այն եբրայեցիների (հինկտակարանային դարաշրջանի հրեաների) կենդանի լեզուն էր, ապա երկու հազար տարի գոյատևեց որպես լոկ կրոնի ու գրականության լեզու, ինչպես լատիներենը կամ սանսկրիտը: 19-րդ դ. վերջից եբրայերենը կրկին դարձավ խոսակցական, իսկ 1948 թ.՝ նաև Իսրայելի պետական լեզուն: Մեռած լեզվի այս աննախադեպ վերակենդանացումը հանրալեզվական բացառիկ երևույթ է համարվում:

Եբրայերենը պատկանում է աֆրասիական լեզվաընտանիքի սեմական ճյուղի հյուսիս-արևմտյան խմբին: Նույն խմբին են դասվում նաև մերձավորարևելյան մի քանի մեռած լեզուներ՝ քանաաներենը[1] նույն ինքը փյունիկերենը, ինչպես նաև քանաաներենին շատ մոտ կանգնած մոավերենը, ամմոներենն ու եդոմերենը (Մեռ-

[1] «Քանաան» էր կոչվում Պաղեստինի և Փյունիկիայի միասնական տարածքը՝ մինչև մ.թ.ա. երկրորդ հազարամյակի երկրորդ կեսում հրեական ցեղերի ներխուժումը: Այս երկրամասը համարվում է այբբենական գրի բնօրրանը:

1000-961
Դավիթը թագավորում է Իսրայելը, զավթում հեբուսացիներից Երուսաղեմը և այն հռչակում իր մայրաքաղաքը:

961
Դավթի որդի Սողոմոնը դառնում է Իսրայելի թագավորը և կառուցում Երուսաղեմի տաճարը:

922
Սողոմոնի մահից հետո թագավորությունը բաժանվում է երկու մասի՝ Իսրայել (մայրաքաղաքը Սամարիա) և Հուդա (Երուսաղեմ):

722
Ասորեստանը զավթում է Իսրայելը և աքսորում այնտեղի հրեական տասը ցեղերը, որոնք այնուհետև անհետանում են («Տասը կորած ցեղեր»):

586
Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը զավթում է Հուդան, ավերում է Երուսաղեմի տաճարը և հրեաներին Բաբելոն գերության տանում:

յալ ծովից արևելք՝ ժամանակակից Հորդանանի տարածքում գոյություն ունեցած Մոավ, Ամմոն և Եդոմ հնագույն պետությունների լեզուները): Այս բոլոր լեզուները եբրայերենի հետ կազմում են «քանաանական» ենթախումբը: Հյուսիս-արևմտյան խմբին պատկանում են նաև ամորերենը, ուգարիթերենն ու արամեերենը՝ վերջինն իր բազմաթիվ տարբերակներով, ներառյալ քրիստոնյա արամեացիների գրական և ծիսական լեզուն՝ դասական ասորերենը: Արդի եբրայերենի հետ մեկտեղ հյուսիս-արևմտյան սեմական լեզուներից վերապրել են միայն մի քանի արամեական բարբառներ, որոնցից մեկի հիման վրա զարգացել է գրական լեզու՝ արդի ասորերենը: Ինչ վերաբերում է սեմական լեզուներին ընդհանրապես, ապա եբրայերենից ու արդի արամեերենից զատ, կենդանի լեզուների թվին են պատկանում արաբերենն իր բազմաթիվ բարբառներով (դրանցից մեկը՝ Մալթայի բարբառը, որը մոտ է Թունիսի բարբառին, վերածվել է ինքնուրույն լատինատառ լեզվի), և Եթովպիայում ու Էրիթրեայում տարածված մի քանի այլ՝ «եթովպասեմական» կոչվող լեզուները (ամհարերեն, տիգրինյա, տիգրե և այլ):

Եբրայերենի հնագույն պատմությունն անմիջականորեն կապված է հրեա ժողովրդի պատմության հնագույն շրջանի հետ: Թանախից[1] հայտնի պատումն այն մասին, թե ինչպես Աբրահամ նահապետն իր տոհմով Միջագետքից գաղթեց դեպի «ավետյաց երկիր Քանաանը», առասպելացված կերպով արտահայտում է պատմական այն փաստը, որ եբրայական ցեղերը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսին, իրոք, անցել են այդ ճանապարհը: Աբրահամի կերպարն այդ գաղթն առաջնորդած ցեղապետերի հավաքական մարմնավորումն է: Այսօր կարելի է միայն գուշակել, թե ինչու եբրայեցիները, ովքեր, ամենայն հավանականությամբ, ամորական ծագում ունեցող ցեղախումբ էին, նախընտրեցին լքել բերրի Միջագետքը: Ամենայն հավանականությամբ կրոնական նկատառումներով են հարկադրված եղել դիմելու այդ քայլին, քանի որ իրենց միաստվածական հավատալիք-

[1] Նույն ինքը՝ Հին Կտակարանը: Բառը հապավում է, կազմված «Թորա» (Մովսեսի Հնգամատյան), «Մարգարեներ» և «Գրություններ» եբրայերեն բառերի սկզբնատառերից:

539
Աքեմենյան Կյուրոսը գրավում է Բաբելոնը և թույլ տալիս հրեաներին վերադառնալ Հուդա:

515
Վերակառուցվում է Երուսաղեմի տաճարը:

445
Նեհեմիայի Աքեմենյան կանցլերին հրեա Նեհեմիան վերակառուցում է Երուսաղեմը: Էզրան հասարակական ու կրոնական բարեփոխումներ է իրականացնում:

332
Մեծ Սանդը Մակեդոնացին գրավում է Պաղեստինը:

320-198
Պտղոմեոսները Եգիպտոսի Պտղոմեոսների իշխանության ներքո:

198-167
Պտղոմեոսը Սելևկյան իշխանության ներքո:

167
Անտիոքոս IV-ն արգելում է հրեական կրոնը, պղծում Երուսաղեմի տաճարը, արդյունքում հրեաներն ապստամբում են:

ների պատճառով կարող էին խտրականության և հալածանքների ենթարկված լինել:

Քանաանում եբրայեցիները հայտնվեցին զարգացման անհամեմատ բարձր մակարդակի վրա գտնվող քանաանա-փյունիկյան քաղաքակրթության ուժեղ ազդեցության տակ և ժամանակի ընթացքում յուրացրին քանաանական բարբառներից մեկը՝ համալրելով այն իրենց սեփական լեզվի բառապաշարի տարրերով: Սա նշանակում է, որ եբրայերենը քանաաներենի շառավիղն ու շարունակությունն է, ինչի օգտին է վկայում այն, որ Թանախի ամենավաղ հատվածներում եբրայեցիներն իրենց լեզուն անվանում են «Քանաանի լեզու» (*սֆաթ քնաան*): Երբ Թանախի հեղինակները եբրայաքանաանական առճակատմանը տվեցին հստակ կրոնական հիմավորում, և «քանաանական» բառը դարձավ եբրայեցիների պատկերացմամբ հեթանոսության վատագույն դրսևորումների խորհրդանիշը, *սֆաթ քնաան* անվանումը եբրայեցիների համար անընդունելի դարձավ և փոխարինվեց «հուդայերեն» (*Եհուդիթ*) կամ պարզապես «սուրբ լեզու» (*լշոն հակկոդեշ*) եզրերով: Ավելի ուշ՝ հռոմեական շրջանում, ի հայտ եկավ *լշոն իվրի* («հրեական լեզու») եզրը, որը հունարենում ստացավ Hebraios ձևը: Վերջինը փոխառվեց այլ լեզուների, այդ թվում՝ հայերենի կողմից:

Ինչ վերաբերում է *իվրի* բառին, ապա հրեա ավանդապահների կարծիքով այն ծագել է Նոյի թոռ՝ Սեմի որդի Եբերի անունից, ով, ըստ Թանախի, եղել է հրեաների նախահայրը: Ըստ գիտական բացատրության, եզրը կապված է «անցնել, հատել» իմաստն ունեցող սեմական արմատի հետ և արտացոլում է այն փաստը, որ եբրայական ցեղերը Միջագետքից Քանաան են հասել՝ անցնելով Եփրատ գետը: Հավանական է թվում, որ այդպես էին եկվոր «անդրգետացիներին» կոչում քանաանցիները և նրանց միջոցով՝ տարածաշրջանի մյուս ժողովուրդները: Այսպես, եգիպտական աղբյուրներում հիշատակվում են *հաբիռու* ցեղերը, ովքեր որոշ գիտնականների կարծիքով նույն եբրայեցիներն են:

* * *

164
Եհուդա Մակաբեացին զավթում է Երուսաղեմը և նորոգում տաճարը: Սկզբնավորվում է Խանուքա տոնը:

160-63
Հուդան Խասմոնեյանների իշխանության ներքո: Կրոնական և քաղաքական հակադիր խմբավորումների՝ փարիսեցիների, սադուկեցիների և եսսեների ձևավորում:

70
Տիգրան Մեծը պաշարում է Հուդայի հյուսիսը, սակայն Սալոմե-Ալեքսանդրա թագուհին ընծաներով կանխում է նրա առաջխաղացումը: Տիգրանը Հայաստանում բնակեցնում է հազարավոր հրեաների:

63
Հռոմեացիները զավթում են Հուդան: Խասմոնեյանների իշխանությունը պահպանվում է Հռոմի գերակայության ներքո:

37
Հռոմը թագավոր է ճանաչում Հերովդես Մեծին, ապա Հուդան բաժանվում է նրա որդիների միջև:

Եբրայերենի պատմությունը բաժանվում է մի քանի փուլերի՝ **«աստվածաշնչային», «հետաստվածաշնչային»** (այս երկու փուլերի լեզուն հաճախ անվանվում է «հին եբրայերեն»), **միջնադարյան** և **արդի**:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Աստվածաշնչային եբրայերենը, ինչպես անվանումն է հուշում, հիմնականում հայտնի է դիցաբանական, կրոնաիրավագիտական, պատմական և գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք գրվել, խմբագրվել ու վերախմբագրվել են գրեթե մեկ հազարամյակի ընթացքում և, ի վերջո, ամբողջացվել ու սրբադասվել են Թանախի կազմում: Այս լեզուն անցել է զարգացման երկու փուլ՝ **վաղ աստվածաշնչային** (մ.թ.ա. XII-VI դդ., այսինքն՝ եբրայական ցեղերի կողմից Քանաանի նվաճումից մինչև Հուդայի թագավորության անկումն ու հրեաների «Բաբելոնյան գերությունը») և **ուշ աստվածաշնչային** (մ.թ.ա. V-II դդ.՝ հետբաբելոնյան ժամանակաշրջանից մինչև Հուդայում Խասմոնեյանների (Մակաբեացիների) տոհմի իշխանության ավարտը):

Վաղ աստվածաշնչային եբրայերենով են գրված Թորան (Մովսեսի Հնգամատյանը՝ Թանախի առաջին հինգ գլուխները), Մարգարեից, Դատավորաց, Թագավորաց գրքերը և Թանախի մի քանի այլ գլուխները: Թանախում պահպանված եբրայերենի հնագույն նմուշը համարվում է «Դեբորայի երգը» քանաանցիների դեմ հրեական ցեղերի պատերազմներից մեկը գլխավորած ու ոգեշնչած հերուսուհու ու մարգարեի անունով: Այդ լեզուն նաև Դավիթ ու Սողոմոն թագավորների օրոք (մ.թ.ա. 1000-922 թթ.) գոյություն ունեցած Իսրայելի միացյալ թագավորության, իսկ նրա տրոհումից հետո հյուսիսային՝ Իսրայել (922-724) ու հարավային՝ Հուդա (922-587) թագավորությունների պաշտոնական լեզուն էր:

Ուշ աստվածաշնչային եբրայերենով են գրված Սաղմոսները, Երգ Երգոցը, որոշ Մարգարեից գրքերը: Այս շրջանում, որը մոտավորապես սկսվում է «Բաբելոնյան գերությունից» հրեաների վերադարձով, եբրայերենը սեմական մի քանի այլ լեզուների հետ մեկտեղ աստիճանաբար դուրս է մղվում արամեերենի կողմից որպես խոսակցական, սակայն շարունակում է գործածվել որպես գրական ու ծիսական լեզու: Հրեական միջավայրում արամեերենի նշանակության ու ազդեցության մասին է վկայում այն, որ Թանախի մաս կազմող Եզրասի ու Դանիելի գրքերի որոշ գլուխներն արամեերեն են: Հետագայում ստեղծվում են նաև ամբողջ Թանախի արամեերեն մի քանի թարգմանությունները, որոնք հայտնի են արամեական *Թարգում* («թարգմանություն») անունով: Դրանցից առավել հայտնին և հուդայական կրոնական դպրոցներում՝ *Եշիվա*-ներում հատուկ ուսումնասիրվողը հուդայականություն ընդունած հույն Օնկելոսի թարգմանությունն է («Թարգում Օնկելոս»):

Ընդգրկելով գրեթե մեկ հազարամյակ՝ աստվածաշնչային եբրայերենն, այդուհանդերձ, աչքի է ընկնում քերականության ընդհանուր կայունությամբ, թեև շարադրանքի ոճի վրա զգալի է այս կամ այն ժամանակաշրջանի խոսակցական լեզվի ազդեցությունը: Թանախի ընդհանուր բառապաշարը մոտավորապես ութ հազար բառ է: Արդի եբրայերենի առավել գործածելի հազար բառից ութ հարյուրը հանդիպում են Թանախում:

Եբրայերենն իր պատմության ամենավաղ շրջանից ևեթ գրավոր լեզու էր: Պետք է հիշել, որ Քանաանը համարվում է այբբենային գրի բնօրրանը: Գրի ու գրականության հարուստ ավանդույթներ ունեին նաև հարակից երկրները, հատկապես Եգիպտոսն ու Միջագետքը: Եբրայեցիները բավականին վաղ՝ արամեացիների հետ գրեթե միաժամանակ փոխ առան փյունիկյան գիրը, որն իրենց միջավայրում ինքնուրույն զարգացում ապրեց և հեռացավ փյունիկյան սկզբնատեսակից: Այս գիրը մասնագիտական գրականության մեջ կոչվում է «պալեոեբրայական» (վաղնջական եբրայական):

«Բաբելոնյան գերությունից» վերադառնալուց հետո հրեաները, ովքեր արդեն արամեախոս էին, փոխ առան արամեական տառատեսակներից մեկը, որը հայտնի է «քառակուսի գիր» անունով: Ենթադրվում է, որ գրի

ՄԵՐ ԹԱՄԱԿՈՐԾԱՆ

8
Նոսրի Հուդան դնում է իր սեռիկական կառավարման տակ:

28-30
Հուդան կառավարում է Պոնտացու Պոնտացի սպարապետը, ով, ըստ Լևի Կոռակարանի, տվել է Պիսանին խաչելու հրամանը:

66
Գալիլեան ապստամբում են Հռոմի դեմ:

68-69
Յովհաննան բեն Զաքքայը հիմնում է ուսումնական կենտրոն («Սինեդրիոն»), որտեղ մշակում է Երուսաղեմի անկման դեպքում հրեաների՝ առանց հայրենիքի գոյատևելու սկզբունքները:

70
Տիտոսը զավթում ու ավերում է Երուսաղեմը:

73
Գրեթե ապստամբների վերջին հենակետ՝ Մասադա ամրոցի անկումը:

~100
Սինեդրիոնը քայլեր է ձեռնարկում Հիսուսին Մեսիա ճանաչողներին հրեաների հիմնական զանգվածից տարանջատելու համար, ինչը նրա պատմում է հուդայականության ու քրիստոնեության տարանջատմանը:

132-135
Հռոմեացիները ճնշում են Շիմոն բար Կոխբայի գլխավորած ապստամբությունը: Հրեաներին արգելվում է մուտք գործել Երուսաղեմ, և նրանց ազգային կենտրոնը, նեռայալ Սինեդրիոնը, տեղափոխվում է Գալիլեա:

140
Միջագետքի հրեական համայնքում հիմնվում է համայնքապետի (*ռեշ գալութա*) պաշտոնը:

200-215
Եհուդա Հա-Նասիի գլխավորությամբ կազմվում է հրեական կրոնական գրավոր օրենքը» պարունակող *Միշնա*-ն:

325
Կոստանդինոս կայսրը հրամայում է կառուցել Սուրբ Գարության, Բեթլեհեմում՝ Սուրբ Ծննդյան եկեղեցիները:

360-363
Ցեղվանոսը՝ վերջին հեթանոս կայսրը, թույլատրում է հրեաներին բնակվել Երուսաղեմում և խոստանում վերականգնել տաճարը, սակայն երբ մահը խափանում է նրա ծրագիրը:

~400
Երուսաղեմյան Թալմուդի կազմավորման ավարտը:

429
Սինեդրիոնը լուծարվում է, և հրեական հոգևոր կենտրոնը տեղափոխվում է Միջագետք:

450-470
Սասանյանները հալածանքների միջոցով փորձում են հրեաներին զրադաշտականություն պարտադրել:

կրոնական հոսանքներից մեկի գրադարանի ժառանգորդներն են: Նրանց լեզուն միջանկյալ է աստվածաշնչային ու հետաստվածաշնչային լեզուների միջև՝ ներառելով երկու տարբերակներին բնորոշ հատկանիշներ:

Թանայական շրջանը ներառեց հրեա ժողովրդի պատմության ամենաողբերգական միջադեպերից մեկը: Մ.թ. 70 թ. հրեաներն ապստամբեցին Հռոմի դեմ, ապա Տիտոսի գլխավորած բանակը ներխուժեց Պաղեստին, ավերեց Երուսաղեմը և հողին հավասարեցրեց հրեական մեծագույն սրբատեղին՝ Երուսաղեմի տաճարը: Դրան հետևեցին Պաղեստինից հրեաների աստիճանական արտահոսքը և հրեական սփյուռքի ձևավորման սկիզբը: Այս ժամանակաշրջանում հրեաների խոսակցական լեզուն արամերենն էր: Հատկանշական է, որ խաչի վրայից Հիսուսի արտասանած յոթ նախադասություններից մեկը՝ «Տե՛ր իմ, Տե՛ր իմ, ինչո՞ւ լքեցիր ինձ», Նոր Կտակարանի հունարեն բնագրում և բոլոր թարգմանություններում մեջբերվում է հենց արամերեն: Այնուամենայնիվ, եբրայերենը պահպանում էր գրական ու կրոնական լեզվի իր կարևոր գործառույթը և քերականությամբ ու բառապաշարով մոտ լինելով արամերենին՝ այս կամ այն չափով հասկանալի էր ժողովրդին: Հենվելով այն փաստի վրա, որ մ.թ. II դ. հակահռոմեական երկրորդ ապստամբության ղեկավար՝ Շիմոն բար Կոխբայի պահպանված նամակներից մի քանիսը գրված են եբրայերեն՝ գիտնականներից ոմանք ենթադրել են, որ Պաղեստինի հարավային շրջաններում եբրայերենը կարող էր պահպանված լինել որպես խոսակցական լեզու, և որ գրական ստեղծագործությունների միշնայական եբրայերենն այդ ժամանակաշրջանի խոսակցական լեզվի գրական տարբերակն է: Այդուհանդերձ գերիշխում է այն կարծիքը, որ միշնայական եբրայերենը երբեք խոսակցական լեզու չի եղել և միջնադարի լատիներենի պես բացառապես գրական գործունեության արդյունք է:

Ամորայական ժամանակաշրջանում (II-VII դդ.) Պաղեստինում հրեա բնակչություն գրեթե չկար, և հրեա ժողովրդի ու նրա լեզվի պատմությունը շարունակվում էր տարբեր երկրներով մեկ սփռված գաղթօջախներում:

փոփոխությունը տեղի ունեցավ պալեոեբրայական գրի վաղ տարբերակը պահպանած և զարգացրած սամարացիներից[1] հրեաների կրոնական և ազգային տարանջատման գործընթացի շրջանակներում: Այնուամենայնիվ, պալեոեբրայական ու «քառակուսի» գրերը որոշ ժամանակ գործածվում էին զուգահեռաբար, սակայն, ի վերջո, «քառակուսին» հաստատվեց որպես հրեաների միակ գիրը և այսօր էլ որպես այդպիսին հանդես է գալիս արդի եբրայերենի պարագայում:

ՀԵՏԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Հետաստվածաշնչային եբրայերենը (հայտնի է նաև «միշնայական» կամ «ռաբիական» անուններով) նույնպես բաժանվում է երկու փուլի՝ **թանայական** և **ամորայական**. «թանայներ» և «ամորայներ» էին կոչվում հետաստվածաշնչային ժամանակաշրջանի հրեա կրոնագետների իրար հաջորդած երկու սերունդները: Թանայական ժամանակաշրջանի (մ.թ.ա. I – մ.թ. II դդ.) հիմնական գրավոր հուշարձաններն են *Միշնա*-ն, որը հրեական «բանավոր օրենքի» ընդարձակ հավաքածու է, *Տոսեֆթա* կոչվող Միշնայի հավելվածները և Թանախի զանազան մեկնությունները՝ *Միդրաշ*-ները:

Թանայական ժամանակաշրջանին են հարում նաև 1940-ականներին Մեռյալ ծովի առափնյա քարանձավներում գտնված «Կումրանի ձեռագրերը», որոնք պատմալեզվաբանական մեծ արժեք ունեն: Կավե սափորների մեջ զմռսված այդ ձեռագրերը Հիսուսի ժամանակաշրջանում գոյություն ունեցած եսսեների՝ հրեական

[1] Սամարացիները կրոնաազգային խումբ են, որն առաջացել է Իսրայելի թագավորության անկումից հետո Հյուսիսային Պաղեստինում հրեական ցեղերի մնացորդների ու ասորեստանցիների կողմից այդտեղ բնակեցված Միջագետքի ժողովուրդների միաձուլման արդյունքում: Սամարացիները հուդայականության յուրահատուկ տարատեսակ են դավանում՝ որպես սուրբ գիրք ճանաչելով միայն Թորան: «Բաբելոնյան գերությունից» հրեաների վերադարձից հետո սամարացիները նրանց երկրի վերականգնման և Երուսաղեմի տաճարի վերակառուցման գործում օգնություն առաջարկեցին, սակայն հրեաները հրաժարվեցին նրանց ազգակիցներ ու կրոնակիցներ ճանաչել: Դա դրեց երկու ժողովուրդների միջև հարյուրամյակներ տևած և Նոր Կտակարանում արձագանք ստացած թշնամանքի սկիզբը: Ներկայումս Իսրայելում բնակվում են մոտ մեկ հազար սամարացիներ, ովքեր յուրատեսակ միջանկյալ օղակ են հրեաների ու պաղեստինցիների միջև:

≈500
Բաբելոնյան Թալմուդի կազմավորման ավարտը:

≈600
Պապ Գրիգոր Ի-ը մշակում է իր եկեղեցու դիրքորոշումը հրեաների հանդեպ, որը նպատակաուղղված էր նրանց քրիստոնեացմանը:

622-628
Մուհամմադը՝ համոզվելով, որ հրեաները մտադիր չեն իրեն մարգարե ճանաչել, վտարում է իր տիրույթներից հրեական որոշ համայնքներին:

638
Արաբները գավթում են Երուսաղեմը և երաշխավորում հրեաների իրավունքները: Տաճարի վայրում կառուցվում է ալ-Հարամ աշ-Շարիֆ մզկիթը:

765
Անան բեն Դավիթը Միջագետքում հիմնում է կարաիմների ուսմունքը:

780-800
Վոլգայի խազարների վերնախավը հուդայականություն է ընդունում:

Դրանցից դիտարկվող ժամանակաշրջանում առավել կարևորը Սասանյան Իրանի տիրապետության ներքո գտնվող Միջագետքի (Բաբելոնի) գաղթօջախն էր: Այն վայելում էր ներքին ինքնավարություն և վերածվել էր հրեաների կրոնական ու մշակութային գլխավոր կենտրոնի: Այստեղ գործում էին մի քանի եշիվաներ, որոնցում շարունակվում էր եբրայերեն ստեղծագործելու ավանդույթը, թեև հրեաների խոսակցական լեզուն տեղի արևելյան արամեական բարբառն էր, որը մոտ էր դասական ասորերենին: Իրենց նշանակությամբ հատկապես աչքի էին ընկնում Սուրա և Պումբեդիթա քաղաքների եշիվաները: Մի քանի եշիվաներ գործում էին նաև Պաղեստինում: Հենց Միջագետքում ու Պաղեստինում այս ժամանակաշրջանում ստեղծվեց հրեական կրոնափիլիսոփայական և իրավագիտական խոշորագույն աշխատությունը՝ Թալմուդը, որի մեծ մասը գրված է արամերեն: Գոյություն ունի Բաբելոնյան Թալմուդ և ավելի փոքր ծավալի ու նշանակության՝ Երուսաղեմյան:

Ամորայական շրջանում եբրայերեն գրված ամենանշանավոր գործը *Գեմարա*-ն է, որը Միշնայի մեկնությունների հավաքածու է, այն Թալմուդի մի մասն է կազմում: Թեև եբրայերենն արդեն երկար ժամանակ խոսակցական լեզու չէր, այնուամենայնիվ, չդադարող գրական գործունեության շնորհիվ նրա զարգացումը շարունակվում էր: Ամորայական ժամանակաշրջանն աչքի ընկավ հետաստվածաշնչային եբրայերենի վերջնական ձևավորումով և այն հատկանիշների ամրագրումով, որոնցով նա տարբերվում է աստվածաշնչային լեզվից, ինչպես օրինակ ավելի ճկուն շարահյուսությունն ու ավելի հարուստ բառակազմական կարողությունները: Բառապաշարն ընդլայնվել էր բազմաթիվ արամեական, հունական, լատինական ու պահլավական փոխառություններով և հասնում էր 14 հազարի՝ վեց հազարով գերազանցելով աստվածաշնչային եբրայերենը: Հարկ է նշել, որ հետաստվածաշնչային եբրայերենը զգալի ազդեցություն է գործել արդի եբրայերենի ձևավորման վրա:

Ամորայական ժամանակաշրջանի վերջում Պաղեստինում մի նորամուծություն ի հայտ եկավ, որը հետագայում շատ կարևոր դեր խաղաց եբրայերենի պահպանման գործում: Բաղաձայնային գրով շարադրված կրոնական և այլ տեքստերի ճիշտ ընթերցումը բերանացի փոխանցվում էր կրոնական դասի մի սերնդից մյուսին, սակայն երբ եբրայերենը դուրս մղվեց խոսակցական ոլորտից, ձևավորվեցին ընթերցման մի քանի տարբերակներ, ինչը սպառնում էր աղավաղումներով և ճիշտ արտասանության վերջնական կորստով: Տիբերիաս քաղաքի *մասորեթ*-ներ (եբրայերեն *մասորա՝* «ավանդույթ» բառից) կոչվող ուսյալները՝ քրիստոնյա արամեացիների օրինակով համալրեցին «քառակուսի» գիրը ձայնավորներ նշող հատուկ նշաններով՝ ձայնանիշներով: Ապա կատարելով մեծածավալ համեմատական ու վերլուծական աշխատանք՝ նրանք մշակեցին ընթերցման՝ իրենց պատկերացմամբ ճիշտ եղանակը, որը և ամրագրեցին ձայնանշության նոր համակարգով: Ձայնավորման և արտասանության «մասորեթական» եղանակը գոյատևեց հարյուրամյակներ, և այն, ի վերջո, ժառանգեց նաև արդի եբրայերենը:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Միջնադարյան եբրայերենը (VII-XVIII դդ.) սփյուռքի հրեական գաղթօջախներում շարունակում էր կատարել այն նույն դերը, ինչ լատիներենը միջնադարի Եվրոպայում: Նրանով գրվում էին բազմաթիվ կրոնական, փիլիսոփայական, քերականական, բժշկական և նույնիսկ գեղարվեստական գործեր, սակայն առօրյայում հրեաները խոսում էին իրենց բնակության երկրի լեզվով: Այս ժամանակաշրջանի առաջին հարյուրամյակներին եբրայերենի ակտիվ գործածության և զարգացման կենտրոնը մնում էր Միջագետքը, որտեղ Սասանյան Իրանի տիրապետությունը VII դարի 30-ական թվականներին փոխարինվեց Արաբական խալիֆայության իշխանությամբ:

Ճիշտ այնպես, ինչպես ժամանակին արամերենը դուրս մղեց խոսակցական ոլորտից Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր սեմական լեզուները, այնպես էլ արաբերե-

800
Բարձրագույն կայսրն ու Պապի Պասը քաջալերում են հրեաների հաստատումը Սրբազան Հռոմեական կայսրությունում:

900-1400
Միջնադարյան Իսպանիան դարձավ հրեական մշակույթի կենտրոն:

1050
Լեհաստանում հիմնվում են հրեական առաջին գետաբնակները:

969
Եգիպտոսի Ֆատիմյան խալիֆները գավթում են Երուսաղեմը և ավերում նրա եկեղեցիներն ու սինագոգները:

1066
Մոլդիսի նորմանական նվաճումից հետո այս երկիր որոք են գնում առաջին հրեաները:

1071
Թուրք սելջուկները գրաված ու ավերում են Երուսաղեմը:

1099
Խաչակիրները գրավում

 են Երուսաղեմը: Բոլդուին I-ը հռչակվում է Երուսաղեմի թագավոր և սրի քաշում քաղաքում բնակվող մահմեդականներին ու հրեաներին:

1144
Անգլիայում առաջին անգամ կիրառվում է «արյան զրպարտությունը». հրեաներին մեղադրում են քրիստոնյա մանուկին սպանելու և նրա արյունը ծիսական կարիքների համար գործածելու մեջ:

1163
Բացվում է առաջին սինագոգը Չինաստանում:

1187
Սալահեդդինը գավթում է Երուսաղեմը խաչակիրներից և թույլատրում մահմեդականներին ու հրեաներին բնակություն հաստատել քաղաքում:

1260
Երուսաղեմը հայտնվում է Եգիպտոսի մամլուքների տիրապետության տակ:

1290
Հրեաները վտարվում են Անգլիայից:

նը՝ առավել ևս լինելով Մերձավոր Արևելքի վրա իշխող գերտերության պաշտոնական լեզուն, աստիճանաբար տարածվեց Արաբական խալիֆայության սեմական և նույնիսկ ոչ սեմական, ինչպես օրինակ Հյուսիսային Աֆրիկան, տարածքներում և դարձավ զանազան ժողովուրդների ընդհանուր լեզուն: Թեև հրեաները բացառություն չէին և նույնպես աստիճանաբար անցան արաբերենի, նրանց, այնուամենայնիվ, հաջողվեց քաղաքական նոր պայմաններում ևս պահպանել եբրայերենը որպես գրավոր և ծիսական լեզու:

Շփումներն արաբերենի հետ դրական ազդեցություն գործեցին եբրայերենի վրա և նպաստեցին նրա քերականության զարգացմանն ու բառապաշարի հարստացմանը: Ընդօրինակելով կամ ուղղակիորեն թարգմանելով արաբական գրականության նմուշները՝ հրեա հեղինակներն ստեղծեցին զանազան բնույթի աշխատություններ: Նրանցից շատերը ստեղծագործում էին ինչպես եբրայերեն, այնպես էլ արաբերեն և հաճախ ինքնուրույն արաբերենի էին թարգմանում եբրայերեն գրված գործը և հակառակը: Իրենց թարգմանչական ունակությունները հրեաները կիրառեցին նաև ազգային մշակույթի շրջանակներից դուրս և պարսիկների ու ասորիների հետ մեկտեղ ներգրավվեցին Աբբասյան խալիֆայությունում թափ առնող թարգմանչական գործունեության մեջ:

Տեսնելով, թե ինչ սեր ու հեղինակություն է վայելում արաբների մեջ նրանց հեթանոս քոչվոր նախնիների մաքուր լեզուն՝ հրեաներն սկսեցին աստվածաշնչային եբրայերենը համարել գրական գործունեության համար ընդունելի միակ ոճը: Միևնույն ժամանակ, արաբերենի ուժեղ ազդեցության ներքո հրեա հեղինակները փորձում էին հարմարեցնել եբրայերենն արաբերենի շարահյուսական և ձևաբանական կանոններին: Արդյունքում ստեղծվեց բավականին արհեստական և առանց արաբերենի իմացության դժվարըմբռնելի մի ոճ:

Արաբական պոեզիայի ազդեցությամբ նոր շունչ առավ *պիյութ* կոչվող աշխարհիկ բանաստեղծական արվեստը: Հրեա բանաստեղծները՝ *պայթան*-ները, ոչ միայն ընդօրինակում էին արաբերենի շարահյուսությունը, այ-

1391
Բարցելոնայում բռնկվում են հրեական կոտորածները: Գաղթարարները հրեաներ քրիստոնեություն են ընդունում, բայց շարունակում են գաղտնի դավանել իրենց կրոնը՝ [illegible] *մեռան*-ներ [illegible] մականունը:

1394
Հրեաները փարվում են Ֆրանսիայից:

1478
Բարձրագույն ինկվիզիցիան փորձում է պարզել մեռանների ճշմարիտ քրիստոնյա լինելը:

1492
Հրեաները վտարվում են Իսպանիայից:

1516
Վենետիկում ստեղծվում է գետտո («ձուլարան»), որում հրեաները մեկուսացվում են քաղաքի բնակչությունից:

1517
Պաղեստինը դառնում է Օսմանյան կայսրության մասը:

1543
Պահպանելով, որ հրեանե-

լն փորձում էին կիրառել արաբական բանաստեղծական չափերը: Այս շրջանի նշանավոր պայթաններից հատկապես հայտնի է միջագետքցի Սաադիա Գաոնը (882-942), ով գրում էր աստվածաշնչային լեզվով՝ այդ թվում արաբներից փոխառված հանգավոր արձակով:

Արաբների անմիջական ազդեցությամբ զարգացավ նաև հրեական քերականական դպրոցը, որում հատկապես աչքի ընկան Քիմհի ընտանիքի ներկայացուցիչները:

Արաբական ժամանակաշրջանի եբրայերենն իր ծաղկման գագաթակետին հասավ Իսպանիայում: Կորդովայի Օմայան խալիֆայության կրոնական ու ազգային անանձնական հանդուրժողականության պայմաններում արաբների ու քրիստոնյաների կողքին բարգավաճում էին հարյուր հազարավոր հրեաներ, որոնցից շատերը նույնիսկ զբաղեցնում էին բարձրաստիճան պետական պաշտոններ: Կորդովան և Իսպանիայի մյուս խոշոր քաղաքներն այդ ժամանակաշրջանի հրեական հոգևոր կյանքի գլխավոր կենտրոններն էին: Այստեղ ապրած և ստեղծագործած նշանավոր հեղինակներից հարկ է նշել Մայմոնիդին, Եհուդա Հալևիին, Մոշե իբն Էզրային և Եհուդա Ալխարիզիին: Նրանք հիմնականում գրում էին աստվածաշնչային եբրայերենով, սակայն շարունակում էին եբրայերենն արաբերենին հարմարացնելու ավանդույթը: Միևնույն ժամանակ նրանց ակտիվ գրական գործունեության շնորհիվ եբրայերենի բառապաշարը շարունակում էր հարստանալ, այդ թվում զանազան գիտական եզրերի հաշվին:

Չնայած Իսպանիայում եբրայերենի գործածության ոլորտի զգալի ընդլայնմանը, այն, ինչպես և այլուր, մնում էր զուտ գրական լեզու: Իսպանական հրեաների խոսակցական լեզուն արաբերենն էր, իսկ այնուհետև՝ միջնադարյան իսպաներենի բարբառներից մեկի հիման վրա զարգացած *լադինո*-ն, որով այսօր էլ խոսում են ոչ մեծ թվով հրեաներ:

Իսպանիայում հրեաների ապահով կյանքն ու եբրայերենի ծաղկման շրջանն ավարտվեցին, երբ Իբերական թերակղզու հյուսիսում պահպանված քրիստոնեա-

որը չեն ընդունելու քրիստոնեության իր քարոզած տարբերակը, Մարտին Լյութերը գրում է մի աշխատություն, որը համարվում է ժամանակակից հակասեմականության աղբյուրներից մեկը:

1577

Պրահաբնակ Մորդեխայ Մարկուսը նշանակվում է արքունիքի ֆինանսիստ՝ սկսելով «արքունիքի հրեաների» շարքը, որոնք մինչև XVIII դ. կեսը Եվրոպական արքունիքներում կատարում էին ֆինանսական խորհրդատուների դեր:

1654

Բրազիլիայից արտագաղթած հրեաները բնակություն են հաստատում Հյուսիսային Ամերիկայում հոլանդական հենակետ՝ Նոր Ամստերդամ (հետագայում Նյու Յորք) քաղաքում:

1665-66

Թրքահպատակ Շաբթայ Ցվին իրեն Մեսիա է հռչակում՝ խանդավառություն առաջացնելով հրեաների մեջ: Երբ նրանից պահանջում են ընտրել մահվան և իսլամ ընդունելու միջև, նա ընտրում է իսլամը: Մի խումբ հրեաներ հետևում են նրան որպես մեսիայի, սակայն բացառվում են գաղտնի դավանել հուդայականություն՝ ստանալով դոնմեի անուն:

1740

Բարոն Շեմ-Տովը Լիտվայում հիմնում է խասիդականությունը, որն արագորեն տարածվում է Արևելյան Եվրոպայում:

1792

Ֆրանսիայի հրեաներին տրվում են քաղաքացիական ամբողջական իրավունքներ:

1795

Լեհաստանի երրորդ բաժանումից հետո նրա տարածքի մեծագույն մասը՝ մեկ միլիոն հրեա յուրացությամբ, անցնում է Ռուսաստանին:

[1] Ներկայումս «սեֆարդ» հաճախ կոչում են հյուսիսաֆրիկյան, մերձավորարևելյան, կովկասյան ու միջինասիական ծագում ունեցող բոլոր հրեաներին, ինչը պատմական առումով արդարացված չէ: Թվարկված խմբերի համար ավելի ընդունելի է համարվում «արևելյան հրեաներ» եզրը:

ռավելապես սլավոնական լեզվական միջավայրում՝ *աշքենազ*-ներ[1] («գերմանացիներ») կոչվող այս հրեաները շարունակում էին խոսել միջնադարյան գերմաներենի բարբառներից մեկով, որն աստիճանաբար, ինչպես ժամանակին լադինոն, վերածվեց հրեաների ուրույն լեզվի՝ *իդիշ*-ի (բառացիորեն՝ «հրեերեն»): Այս լեզվով, որի բառապաշարում շատ են եբրայական ու սլավոնական բառերը, և որը գրի է առնվում «քառակուսի» գրով, ստեղծվեց հարուստ գրականություն և ոչ պակաս հարուստ ժողովրդական բանահյուսություն: Որպես իդիշով ստեղծագործած հայտնի հեղինակ կարելի է նշել Շոլոմ Ալեյխեմին (1859-1916): Իդիշալեզու հարուստ բանահյուսությամբ հատկապես աչքի էր ընկնում XVIII դ. առաջին կեսին Լեհաստանում գոյացած ավանդապաշտ հրեաների՝ *խասիդ*-ների («բարեպաշտների») համայնքը, որի ծիսակատարություններում մեծ տեղ է հատկացված երաժշտությանը: Արևելյան Եվրոպայի իդիշալեզու հարուստ մշակույթը գրեթե ամբողջությամբ հիմնահատակ արվեց նացիստների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին: Այնուամենայնիվ, որպես խոսակցական և գրական լեզու իդիշը գործածվում է մինչև այսօր, հիմնականում ԱՄՆ-ի, Եվրոպայի ու Իսրայելի ավանդապաշտ համայնքներում և ունի գործածության ավելի լայն ոլորտ, քան անհետացման վտանգի առջև կանգնած լադինոն: Պետք է նշել, որ սիոնիզմի գաղափարախոսներն ու Իսրայելի Պետության հիմնադիրները, թեև նրանց մեծամասնության համար իդիշը մայրենի լեզու էր, բացասաբար էին տրամադրված նրա նկատմամբ՝ դիտելով այն Եվրոպայում հրեաների մեկուսացման արդյունք ու խորհրդանիշ: Իսրայելում իդիշը երկար ժամանակ մնում էր անտեսված «ժարգոն», սակայն XX դ. երկրորդ կեսից երկրում սկսվեց նրա նկատմամբ հետաքրքրության զգալի աճ, և այդ լեզուն այժմ դիտվում է հրեական հոգևոր ու մշակութային ժառանգության կարևոր տարր:

[1] «Աշքենազ» (հայերեն՝ Ասքանազ, Հաբեթ նահապետի թոռան անունով) հրեաներն ավանդաբար կոչում էին իրենց ծանոթ ամենահյուսիսային երկիրը: Ըստ Երեմիա մարգարեի գրքի (51:27), Աշքենազն Արարատյան թագավորությանը հարևան երկիր էր: Միջնադարում «Աշքենազ» էին կոչում Գերմանիան, որը երկար ժամանակ հրեաների բնակության ամենահյուսիսային երկիրն էր:

1804
Ռուսաստանում վերջնականապես ձևավորվում է «նստակեցության գիծը», որից դուրս հրեաներին արգելվում էր բնակություն հաստատել:

1848
Գերմանիայում երաշխավորվում են հրեաների քաղաքացիական իրավունքները:

1858
Լայոնել Ռոտշիլդը դառնում է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի առաջին հրեա պատգամավորը:

1860
Երուսաղեմից դուրս հիմնվում է հրեական առաջին՝ Միշքենոթ Շաանանիմ թաղը:

1882-1902
Ռուսաստանում հրեաների կոտորածներն առաջացնում են Պաղեստին արևելեվրոպական հրեաների արտագաղթի առաջին ալիքը:

1894
Ֆրանսիայում հրեա սպա Ալֆրեդ Դրեյֆուսը

ԱՐԴԻ ԵԲՐԱՅԵՐԵՆ

Արդի եբրայերենի ակունքները պետք է փնտրել դեռևս XVI դարում, երբ գրվեց առաջին եբրայալեզու դրաման և կազմվեց առաջին իդիշ-եբրայերեն բառարանը: Եբրայերենի զարգացման այս փուլը վերջնականապես ամբողջացավ աշքենազյան հրեաների միջավայրում XVIII դ. 70-ականներին սկսված լուսավորչական շարժման ժամանակաշրջանում: Ֆրանսիական Լուսավորության գաղափարների ազդեցությամբ ծնունդ առած և զարգացած այդ շարժումը հայտնի է եբրայերեն *Հասկալա* անվանումով: Հասկալան հետապնդում էր ինչպես հասարակական նպատակներ, ինչպես օրինակ հրեաների մեկուսացման հաղթահարումն ու հասարակության մեջ նրանց ներդաշնակ ինտեգրումը, այնպես էլ մշակութային ու կրթական, որոնցից մեկը եբրայերեն լեզվի գործածության ոլորտի ընդլայնումն էր: Վերջինը հիմնականում պայմանավորված էր Եվրոպայում ազգային լեզուների կայացման գործընթացի հաջողությամբ: Հասկալայի նշանավոր գործիչներից էր Գերմանիայում բնակվող Մոզես Մենդելսոնը (1729-1786), ով 1783 թ. սկսեց հրատարակել *Համեասֆ* («Միավորիչ») եբրայերեն ամսագիրը և նույն թվականին լույս ընծայեց նաև Թորայի գերմաներեն թարգմանությունը: Մենդելսոնն ու նրա հետևորդներն արհամարհանքով էին վերաբերվում հետաստվածաշնչային եբրայերենին՝ համարելով, որ այն գերհագեցած է արամեական բառերով և քերականական սխալներով: Նույնն էր նրանց վերաբերմունքը նաև պայթանների ժառանգության, եբրայերենի վրա արաբերենի ազդեցության և իդիշի նկատմամբ: Նրանք միակարծիք էին, որ վերակենդանացված եբրայերենի հիմքում պետք է դրվի աստվածաշնչային մաքուր լեզուն՝ անտեսելով այն փաստը, որ հետաստվածաշնչային ու միջնադարյան փուլերի լեզուներն ավելի էին հարմար կյանքի նոր իրողություններն արտահայտելու համար:

XIX դ. սկզբից Հասկալայի կենտրոնը Գերմանիայից աստիճանաբար տեղափոխվեց Ռուսաստան ու Ավստրիա, որտեղ երևան եկան եբրայերեն ստեղծագործող

[illegible] է Գերմանիայում հրեական գաղտնի [illegible] փոխանցելու մեջ: Տնտեսական [illegible] պատճառով [illegible] գործը» հանդիսանալու մեծ արձագանք է ստանում: Դատապարտությանը ներկա գտնվողներ հրեա լրագրող Թեոդոր Հերցելը հանգում է այն եզրակացության, որ եթե հրեաները կարող են հակասեմիտիզմի գոհ դառնալ Ֆրանսիայում, ապա [illegible] կարող է տեղի ունենալ Եվրոպայի ցանկացած այլ երկրում: Հերցելի հետևությունն այն էր, որ հրեաները Եվրոպայում ապագա չունեն:

1896
Թեոդոր Հերցելը հրատարակում է «Հրեական պետություն» գիրքը, որտեղ հայտարարում է, որ հրեաների անվտանգությունը կարող է երաշխավորված լինել միայն սեփական պետությունում: Գիրքը դնում է սիոնիզմի գաղափարախոսական հիմքերը:

1897
Բազելում գումարվում է

բազմաթիվ հեղինակներ, իսկ 40-ականներից սկսած լույս էին տեսնում եբրայական պարբերականներ: Դրանցից առավել նշանավորներն էին *Պիրխեյ ցաֆոն* («Հյուսիսի ծաղիկներ», Վիլնյուս, 1841-1844) և *Հաքարմել* («Բուրաստան», Վարշավա, 1860-1880) ամսագրերը: Ի տարբերություն Մենդելսոնի, այս պարբերականների հետ համագործակցող հեղինակները փորձում էին միահյուսել բոլոր ժամանակաշրջաններին բնորոշ լեզվական տարրերը: Արդյունքում ի հայտ եկավ չափազանց վերամբարձ մի ոճ, որը հայտնի դարձավ *մելիցա* («փքուն») անունով: Այն ոչ պակաս արհեստական էր, քան Մենդելսոնի «նորացված» աստվածաշնչային լեզուն:

XIX դ. երկրորդ կեսին սկսվեց հրեաների կանոնավոր ներգաղթը Պաղեստին, որին մեծապես նպաստում էին Ռուսաստանում թափ առնող հակահրեական տրամադրություններն ու ջարդերը և դրանցից սնվող սիոնիստական շարժումը. վերջինի նպատակն էր Պաղեստինում հաստատել հրեական «ազգային օջախ», ապա և պետություն: 1900 թ. Պաղեստինի հրեա բնակչության թիվը կազմում էր 50 հազար և շարունակում էր արագ աճել: Երկու հազար տարվա ընդմիջումից հետո Պաղեստինում մեծաթիվ հրեական բնակչության գոյացումն անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց նաև ազգային լեզվի գործածության շրջանակների ընդլայնման համար: Արդեն իսկ մինչև զանգվածային ներգաղթի սկիզբը Երուսաղեմում բնակվող սակավաթիվ, սակայն բազմալեզու հրեաներն ունեին եբրայերենը որպես հաղորդակցության միջոց գործածելու որոշ փորձ: Այժմ հասունանում էր եբրայերենի՝ որպես միասնական ու միակ ազգային լեզվի վերականգնման անհրաժեշտության գաղափարը:

Թեև Պաղեստինում եբրայերենի վերակենդանացումը հաճախ հիշատակվում է որպես սիոնիզմի հիմնական նպատակներից մեկը, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ սիոնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցելը թերահավատ էր եբրայերենի ապագայի նկատմամբ: «Մեզանից ո՞վ այնքան եբրայերեն գիտի, որ կարողանա այդ լեզվով գնացքի տոմս պատվիրել», – հարցնում էր նա իր հոդվածներից մեկում: Ըստ նրա, եբրայերենի վերակենդա-

Սիոնիստական առաջին համաժողովը և հիմնադրվում է Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը:

1903
Սիոնիստական 6-րդ համաժողովը մերժում է Արևելյան Աֆրիկայում հրեական ազգային օջախ ստեղծելու Բրիտանիայի առաջարկը՝ («Ուգանդայի ծրագիր»):

1904-1914
Հրեա գաղթականների երկրորդ ալիքը դեպի Պաղեստին:

1909
Յաֆֆայի հարևանությամբ հիմնադրվում է Թել-Ավիվ քաղաքը:

1917
«Բալֆուրի հռչակագիրը» խոստանում է Բրիտանիայի աջակցությունը Պաղեստինում հրեական ազգային օջախ հիմնելու հարցում:

1922
Մեծ Բրիտանիան ստանում է Պաղեստինը կառավարելու Ազգերի լիգայի մանդատը:

նացմանն ուղղված ջանքերն անպտուղ էին: Նա գտնում էր, որ Պաղեստինում յուրաքանչյուր հրեա կխոսի իր լեզվով, և այդ լեզուներից մեկն, ի վերջո, կընդունվի բոլորի կողմից: Հիմնականում ենթադրվում էր, որ դա կլինի գերմաներենը կամ իդիշը:

Եբրայերենի վերակենդանացման գործում բացառիկ դեր խաղաց հայտնի հասարակական գործիչ ու լեզվաբան, Լիտվայի ծնունդ Էլիեզեր Բեն-Եհուդան (1858-1922, իսկական անունը Լազար Պերելման): Եբրայերենի վերակենդանացման եռանդուն ջատագով՝ Բեն-Եհուդան 1879 թ. հրապարակեց «Հրատապ հարց» հոդվածը, որում հիմնավորում էր եբրայերենի վերակենդանացման անհրաժեշտությունը: 1881 թ. նա իր ընտանիքով տեղափոխվեց Պաղեստին և գլխավորեց եբրայերենի գործածության ոլորտների ընդլայնմանը միտված գործունեությունը: Բեն-Եհուդան չէր սահմանափակվում եբրայերենն առօրյայում գործածելու կոչերով, այլև ինքն էր տալիս դրա օրինակը: Շրջապատի թերահավատությանը և նույնիսկ ծաղրանքին հակառակ, Բեն-Եհուդան իր տանը խոսում էր միայն եբրայերեն: Պաղեստինում ծնված նրա որդին դարձավ երկու հազար տարվա ընդմիջումից հետո առաջին եբրայախոս մանուկը:

Եբրայերենի վերակենդանացումը պահանջում էր գիտական լուրջ աշխատանք: Անհրաժեշտ էր մշակել գրական լեզվի նոր ձևաչափ, ինչը ենթադրում էր նաև արտասանական կանոնների հոկում: Թեև դասական տեքստերի մասորեթական ձայնավորումն ընդունված էր հրեական բոլոր համայնքների կողմից, այնուամենայնիվ, հարյուրամյակների ընթացքում ձևավորվել էին արտասանական երկու տարբերակներ՝ սեֆարդյան ու աշքենազյան: Բեն-Եհուդան կանգ առավ առաջինի վրա, քանի որ այն ավելի էր համապատասխանում հին եբրայերենի հնչյունային համակարգին, մինչդեռ աշքենազյանում ըզգացվում էր եվրոպական լեզուների ազդեցությունը: Այդուհանդերձ, աշքենազյան արտասանությունը որոշ ազդեցություն գործեց նոր գրական լեզվի արտասանության վրա, քանի որ XIX դ. վերջում և XX դ. սկզբում Պաղեստինի հրեա բնակչության ճնշող մեծամասնությունն աշքենազներ էին: Զուգահեռաբար, Պաղեստինի հյուսիսում՝ Գալիլեայում, մի խումբ լեզվաբաններ և ուսուցիչներ փորձում էին արմատավորել արտասանական մեկ այլ տարբերակ, որը գոյատևեց մինչև 1920-ականները, ապա դուրս եկավ գործածությունից:

1933
Գերմանիայում հիմնադրվում է Եբրայական համալսարանը:

1948
Հրեաստանի Հեռավոր Արևելքում ստեղծվում է Դեմոկրատական ինքնավար մարզը:

1930-ականներ
Լենինգրադի հրահանգով Խորհրդային Միությունում դրեթե ամբողջությամբ ոչնչացվում են հրեական մշակութային հաստատություններն ու դրանցում հասանելիությունը:

1939
Լեհական կառավարությունը Գերմանիայում ու Ավստրիայում կազմակերպում է հրեական կոտորած, որն ընդունում է «Բյուրեղագիծ» անունը:

1939-1945
Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նացիստները ոչնչացնում են վեց միլիոն հրեաների:

1948
Հայտարարվում է Իսրայելի Պետությունը:

1949
Երուսաղեմը բաժանվում է Իսրայելի ու Հորդանանի միջև, ապա Արևմտյան Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք է հայտարարվում:

1956
Սուեզի ջրանցքի ազգայնացումից հետո Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Իսրայելը գրոհում են Եգիպտոսը:

1967
«Վեցօրյա պատերազմի» ընթացքում Իսրայելը զավթում է Արևելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանի բարձունքը և Սինայ թերակղզին: Միացյալ Երուսաղեմը հայտարարվում է Իսրայելի մայրաքաղաք:

1973
Իսրայելի՝ «Դատաստանի օրվա» պատերազմը Սիրիայի ու Եգիպտոսի հետ:

1979
Քարթեր - Բեգին - Սադաթ հանդիպումից մեկ տարի անց ստորագրվում է Իսրայելա-

մը: Նրա մահից հետո այդ հսկայածավալ աշխատանքն ավարտին հասցրին նրա կինն ու որդին: 1890 թ. Բեն-Եհուդան իր համախոհների հետ հիմնեց Եբրայերեն լեզվի կոմիտեն, որը կոչված էր ղեկավարելու եբրայերենի վերակենդանացման գործընթացը: 1953 թ. կոմիտեն վերածվեց Եբրայերեն լեզվի ակադեմիայի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կտրուկ աճեց Գերմանիայից Պաղեստին ներգաղթած հրեաների թիվը, և գերմաներենն սկսեց լրջորեն սպառնալ եբրայերենի՝ որպես հաղորդակցության միջոցի դեռ չամրապնդված դիրքերին: Այս ժամանակաշրջանը հայտնի դարձավ որպես «լեզուների պատերազմ», որից եբրայերենն, ի վերջո, հաղթանակած դուրս եկավ: Դրան զգալիորեն նպաստեց մասնավորապես այն, որ եբրայերենն արդեն մուտք էր գործել կրթական համակարգ, և միայն եբրայերեն դասավանդող դպրոցներն արդեն պատկառելի թիվ էին կազմում:

1923 թ. Մեծ Բրիտանիան ստացավ Պաղեստինը կառավարելու մանդատ, և եբրայերենին ու արաբերենին տրվեց պաշտոնական լեզուների կարգավիճակ: Բրիտանական մանդատի տարիներին, երբ Պաղեստինի հրեա բնակչությունը զգալիորեն աճեց, եբրայերենի վերակենդանացումը դարձավ իրողություն, ինչին նպաստեց նաև Պաղեստինում եբրայալեզու բարձրագույն ուսումական հաստատությունների հիմնումը, ինչպես օրինակ Երուսաղեմի Եբրայական համալսարանը և Խայֆայի ճարտարագիտական ինստիտուտը՝ «Տեխնիոն»-ը:

1948 թ. մայիսին հռչակվեց Իսրայելի Պետությունը, և եբրայերենը դարձավ նրա պետական լեզուն:

Ինչպես նշվեց, եբրայերենի վերակենդանացումը հանրալեզվական բացառիկ երևույթ է: Եբրայերենն այսօր գործում է որպես լիարժեք գրական ու խոսակցական ազգային լեզու՝ իր կատարած գործառույթներով չզիջելով կենդանի այլ լեզուներին: Իսրայելում առայժմ չեն ձևավորվել տարածքային բարբառներ, սակայն առկա են զգալի տարբերություններ գրական ու խոսակցական լեզուների միջև: Շարունակվող ներգաղթը և Իսրայելի հրեա բնակչության առայժմ պահպանվող համայնքային

Եգիպտական խաղաղության պայմանագիրը, որի Սինայը վերադարձնում է Եգիպտոսին:

1982
Բանակը ներխուժում է Լիբանան:

1987
Պաղեստինյան ապստամբության՝ Ինթիֆադայի սկիզբը:

1991
Մադրիդի կոնֆերանսն առաջարկում է «Հող խաղաղության դիմաց» սկզբունքը՝ որպես հակամարտության կարգավիճակի հիմք:

1992
Հորդանանն ու Իսրայելը դիպլոմատիկական հարաբերություններ են հաստատում:

1993
Պաղեստինի ազատագրման կազմակերպությունն ու Իսրայելը ստորագրում են Օսլոյի համաձայնագիրը, որի համար Յասեր Արաֆատը, Շիմոն Պերեսն ու Յիցհակ Ռաբինն ստանում են խաղաղության Նոբելյան մրցանակը:

բաժանումը հանգեցնում են նրան, որ երկրում եբրայերենի ու արաբերենի կողքին հնչում են բազմաթիվ այլ լեզուներ՝ այս կամ այն աստիճանով ազդելով խոսակցական եբրայերենի արտասանության ու բառապաշարի վրա: Արդյունքում ձևավորվել են խոսակցական լեզվի արտասանական մի քանի տարբերակներ, ինչպես օրինակ՝ արաբական երկրներից ներգաղթած հրեաների և Իսրայելի արաբների արտասանությունը, որին բնորոշ է կոկորդային հնչյունների առկայությունը, կամ աշքենազյան արտասանությունը, որի վրա զգացվում է իդիշի և եվրոպական լեզուների ազդեցությունը:

Ավանդականորեն ուժեղ է եբրայերենի վրա ռուսերենի ներգործությունը, քանի որ ինչպես XIX, այնպես էլ XX դդ. վերջին տասնամյակներում ներգաղթած հրեաների մեծամասնությունը ռուսախոս էր: Ռուսերենի ազդեցությունը զգացվում է խոսակցական լեզվի բառապաշարի և ռուսալեզու իսրայելցիների արտասանության վրա: Գրական լեզվում գործածվող բազմաթիվ արտահայտություններ, կայուն բառակապակցություններ ու ասացվածքներ ուղղակիորեն թարգմանված են ռուսերենից: XX դ. կեսից եբրայերենի վրա կտրուկ աճեց նաև անգլերենի ազդեցությունը:

Եվրոպական լեզուների ազդեցությունը որոշ լեզվաբաններին առիթ տվեց խոսելու եբրայերենի «հնդեվրոպացման» մասին, իսկ ոմանց նույնիսկ պնդել, թե եբրայերենը վերջնականապես կորցրել է իր սեմական էությունը: Իրոք, եբրայերենի շարահյուսության ու հնչյունական համակարգի վրա հնդեվրոպական լեզուների ազդեցությունն ակնհայտ է, սակայն այն, անկասկած, պահպանում է սեմական լեզուներին բնորոշ հիմնական բոլոր առանձնահատկությունները և չի կարող առանձնացվել այդ լեզվաընտանիքից:

Իսրայելում եբրայերենի համար պատասխանատու գլխավոր մարմինը Եբրայերեն լեզվի ակադեմիան է (www.hebrew-academy.huji.ac.il), որը գտնվում է Երուսաղեմի Եբրայական համալսարանի տարածքում: Այն զբաղվում է գիտական հետազոտություններով, քերականական, ուղղագրական, արտասանական, կետադրա-

1995
Իսրայելն ու Հորդանանը խաղաղության պայմանագիր են ստորագրում:

2000
Հռոմի Պապն առաջին անգամ պաշտոնական այց է կատարում Իսրայելի Պետություն:

կան, տառադարձական և այլ կանոնների սահմանումով, նոր եզրերի ստեղծումով, զանազան պարբերականների հրատարակումով: Ակադեմիայի մշակած կանոնները, որոնք հրատարակվում են պաշտոնական տեղեկագրի տեսքով, պարտադիր են գործածության համար, հատկապես պետական մարմինների կողմից, սակայն իրականում հաճախ անտեսվում են: Դրա հետևանքներից մեկն այն է, որ Իսրայելում շարունակվում է ուղղագրական որոշ խառնաշփոթը, և առկա է կամայական մոտեցում օտար բառերի տառադարձման հարցում:



ՆԵՐԱԾԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԳՐԻ ՄԱՍԻՆ

Ա.1. Եբրայական այբուբենը բաղկացած է արամեա-փյունիկյան ծագման 22 տառերից, որոնք նաև հայտնի են որպես «քառակուսի գիր»: Տառերը նշում են բաղաձայն հնչյուններն ու այն ձայնավորները, որոնք հին եբրայերենում երկար էին (Ձայնավորների երկարության մասին ստորև): Մնացած ձայնավորները նշվում են կետերից ու գծիկներից կազմված հատուկ նշաններով՝ *ձայնանիշներով* (Եբրայերեն՝ *նեկուդոթ*), որոնք, բացի մեկից, դրվում են տառի տակ և ընթերցվում նրանից հետո: Ձայնանիշներով գրությունը կոչվում է «ձայնավորված գրություն»: Այս գրությամբ, որպես կանոն, տպվում են բանաստեղծական ժողովածուները, կրոնական ու մանկական գրքերը, եբրայերենի ուսումնական ձեռնարկներն ու բառարանները: Տեքստերի ճնշող մեծամասնությունը, սակայն, ձայնանիշներ չունի. այսպիսի գրությունը կոչվում է «չձայնավորված»:

Ա.2. Ներկայումս չձայնավորված տեքստերի ընթերցումը դյուրացնելու համար ձայնավորները, որտեղ հնարավոր է, նշվում են այբուբենի տառերով: Գրության այս եղանակը կոչվում է «ամբողջական ուղղագրություն»՝ ի տարբերություն աստվածաշնչային ու հետաստվածաշնչային գրականությամբ ամրագրված ձայնավորման դասական համակարգի, որն առավելապես հենվում է ձայնանիշերի վրա և կոչվում «պակասավոր ուղղագրություն»: Թեև Եբրայերենի ակադեմիայի կարգադրությամբ ամբողջական ուղղագրությունը պարտադիր է, իրականում Իսրայելում երկու համակարգերն էլ գործածվում են՝ հանգեցնելով ուղղագրական խառնաշփոթի:

Ա.3. Ինչպես սեմական լեզուների մեծամասնության, եբրայական գրի ուղղությունն աջից ձախ է: Եբրայերեն գրքերի կոնակներն աջ կողմից են, և էջերը թերթվում են ձախից աջ ուղղությամբ:

Ա.4. Տառերը չեն բաժանվում մեծատառերի ու փոքրատառերի, սակայն մեծ է տարբերությունը տպագիր ու ձեռագիր տառերի միջև: Ձեռագիր տառերը, որպես կանոն, չեն կապակցվում և գրվում են իրարից անջատ:

Ա.5. Տառերն ունեն նաև թվային արժեք և գործածվում են հրեական տոմարի տարեթվերի նշման, համարակալման և այլ նպատակներով:

Ա.6. Արդի եբրայերենում հին եբրայերենի համեմատ տառերի հնչյունական որակը կրել է որոշ փոփոխություններ, քանի որ արդի եբրայերենն ամբողջությամբ չի պահպանել հին եբրայերենի հնչյունական համակարգը: Սույն դասագիրքը հետևում է Իսրայելում ընդունված նորմատիվ, այսպես կոչված՝ «հաղորդավարական» արտասանությանը:

Բ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐ

Բ.1. Հին եբրայերենի ձայնավորները բաժանվում էին երկարների, կարճերի ու գերկարների («կիսաձայնավորներ»): Ձայնավորի յուրաքանչյուր տարբերակը նշվում էր առանձին ձայնանիշով: Արդի եբրայերենի հինգ ձայնավորները՝ «ա», «ի», «օ», «ու», «է», չեն տարբերակվում ըստ երկարության, սակայն հին եբրայերենի ձայնանիշային համակարգն ու բառի ձայնավորման ավանդական եղանակը պահպանվել են, այսինքն՝ արդի եբրայերենում բառերը շարունակում են ձայնավորվել այնպես, ինչպես նրանք հնչում էին հին եբրայերենում: Սա նշանակում է, որ միևնույն ձայնավորը կարող է նշվել մեկից ավելի ձայնանիշով: Յուրաքանչյուր նոր բառի հետ պետք է յուրացվի նրա ձայնավորումը, քանի որ ձայնանիշները չեն կարող կամայականորեն փոխարինվել մեկը մյուսով:

Բ.2. ָ[1] կամաց, նշում է «ա» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «ա»):

Բ.3. ֶ ցեռե, նշում է «է» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «է»):

Բ.4. Ոֹ խոլամ կամ «պակասավոր խոլամ» (*խոլամ խասեր*), տառի վերևը դրվող միակ ձայնանիշն է: Նշում է «օ» ձայնավորը (հին եբրայերենում՝ երկար «օ»):

[1] Պրոբակը պայմանականորեն նշում է այբուբենի ցանկացած տառը:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Բ.5. א – անվանումը՝ **ա՛լեֆ** – ձեռագիր տարբերակը՝ *𐡀* (գրվում է նախ կիսակլոր-բակը, ապա գծիկը): Արդի եբրայերենում չունի սեփական հնչողություն և հիմնականում հանդես է գալիս որպես հենարան ձայնանիշի համար՝ նշելով ցանկացած ձայնավոր՝ אָ - «ա», אֶ - «է», אֹ - «օ»:

Բ.6. Բառամիջում և բառավերջում առանց ձայնանիշի א տառը չի արտասանվում (բառավերջում א հիմնականում ունեն արամեերենից փոխառված բառերը):

Բ.7. א տառը պատկանում է այսպես կոչված «կոկորդայինների» խմբին: Հին եբրայերենում այն նշում էր սեմական լեզուներին բնորոշ կոկորդային հնչյուն՝ «կոկորդային պայթյուն»: Արդի եբրայերենում կոկորդային պայթյունը մասամբ վերականգնվում է բառամիջում՝ բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ առաջացնելով խոսքային հոսքի ընդհատում: Հայերեն տառադարձության մեջ կոկորդային պայթյունը նշվում է ապաթարցով (՚):

Բ.8. ב – **բեթ** – ձեռագիր տարբերակը՝ *𐡁*: Այս տառն ունի արտասանության երկու տարբերակ. «թեթև *դագեշ*» կոչվող կետով (בּ) այն հնչում է «բ», առանց դագեշի (ב)՝ «վ»՝ այս դեպքում կոչվելով «վեթ»: Չնայած այս երկակի արտասանության, սա մեկ տառ է՝ «բեթ» ընդհանուր անունով, քանի որ նույն բառի նույն ב տառը մի դեպքում կարող է հնչել «բ», մյուսում՝ «վ»:

Բ.9. Չձայնավորված տեքստերում դագեշը չի նշվում, և արտասանական երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրություն (ב): Տառը ճիշտ արտաբերելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում և բառամիջում՝ փակ, այսինքն՝ բաղաձայնով ավարտվող վանկից հետո այն միշտ հնչում է «բ», իսկ բառավերջում և բառամիջում բաց՝ ձայնավորով ավարտվող վանկից հետո՝ «վ» (բառավերջում «բ» հնչյունը հանդիպում է միայն փոխառություններում):

① 🎧 [1] *Կարդացեք.* [1]אָב בָּב בַּב בֶּב בֵּב בָּב בֻּב בָּב בִּב בָּב ←

[1] Տե՛ս Բ.6.

[1] Սույն նշանով նշված են ընթերցանության այն վարժությունները, որոնք ուղեկցված են ձայնային ֆայլերով (ԱԱ՝ դաս Ա, վարժություն ①):

Բ.10. ג – **գի՛մել** – ձեռագիր տարբերակը՝ *𐡂*: Հնչում է «գ»:

Բ.11. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով ג, որը հնչում էր «գ», և առանց դագեշի ג, որը հնչում էր «ղ»: Արդի եբրայերենը չունի «ղ» հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ג-ג տարբերակները, որոնք երկու դեպքում էլ պետք է արտաբերել «գ»՝ גַּג *գագ:*

② 🎧 *Կարդացեք.* [1]גַּג גָּג גֶּג גֵּג גָּג גֻּג גָּג גִּג גָּג גֹּג גָּג גֹּג גָּג ←

[1] Բ.6.

Բ.12. ד – **դա՛լեթ** – ձեռագիր տարբերակը՝ *𐡃*: Հնչում է «դ»:

Բ.13. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով ד, որը հնչում էր «դ», և առանց դագեշի ד, որը հնչում էր ինչպես անգլերենի th կապակցությունը this բառում: Արդի եբրայերենը չունի th հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ד-ד տարբերակները, որոնք երկու դեպքերում էլ պետք է արտաբերել «դ»՝ דָּד *դադ:*

③ 🎧 *Կարդացեք.* דָּד דַּד דָּד דֵּד דָּד דֹּד דָּד אֵד דָּא [1]דָּג גָּג גֶּד ←

[1] Բ.6.

Բ.14.1. ה – **հե** – ձեռագիր տարբերակը՝ *𐡄*: Հնչում է «հ»: Ինչպես և א տառը, ה տառը պատկանում է «կոկորդայինների» խմբին:

Բ.14.2. Բառավերջում ה տառը չի հնչում՝ בָּה *բա:*

Բ.14.3. Եթե բառավերջի «հ»-ն պետք է հնչի, ապա ה տառի մեջ դրվում է *մապիկ* կոչվող կետը (ה)՝ בָּהּ *բահ,* הָהּ *հահ*[1]:

④ 🎧 *Կարդացեք.* [3]בָּהּ [2]הָד הָהּ [1]הָא הָ הֵ הֶ הַ הָ הֹ הָ הֻ הָ הִ הָ הַ הָ ←

[1] Բ.6. [2] Բ.14.2. [3] Բ.14.3.

[1] Խոսակցական լեզվում մապիկով ה-ն նույնպես, որպես կանոն, չի արտասանվում:

Լսեք հետևյալ բառերը.

אָב	*ավ* (ար.)	«հայր»
	ուզա (իգ.)	«թխվածք, տորթ»
	բուբա (իգ.)	«տիկնիկ»
	դիռա (իգ.)	«բնակարան»
דָּג	*դազ* (ար.)	«ձուկ»
	տօվ (ար.)	«լավ»

ՇԵՇՏԱԴՐՈՒՄ

Բ.15. Եբրայերենում հիմնականում շեշտադրվում է բառի վերջին վանկը: Սույն դասագրքի տառադարձության մեջ շեշտը (՛) նշվում է միայն այն դեպքում, երբ չի ընկնում վերջին վանկի վրա:

⑤ *Կարդացեք և արտագրեք.*

אָ בָּ בָ גָּ דָּ הָ אַ בַּ בַ גַ דַ הַ אֹ בֹ בוֹ גוֹ דוֹ הוֹ

בֵּ הֵ גֵ דֵ דֶ אֹ בֶ גָּ הָ הֶ דֶ גֹ אֶ בֶ אָ בָ גָ הָ

אָב אַד בָּא[1] בָּה[2] גָּא[1] דָּא[1] דָּג הַד הָה[2]

אָבָה[3] בָּדָד בָּהָה[3] גָּאָה[3] גָּדָה[3] גַּהָה[3] דָּאָה[3] דָּהָה[3]

[1] Բ.6. [2] Բ.14.3. [3] Բ.14.2.

⑥ *Կարդացեք նույնի ձեռագիր տարբերակը.*

אָ בָּ בָ גָּ דָּ הָ אַ בַּ בַ גַ דַ הַ אֹ בֹ בוֹ גוֹ דוֹ הוֹ

בֵּ הֵ גֵ דֵ דֶ אֹ בֶ גָּ הָ הֶ דֶ גֹ אֶ בֶ אָ בָ גָ הָ

אָב אַד בָּא בָּה גָּא דָּא דָּג הַד הָה

אָבָה בָּדָד בָּהָה גָּאָה גָּדָה גַּהָה דָּאָה דָּהָה

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բ.16. Եբրայերենն ունի հետևյալ խոսքի մասերը՝ գոյական անուն, ածական անուն (գոյականն ու ածականը հաճախ միավորվում են «անուն» ընդհանուր խոսքի մասի մեջ), թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, շաղկապ, նախդիր, մասնիկ ու ձայնարկություն:

Բ.17. Եբրայերենն ունի երկու սեռ՝ արական ու իգական: Ըստ սեռի տարբերակվում են գոյականները, ածականները, բայերը, թվականներն ու դերանունների մի մասը:

Գ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐ

Գ.1. **ָ պաթախ**, նշում է **«ա»** ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ա»):

Գ.2. **ֶ սեգոլ**, նշում է **«է»** ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «է»):

Գ.3. **ִ խիրիկ**, նշում է **«ի»** ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ի»):

Գ.4. **ֻ կուբրուց**, նշում է **«ու»** ձայնավորը (հին եբրայերենում՝ կարճ «ու»):

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Գ.5. **ֹ – վավ** – ձեռագիր տարբերակը՝ /: Այս տառով նշվում են **«օ»**, **«ու»** ձայնավորները և **«վ»** բաղաձայնը:

Գ.6. «Օ» ձայնավորի տարբերակում ו-ի վրա դրվում է խոլամ ձայնանիշը (ֹ). այս կապակցությունը կոչվում է «ամբողջական խոլամ»: Այսպիսով «օ» ձայնավորը կարող է նշվել խոլամ ձայնանիշով և՝ հատկապես ամբողջական ուղղագրության մեջ, ամբողջական խոլամով:

Գ.7. «Ու» ձայնավորի տարբերակում կետը դրվում է տառի մեջ (ּ). այս կապակցությունը կոչվում է «շուրուկ»: Այսպիսով «ու» ձայնավորը կարող է նշվել կուբրուց ձայնանիշով և՝ հատկապես ամբողջական ուղղագրության մեջ, շուրուկով:

Գ.8. «Վ» բաղաձայնի տարբերակում վավ տառը կետ չունի՝ גֹ *գվվ*, הוֹי *hoվէ*: Այսպիսով «վ» բաղաձայնը կարող է նշվել ב (առանց դագեշի) և ו տառերով, սակայն իրար փոխարինել նրանք չեն կարող, այսինքն՝ גֹ բառը չի կարող գրվել בג, իսկ אָב բառը («հայր») չի կարող գրվել וָא:

Գ.9. Ձայնավորված տեքստերում ամբողջական խոլամի և շուրուկի կետերը չեն գրվում, և արտասանության երեք տարբերակներն էլ ունեն գրության միևնույն՝ առանց կետի ձևը (ו): Պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում ամբողջական խոլամ (ו) երբեք չի լինում, իսկ շուրուկ (ו) լինում է միայն մեկ դեպքում (բառասկզբում հնչող «օ»-ն գրվում է וֹא, իսկ «ու»-ն՝ וּא): Այսպիսով, բառասկզբի ו-ը, որպես կանոն, միշտ «վ» է: Ամբողջական ուղղագրության մեջ բառամիջի «վ»-ն կարող է նշվել երկու ו տառով (וו):

Գ.10. Ձայնավորված գրության մեջ ו-ն ձայնավորից հետո կարող է հնչել «վօ», իսկ ו-ն՝ «վ», սակայն այսպիսի դեպքերը շատ հազվագյուտ են:

① *Կարդացեք.*

←

נָ וָ וּ וַ וָ וֶ וַ וָ וֹ וָ וַ אוֹ[1] אוּ[1] בוֹ בוֹ דוּ דוֹ הוֹ דוּ גוֹ גוּ בוּ בוּ וָ אוֹבֹ

בוֹא[2] גוֹב דוֹד דוֹב דוּד הוּא[2] הָבוּ גָוָה[3] אָבוּד אָהוּב אָהוּד אוֹכֵד[1] אוֹהֵב[1]

אוֹהֵד[1] אוֹגֵד[1] בוֹאָה[1] בוּבָה[1] דוֹדָה[3] דוּדָא[2] הוֹדוּ וּוָדָא[2] הוֹדָה[1]

[1] Գ.9. [2] Բ.6. [3] Բ.14.2.

Գ.11. זճ – զային – (չպետք է շփոթել ו տառի հետ), ձեռագիր տարբերակը՝ ʒ: Նշում է «զ»:

② *Կարդացեք.*

←

זֹ זַ זָ זַ זֵ זַ זָ זָ זֹ זוֹ זוּ זָ אָז בָּז בָּז גַז זָב זַד זַה[1] בָּזָה[1] גָּזָה[1] הָזָה[1]

זָהָב זָזָה[1] זוּג אָזוֹב גָּזוּז זָהוֹב זוּגָה[1] הוֹזָה[1]

[1] Բ.14.2.

Գ.12. ח – **խեթ** – (չպետք է շփոթել ה տառի հետ), ձեռագիր տարբերակը՝ *ח*: Համապատասխանում է հայերենի «**խ**» բաղաձայնին, սակայն ավելի կոշտ է: Այս հնչյունը ճիշտ արտասանելու համար լեզուն պետք է զբաղեցնի այն դիրքը, որը զբաղեցնում է «դ» բաղաձայնն արտաբերելիս: Ինչպես և א ու ה տառերը, ח տառը պատկանում է կոկորդայինների խմբին:

Գ.13. Բառավերջի ח տառի տակ որոշ բառերում դրվում է պաթախ ձայնանիշը (ַ), որն այս կապակցությունում կոչվում է «սողոսկած պաթախ»: Այս դեպքում ընթերցվում է նախ ձայնանիշը, ապա տառը, այսինքն՝ *ах*, և ոչ *ха*, իսկ շեշտը տեղափոխվում է այս կապակցությանը նախորդող ձայնավորի, այսինքն՝ բառի նախավերջին վանկի վրա՝ אוֹח *óах*, דוּח *дýах*, חוֹח *хóах*:

Գ.14. Սողոսկած պաթախ կարող է լինել բառավերջի ה տառի տակ՝ ֣ה, ընթերցվում է *ах*:

③ 🎧 *Կարդացեք.*

←

אָח חוּג חוֹב חָזָה[1] חָדוּד זָחוּחַ[2]

[1] Բ.14.2. [2] Գ.13.

Գ.15. ט – **տեթ** – ձեռագիր տարբերակը՝ *ɔ*: Համապատասխանում է հայերենի «**տ**» բաղաձայնին, սակայն հնչում է ավելի լարված:

④ 🎧 *Կարդացեք.*

←

טוֹב טַבּוּ טוּב טָחוּב טוּחַ[2] טָבוּחַ[3]

[1] Բ.14.2. [2] Բ.6. [3] Գ.13.

① 🎧 *Կարդացեք և արտագրեք.*

←

אָב אָח אַט בַּד בַּז גַּב גַּג גַּד גַּז גָּח גָּט דָּג דַּד דַּז דַּח חָד חָח חָט טַב טַח טָח אִבֵּד אֶחָא[2] אִדֵּג אֶחָד בְּדֵד בָּזַז בִּטַּח גַּבַּב גָּהָה[1] דָּאַג דּוֹב הָאַט זוֹג חִנָּה[1] טָנָה[1] נָטוֹ וְדָה[1] זָהַב זָהוּ זוּג זָבַח חָגָב חָגוּ חָטָא[2] טִבּוּ טוֹב אַבּוּט גִּבּוּב חָדוּד טוּחַ[3] אָחוּז אָהוּד חוֹבָה[1] בָּדוּחַ[3] בּוֹגֵד גּוֹבֶה[1] זוּגָה[1] חוֹבַב דוּבָּה[1] חָבוּט חוֹטֵא[2] הוּטַב חָטוּב גָּבוֹהַּ[4]

[1] Բ.14.2. [2] Բ.6. [3] Գ.13. [4] Գ.14.

② *Կարդացեք նույնի ձեռագիր տարբերակը.*

אַב אָח אַט בַּד בַּז גַּב גַּג גַּד גַּז גָּח גָּט דָּג דַּד דַּז דַּח חָד חָח חָט טַב טַח טָח אִבֵּד אֶחָא אִדֵּג אֶחָד בְּדֵד בָּזַז בִּטַּח גַּבַּב גָּהָה דָּאַג דּוֹב הָאַט זוֹג חִנָּה טָנָה וְטוֹ וְדָה זָהַב זָהוּ זוּג זָבַח חָגָב חָגוּ חָטָא טִבּוּ טוֹב אַבּוּט גִּבּוּב חָדוּד טוּחַ אָחוּז אָהוּד חוֹבָה בָּדוּחַ בּוֹגֵד גּוֹבֶה זוּגָה חוֹבַב דוּבָּה חָבוּט חוֹטֵא הוּטַב חָטוּב גָּבוֹהַּ

③ 🎧 *Հիշեք արական սեռի հետևյալ բառերը.*

«եղբայր»	*ախ*	אָח
«դաս»	*շիուր*	
«ընկեր»	*խավէր*	
«գրիչ»	*էտ*	
«ուսուցիչ»	*մօռէ*	
«գեղեցիկ»	*յաֆէ*	

④ *Փորձեք գտնել բառարանում հետևյալ բառերը.*

חַג, דּוֹב, זוּג, אֶחָד, זָהַב, אָחוּז, גָּבוֹהַּ

Դ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Դ.1. י – *յոդ* – ձեռագիր տարբերակը՝ ʹ: Ինչպես և ו տառը, արտահայտում է թե՛ բաղաձայն, թե՛ ձայնավոր: Բառամիջում և բառավերջում՝ խիրիկ ձայնանիշից հետո (ִי), այն հնչում է «i» (ִי կապակցությունը երբեմն անվանում են «մեծ խիրիկ»):

Դ.2.1. Մյուս դեպքերում տառը հնչում է «յ»՝ կազմելով ַי *յա*, ָי *յո*, ֶי *յէ*, ִי *յու*, ְי *յի* և סִי *այ*, ֹי *օյ*, ּוי *ույ*, סֵי *էյ* կապակցությունները:
Դ.2.2. סִי կապակցության «յ» հնչյունը որոշ դեպքերում չի հնչում:

Դ.3.1. Բառասկզբում հնչող «i» ձայնավորը գրվում է א կամ אִ:
Դ.3.2. Որոշ բառերում ִ տառը գրվում է, բայց չի հնչում:

Դ.4. Ամբողջական չձայնավորված ուղղագրության մեջ բառամիջի և բառավերջի «յ»-ն նշվում է երկու י տառով (ײ):

① *Կարդացեք.*

←

יָ יָ יָ יִ יוּ יוֹ יַ יוּ אִי בִּי דִּי גִּי הִי וִי זִי חִי טִי דַּי הַי בֵּי חַי בִּי יוֹ אִטִי
אִיטִי גַּבִּי גָּזִי טִיט בָּדוּי יָדִיד חִטוּי הִבִּיט הִגִּיהַ[1]

[1] Գ.15.

Դ.5. כ – *քաֆ* – ձեռագիր տարբերակը՝ כ: Ունի հատուկ ձև բառավերջի համար (*քաֆ սոֆիթ*)՝ ך, ձեռագիր տարբերակը՝ ך: Ինչպես և ב տառը, ունի արտասանության երկու տարբերակ: Թեթև դագեշով (כ) մոտ է հայերենի «ք» բաղաձայնին, սակայն ունի ավելի թույլ արտահայտված շնչեղություն և՝ հատկապես բառասկզբում կարող է նմանվել «կ»-ի: Առանց դագեշի (כ) հնչում է «խ» (հնչողությամբ նույնն է ח տառի հետ) և կոչվում «խաֆ»: Սա նույնպես համարվում է մեկ տառ՝ «քաֆ» ընդհանուր անունով, քանի որ բառում նույն כ տառը կարող է հնչել «ք» կամ «խ» հերթագայությամբ:

Դ.6. Չձայնավորված տեքստերում դագեշը չի դրվում, և արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրություն (כ): Տառը ճիշտ ընթերցելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում և բառամիջում՝ փակ վանկից հետո այն միշտ հնչում է «ք», բառավերջում և բաց վանկից հետո՝ միշտ «խ»: Բառասկզբում հնչող «խ» բաղաձայնը միշտ ח է:

① *Կարդացեք.*

←

כָּ כֹּ כֵּ כֵ כֶ כָּ כֹ כַּ כָּ כְּ כִּ כֵּ כַּ כָּ אַך בָּך חַך זַך כָּבַד כָּוָה[1] כּוּף
וְכוּחַ[2] זְכוּך כָּבוֹד כְּבוּד כּוֹכָב

[1] Բ.14.2. [2] Գ.14.

Դ.7. ל – *լամեդ* – ձեռագիր տարբերակը՝ ל: Համապատասխանում է հայերենի «լ» բաղաձայնին, սակայն հնչում է ավելի կոշտ: Այս տառն արտասանելիս լեզվի ծայրը պետք է դիպչի վերեի ատամներին և չդիպչի քիմքին:

① *Կարդացեք.*

←

לֹ לֵ לִ לֶ לָ לְ לַ לָ אַל אֶל אֵל בַּל דַּל חֵל חַל טַל כֹּל לֹא לֵב
לָהּ[1] לוֹ לוּ לַח לָט לִי לֵך אָבֵל אֶלָא[2] אַלַט בִּדֵל בָּחַל בָּטֵל בִּלָה[3] אָחוּל

[1] Բ.14.3. [2] Բ.6. [3] Բ.14.2.

Դ.8. מ – **մեմ** – ձեռագիր տարբերակը՝ נ: Հնչում է «մ»: Ունի հատուկ ձև բառավերջի համար (*մեմ սոֆիթ*)՝ ם, ձեռագիր տարբերակը՝ ס:

④ *Կարդացեք.*

מ מ מ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դ.12. Եբրայերենում ածականը (որոշիչը) միշտ դրվում է գոյականից (որոշյալից) հետո՝ համաձայնեցվելով նրա հետ թվով և սեռով՝ *մոռէ տօվ* «լավ ուսուցիչ», *խավէռ տօվ* «լավ ընկեր», *դագ յաֆէ* «գեղեցիկ ձուկ», *պէռախ յաֆէ* «գեղեցիկ ծաղիկ», *սէֆէր գադօլ* «մեծ գիրք», *պէռախ գադօլ* «մեծ ծաղիկ»: Այս բոլոր կապակցություններում գոյականներն ու ածականներն արական սեռի են:

⑧ *Թարգմանեք.*

Մեծ ձուկ, գեղեցիկ գրիչ, լավ սեղան, լավ եղբայր, գեղեցիկ գիրք, լավ հաց, լավ ուսուցիչ, լավ գրիչ, մեծ գրիչ, գեղեցիկ ծաղիկ, լավ ծաղիկ, մեծ դաս, լավ օր, գեղեցիկ օր:

⑨ *Փորձեք գտնել բառարանում հետևյալ բառերը և գանազանել նրանց մեջ սեզոլայիները.*

בֶּגֶד, דָּגָל, חוֹל, חָלָב, יַחַד, יֶלֶד, מֶלֶךְ

Ե

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Ե.1. נ – նուն – ձեռագիր տարբերակը՝ נ: Հնչում է «ն»: Ունի հատուկ ձև բառավերջի համար՝ ן (*նուն սոֆիթ*, չշփոթել ז տառի հետ), ձեռագիր տարբերակը՝ ן:

① *Կարդացեք.*

←

נָא נַד נָד נָם בֵּן בֹּן גֵּן גֹּן דָּן הֵן זֶן חֵן כֵּן לֵן מֵן מֹן אֵגֶן אֵכֵן נָאֶה נָכֵל[1]
נוֹחַ[2] נָאוָה[3] נָגוֹז נִדְהָם[4] נֶחְבָּא[4] נֶחְמָה יוֹנָה יוּגִי לַמְדָן[4]

[1] Դ.11. [2] Դ.13. [3] Բ.6. [4] Դ.10.1.

Ե.2. ס – սամեխ – ձեռագիր տարբերակը՝ ס: Հնչում է «ս» (չշփոթել ם տառի հետ):

① *Կարդացեք.*

←

סַל סָךְ סָם חָס סַבָּא יָסַד סָגֶן[1] אַסָּל[1] מַמָּס סִיס סָלַד יַחַס[2] סוֹבֵא סִבּוֹן
סָלוּחַ[3] חָסוֹן נָסוּךְ נִסְלַח[3] חָסוּי טִיסָן כָּבִיס מוֹסָד אָסוֹן

[1] Դ.11. [2] Դ.13. [3] Դ.10.1.

Ե.3. ע – **ային** – ձեռագիր տարբերակը՝ *ȣ*: Ինչպես և ה ח א տառերը, այս տառը պատկանում է «կոկորդայինների» խմբին: Հին եբրայերենում այն արտահայտում էր սեմական լեզուներին բնորոշ կոկորդային խորը հնչյուն (արաբերենում՝ ع), որն արդի եբրայերենում չի պահպանվել և հանդիպում է միայն արաբների և արաբական երկրներից ներգաղթած հրեաների խոսքում: Արդի եբրայերենում իր հնչյունական առանձնահատկություններով այս տառը նման է א տառին, այսինքն՝ կարող է արտահայտել ցանկացած ձայնավոր՝ ע - «ա», ע - «է», ע - «ու», עִ - «օ», עוּ - «ու», עִי - «ի», և այլն:

Ե.4. Բառամիջում՝ բաղաձայնից հետո, ע տառն առաջացնում է խոսակցական հոսքի ընդհատում՝ מִשְׁעָן *միս'ան*, իսկ բառավերջում համր է՝ נַע *նա:*

Ե.5. Բառավերջում ע-ը կարող է ստանալ «սողոսկած» պաթախ (ַע). բառն այդ դեպքում ավարտվում է «ա» ձայնավորով, իսկ շեշտը տեղափոխվում է նախորդող ձայնավորի վրա՝ מָדוּעַ *մադ՛ուա:*

③ 🎧 *Կարդացեք.*

←

עַל עַם סַע[1] בַּעַל[2] עֶבֶה סַעַד[2] דְּמַע[1,2] עָגָב[2] סֶלַע[1,2] עוֹלָם עָזוֹב עָמִיל עֶלְיוֹן[3] מַדּוּעַ[4] עָדִין עָנָן[3] מַגָּע[3] עִילוּי

[1] Ե.4. [2] Դ.11. [3] Դ.10.1. [4] Ե.5.

Ե.6. פ – **պե** – ձեռագիր տարբերակը *ȣ*: Ինչպես և ב ու כ տառերը, այս տառն ունի արտասանության երկու տարբերակ. թեթև դագեշով (פ) հնչում է «պ», առանց դագեշի (פ)՝ «ֆ» և կոչվում «ֆե»: Բառավերջի ֆե-ն ունի գրության հատուկ ձև՝ ף (*պե սոֆիթ*), ձեռագիր տարբերակը՝ *β*: Սա նույնպես համարվում է մեկ տառ՝ «պե» ընդհանուր անվանումով, քանի որ միևնույն բառում կարող է լինել «պ-ֆ» բաղաձայնների հերթագայություն:

Ե.7.1. Չձայնավորված տեքստերում դագեշը չի դրվում, և արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց դագեշի գրությունը (פ): Տառը ճիշտ ընթերցելու համար պետք է նկատի ունենալ, որ բառասկզբում և բառամիջում՝

միայն վանկից հետո այն միշտ հնչում է «պ», իսկ բառավերջում և բաց վանկից հետո՝ «ֆ»:

Ե.7.2. Բառասկզբում «ֆ» և բառավերջում «պ» կարող են ունենալ միայն փոխառությունները (*Ֆորդ, պոպ* և այլն), ընդ որում՝ բառավերջի «պ»-ն գրվում է פּ (פּוֹפּ):

④ 🎧 *Կարդացեք.*

←

פֶּה פַּט פָּן פַּס פָּד עָף סַף עוֹף סַנַּף סִיפָא פִּכְפֵּךְ פָּנִים פָּעִיל סָפוּג נָסָךְ נָפָעַם[1] נַפְלָא מַפְגִּין

[1] Ե.4.

ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐ

Ե.8. Երեք ձայնանիշներ կազմված են շվա և մեկ այլ ձայնանիշի համադրությամբ: Այս ձայնանիշները կոչվում են «խատաֆային» և դրվում են կոկորդային բաղաձայնների տակ (א ה ח ע):

Ե.9. **ָ խատաֆ-պաթախ**, նշում է «ա» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «ա»):

Ե.10. **ֶ խատաֆ-սեգոլ**, նշում է «է» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «է»):

Ե.11. **Ո խատաֆ-կամաց**, նշում է «օ» ձայնավորը (հին եբր.՝ գերկարճ «օ»): Այս ձայնանիշը հազվադեպ է հանդիպում:

ՇԵՇՏԱԴՐՈՒՄ

Ե.12. Շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, եթե բառի վերջին ձայնավորն արտահայտված է י *յի* կապակցությամբ՝ מַיִם *մայիմ:*

⑤ 🎧 *Կարդացեք և արտագրեք.*

←

אֶבֶן[1] אֶדֶן[1] אֵגֶן אֵכֶן אֵמֶן אֶמֶן אֵנָה דִּין הֵגֶן הֵדָן וְלֹן זְבֶן זִין חָגֶן חָכָם
חֵמָה חֵנָךְ יַיִן[2] לָכֶן מַיִם[2] נְדָה סֶלָא נָחָה סוֹף עֲלֵי עַיִן[2] פֶּלָא[1] פַּעַם[3] אֱלוֹהַּ[3]
אֱלוּל אֵילָן גָּאוֹן נָגִיל כּוֹהֵן מָאוּן מַדְהָן מַטְבֵּעַ[4] מֵטְעָם[5] נִזְעָף[5] סַחְבָּן
עֲגֵלָה עֲדַיִן[2] עָנְיָה עַזְקָן פַּזְגָּן פְּלוּחַ[5] פְּגוּעַ[4] פַּסְחָא אֶפּוּנָה בּוּלְטִין בְּלִיוֹן
גֶּנְיוּס דוֹלְמָן דִּינְמוֹ הִנְהִיג הֶחֱלִיף וִיטָמִין חֲמוּלָה טֶלֶפּוֹן לוּלְיָן מוּזְמָן
עוֹלְלָה[2] פּוֹסְפָט[7] פֶּמְפִּיָה מַכְבֵּנָה נִיחוֹחִי מֹאזְנַיִם[2] אֲבָטִיחַ[6] בַּעֲלִיל הֶעֱמִיד
חִילוֹנִי יַהֲלוֹם אֱלוֹהִים

[1] Գ.11. [2] Ե.12. [3] Գ.14. [4] Ե.5. [5] Ե.4. [6] Գ.13. [7] Ե.7.2.

⑥ *Կարդացեք նույնի ձեռագիր տարբերակը.*

אֶבֶן אֶדֶן אֵגֶן אֵכֶן אֵמֶן אֶמֶן אֵנָה דִּין הֵגֶן הֵדָן וְלֹן זְבֶן זִין חָגֶן חָכָם חֵמָה חֵנָךְ יַיִן לָכֶן מַיִם נְדָה סֶלָא נָחָה סוֹף עֲלֵי עַיִן פֶּלָא פַּעַם אֱלוֹהַּ אֱלוּל אֵילָן גָּאוֹן נָגִיל כּוֹהֵן מָאוּן מַדְהָן מַטְבֵּעַ מֵטְעָם נִזְעָף סַחְבָּן עֲגֵלָה עֲדַיִן עָנְיָה עַזְקָן פַּזְגָּן פְּלוּחַ פְּגוּעַ פַּסְחָא אֶפּוּנָה בּוּלְטִין בְּלִיוֹן גֶּנְיוּס דוֹלְמָן דִּינְמוֹ הִנְהִיג הֶחֱלִיף וִיטָמִין חֲמוּלָה טֶלֶפּוֹן לוּלְיָן מוּזְמָן עוֹלְלָה פּוֹסְפָט פֶּמְפִּיָה מַכְבֵּנָה נִיחוֹחִי מֹאזְנַיִם אֲבָטִיחַ בַּעֲלִיל הֶעֱמִיד חִילוֹנִי יַהֲלוֹם אֱלוֹהִים

⑦ 🎧 *Հիշեք հետևյալ բառերը.*

אֲנִי	*անի*	«ես»
הוּא	*հու* (ար.)	«նա»
מַה	*մա*	«ի՞նչ»
זֶה	*զէ* (ար.)	«սա»
כֵּן	*քէն*	«այո»
לֹא	*լո*	«ոչ»

ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ե.13. Երրայերենում՝ ի տարբերություն հայերենի և արևմտաեվրոպական լեզուների, ենթական և անվանական ստորոգյալը ներկա ժամանակում կապակցվում են առանց որևէ օժանդակ բայաձևի՝ *զէ շուլխան* «սա սեղան (է)», *զէ սէֆէր* «սա գիրք (է)», *զէ լէխէմ* «սա հաց (է)», *անի մօռէ* «ես ուսուցիչ (եմ)», *զէ շուլխան գադոլ* «սա մեծ սեղան (է)», *զէ պէռախ յաֆէ* «սա գեղեցիկ ծաղիկ (է)»:

Ե.14. Հարցական նախադասությունները տարբերակվում են միայն հարցական հնչերանգով՝ *մա՞ զէ* «ի՞նչ է սա», *զէ սէ՞ֆէր* «սա գի՞րք է» - *քէն, զէ սէ՞ֆէր* «այո, սա գիրք է», *զէ լէ՞խէմ* «սա հա՞ց է - *լո, զէ դազ* «ոչ, սա ձուկ է», *դավիդ մօռէ տօ՞վ* «Դավիթը լա՞վ ուսուցիչ է» - *քէն, հու մօռէ տօվ* «այո, նա լավ ուսուցիչ է»:

⑧ *Թարգմանեք.*

Ի՞նչ է սա: Սա ձուկ է: Սա մեծ ձուկ է: Սա գի՞րք է: Ոչ, սա գրիչ է: Սա ծաղի՞կ է: Այո, սա ծաղիկ է: Սա գեղեցի՞կ ծաղիկ է: Այո, սա գեղեցիկ ծաղիկ է: Սա լա՞վ ուսուցիչ է: Այո, սա լավ ուսուցիչ է: Դավիթը լա՞վ ընկեր է: Այո, նա լավ ընկեր է: Դավիթը լա՞վ հայր է: Այո, նա լավ հայր է:

⑨ *Փորձեք գտնել բառարանում հետևյալ բառերը և պարզել նրանցում շեշտի տեղը.*

אָבָן, יַיִן, מַיִם, עַיִן, אֱלוֹהַּ, יַהֲלוֹם, אֲבָטִיחַ

Հ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Զ.1. צ – **ցադի** – ձեռագիր տարբերակը՝ ʒ: Հնչում է «ց»: Ունի հատուկ ձև բառավերջի համար՝ ץ (*ցադի սոֆիթ*), ձեռագիր տարբերակը ℓ:

① 🎧 *Կարդացեք.*

←

צח צל צא צג צד צף פץ עץ צץ צאן עצל צעף צפה נצח׳ מצץ׳ ציון לצון צנאה ניצוח[2] לנצוץ

[1] Գ.11, [2] Գ.13.

Զ.2. ק – **կոֆ** – ձեռագիր տարբերակը՝ ρ: Հնչում է «կ»:

② 🎧 *Կարդացեք.*

←

קו קץ קם קל קול קהה קיץ׳ קלע[2,3] קצף קבל קולע׳ קלוט קנקן קפוא קצין עקיצה פקחון

[1] Ե.12, [2] Գ.11, [3] Ե.4, [4] Ե.5.

Զ.3. ר – **ռեշ** – ձեռագիր տարբերակը՝ ɔ (չշփոթե՛լ ד տառի հետ): Համապատասխանում է հայերենի «ռ» բաղաձայնին, այսինքն՝ միշտ կոշտ հնչողություն ունի[1]:

① 🎧 *Կարդացեք.*

←

רן רע׳ רף רץ רק רך סר פר צר קר רוח[2] רגע[1,3] רבע׳ ערב עדר רקף רצע׳ רצף רבוא רהטן קרור רבוס רסיטל

[1] Ե.4, [2] Գ.13, [3] Գ.11, [4] Ե.5.

Զ.4. ש – շին – ձեռագիր տարբերակը՝ θ (գրվում է ներքևից վերև): Ունի արտասանության երկու տարբերակ՝ կոշտ «շ» (ש) և «ս» (שׂ). վերջին դեպքում կոչվում է «սին» (չձայնավորված տեքստերում արտասանության երկու տարբերակներն էլ ունեն նույն՝ առանց կետի ש ձևը):

Զ.5. ש տառը չի պատկանում երկակի արտասանություն ունեցող ב כ פ տառերի խմբին: Նրա կետը չի կոչվում «թեթև դագեշ», և միևնույն բառում «շ-ս» հերթագայություն հնարավոր չէ: Այդուհանդերձ, ש տառը համարվում է մեկ տառ՝ «շին» բնդհանուր անվանմամբ, և բառարաններում שׂ և ש տարբերակներով սկսվող բառերը տրվում են խառը, սովորական հերթականությամբ:

Զ.6. Ձայնավորված տեքստերում ש-ի կետը կարող է ձուլվել նախորդող, իսկ שׂ-ի կետը՝ հաջորդող խոլամ ձայնանիշի հետ, օրինակ՝ משה *մoշէ*, עבשׂ *սoվաս*: Ամբողջական ուղղագրության մեջ այս օրինակները կարող են ունենալ հետևյալ տեսքը՝ משוה, עובשׂ:

① 🎧 *Կարդացեք.*

←

של שן שק שך שר שש שׂש רש עש פש קש קשש קדש ראש שיא שיה שלף שמא שגא שגיא שטען׳ שלום

[1] Ե.4.

[1] Եբրայերում լայն տարածում ունի նաև այս տառի արտաբերումը որպես «ղ»:

2.7. ת – **թավ** – ձեռագիր տարբերակը՝ ת: Մոտ է հայերենի «թ» բաղաձայնին, սակայն ունի ավելի թույլ արտահայտված շնչեղություն և՝ հատկապես բառասկզբում կարող է նմանվել «տ»-ի:

2.8. Հին եբրայերենում տարբերակվում էր թեթև դագեշով ת, որը հնչում էր «թ», և առանց դագեշի ת, որը հնչում էր անգլերենի th կապակցության պես thing բառում: Արդի եբրայերենը չունի th հնչյուն, սակայն դասական ձայնավորման մեջ պահպանվում են ת-ת տարբերակները, որոնք երկու դեպքում էլ պետք է արտասանել «թ»՝ תָּ *թաթ:*

⑤ 🎧 *Կարդացեք.*

←

תָּר תָּשׁ תָּא שָׁת תַּת פַּת תִּבֵּן תַּחַת תֹּלֵם תָּמַךְ שִׁתַּךְ עַתָּק פָּתַח רָשָׁת תַּעֲשׂ תַּכָּל תָּקַף תָּדִיר תּוֹהוּ תֵּימָן שַׁרוּת

[1] Դ.11.

ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐ

2.9. **Ձայնեղ շվա**-ն (נָע שְׁוָא *շվա նա*) հին եբրայերենում մոտ էր «ը» ձայնավորին: Արդի եբրայերենում այն հնչում է «է»՝ יְלָדִים *յէլադիմ:*

2.10. Համր և ձայնեղ շվան տարբերակվում են հետևյալ հիմնական կանոններով.

ա) Բառասկզբում շվան ձայնեղ է, այսինքն՝ արտասանվում է «է» י ר ל מ נ տառերի տակ՝ יְהוּדִי *յէհուդի,* רְצִינִי *ռէցինի,* לְכָנָה *լէվանա,* מְכוֹנִית *մէխոնիթ,* נְשִׁיקָה *նէշիկա,* ինչպես նաև որոշ նախդիրներում, շաղկապներում և բայական նախածանցներում:

բ) Մյուս տառերի տակ շվան համր է՝ פְּרֹט *պռատ,* כְּנָס *կնաս,* שְׁרַף *սռաֆ,* גֹּפֶר *ֆոգ:*

գ) Բառասկզբում շվան միշտ ձայնեղ է, եթե նրան հաջորդում են א կամ ע տառերը՝ אַז *զէ՛է,* תְּעָלָה *թէ՛ալա:*

դ) Բառամիջում իրար հաջորդող երկու շվաներից առաջինը համր է, երկրորդը ձայնեղ՝ יִלְמְדוּ *յիլմէդու:* Բառասկզբում երկու շվա լինել չի կարող:

ե) Բառամիջում երկու նույն բաղաձայնների միջև շվան ձայնեղ է՝ סוֹבְבָה *սովէվա:*

զ) Այլ դեպքերում բառամիջի շվան սովորաբար համր է:

2.11. Ներկայումս ընդունված է նշել միայն ձայնեղ շվան, իսկ ձայնավորի բացակայությունը նշել ձայնանիշի բացակայությամբ՝ לִמְדוּ, יִלְמְדוּ (դասական ձևերը՝ לִמְדוּ, יִלְמְדוּ), սույն դասագրքում այս սկզբունքը կիրառվում է 11-րդ դասից:

ՇԵՇՏԱԳՐՈՒՄ

2.12. Եթե ավելի քան երկու վանկից բաղկացած բառի վերջին երկու վանկերն ունեն սեգոլային բառի կառուցվածք (օրինակ՝ ococo ococo ococo ococo և այլն), ապա շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա՝ מִחְבֶּרֶת *մախբէռէթ,* תִּלְבּוֹשֶׁת *թիլբոշէթ,* קַדֶּסֶת *կադէ՛սաթ,* יְכוֹלֶת *յէխո՛լէթ:*

⑥ 🎧 *Կարդացեք և արտագրեք.*

←

סָדֶק סַהַר סָחִי סָטוּ סָפָר פְּאֵר פְּסָק פַּצָּץ פָּרָא פְּרָט פְּרָק קָרַב רָנַק רַעַף שָׁאַר שְׁבָב שָׁעָה שָׁקַר תְּאוֹ עֶרְפֶּל עֲשִׂיָה עִתּוֹן פּוֹרֵץ צָבָאי צוֹמֶת צָלוּי צָעָקָה צְפִיָּה צָרוֹר דּוּחַ קַדַּחַת קֶשִׁיחַ רָאֲוָה רָחוּב רָעוּעַ תְּחִיָּה דְּרִישָׁה יְהוּדִי יְהוּדָה יְכוֹלֶת כְּתָבִים שְׁאֵלָה שָׁעוּי שַׁקִּים תָּאוֹם נֶחֱלָץ סִפְרָדִי קְעוֹרֶת שׁוּעָלִי תִּלְבּוֹשֶׁת קַלֶּטֶת קַלְטֶרֶת פַּזְלֶת צָרְפַת פַּרְדֵּס שָׁלוֹם סוֹלְחָנוּת נִצְחִיּוּת בֶּאֱמֶת בּוּסְתָן גְּרוּשִׁין מַלְקוֹחַ לוֹעֲזִית חַנְטָרִישׁ סַיֶּרֶת עִיקְצוּץ נַפַּחַת נֶעֱקָף עֶקְרוֹנוּת

נוֹקְדָנוּת[9] סְרַרְחַר[9,2] הֲעָלִים טַפְטָפֶת[5,9] הִתְנַפֵּץ[7] אִיזְרוּחַ[4,9] אַיִפְשָׁהוּ[8] זִיקוּקִין
דּוּזְמָר[5] יוּהָרָה חַרְחָרָן[8] אֶשְׁכּוֹלִית[8] לְחִיצָה[6] הֶפְקֵרוּת[8] עַפְעַף[9,10] לְעָתִים[8]
אַפִּיפְיוֹר מֶלְחָצִים[9,8] פּוּטוּרִיזְם[11] מְשׁוּפְשָׁף[6,9] כַּעֲסָנוּת הִידְרוֹמֶטֶר[5,9]
מְמוּזְלָג[6,9] אֲצָבָעוֹן[8] אִשְׁכְּנָזִי[12] חֲלַקְלַקָּה[8] מְשׁוּרְבָּב[6,9] דּוּגְמָנִית[8] אֶפֶרְסְמוֹן[12]

[1] Գ.11. [2] Զ.10.բ. [3] Զ.10.գ. [4] Գ.13. [5] Զ.12. [6] Զ.10.ա.
[7] Ե.5. [8] Ե.12. [9] Գ.10.1. [10] Ե.4. [11] Ե.7.2. [12] Զ.10.դ.

⑦ *Կարդացեք նույնի ձեռագիր տարբերակը.*

אבבטון אשכולי חלחלה משורבב דוגמנית אפרסמון
עפעף לעתים אפיפיור מלחצים פוטוריזם משופשף כעסנות הידרומטר ממוזלג
היוקפל איזרוח איפשהו זיקוקין דוגמר יוהרה חרחרן אשכולית לחיצה הפקרות
נוקדנות סרסחר הלעים טפטפת התנפץ איזרוח איפשהו זיקוקין דוגמר יוהרה חרחרן אשכולית לחיצה הפקרות
עפעף לעתים אפיפיור מלחצים פוטוריזם משופשף כעסנות הידרומטר ממוזלג
יהודה יכולת כתבים שאלה שנוי שבים תאום וחלל סברדי יקורת שולי תלבושת
קלטת קלטרת בפלת דרפת פרדס שלום סלחנות נבחינת באשת בוסתן ארושין מלכות
לוגלית חוטרים סירת עיקבל נפחת ונגל עקרונות נוקדנות סחרחר הללים טפטפת
היוקפל איזרוח איפשהו זיקוקין דוגמר יוהרה חרחרן אשכולית לחיצה הפקרות
עפעף לעתים אפיפיור מלחצים פוטוריזם משופשף כעסנות הידרומטר ממוזלג
אבבטון אשכולי חלחלה משורבב דוגמנית אפרסמון

⑧ 🎧 *Հիշեք հետևյալ բառերը.*

יְהוּדִי	*յէհուդի* (ար.)	«հրեա, հրեական»
מִלָּה	*միլա* (իգ.)	«բառ»
מַחְבָּרֶת	*մախբէռէթ* (իգ.)[1]	«տետր»
תַּלְמִיד	*թալմիդ* (ար.)	«աշակերտ»
לָבָן	*լավան* (ար.)	«սպիտակ»
כֹּסָא	*քիսէ* (ար.)	«աթոռ»

[1] ooooo (Զ.12.)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա.13. Անվանական ստորոգյալի ժխտումը կատարվում է *լո* (לא) «ոչ» բառի միջոցով՝ *գավիդ լո թալմիդ* «Դավիթը աշակերտ չէ», *զէ լո սէֆէր* «սա գիրք չէ», *զէ լո յավիսան, զէ քիսէ* «սա սեղան չէ, սա աթոռ է», *անի լո թալմիդ, անի մօռէ* «ես աշակերտ չեմ, ես ուսուցիչ եմ», *հու լո մօռէ, հու թալմիդ* «նա ուսուցիչ չէ, նա աշակերտ է»:

⑨ *Թարգմանեք.*

Սա ձո՞ւկ է: Այո, սա մեծ ձուկ է: Սա գի՞րք է: Ոչ, սա գիրք չէ, սա գրիչ է: Սա սպիտակ ծաղի՞կ է: Այո, սա սպիտակ ծաղիկ է: Սա սեղա՞ն է: Ոչ, սա սեղան չէ, սա մեծ աթոռ է: Նա աշակե՞րտ է: Ոչ, նա աշակերտ չէ, նա ուսուցիչ է: Նա լավ ուսուցիչ է: Ես ուսուցիչ չեմ, ես աշակերտ եմ: Դավիթն ուսուցիչ չէ, նա աշակերտ է: Դավիթը հրեա՞ է: Ոչ, նա հրեա չէ:

⑩ *Փորձեք գտնել բառարանում հետևյալ բառերը.*

שָׁעָה, רָחוֹב, צָרְפַת, שָׁאֲלָה, שָׁלוֹם, סְפָרְדִּי, אַשְׁכְּנָזִי

ԵԲՐԱՅԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ

Տառի անվանումը	Տպագիր	Ձեռագիր	Հնչյուն
ալֆ	א	*𐡀*	-
բեթ	ב	*𐡁*	*բ, վ*
գիմել	ג	*𐡂*	*գ*
դալեթ	ד	*𐡃*	*դ*
հե	ה	*𐡄*	*հ*
վավ	ו	*𐡅*	*վ, օ, ու*
զային	ז	*𐡆*	*զ*
խեթ	ח	*𐡇*	*խ*
տեթ	ט	*𐡈*	*տ*
յոդ	י	*𐡉*	*յ, ի, է*
քաֆ	כ ך	*𐡊 𐡋*	*ք, խ*
լամեդ	ל	*𐡌*	*լ*
մեմ	מ ם	*𐡍 𐡎*	*մ*
նուն	נ ן	*𐡏 𐡐*	*ն*
սամեխ	ס	*𐡑*	*ս*
ային	ע	*𐡒*	-
պե	פ ף	*𐡓 𐡔*	*պ, ֆ*
ցադի	צ ץ	*𐡕 𐡖*	*ց*
կոֆ	ק	*𐡗*	*կ*
ռեշ	ר	*𐡘*	*ռ*
շին	ש	*𐡙*	*շ, ս*
թավ	ת	*𐡚*	*թ*

Է

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Է.1. Ձայնանիշների ամբողջական ցանկ

ա	ָ	ָ	ָ	
ի	ָ	ִָ		
է	ָ	ָ	ָ	ָ
օ	ֹ	ֹ	ָ	ָ (Է.2,3)
ու	ֻ	ּ		

Է.2. Պակասավոր ուղղագրության մեջ շեշտ չկրող փակ վանկերում և մի քանի այլ դեպքերում կամաց ձայնանիշը արտասանվում է «օ»՝ կոչվելով *կամաց-խատուֆ* կամ «փոքր կամաց»՝ חֲכָמָה *խոխմա,* כָּל *քոլ:* Ամբողջական ուղղագրության մեջ այն կարող է փոխարինվել ամբողջական խոլամով (ֹ)՝ חוֹכְמָה:

Է.3. Կամացը հնչում է «օ», եթե նրան հաջորդում է խատաֆ-կամաց՝ מָחֳרָת *մոխ-ռաթ:*

Է.4. Ինչպես հետևում է նախորդ դասերից, որոշ հնչյուններ կարող են արտահայտված լինել երկու տառով, այսինքն՝ երկու տարբեր տառեր կարող են ունենալ նույն հնչողությունը.

ו և ב ընթերցվում են «վ» (բառասկզբում հնչող «վ»-ն միշտ ו է),
ח և כ ընթերցվում են «խ» (բառասկզբում հնչող «խ»-ն միշտ ח է),
ס և ש ընթերցվում են «ս»:

Է.5. Թեթև դագեշը դրվում է ב ג ד כ פ ת տառերի մեջ. բաղաձայնների այս խումբը կոչվում է **բագադ-քեփեթ**: ב כ פ տառերի դեպքում դագեշը տարբերակում է այս տառերի երկակի արտաբերումը՝ համապատասխանաբար «բ-վ», «ք-խ», «պ-ֆ»:

Է.6. ג ד ת տառերի դեպքում դագեշի առկայությունը կամ բացակայությունը չի ազդում արտաբերման վրա, և երկու տարբերակներն էլ ունեն նույն արտասանությունը՝ համապատասխանաբար «գ», «դ», «թ»:

Է.7. א ה ח ע բաղաձայնները, ինչպես քանիցս նշվել է, կազմում են կոկորդային բաղաձայնների խումբը և ունեն որոշ հնչյունային առանձնահատկություններ: Հնչյունային որոշ օրինաչափությունների դեպքում կոկորդայիններին հարում է նաև ר բաղաձայնը:

Է.8. ו և י տառերը ամբողջական ուղղագրության մեջ, որոշ սահմանափակումներով, գործածվում են «օ», «ու», «ի», «է» (վերջին դեպքում՝ ցեռե ձայնանիշի փոխարեն) ձայնավորները նշելու համար: «Ա» ձայնավորի նշումը א տառով սահմանափակ է:

Է.9. Հետևյալ հինգ տառերը՝ כ מ נ פ צ ունեն հատուկ ձևեր բառավերջի համար՝ համապատասխանաբար ך ם ן ף ץ:

Է.10. Հին եբրայերենում գոյություն ուներ բաղաձայնների կրկնավորման երևույթ, որը գրության մեջ նշվում էր կրկնվող բաղաձայնի մեջ դրվող կետով՝ «ուժեղ դագեշ»-ով՝ שְׁלוֹם *շիլում, հաշՀմԷՀ:* Արդի եբրայերենում բաղաձայնների կրկնավորում գոյություն չունի, և դասական ձայնավորման դեպքում դրվող ուժեղ դագեշը չի ազդում բաղաձայնի արտասանության վրա: Հետևաբար, բերված օրինակները պետք է ընթերցել *շիլում, հաշԷմԷՀ:*

Է.11. Ուժեղ դագեշը կարող է լինել բոլոր տառերի մեջ, բացառությամբ կոկորդայինների (א ה ח ע) և ר-ի:

Է.12. Եբրայերենում գործածվող կետադրական նշանները հիմնականում համընկնում են եվրոպական լեզուների կետադրական նշանների հետ: Եբրայերենի հատուկ նշաններն են.

- **մակեֆ** (־), առկա է երկու կամ ավելի գոյականներից կազմված կապակցություններում՝ בֵּית־סֵפֶר (կարող է փոխարինվել պարզ գծիկով՝ בֵּית-סֵפֶר, կամ ընդհանրապես աղվել՝ בֵּית סֵפֶר),
- **գեռեշ** (׳), դրվում է կրճատված բառերի վերջում՝ דר׳ = דוֹקטוֹר,
- **գեռշայիմ** (״), դրվում է եբրայերենում լայնորեն գործածվող հապավումների վերջին տառից առաջ՝ תנ״ך:

Է.13. Փոխառությունների «ժ» բաղաձայնը նշելու համար գործածվում է ז׳ (զային-գեռեշ), «ջ» բաղաձայնի համար՝ ג׳ (գիմել-գեռեշ), «չ» բաղաձայնի համար՝ צ׳ (ցադի-գեռեշ) կապակցությունը: Փոխառությունների «ս», «կ/ք», «տ/թ» բաղաձայնները, որպես կանոն, նշվում են ס, ק, ט տառերով:

Է.14. Ինչպես նշվել է Ա.5. պարբերությունում, եբրայական տառերն ունեն նաև թվային արժեք.

90 - צ	30 - ל	6 - ו	1 - א
100 - ק	40 - מ	7 - ז	2 - ב
200 - ר	50 - נ	8 - ח	3 - ג
300 - ש	60 - ס	9 - ט	4 - ד
400 - ת	70 - ע	10 - י	5 - ה
	80 - פ	20 - כ	

Մյուս թվականները կազմվում են տառերի համադրությամբ՝ գեռշայիմ նշանով՝ י״א - 11, י״ב - 12, י״ג - 13, י״ד - 14, ט״ו - 15, ט״ז – 16[1], י״ז - 17, י״ח - 18, י״ט - 19, כ״א - 20, ס״ה - 65, קס״ח - 168, ת״ק -500 (400+100), תתק״ט - 909 (400+400+100+9) և այլն:

① 🎧 *Կարդացեք և արտագրեք (բառամիջի շվան, եթե այլ նշում չկա, համր է).*

←

אַבְרָהָם זְעֵזוּעַ[1] כִּשָּׁפוּת[2] גִּדְעוֹן[3] בִּנְיָמִין מַכְפֵּלָה שִׁלְגִיָּה אֱלִישָׁע[3] גִּלְבּוֹעַ[1] רִבְּת־עַמּוֹן[2,4] דָּנִיאֵל[3] פְּרָצוּפוֹן מִצְרַיִם[1] עִצְמוֹנֶת[5] פַּרְעֹה[2] לְחֶמָא יִשְׂרָאֵל דִּמְשָׁק[2,6] דַּרְיָנֶשׁ חִסָּכוֹן[2] חֲנוּכָּה צִעְתָּנוּת[7] הֵיגְרוֹסְקוֹפּ[2] הָכִיצַד רָאוּבֵן[3] אֶלְעָזָר[3] אֱלִיעֶזֶר[3] הֵיתֵּכֵן שִׁמְשׁוֹן חַזָּנוּת[3] טֶלֶת[2,6] אַבְשָׁלוֹם

[1] יי״ן և יי״ן կապակցությունները գործածելի չեն, քանի որ առկա են աստծո יהוה անվան մեջ (ընդունված ակադեմիական արտաբերումը՝ *Յահվե*, հայկական տարբերակը՝ *Եհովա*), որը հուդայականությունն արգելում է արտասանել:

אבִיתָר יְהוֹיָדָע[9] יְרוּשָׁלַיִם[3,9] תֵּל־אָבִיב[4] שְׁטַרְחֹרֶת[6,10] עָצְיוֹן־גֶּבֶר[4,11] רַבְצֶלְעוֹן[7] קְדֵשָׁה[10] צִיקְלוֹפּ[2]
פְּמְבִּיוֹת הִתְעַנְּגוּ[2] כַּרְכְּמִישׁ[12] אַהֲרוֹן סַנְהֶדְרִין סַנְדְּלָר[12] יְהוֹשָׁעַ[9,1] אָרֶרֶט הוֹרְקָנוֹס[12] חֲטוֹטֶרֶת[6]
יְהֹלוֹמָנוּת אוֹנְקְלוֹס[12] לִשְׁנָא[2] כַּדּוּרְגֶּלֶן מָאַגְרָף[9] שְׁעוּעִית[8] יִזְרְעֶאל[12] יְהוֹיָכִין[9] שִׁבְעָתַיִם[3,5]
רַחֲבָעָם[3,9] יְהוֹנָתָן[9] עַשְׁתֹּרֶת[6] צְפַרְדֵּעַ[1,10] נַמְנֶמֶן[12] מְכוּפְּתָר[9] מָחֲרַת[12] מָחֲרָתַיִם[5,13] יְרַקְרַקּוּת[2,9]
עָהֲרִים[5,12] מְחַרְגְּמָן[9,12] שְׁמוּאֵל[10] יְהוֹשָׁפָט[9] אֲבִינָדָב מִתְפַּלְסָף תַּג־יִקִיסְתָן[14] צֵ׳לוֹ[14] זְ׳אנְר[14]
פִּלְשָׁתִּים[10] אֶפְרַיִם[5] צְמַרְמֶרֶת[6,10] נְחַשְׁתָּן יִשְׁמָעֵאל זַרְבָּבֶל[10] לִשְׁעָבֵר[9] קִרְיַת־יְעָרִים[4,9] יְהוֹאָחָז[9]
אֶרֶץ־יִשְׂרָאֵל[4,11] טַהֲרָנוּת שְׁלוֹמְצִיּוֹן[2,10] פְּרֻקֵי־אָבוֹת אַרְגָּמָן[12] אַב־בֵּית־דִּין אַשְׁקְלוֹן[12] נַפְתָּלִי
זְבוּלוּן[10] מִסְכְּתוֹת[2] בְּרִיתָא תּוֹסֶפְתָּא סְבוֹרָאִים אֲבִימֶלֶךְ[9] בֶּסְתֻּנָאי[12] אַסַּר־חַדּוֹן[9] חִלְקִיָּה[2]
אַשְׁשׁוּרוֹשׁ בֶּלְשַׁאצַּר[2] נְבוּכַדְנֶאצַּר[9]

[1] Ե.5. [2] Է.10. [3] Ե.4. [4] Է.12. [5] Ե.12. [6] Զ.12. [7] Ե.7.2. [8] Զ.10.գ.
[9] Զ.10.ա. [10] Զ.10.բ. [11] Դ.11. [12] Զ.10.դ. [13] Է.3. [14] Է.13.

② *Կարդացեք նույնի ձեռագիր տարբերակը.*

אוֹרְסוֹתֵדוֹן הִתְנִיָּה אַחַשְׁוֵרוֹשׁ בֶּלְשַׁאצַּר נְבוּכַדְנֶאצַּר
אֵין אֶבְסוֹבִּיוֹסִדִין אַשְׁקְלוֹן שֶׁלִּי כְּבָלוֹן מִסְכְּתוֹת בְּרִיתָא תּוֹסֶפְתָּא סְבוֹרָאִים אֲבִימֶלֶךְ בֶּסְתֻּנָאי
נַפְתָּלִי יִשְׁמָעֵאל כַּרְבְּכָל לִשְׁעָבֵר קִרְיַת־יְעָרִים יְהוֹאָחָז אֶרֶץ־יִשְׂרָאֵל טַהֲרָנוּת שְׁלוֹמְצִיּוֹן תְּרֵ יִקִיסְתָן בֵּ יוֹ כָּ אוֹר פְּלִשְׁתִּים אֶפְרַיִם בְּמַרְמֶרֶת
אֲמַרְיָא שְׁמוּאֵל יְהוֹשָׁפָט אֲבִיגְדָּב מִתְפַּלְסָף תְּרֵ יִקִיסְתָן בֵּ יוֹ כָּ אוֹר פְּלִשְׁתִּים אֶפְרַיִם בְּמַרְמֶרֶת
שְׁבָעִים רְחַבְעָם יְהוֹנָן לְשַׁעְתֶּרֶת בְּפַרְדֵּעַ נַמְנֵמוּ מְכוּפְּתָר מְחֶרֶת מְחֲרָתַיִם יְרַקְרַקּוּת בָּהָרִים
יְהוֹאָחָז יְהוֹיָכִין הוֹרְקָנוֹס חֲטוֹטֶרֶת יְהֹלוֹמָנוּת אוֹנְקְלוֹס לִשְׁנָא כַּדּוּרְגֶּלֶן מְאַגְרָף שְׁעוּעִית יִזְרְעֶאל יְהוֹיָכִין
שְׁמַרְמֹרֶת בָּבֶל־אֶבֶר רַבְצֶלְעוֹן קְדֵשָׁה צִיקְלוֹפּ פְּמִבִּיוֹת הִתְעַנְּגוּ כַּרְכְּמִישׁ אַהֲרוֹן סַנְהֶדְרִין קִדְּרוֹן
רְאוּבֵן אֶלְעָזָר אֶלְעָזָר הַיְּתֵכֶן שֶׁאֶשְׁוֵן חִכָּנוּת טֶלֶת אַבְשָׁלוֹם אֲחִיתֶב יְהוּדָה יְרוּשָׁלַיִם תֵּל־אָבִיב
מְבָרִים אָדְמוֹנִת פַּרְדֵּה לְחוּאָ יִשְׂרָאֵל דְּשֶׁא דְּרִיָּשׁ חִסְכּוֹן חֲנוּכָה בְּעָתְנוּת הִיאַרוֹסוֹקוֹם הָכִיבֵּד
אַהֲרֹנִים כַּלָּכוֹת כֶּשֶׁפֶת אַדְמוֹן הַנְּשִׁים מַכְפֵּלָה שֶׁלִּיָּה אֶלִּישָׁע אֶלְבּוֹשׁ רַבִּי־עַמּוֹן דָּנִיאֵל פְּרִצוּפוֹן

③ *Հիշեք արական սեռի հետևյալ բառերը.*

שֵׁם	*շէմ*	«անուն»
אָרוֹן	*առոն*	«պահարան»
קָשֶׁה	*կաշէ*	«ծանր, դժվար»
טָעִים	*տա՛իմ*	«համեղ»
חָדָשׁ	*խառաշ*	«նոր»

④ *Թարգմանեք.*

Սա նոր անուն է: Սա գեղեցիկ անուն չէ: Սա դժվա՞ր դաս է: Այո, սա դժվար դաս է: Սա մեծ պահարան է: Ես նոր ուսուցիչ չեմ: Սա դժվար անուն է: Սա սպիտակ սթոռ է: Ի՞նչ է սա: Սա համեղ հաց է: Սա գիրք չէ: Սա մե՞ծ սեղան է: Այո, սա մեծ սեղան է: Սա նոր հաց է: «Դավիթ»-ը գեղեցիկ անուն է: Սա նոր անուն չէ: Սա գեղեցիկ օր է: Դավիթը լավ եղբայր չէ:

Սույն դասագրքում մինչև 10-րդ դասը ներառյալ կիրառվում է դասական՝ պակասավոր ուղղագրությունը, այսինքն՝ նշվում են ուժեղ դագեշը, ת ד ג տառերի թեթև դագեշը և համր շվան: Ապա մինչև 20-րդ դասը ձայնավորումը շարունակվում է առանց նշված ձայնանիշների՝ ամբողջական ուղղագրության կանոնների կիրառմամբ: 21-րդ դասից ձայնանիշների քանակն աստիճանաբար կրճատվում է: Մինչև 20-րդ դասը բառացանկերում և քերականական բացատրություններում տրվում է հայերեն տառադարձություն, որում շեշտը նշված է միայն այն դեպքում, երբ չի ընկնում վերջին վանկի վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

1 אַחַת

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՍԵՌԸ

1.1. Գոյականը (שֵׁם־עֶצֶם *շէմ էցէմ*) ունի երկու սեռ՝ արական (מִין זָכָר *մին զախառ*) և իգական (מִין נְקֵבָה *մին նէկէվա*): Արական սեռի գոյականները չունեն սեռի որևէ ցուցանիշ՝ רֹאשׁ *շի՛ուռ* «դաս», סֵפֶר *սէ՛ֆէռ* «գիրք», עֵט *էտ* «գրիչ», מוֹרֶה *մօռէ* «ուսուցիչ»[1], תַּלְמִיד *թալմիդ* «աշակերտ», שֻׁלְחָן *շուլխան* «սեղան», גַּג *դագ* «ձուկ», לֶחֶם *լէխէմ* «հաց»:

1.2. Որոշ բացառություններով իգական սեռի են סָה և ת- վերջավորություններով գոյականները՝ בֻּבָּה *բուբա* «տիկնիկ», דִּירָה *դիռա* «բնակարան», עֻגָּה *ուգա* «թրխվանք», מַחְבֶּרֶת *մախբէռէթ* «տետր»:

1.3.1. Վերջավորությունից անկախ իգական սեռի են մարմնի զույգ անդամների անվանումները, երկրների ու քաղաքների անունները (գետերի անուններն արական սեռի են), ինչպես նաև որևէ խմբի չպատկանող մի շարք այլ բառեր:
1.3.2. Մի խումբ գոյականներ կարող են հանդես գալ և՛ որպես արական, և՛ որպես իգական սեռի գոյականներ:

1.4.1. Անձ նշող գոյականներն իգական սեռ են կազմում סָה վերջավորության կցումով՝ תַּלְמִידָה - תַּלְמִיד *թալմիդ - թալմիդա* «աշակերտ - աշակերտուհի», կամ, ավելի հազվադեպ, סִית վերջավորությամբ՝ סְטוּדֶנְטִית - סְטוּדֶנְט *ստուդէնտ - ստուդէնտիթ* «ուսանող - ուսանողուհի»:
1.4.2. סָה վերջավորությունն իգական սեռում փոխարինվում է סָה վերջավորությամբ՝ מוֹרָה - מוֹרֶה *մօռէ - մօռա* «ուսուցիչ - ուսուցչուհի»:

---

[1] *է* վերջավորությամբ գոյականների մեծ մասն արական սեռի է:

ԱԾԱԿԱՆ ԱՆՎԱՆ ՍԵՌԸ

1.5. Ածականների (שֵׁם־תֹּאַר *shem toar*) իգական սեռը կազմվում է סה վերջավորության կցումով՝ טוֹבָה - טוֹב *tovq - tovqa* «լավ»:

1.6.1. Իգական սեռում ածականի առաջին ձայնանիշը հաճախ վերածվում է համր կամ ձայնեղ շվայի՝ גָּדוֹלָה - גָּדוֹל *gatol - gtolq*, טָעִים - טָעִים *tam – tmq*, לָבָן - לָבָן *lavan - lqvanq*:

1.6.2. Եթե առաջին տառը կոկորդային է, նրա ձայնանիշը վերածվում է խատափ պաթախի՝ חָדָשׁ - חָדָשׁ *khatash - khatashq*:

1.7. סה վերջավորությունն իգական սեռում փոխարինվում է סה վերջավորությամբ՝ יָפֶה - יָפֶה *yapq - yapqa* «գեղեցիկ», קָשֶׁה - קָשֶׁה *kashq - kashqa* «ծանր, դժվար»:

1.8.1. סי վերջավորությամբ ածականների իգական սեռը կազմվում է ת- վերջավորության կցումով՝ מוֹדֶרְנִית - מוֹדֶרְנִי *modernq – modernqt* «ժամանակակից», אַרְמֶנִית - אַרְמֶנִי *armenq - armenqt* «հայկական», יְהוּדִית - יְהוּדִי *yehudq - yehudqt* «հրեական»:

1.8.2. Եթե այդպիսի ածականը վերաբերում է մարդուն (օրինակ նշում է ազգությունը), ապա իգական սեռը կազմվում է סיה վերջավորությամբ՝ אַרְמֶנִיָּה - אַרְמֶנִי *armenq - armenqya* «հայ - հայուհի», יְהוּדִיָּה - יְהוּדִי *yehudq - yehudqya* «հրեա - հրեուհի»:

1.9. Ածականը (որոշիչը) միշտ դրվում է գոյականից (որոշյալից) հետո և համաձայնեցվում նրա հետ թվով և սեռով՝ תַּלְמִיד טוֹב - תַּלְמִידָה טוֹבָה *talmid tovq - talmidqa tovqa* «լավ աշակերտ - լավ աշակերտուհի», מוֹרֶה חָדָשׁ - מוֹרָה חָדָשׁ *morq khatash - morqa khatashq* «նոր ուսուցիչ - նոր ուսուցչուհի»:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ
(*kinuy* כִּנּוּי)

1.10. «Սա» **ցուցական** դերանունը (כִּנּוּי רָמֵז *kinuy remez*) եզակի թվում տարբերակվում է ըստ սեռի՝ זֶה *zq* (արական) և זֹאת *zoth* կամ זוֹ *zo* (իգական): Ցուցական դերանվան սեռը պայմանավորված է մատնանշվող գոյականի սեռով՝ זֶה סֵפֶר *zq*

[illegible] «սա գիրք է», זֹאת מַחְבֶּרֶת *zoth mahberqt* «սա տետր է», זוֹ בֻּבָּה *zo bubba* «սա [illegible]»:

1.11. 2-րդ և 3-րդ դեմքերի **անձնական** դերանունները (כִּנּוּי גוּף *kinuy guf*) ունեն [illegible] ձևեր արական և իգական սեռերի համար: 1-ին դեմքի դերանուններն [illegible] են երկու սեռերի համար: Ստորև ներկայացված են եզակի թվի անձնական դերանունները.

	արական	*իգական*	
I	*անի* אֲנִי		«ես»
II	*աթա* אַתָּה	*աթ* אַתְּ	«դու»[1]
III	*հու* הוּא	*հի* הִיא	«նա»

ՇԱՂԿԱՊՆԵՐ
(*միլաթ խիբուր* מִלַּת־חִבּוּר)

1.12.1. ו *վք* «և, իսկ» շաղկապը կցվում է հաջորդող բառին և ընթերցվում նրա հետ որպես մեկ բառ՝ שֻׁלְחָן וְכִסֵּא *շուլխան վէտէքէֆօն* «սեղան ու հեռախոս», אֲנִי וְאַתָּה *անի վէաթա* «ես ու դու», זֹאת מַחְבֶּרֶת, זֶה סֵפֶר *զէ սէֆէռ, վէզօթ մախբէռէթ* «սա գիրք է, իսկ սա տետր է»:

1.12.2. Եթե հաջորդող բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, ապա ו շաղկապի [illegible] ազդեցությամբ այն ընկնում է՝ תַּלְמִיד וְתַלְמִידָה *թալմիդ վէթալմիդա* «աշակերտ ու աշակերտուհի» (תַּלְמִידָה←תַּלְמִיד): ב כ פ տառերի դեպքում տեղի է ունենում համապատասխան հնչյունափոխություն՝ שֻׁלְחָן וְכִסָּא *շուլխան վէխիսէ* «սեղան և աթոռ» (כִּסָּא←כֵּסָא):

1.13. גַּם *գամ* «նաև, նույնպես» շաղկապը սովորաբար դրվում է հստակեցվող բառից առաջ և նույնպես ընթերցվում նրա հետ որպես մեկ բառ՝ אֲנִי גַּם *գամանի* «է՛ս էլ, ես նույնպես», דָּוִד גַּם *գամդավիդ* «Դավիթն էլ, նաև Դավիթը»:

---

[1] Ուշադրություն դարձրեք, որ արական սեռի אַתָּה դերանունն ունի իգական սեռին բնորոշ վերջավորություն, մինչ իգական սեռի אַתְּ դերանունն այն չունի: Ուշադրություն դարձրեք նաև אַתְּ դերանվան շվային:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.14.1. מְאֹד *մէ՛օդ* «շատ, չափազանց» մակբայը դրվում է ածականից հետո՝ גָּדוֹל *գ գ դ ո ւ ղ* *գադոլ մէ՛օդ* «շատ մեծ ձուկ», תַּלְמִידָה טֹבָה מְאֹד *թալմիդա յաֆա մէ՛օդ* «շատ գեղեցիկ աշակերտուհի»:

1.14.2. Խոսակցական լեզվում מְאֹד բառը կարող է դրվել ածականից առաջ՝ מאד גדול *մէ՛օդ գադոլ* «շատ մեծ»:

① 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

מה זה? זה סֵפֶר. זה סֵפֶר? כֵּן, זה סֵפֶר. זֶה סֵפֶר חָדָשׁ? כֵּן, זֶה סֵפֶר חָדָשׁ.
מה זֶה? זֶה שַׁלְחָן. זֶה שַׁלְחָן? כֵּן, זֶה שַׁלְחָן. זֶה שַׁלְחָן גָּדוֹל? כֵּן, זֶה שַׁלְחָן גָּדוֹל.
מה זֶה? זֶה דָּג. זֶה דָּג? כֵּן, זֶה דָּג. זֶה דָּג טָעִים? כֵּן, זֶה דָּג טָעִים מְאֹד
מה זֶה? זֶה לֶחֶם. זֶה לֶחֶם? כֵּן, זֶה לֶחֶם. זֶה לֶחֶם לְכָן? כֵּן, זֶה לֶחֶם לְכָן.
מה זֶה? זֶה עֵט. זֶה עֵט? כֵּן, זֶה עֵט. זֶה עֵט טוֹב? כֵּן, זֶה עֵט טוֹב מְאֹד.
מה זֶה? זֶה טֶלֶפוֹן. זֶה טֶלֶפוֹן? כֵּן, זֶה טֶלֶפוֹן. זֶה טֶלֶפוֹן מוֹדֶרְנִי? כֵּן, זֶה טֶלֶפוֹן סְלוּלָרִי חָדָשׁ.

זֶה דָּג? לֹא, זֶה לֹא דָּג, זֶה לֶחֶם.
זֶה עֵט? לֹא, זֶה לֹא עֵט, זֶה סֵפֶר.
זֶה שַׁלְחָן? לֹא, זֶה לֹא שַׁלְחָן, זֶה כִּסֵּא.

מה זֹאת? זֹאת בֵּבָה. מה זֹאת? זֹאת דִּירָה. מה זֹאת? זֹאת עֻגָּה. מה זֹאת? זֹאת מַחְבֶּרֶת.
זֹאת מַחְבֶּרֶת? כֵּן, זֹאת מַחְבֶּרֶת. זֹאת עֻגָּה? לֹא, זֹאת לֹא עֻגָּה, זֹאת בֵּבָה.

זֶה סֵפֶר חָדָשׁ וְזֹאת מַחְבֶּרֶת חֲדָשָׁה.
זֶה עֵט טוֹב וְזֹאת עֻגָּה טוֹבָה.
זֶה שַׁלְחָן גָּדוֹל וְזֹאת בֵּבָה גְּדוֹלָה.
זֶה טֶלֶפוֹן מוֹדֶרְנִי וְזֹאת דִּירָה מוֹדֶרְנִית.

מי זֶה? זֶה מוֹרֶה. מי זֶה? זֶה תַּלְמִיד. מי אַתָּה? אַתָּה מוֹרֶה? כֵּן, אֲנִי מוֹרֶה, אֲנִי לֹא תַּלְמִיד.
מי הוּא? הוּא תַּלְמִיד. אֵיפֹה הוּא? הוּא שָׁם. וְאֵיפֹה אַתָּה? אֲנִי פֹּה, גַּם אַתָּה פֹּה.
מי זֹאת? זֹאת תַּלְמִידָה. מי זֹאת? זֹאת מוֹרָה.
הִיא תַּלְמִידָה? לֹא, הִיא לֹא תַּלְמִידָה, הִיא מוֹרָה. הִיא מוֹרָה טוֹבָה? כֵּן, הִיא מוֹרָה טוֹבָה מְאֹד.
אַתְּ מוֹרָה? לֹא, אֲנִי לֹא מוֹרָה, אֲנִי תַּלְמִידָה. אַתְּ תַּלְמִידָה טוֹבָה? כֵּן, אֲנִי תַּלְמִידָה מְאֹד טוֹבָה.
אֵיפֹה הִיא? הִיא שָׁם? לֹא, הִיא לֹא שָׁם, הִיא פֹּה. וְאֵיפֹה אַתְּ? גַּם אֲנִי פֹּה.
זֶה תַּלְמִיד וְזֹאת תַּלְמִידָה. הוּא תַּלְמִיד טוֹב וְהִיא תַּלְמִידָה טוֹבָה.
זֶה מוֹרֶה וְזֹאת מוֹרָה. הוּא מוֹרֶה חָדָשׁ, גַּם הִיא מוֹרָה חֲדָשָׁה.

② *Թարգմանեք.*

1. Սա շատ մեծ գիրք է: 2. Նա շատ լավ աշակերտ է: 3. Սա նո՞ր հեռախոս է: Այո, սա նոր բջջային հեռախոս է: 4. Սա համե՞ղ ձուկ է: Ոչ, սա համեղ ձուկ չէ: 5. Սա գիրք է, իսկ սա տետր է: 6. Որտե՞ղ է նա: Նա այստեղ չէ, նա այնտեղ է: 7. Դու լավ աշակերտուհի ես, ես էլ շատ լավ աշակերտ եմ: 8. Սա նոր տիկնիկ է, նա շատ գեղեցիկ է: 9. Սա սպիտակ հաց է, այն (նա) շատ համեղ է: 10. Դու ուսուցչուհի՞ ես: Ոչ, ես ուսուցչուհի չեմ, ես աշակերտուհի եմ: 11. Ես հրեա չեմ, ես հայ եմ: 12. Նա էլ է հայուհի, նա հրեուհի չէ: 13. Ո՞վ է սա: Սա նոր ուսուցիչ է, նա շատ լավն է, նա հրեա է:

ՆՈՐ ԲԱՌԵՐ[1]

אֶחָד ש״מ נ *ախաթ* մեկ
אֵיפֹה ת״פ *էյֆօ* որտե՞ղ
אֲנִי מ״ג *անի* ես
אַתָּה ז, אַתְּ נ מ״ג *աթա, աթ* դու
גַּם מ״ח *գամ* նաև, նույնիսկ
הוּא ז, הִיא נ מ״ג *հու, հի* նա
וְ מ״ח *վէ* և, ու, իսկ
זֹאת, זוֹ מ״ג נ *զօթ, զօ* սա, այս
זֶה מ״ג ז *զէ* սա, այս
טֶלֶפוֹן ז *տէլէֆօն* հեռախոս
כֵּן ת״פ *քէն* այո, այսպես
לֹא ת״פ *օ՛ չ* ոչ
מְאֹד ת״פ *մէ՛օդ* շատ, չափազանց
מַה מ״ג *մա* ի՞նչ
מוֹדֶרְנִי ת *մօդէռնի* ժամանակակից
מִי מ״ג *մի* ո՞վ
סְלוּלָרִי ת *սէլուլա՛ռի* բջջային (հեռախոս)
פֹּה ת״פ *պօ* այստեղ
שָׁם ת״פ *շամ* այնտեղ

[1] Քերականական հապավումների ցանկը տե՛ս դասագրքի վերջի բառարանի առաջին էջում:

2ա
שְׁתַּיִם

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ

2.1. **Արական սեռի** գոյականների ու ածականների հոգնակին (רבוי *ռիբույ*) կազմվում է եզակիի (יחיד *յէխիդ*) ձևին סִים *-իմ* վերջածանցի կցումով՝ תַּלְמִידִים - תַּלְמִיד *թալմիդ - թալմիդիմ* «աշակերտներ», שִׁעוּרִים - שִׁעוּר *շիուռ - շիուռիմ* «դասեր», - טוֹבִים טוֹב *տօվ - տօվիմ* «լավ(եր)»:

2.2. סָ վերջավորությունը հոգնակիում սղվում է՝ מוֹרִים - מוֹרֶה *մօռէ - մօռիմ* «ուսուցիչներ», יָפִים - יָפֶה *յաֆէ - յաֆիմ* «գեղեցիկ(ներ)», קָשִׁים - קָשֶׁה *կաշէ - կաշիմ* «դժվար(ներ), ծանր(եր)»:

2.3.1. Քանի որ հոգնակիում շեշտը տեղափոխվում է վերջածանցի վրա, ապա բառը հաճախ ենթարկվում է ներքին հնչյունափոխության՝ סְפָרִים - סֵפֶר *սէֆէռ - սֆառիմ* «գրքեր», עֵצִים - עֵץ *էտ - իտիմ* «գրիչներ» (այս կարգի «անկանոն» հոգնակիները հատուկ նշված են բառացանկերում):
2.3.2. Փոփոխությունը կարող է վերաբերել միայն ձայնանիշներին և չազդել բառի արտաբերման վրա՝ חֲבֵרִים - חָבֵר *խավէռ - խավէռիմ* «ընկերներ»:
2.3.3. Ածականները հոգնակիում կրում են նույն հնչյունափոխությունը, որը և իգական սեռ կազմելիս՝ גְּדוֹלִים - (גְּדוֹלָה) - גָּדוֹל *գադոլ - (գդօլա) - գդօլիմ* «մեծ(եր)», לְבָנִים - (לְבָנָה) - לָבָן *լավան - (լէվանա) - լէվանիմ* «սպիտակ(ներ)», - (טְעִימָה) - טָעִים *տա'իմ - (տէ'իմա) - տէ'իմիմ* «համեղ(ներ)»:

2.4. **Իգական սեռի** գոյականներն ու ածականները հոգնակիում փոխարինում են הָ վերջավորությունը וֹת- *-օթ* վերջածանցով՝ מוֹרוֹת - מוֹרָה *մօռա - մօռօթ* «ուսուցչուհիներ», תַּלְמִידוֹת - תַּלְמִידָה *թալմիդա - թալմիդօթ* «աշակերտուհիներ», - דִּירָה דִּירוֹת *դիռա - դիռօթ* «բնակարաններ», בְּבוֹת - בֻּבָּה *բուբա - բուբօթ* «տիկնիկներ», לְבָנוֹת - לְבָנָה *լէվանա - լէվանօթ* «սպիտակ(ներ)», גְּדוֹלוֹת - גְּדוֹלָה *գդօլա - գդօլօթ* «մեծ(եր)», חֲדָשׁוֹת - חֲדָשָׁה *խադաշա-խադաշօթ* «նոր(եր)», יָפוֹת - יָפָה *յաֆա - յաֆօթ* «գեղեցիկ(ներ)», טוֹבוֹת - טוֹבָה *տօվա - տօվօթ* «լավ(եր)»:

2.5. Այսպիսով, ածականները կարող են ունենալ չորս ձև՝ երկու եզակի (արական ու իգական) և երկու հոգնակի (արական ու իգական)՝ - טוֹב - טוֹבִים - טוֹבָה טוֹבוֹת *տօվ - տօվիմ - տօվա - տօվօթ*, יָפֶה - יָפִים - יָפָה - יָפֶה *յաֆէ - յաֆիմ - յաֆա - յաֆօթ*, גָּדוֹל - גְּדוֹלִים - גְּדוֹלָה - גְּדוֹלוֹת *գադոլ - գդօլիմ - գդօլա - գդօլօթ:*

2.6. Ածականը (որոշիչը) թվով և սեռով համաձայնեցվում է գոյականի (որոշյալի) հետ՝ תַּלְמִידִים טוֹבִים *թալմիդիմ տօվիմ* «լավ աշակերտներ», תַּלְמִידוֹת טוֹבוֹת *թալմիդօթ տօվօթ* «լավ աշակերտուհիներ», סְפָרִים חֲדָשִׁים *սֆառիմ խադաշիմ* «նոր գրքեր»:

ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐ

2.7. סִים *-իմ* վերջավորությամբ իգական սեռի գոյականները հոգնակիում ստանում են סִיּוֹת *-իյօթ* վերջավորություն՝ סְטוּדֶנְטִית - סְטוּדֶנְטִיּוֹת *ստուդէնտիթ - ստուդէնտիյօթ* «ուսանողուհիներ»:

2.8. Իգական սեռի ת- վերջավորությունը հոգնակիում փոխարինվում է וֹת- *-օթ* վերջածանցով, և, որպես կանոն, տեղի է ունենում ներքին հնչյունափոխություն՝ מַחְבֶּרֶת - מַחְבְּרוֹת *մախբէռէթ - մախբառօթ* «տետրեր»:

2.9. Արական սեռի բազմաթիվ օրինակ՝ *-օն* և *-ան* վերջավորությամբ գոյականների մեծ մասի հոգնակին կազմվում է իգական սեռի וֹת- *-օթ* վերջածանցով՝ שַׁלְחָן שֻׁלְחָנוֹת *շուլխան - շուլխանօթ* «սեղաններ», אָרוֹן - אֲרוֹנוֹת *առօն - առօնօթ* «պահարաններ», שֵׁם - שֵׁמוֹת *շէմ - շէմօթ* «անուններ»:

2.10. Նմանապես, իգական սեռի մի շարք գոյականների հոգնակին կազմվում է արական սեռի סִים վերջածանցով՝ מִלָּה - מִלִּים *միլա - միլիմ* «բառեր»:

2.11. Համաձայնեցվելով հակառակ սեռի հոգնակիի ձև ունեցող գոյականի հետ ածականը հոգնակիում պահպանում է սեռի հիմնական վերջավորությունը՝ שְׁלָחִנוֹת גְּדוֹלִים *շուլխանօթ գոլիմ* «մեծ սեղաններ», שְׁמוֹת יָפִים *շէմօթ յաֆիմ* «գեղեցիկ անուններ», אֲרוֹנוֹת לְבָנִים *առոնօթ լէվանիմ* «սպիտակ պահարաններ», מִלִּים חֲדָשׁוֹת *միլիմ խադաշօթ* «նոր բառեր»:

① *Հոգնակիի վերածեք հետևյալ կապակցությունները.*
טָעִים גְּדוֹל *դագ տա՛իմ* «համեղ ձուկ», תַּלְמִיד חָדָשׁ *թալմիդ խադաշ* «նոր աշակերտ», מִחְבֶּרֶת גְּדוֹלָה *մախբէռէթ գոլա* «մեծ տետր», חָבֵר טוֹב *խավէր տօվ* «լավ ընկեր», חֲבֵרָה טוֹבָה *խավէռա տօվա* «լավ ընկերուհի», בֻּבָּה גְּדוֹלָה *բուբա գոլա* «մեծ տիկնիկ», סְטוּדַנְטִית חֲדָשָׁה *ստուդէնտիթ խադաշա* «նոր ուսանողուհի», מִלָּה יָפָה *միլա յաֆա* «գեղեցիկ բառ», שֻׁלְחָן לָבָן *շուլխան լավան* «սպիտակ սեղան», שָׁעוֹר קָשֶׁה *շիուռ կաշէ* «դժվար դաս», מִלָּה קָשָׁה *միլա կաշա* «դժվար բառ»:

② *Թարգմանեք, ապա հոգնակիի վերածեք հետևյալ կապակցությունները.*
Մեծ գրիչ, գեղեցիկ գիրք, սպիտակ տետր, նոր ընկեր, համեղ թխվածք, դժվար բառ, սպիտակ գիրք, նոր դաս, մեծ բնակարան, նոր սեղան, լավ բառ:

③ *Ինքնուրույն կազմեք մի քանի նմանատիպ կապակցություններ:*

2.12.1. ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

	արական	*իգական*	
I	אֲנַחְנוּ *անախնու* կամ אֲנוּ *անու*		«մենք»
II	אַתֶּם *աթէմ*	אַתֶּן *աթէն*	«դուք»[1]
III	הֵם *հէմ*	הֵן *հէն*	«նրանք»

[1] Եբրայերենում ընդունված չէ մեկ անձին դիմել «Դուք» դերանունով, ուստի բոլոր դեպքերում գործածվում են եզակի թվի אַתָּה և אַתְּ դերանունները:

2.12.2. Իգական սեռի դերանունները նշում են բացառապես կանանցից կամ իգական սեռի գոյականներից բաղկացած խմբեր՝ אַתֶּן סְטוּדַנְטִיות *աթէն ստուդէնտիյօթ տօվօթ* «դուք լավ ուսանողուհիներ եք»: Եթե ուսանողուհիների խմբին միանա մեկ ուսանող, նախադասությունը կվերածվի արական սեռի՝ אַתֶּם סְטוּדַנְטִים טובים *աթէմ ստուդէնտիմ տօվիմ* «դուք լավ ուսանողներ եք»:

ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

2.13. זֶה և (זוֹ) זֹאת ցուցական դերանունները հոգնակի թվում ունեն երկու սեռերի համար ընդհանուր אֵלֶּה *էլէ* «սրանք» ձևը (ավելի հազվադեպ אֵלּוּ *էլու* կամ הֵלָּלוּ *հալլու*)՝ אֵלֶּה סְטוּדַנְטִים חֲדָשִׁים *էլէ ստուդէնտիմ խադաշիմ* «սրանք նոր ուսանողներ են», אֵלֶּה סְטוּדַנְטִיות חֲדָשות *էլէ ստուդէնտիյօթ խադաշօթ* «սրանք նոր ուսանողուհիներ են», אֵלֶּה מִלִּים חֲדָשות *էլէ միլիմ խադաշօթ* «սրանք նոր բառեր են», אֵלּוּ שֻׁלְחָנוֹת חֲדָשִׁים *էլու շուլխանօթ խադաշիմ* «սրանք նոր սեղաններ են»:

① *Հոգնակիի վերածեք հետևյալ կապակցությունները.*
אֲנִי תַּלְמִידָה יָפָה *անի թալմիդա յաֆա* «ես գեղեցիկ աշակերտուհի եմ», אֲנִי סְטוּדַנְט טוֹב *անի ստուդէնտ տօվ* «ես լավ ուսանող եմ», אַתָּה לֹא מוֹרֶה חָדָשׁ *աթա լօ մօռէ խադաշ* «դու նոր ուսուցիչ չես», אַתְּ מוֹרָה חֲדָשָׁה *աթ մօռա խադաշա* «դու նոր ուսուցչուհի ես», הוּא חָבֵר טוֹב *հու խավէր տօվ* «նա լավ ընկեր է», הִיא חֲבֵרָה טוֹבָה *հի խավէռա տօվա* «նա լավ ընկերուհի է», זֶה סֵפֶר לָבָן *զէ սէֆէր լավան* «սա սպիտակ գիրք է», זֹאת מִחְבֶּרֶת לָבָנָה *զօթ մախբէռէթ լէվանա* «սա սպիտակ տետր է», זֹאת עֲגָבָה טְעִימָה מְאֹד *զօթ ագա տէ՛իմա մէ՛օդ* «սա շատ համեղ տորթ է», זֹאת מִלָּה חֲדָשָׁה *զօթ միլա խադաշա* «սա նոր բառ է», זֶה שֻׁלְחָן גָּדוֹל מְאֹד *զէ շուլխան գադօլ մէ՛օդ* «սա շատ մեծ սեղան է»:

② *Թարգմանեք, ապա հոգնակիի վերածեք հետևյալ նախադասությունները.*
Սա նոր ուսուցիչ եմ: Դու նուրբ ուսուցչուհի չես: Սա շատ լավ աշակերտուհի է: Սա շատ մեծ գրիչ է: Սա նոր տետր է: Նա շատ գեղեցիկ ուսանողուհի է: Նա շատ լավ ուսուցիչ է: Սա շատ դժվար բառ է: Սա՞ նոր և դժվար դաս է:

2F שְׁתַּיִם

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

(*քինույ խավուտ* כִּנּוּי חָבוּר[1])

2.14. Պատկանելությունն արտահայտվում է հատուկ վերջածանցներով, որոնք կոչվում են «դերանվանական» (կարելի է համեմատել հայերենի ստացական հոդերի հետ): Ստորև ներկայացված են եզակի թվի դերանվանական վերջածանցները.

	արական	*իգական*
I	«-ս, իմ» *-ի* סִי	
II	«-դ, քո» *-խա* ךָ	«-դ, քո» *-էխ* ךְ
III	«նրա» *-օ* וֹ	«նրա» *-ահ* הּ

Վերջածանցի սեռը պայմանավորվում է ոչ թե գոյականի, որին կցվում է, այլ այն անձի սեռով, որին գոյականը պատկանում է:

שֻׁלְחָן *շուլխան* «սեղան» բառի օրինակով՝

I	«սեղանս» *շուլխանի* שֻׁלְחָנִי	
II	*շուլխանխա* שֻׁלְחָנְךָ «սեղանդ (Դավիթ)»	*շուլխանէխ* שֻׁלְחָנֵךְ «սեղանդ (Աննա)»
III	*շուլխանօ* שֻׁלְחָנוֹ «նրա (Դավթի) սեղանը»	*շուլխանահ* שֻׁלְחָנָהּ «նրա (Աննայի) սեղանը»

[1] Կամ כִּנּוּי דָבוּר *քինույ դավուտ*:

Դերանվանական վերջածանցներ կցեք שׁעוּר շիուռ «դաս», תַּלְמִיד թալմիդ «աշակերտ» և דָּג դագ «ձուկ» բառերին: Ուշադրություն դարձրեք תַּלְמִידָהּ թալմիդահ «նրա (իգ.) աշակերտը» և תַּלְמִידָהּ թալմիդա «աշակերտուհի» բառերի տարբերությանը:

2.15. Դերանվանական վերջածանցի վրա շեշտի տեղափոխումը կարող է առաջացնել բառի հնչյունափոխություն, ինչպես օրինակ שֵׁם *շէմ* «անուն» և סֵפֶר *սէֆէռ* «գիրք» բառերում, կամ արտասանության վրա չազդող ձայնանիշափոխություն.

	արական	*իգական*
I	«անունս» *շմի* שְׁמִי	
II	*շիմխա* שִׁמְךָ «անունդ»	*շմէխ* שְׁמֵךְ «անունդ»
III	*շմօ* שְׁמוֹ «նրա անունը»	*շմահ* שְׁמָהּ «նրա անունը»

I	«գիրքս» *սիֆրի* סִפְרִי	
II	*սիֆրէխա* סִפְרְךָ «գիրքդ»	*սիֆրէխ* סִפְרֵךְ «գիրքդ»
III	*սիֆրօ* סִפְרוֹ «նրա գիրքը»	*սիֆրահ* סִפְרָהּ «նրա գիրքը»

Դերանվանական վերջածանցներ կցեք שָׁלוֹם շալօմ «առողջություն» *(հնչյունափոխված հիմքը* שְׁלוֹם- *շլօմ-)* և חָבֵר խավէռ «ընկեր» *(*חֲבֵר- *խավէռ-) բառերին: Ուշադրություն դարձրեք* חֲבֵרָהּ խավէռահ *«նրա (իգ.) ընկերը» և* חֲבֵרָה խավէռա *«ընկերուհի» բառերի տարբերությանը:*

Յ ԿՑԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.16. Յ *վէ* կցական շաղկապը ստանում է ו *ու* ձևը, երբ.

ա) բառի առաջին ձայնանիշը շվա է՝ מִחְבָּרוֹת וּסְפָרִים *մախբառոթ ուսֆառիմ* «տետրեր ու գրքեր»: Խոսքի արագությամբ պայմանավորված՝ բառասկզբի ձայնեղ շվան այդ դեպքում կարող է վերածվել համրի կամ մնալ ձայնեղ՝ וּלְבָנָה *ուլ(է)վանա* «ու սպիտակ»: Եթե բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, այն ընկնում է՝ וּגְדוֹלָה *ուգդօլա* «ու մեծ»:

բ) բառը սկսվում է מ ב פ տառերով, ընդ որում ב և פ տառերից թեթև դագեշն ընկնում է (ինչպես նաև դագեշ ունեցող այլ տառերից)՝ առաջացնելով համապատասխան հնչյունափոխություն՝ סֵפֶר וּמִחְבֶּרֶת *սէֆէր ումախբէռէթ* «գիրք ու տետր», פָּרַח וּבָבָה *պէռախ ուվուբա* «ծաղիկ ու տիկնիկ», בָּבָה וּפָרַח *բուբա ուֆէռախ* «տիկնիկ ու ծաղիկ»:

2.17. Եթե բառի առաջին ձայնանիշը խատաֆային է (ָ ֶ ֹ), ապա շաղկապը ստանում է այդ ձայնանիշի՝ շվայի հետ հանդես եկող ձայնանիշը (ַ ֶ ֹ)՝ אַתָּה וַאֲנִי *աթա վանի* «դու և ես», אַתֶּם וַאֲנַחְנוּ *աթէմ վանանխնու* «դուք և մենք», חֲבֵרִים וַחֲבֵרוֹת *խավէռիմ վախավէռոթ* «ընկերներ ու ընկերուհիներ»[1]:

ՆԱԽԴԻՐՆԵՐ
(*միլաթ յախաս* מִלַּת־יַחַס)

2.18. Եբրայերենում առավել տարածված նախդիրներից է בְּ *բէ* նախդիրը, որը կցվում է հաջորդող բառին և արտահայտում հայերենի ներգոյական հոլովի կամ «մեջ» նախդիրի իմաստը՝ בְּסֵפֶר *բէսէֆէր* «գրքում, գրքի մեջ», בְּאוניברסיטה *բէունիվէռսիտա* «համալսարանում», בְּיִשְׂרָאֵל *բէյիսռա'էլ* «Իսրայելում», կամ գործիական հոլովի իմաստը՝ בְּעֵט *բէ'էտ* «գրիչով»:

[1] Խոսակցական լեզվում այս հնչյունափոխությունները սովորաբար չեն պահպանվում, և շաղկապը՝ բացառությամբ մի քանի կայուն արտահայտությունների, գրեթե միշտ արտասանվում է *վէ*:

2.19. Ինչպես և Յ շաղկապի դեպքում, בְּ նախդիրի շվայի ազդեցությամբ հաջորդ տառի թեթև դագեշն ընկնում է՝ בְּדִירָה *դիռա - բէդիռա* «բնակարանում»: Եթե տառերի դեպքում տեղի է ունենում համապատասխան հնչյունափոխություն՝ בְּבוּבָה *բուբա - բէվուբա* «տիկնիկով», בְּכִסֵּא *քիսէ - բէխիսէ* «աթոռի մեջ», בְּפָרַח *պէռախ – բէֆէռախ* «ծաղիկի մեջ, ծաղիկով»:

Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.

מִי זֶה? זֶה אַבְרָהָם. וּמִי זֶה? זֶה דָּוִד. זֶה אַבְרָהָם וְזֶה דָּוִד. אֵלֶּה אַבְרָהָם וְדָוִד.
מִי זֹאת? זֹאת שָׂרָה. וּמִי זֹאת? זֹאת שׁוֹשַׁנָּה. זֹאת שָׂרָה וְזֹאת שׁוֹשַׁנָּה. אֵלֶּה שָׂרָה וְשׁוֹשַׁנָּה.
אַבְרָהָם סְטוּדֶנְט? כֵּן, אַבְרָהָם סְטוּדֶנְט טוֹב? כֵּן, הוּא סְטוּדֶנְט טוֹב מְאֹד.
דָּוִד תַּלְמִיד? לֹא, הוּא לֹא תַּלְמִיד, הוּא סְטוּדֶנְט. אַבְרָהָם וְדָוִד לֹא תַּלְמִידִים וְלֹא מוֹרִים, הֵם סְטוּדֶנְטִים.
הֵם סְטוּדֶנְטִים טוֹבִים מְאֹד. הֵם גַּם חֲבֵרִים טוֹבִים.
שָׂרָה סְטוּדֶנְטִית? לֹא, הִיא לֹא סְטוּדֶנְטִית, הִיא תַּלְמִידָה. הִיא תַּלְמִידָה טוֹבָה מְאֹד.
גַּם שׁוֹשַׁנָּה תַּלְמִידָה טוֹבָה מְאֹד. שָׂרָה וְשׁוֹשַׁנָּה לֹא מוֹרוֹת, הֵן תַּלְמִידוֹת. הֵן תַּלְמִידוֹת טוֹבוֹת. הֵן גַּם חֲבֵרוֹת טוֹבוֹת.

זֶה פָּרַח יָפֶה - אֵלֶּה פְּרָחִים יָפִים.
זֶה מוֹרֶה חָדָשׁ - אֵלֶּה מוֹרִים חֲדָשִׁים.
זֶה דָּג גָּדוֹל - אֵלֶּה דָּגִים גְּדוֹלִים.
זֹאת תַּלְמִידָה טוֹבָה - אֵלֶּה תַּלְמִידוֹת טוֹבוֹת.
זֹאת מוֹרָה חֲדָשָׁה - אֵלֶּה מוֹרוֹת חֲדָשׁוֹת.
זֹאת עֲגָה טְעִימָה - אֵלֶּה עֲגוֹת טְעִימוֹת.
זֶה שֻׁלְחָן לָבָן - אֵלֶּה שֻׁלְחָנוֹת לְבָנִים.
זֶה אָרוֹן יָפֶה - אֵלֶּה אֲרוֹנוֹת יָפִים.
זֹאת מִלָּה קָשָׁה - אֵלֶּה מִלִּים קָשׁוֹת.

זֶה אַבְרָהָם, וְזֶה חֲבֵרוֹ דָּוִד. דָּוִד חָבֵר טוֹב. דָּוִד וְאַבְרָהָם חֲבֵרִים טוֹבִים.
אֲנִי מוֹרֶה, וְזֶה תַּלְמִידִי, שִׁמְעוֹן יִצְחָק. יִצְחָק תַּלְמִיד חָדָשׁ. הוּא תַּלְמִיד טוֹב.
אַתָּה מוֹרֶה, וְזֶה תַּלְמִידְךָ, וּשְׁמוֹ יַעֲקֹב. יַעֲקֹב יְהוּדִי, הוּא לֹא רוּסִי.
אַתְּ מוֹרָה, וְזֶה תַּלְמִידֵךְ, וּשְׁמוֹ אַבְרָהָם. גַּם הוּא יְהוּדִי.
זֶה סִפְרְךָ? - לֹא, זֶה לֹא סִפְרִי. - וְאֵיפֹה סִפְרְךָ? - סִפְרִי בְּשַׁלְחָנִי. אֵיפֹה שֻׁלְחָנְךָ? - שֻׁלְחָנִי פֹּה.
זֶה סִפְרְךָ, שָׂרָה? - כֵּן, זֶה סִפְרִי.
שְׁמֶךָ שָׂרָה? - לֹא, שְׁמִי לֹא שָׂרָה, שְׁמִי שׁוֹשַׁנָּה, וְשִׁמְךָ? - שְׁמִי דָּוִד.
זֹאת שׁוֹשַׁנָּה, וְזֶה חֲבֵרָהּ, שְׁמוֹ יַעֲקֹב.

מִלִּים חֲדָשׁוֹת

אַבְרָהָם ז *ավրահամ* Աբրահամ[1]
אוּנִיבֶרְסִיטָה נ համալսարան *ունիվէրսիտա*
אֵלֶּה מ״ג ר *էլէ* սրանք, այս
אֲנַחְנוּ, אָנוּ מ״ג ר մենք *անա՛խնու, ա՛նու*
אַתֶּם, אַתֵּן מ״ג ז/נ դուք *աթէմ, աթէն*
דָּוִד ז *դավի՛դ* Դավիթ
הֵם, הֵן מ״ג ז/נ նրանք *հէմ, հէն*
יַעֲקֹב ז *յա՛ակօվ* Հակոբ
יִצְחָק ז *յիցխակ* Իսահակ
נָעִים ת (נ נָעִימָה) ת״פ *նա՛յիմ (նէ՛յիմա)* հաճելի
קָשֶׁה ת *կաշէ* դժվար, ծանր
שׁוֹשַׁנָּה נ *շօշա՛նա* Շոշանա
שָׁלוֹם ז *շալո՛մ* խաղաղություն, առողջություն, ողջույն, ցտեսություն
שָׁרָה נ *սա՛ռա* Սառա
שְׁתַּיִם ש״מ נ երկու *շթա՛յիմ*
תֵּל־אָבִיב נ *թել-ավի՛վ* Թել-Ավիվ

[1] Անձնական անունները թարգմանվում են Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ ամրագրված ձևերով:

***

- שָׁלוֹם! מַה שִּׁמְךָ[1]?
- שָׁלוֹם! שְׁמִי אַבְרָהָם. וּמַה[2] שִּׁמְךָ?
- שְׁמִי שָׂרָה.
- נָעִים מְאֹד. אַתְּ סְטוּדֶנְטִית?
- לֹא, אֲנִי לֹא סְטוּדֶנְטִית, אֲנִי תַּלְמִידָה, וְאַתָּה?
- אֲנִי סְטוּדֶנְט.
- מִי זֶה?
- זֶה חֲבֵרִי[3], שְׁמוֹ[4] יַעֲקֹב. גַּם הוּא[5] סְטוּדֶנְט.
- אַתֶּם סְטוּדֶנְטִים בְּאוּנִיבֶרְסִיטָה[6]?
- כֵּן, אֲנַחְנוּ סְטוּדֶנְטִים בְּאוּנִיבֶרְסִיטָה, בְּתֵל־אָבִיב[7].
- וְזֹאת שׁוֹשַׁנָּה, גַּם הִיא[8] תַּלְמִידָה.
- נָעִים מְאֹד. אַתֶּן חֲבֵרוֹת[9]?
- כֵּן, אֲנַחְנוּ חֲבֵרוֹת טוֹבוֹת.
- גַּם אֲנַחְנוּ[10] - יַעֲקֹב וַאֲנִי[11] - חֲבֵרִים טוֹבִים.

[1] 2.16.բ. [2] 1.12.2. [3] 1.14.1. [4] 2.3.1. [5] 2.11. [6] 2.15. [7] 2.14. [8] 2.16.ա. [9] 2.18. [10] 2.12.2. [11] 2.17.

④ *Թարգմանեք.*

1. Ո՞վ է սա: Սա նոր ուսանող է: 2. Սրանք նոր ուսանողնե՞ր են: Այո, սրանք նոր ուսանողներ են: 3. Սառան և Շոշանան լավ ընկերուհիներ են, Դավիթն ու Աբրահամն էլ են լավ ընկերներ: 4. Դու ուսանողուհի ես համալսարանո՞ւմ: Ոչ, ես ուսանողուհի չեմ, ես աշակերտուհի եմ: 5. Իմ անունը Դավիթ է, ես ուսանող եմ Թել-Ավիվում, իսկ սա Աբրահամն է, նա էլ է ուսանող: - Շատ հաճելի է, անունս Դավիթ է, ես էլ եմ ուսանող: 6. Մենք աշակերտներ ենք, իսկ դուք՝ ուսուցչուհիներ: 7. Նրանք շատ լավ ուսանողներ են, մենք էլ ենք լավ ուսանողներ: 8. Սրանք նոր բնակարաններ են, նրանք շատ լավն են: 9. Որտե՞ղ են նրանք: Նրանք համալսարանում են: 10. Որտե՞ղ ենք մենք: Մենք Թել-Ավիվում ենք: 11. Թել-Ավիվը գեղեցիկ է և մեծ[1]: 12. Սա իմ աշակերտն է, իսկ սա քո աշակերտն է: 13. Սա քո գիրքն է, Սառա: Ոչ, սա գիրքս չէ, սա քո գիրքն է: 14. Անունդ Աբրահա՞մ է: Ոչ, անունս Հակոբ է: 15. Նրա ընկերը լավ ուսանող է: 16. Որտե՞ղ է գիրքդ: Գիրքս նրա սեղանի մեջ է, իսկ նրա սեղանն այնտեղ է: 17. Որտե՞ղ է սեղանդ: Սեղանս այնտեղ է: 18. Նրա առողջությունը շատ լավ է: 19. Նրանք ուսանողուհիներ չեն, նրանք նոր ուսուցչուհիներ են: 20. Սրանք մեծ և շատ համեղ ձկներ են:

[1] Ինչպես նշվել է 1.3.1.պարբերությունում՝ քաղաքների անունները իգական սեռի են:

3 ա
שָׁלוֹשׁ

ՈՐՈՇՅԱԼ ԱՌՈՒՄ ԵՎ ՈՐՈՇԻՉ ՀՈԴ

3.1. Որոշյալ առումը բնորոշ է գոյականներին և նրանց հետ համաձայնեցվող ածականներին ու ցուցական դերանուններին: Բառը որոշյալ առման մեջ է, երբ նրան կցված են.

ա) դերանվանական վերջածանցներ՝ סִפְרִי *սիֆռի* «գիրքս», תַּלְמִידָךְ *թալմիդէխ* «աշակերտդ», שְׁמוֹ *շմո* «նրա անունը», עָשָׂה *իտահ* «նրա գրիչը»:

բ) -ה *ha-* որոշիչ հոդը (ה׳ הִידִיעָה *հէ հայէդի՛ա*), որը կցվում է բառին որպես նախածանց և արտասանվում նրա հետ միասին: Հին եբրայերենում հոդի կցումն առաջացնում էր բառի առաջին բաղաձայնի (եթե այն կոկորդային կամ ר չէր) կրկնավորումը, որը նշվում էր ուժեղ դագեշով: Արդի եբրայերենում բաղաձայնի կրկնավորում տեղի չի ունենում, սակայն դասական ձայնավորման մեջ ուժեղ դագեշը նշվում է, օրինակ՝ הַשֻּׁלְחָן *հաշշուլխան* «սեղանը» (հին եբրայերենում՝ *հաշշուլխան*), הַסֵּפֶר *հասէֆէռ* «գիրքը», הַמִּלָּה *համիլա* «բառը», הַגָּדוֹל *հագադոլ* «մեծը»: Դերանվանական վերջածանցով բառերը հոդ չեն ստանում, քանի որ նրանց որոշելիությունն արտահայտված է հենց վերջածանցով:

3.2. א ע ר տառերից առաջ հոդը ձայնավորվում է կամացով՝ הָעֵת *հա՛էտ* «գրիչը», הָאִישׁ *հա՛իշ* «մարդը», הָאָרוֹן *հա՛առօն* «պահարանը», הָרוֹפֵא *հառօֆէ* «բժիշկը»:

3.3. Եթե բառն սկսվում է הָ կամ עָ չշեշտվող և חָ (շեշտով և առանց շեշտի) կապակցություններով, ապա հոդը ձայնավորվում է սեգոլով՝ הַחָבֵר *հէխավէռ* «ընկեր (բայց՝ הַחֲבֵרִים *հախավէռիմ*), הַחָדָשׁ *հէխադաշ* «նորը» (բայց՝ הַחֲדָשָׁה *հախադաշա*), הָעָרִים *հէ՛առիմ* «քաղաքները» (բայց՝ הָעִיר *հա՛իռ*)[1]:

3.4. Հատուկ անունների մեծ մասը հոդ չի ստանում, սակայն մի շարք տեղանուններ գործածվում են հոդավորված՝ הַגָּלִיל *հագալիլ* «Գալիլեա» (Իսրայելի հյուսիսային շրջանը), הַנֶּגֶב *հանէգէվ* «Նեգև» (անապատ Իսրայելի հարավում), הַיַּרְדֵּן *հայարդէն* «Հորդանան (գետը)», הַכַּרְמֶל *հաքարմէլ* «Քարմել» (սար Իսրայելում):

3.5. Որոշիչ հոդի գործածությունը եբրայերենում հիմնականում համընկնում է հայերենի *-ը (-ն)* որոշիչ հոդի գործածության հետ: Այսպես, ենթական, ինչպես և հայերենում, սովորաբար հանդես է գալիս որոշիչ հոդով, եթե հատուկ չի շեշտվում նրա անորոշությունը:

3.6. Որոշիչն ու որոշյալը համաձայնեցվում են միմյանց հետ առումով՝ סֵדֶר קָטָן *խէդէռ կատան* «փոքր սենյակ» - הַסֵּדֶר הַקָּטָן *հախէդէռ հակատան* «փոքր սենյակը», אִשָּׁה יָפָה *իշա յաֆա* «գեղեցիկ կին» - הָאִשָּׁה הַיָּפָה *հա՛իշա հայաֆա* «գեղեցիկ կինը», עִיר גְּדוֹלָה *իռ գդօլա* «մեծ քաղաք» - הָעִיר הַגְּדוֹלָה *հա՛իռ հագդօլա* «մեծ քաղաքը», עִיר יָפָה וּגְדוֹלָה *իռ յաֆա ուգդօլա* «գեղեցիկ ու մեծ քաղաք» - הָעִיר הַיָּפָה וְהַגְּדוֹלָה *հա՛իռ հայաֆա վէհագդօլա* «գեղեցիկ և մեծ քաղաքը»:

3.7. Դերանվանական վերջածանցով գոյականի և հատուկ անվան որոշիչը ստանում է հոդ՝ שֻׁלְחָנִי הַגָּדוֹל *շուլխանի հագադոլ* «մեծ սեղանս», סִפְרְךָ הַחָדָשׁ *սիֆռէխա հէխադաշ* «նոր գիրքդ», שְׁמֹהּ הַיָּפֶה *շմէհ հայաֆէ* «գեղեցիկ անունդ», דָּגֹו הַטָּעִים *դագօ հատա՛իմ* «նրա համեղ ձուկը», יְרוּשָׁלַיִם הַחֲדָשָׁה *յէռուշալա՛յիմ հախադաշա* «նոր Երուսաղեմը», שָׁרָה הַיָּפָה *սա՛ռա հայաֆա* «գեղեցիկ Սառան»:

① *Թարգմանեք.*
Մեծ սեղանը, փոքր երեխան, վատ բժիշկը, մեծ քաղաքները, գեղեցիկ կինը, նոր թարտուղարուհին, դժվար բառերը, սպիտակ տետրը, փոքր աթոռը, վատ մարդը, նոր քաղաքները, մեծ տետրերը, նոր ու ժամանակակից բնակարանը, սպիտակ ու համեղ հացը, նոր բջջային հեռախոսը, նրա սպիտակ սեղանը, նրա գե-

[1] Խոսակցական լեզվում հոդն ունի միայն *ha-* կամ առանց «հ»-ի՝ *a-* ձևը:

ղեցիկ անունը, նոր գիրքս, քո փոքր գիրքը, նրա համեղ ձուկը, գեղեցիկ Երուսաղեմը, մեծ Խայֆան, փոքր Հակոբը:

3.8.1. Ածականով կամ գոյականով արտահայտված անվանական ստորոգյալը, ի տարբերություն ենթակայի, հող չի ստանում, սակայն համաձայնեցվում է ենթակայի հետ թվով ու սեռով՝ הַחֵדֶר קָטָן *հախէդէր կատան* «սենյակը փոքր է», רַע הַבַּיִת *հաբայիթ ռա* «տունը վատն է», הַמַּלְמִידִים טוֹבִים *հաթալմիդիմ տովիմ* «աշակերտները լավն են», הָעִיר יָפָה וּגְדוֹלָה *հա'իր յաֆա ուգդոլա* «քաղաքը գեղեցիկ է ու մեծ»:

3.8.2. Անվանական ստորոգյալը կարող է արտահայտված լինել որոշիչ-որոշյալով՝ הַיֶּלֶד תַּלְמִיד רַע *հայէլէդ թալմիդ ռա* «երեխան վատ աշակերտ է», אֲנוּ מַזְכִּירוֹת חֲדָשׁוֹת *անու մազքիռոթ խադաշօթ* «մենք նոր քարտուղարուհիներ ենք»:

3.9. Այսպիսով, հնարավոր է գոյականի ու ածականի կապակցության երեք ձև.

- לוֹדֶג שָׁלֵן *շուլխան գադօլ* «մեծ սեղան» (որոշիչ-որոշյալ, անորոշ առում),
- הַשֻּׁלְחָן הַגָּדוֹל *հաշուլխան հագադօլ* «մեծ սեղանը» (որոշիչ-որոշյալ, որոշյալ առում),
- לוֹדֶג הַשֻּׁלְחָן *հաշուլխան գադոլ* «սեղանը մեծ է» (ենթակա-անվանական ստորոգյալ):

Առաջին և երկրորդ օրինակները բառակապակցություններ են, իսկ երրորդը՝ պարզ նախադասություն:

② *Թարգմանեք.*

Տունը փոքր է, կինը գեղեցիկ է, բառերը դժվար են, նոր բառերը դժվար են, սեղանները սպիտակ են, դասը դժվար է, տորթը համեղ է, քաղաքը շատ գեղեցիկ է, պահարանը նոր է ու մեծ, բնակարանը մեծ ու ժամանակակից է:

3F שְׁלוֹשׁ

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

3.10. זֶה, זֹאת (זוֹ) և אֵלֶּה ցուցական դերանունները, ինչպես նշվել է՝ դրվելով գոյականից և նրա լրացումներից առաջ, համապատասխանում են հայերենի «սա, սրանք» դերանուններին՝ זֶה יֶלֶד *զէ յէլէդ* «սա երեխա է», זֹאת מַזְכִּירָה חֲדָשָׁה *զօթ մազքիռա խադաշա* «սա նոր քարտուղարուհի է», אֵלֶּה רוֹפְאִים טוֹבִים *էլէ ռոֆ'իմ տովիմ* «սրանք լավ բժիշկներ են»:

3.11. Նույն դերանունները՝ դրվելով գոյականից և նրա լրացումներից հետո, համապատասխանում են հայերենի «այս» ցուցական դերանվանը՝ יֶלֶד זֶה *յէլէդ զէ* «այս տղան», מַזְכִּירָה חֲדָשָׁה זֹאת *մազքիռա խադաշա զօթ* «այս նոր քարտուղարուհին», רוֹפְאִים טוֹבִים אֵלֶּה *ռոֆ'իմ տովիմ էլէ* «այս լավ բժիշկները»:

3.12. Քանի որ «այս» դերանունը կոնկրետացնում է գոյականը և տալիս նրան որոշյալ առում (ինչպես և հայերենում՝ «այս գիրքը»), ապա նա և գոյականը հաճախ հանդես են գալիս որոշիչ հոդով՝ הַיֶּלֶד הַזֶּה *հայէլէդ հազէ*, הַמַּזְכִּירָה הַחֲדָשָׁה הַזֹּאת *համազքիռա հախադաշա հազօթ*, הָרוֹפְאִים הַטּוֹבִים הָאֵלֶּה *հառոֆ'իմ հատովիմ հաէլէ*: Ինչպես պարզորոշ երևում է, նախադասության անդամների կարգն այսպիսի կապակցություններում ամբողջությամբ հակառակ է հայերենի կարգին. երբայերենում՝ գոյական(ներ), ածական(ներ), ցուցական դերանուն, հայերենում՝ ցուցական դերանուն, ածական(ներ), գոյական(ներ): Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ թարգմանություններ կատարելիս:

3.13. Այսպիսով, הַבַּיִת הַיָּפָה וְהַמּוֹדֶרְנִי הַזֶּה קָטָן *հաբայիթ հայաֆէ վէհամոդէռնի հազէ կատան* նախադասությունը պետք է վերլուծել հետևյալ կերպ. הַיָּפָה ու הַמּוֹדֶרְנִי ածականներն առումով համաձայնեցված են הַבַּיִת գոյականի հետ, ուստի նրա որոշիչներն են («գեղեցիկ և ժամանակակից տունը»): קָטָן ածականը հող չունի, հե-

տնաբար անվանական ստորոգյալ է («փոքր է»): Ուստի՝ «Այս գեղեցիկ և ժամանակակից տունը փոքր է»:

① *Թարգմանեք.*

Այս աշակերտը, այս աշակերտները, այս ուսանողուհիները, այս փոքր սենյակը, այս սպիտակ տունը, այս նոր բժիշկները, այս լավ քարտուղարուհիները, այս նոր դասերը, այս դժվար բառերը, այս համեղ ձկները, այս վատ գրիչները, այս լավ աշակերտները, այս մեծ և գեղեցիկ պահարանը, այս լավ և գեղեցիկ ուսանողները:

כָּל ԲԱՌԸ

3.14. כָּל *քol* բառն ունի իմաստային հետևյալ երանգավորումները.

ա) Եթե հաջորդող բառը հոդ չունի, ապա כָּל բառը թարգմանվում է «ամեն (մի), յուրաքանչյուր»՝ כָּל סֵפֶר *քol sէֆէr* «յուրաքանչյուր, ամեն մի գիրք», כָּל תַּלְמִיד *քol թալմիդ* «ամեն մի աշակերտ», כָּל לַיְלָה *քol լայլա* «ամեն գիշեր», כָּל אִשָּׁה *քol իշա* «յուրաքանչյուր կին»:

բ) Եթե հաջորդող բառն ունի հոդ և եզակի թվում է, ապա כָּל բառը թարգմանվում է «ամբողջ»՝ כָּל הַסֵּפֶר *քol հասէֆէr* «ամբողջ գիրքը», כָּל הַלַּיְלָה *քol հալայլա* «ամբողջ գիշերը», כָּל הָעִיר *քol հա'իr* «ամբողջ քաղաքը»:

գ) Եթե հաջորդող բառը հոդակիր է և հոգնակի թվում է, ապա כָּל բառը թարգմանվում է «բոլոր»՝ כָּל הַסְּפָרִים *քol հասֆառիմ* «բոլոր գրքերը», כָּל הַתַּלְמִידִים הָאֵלֶּה *քol հաթալմիդիմ հա'էլէ* «այս բոլոր աշակերտները», כָּל הָאֲנָשִׁים הַטּוֹבִים *քol հա'անաշիմ հատոբիմ* «բոլոր լավ մարդիկ», כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת הָאֵלֶּה *քol համիլիմ հախադաշօթ հա'էլէ* «այս բոլոր նոր բառերը»:

② *Թարգմանեք.*

Այս բոլոր ուսուցիչները, ամեն մի ուսուցիչ, բոլոր լավ բժիշկները, բոլոր դժվար բառերը, ամբողջ քաղաքը, բոլոր մեծ քաղաքները, յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր լավ մարդ, բոլոր սպիտակ ծաղիկները, ամեն մի նոր ուսանող, յուրաքանչյուր գեղեցիկ կին, բոլոր գեղեցիկ կանայք, ամբողջ համալսարանը, բոլոր փոքր երեխաները:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.15. אִישׁ *իշ* «(տղա)մարդ» և אִשָּׁה *իշա* «կին» բառերն ունեն հոգնակիի անկանոն ձևեր՝ համապատասխանաբար אֲנָשִׁים *անաշիմ* և נָשִׁים *նաշիմ*: אֲנָשִׁים բառն ունի «մարդիկ» իմաստը՝ առանց սեռային տարբերակման:

3.16. עַל *ալ* նախդիրն ունի երկու հիմնական իմաստ՝ «վրա» և «մասին»՝ הַמַּחְבֶּרֶת עַל שֻׁלְחָן *համախբէռէթ ալ հասէֆէռ* «տետրը գրքի վրա է», הַסֵּפֶר הַזֶּה עַל יִשְׂרָאֵל *հասէֆէռ հազէ ալ յիսռա'էլ* «այս գիրքն Իսրայելի մասին է»:

3.17. 3-րդ դեմքի անձնական դերանունները երբեմն հանդես են գալիս որպես կապ ենթակայի և անվանական ստորոգյալի միջև՝ սեռով և թվով համաձայնեցվելով ենթակայի հետ՝ דָּוִד הוּא תַּלְמִיד *դավիդ հու թալմիդ* «Դավիթը (նա) աշակերտ է», שָׂרָה הִיא סְטוּדֶנְטִית *սառա հի ստուդէնտիթ* «Սառան (նա) ուսանողուհի է»: Անձնական դերանունը կարող է դրվել նաև նախադասության վերջում՝ דָּוִד תַּלְמִיד הוּא *դավիդ թալմիդ հու*, הַנָּשִׁים הָאֵלֶּה מוֹרוֹת הֵן *հանաշիմ հա'էլէ մորօթ հէն* «Այս կանայք ուսուցչուհիներ են»:

① 🗣 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

זֶה חֶדֶר. הַחֶדֶר הַזֶּה גָּדוֹל. הַחֶדֶר הַזֶּה גָּדוֹל. הַשֻּׁלְחָן הַזֶּה קָטָן. הַשֻּׁלְחָן קָטָן.
אֵיפֹה הַחֶדֶר הַגָּדוֹל? הַחֶדֶר הַגָּדוֹל פֹּה, הַחֶדֶר הַקָּטָן שָׁם.
זֶה סֵפֶר. הַסֵּפֶר חָדָשׁ. הַסֵּפֶר הַזֶּה חָדָשׁ.
אֵיפֹה הַסֵּפֶר הַחָדָשׁ? הַסֵּפֶר הַחָדָשׁ עַל הַשֻּׁלְחָן.
זֶה יֶלֶד. הַיֶּלֶד הַזֶּה תַּלְמִיד טוֹב.
זֶה מוֹרָה. הַמּוֹרָה הַזֹּאת רַע. אֵיפֹה הַמּוֹרָה הָרַע? הַמּוֹרָה הָרַע שָׁם, בַּחֶדֶר.
זֶה בַּיִת. הַבַּיִת הַזֶּה יָפֶה. הַבַּיִת הַקָּטָן הַיָּפֶה הַזֶּה קָטָן. הַבַּיִת הַיָּפֶה הַזֶּה בְּתֵל־אָבִיב. אֵיפֹה תֵּל־אָבִיב?
תֵּל־אָבִיב עִיר יָפָה וּגְדוֹלָה בְּיִשְׂרָאֵל.

գյուղ: 20. Փոքր քաղաքներն Իսրայելում շատ գեղեցիկ են: 21. Բոլոր կանայք այս-տեղ գեղեցիկ են: 22. Այս գեղեցիկ կանայք քարտուղարուհիներ են:

מִלִּים חֲדָשׁוֹת

אִישׁ ז (ר אֲנָשִׁים) *իշ (անաշիմ)* մարդ(ություն)
אִשָּׁה נ (ר נָשִׁים) *իշա (նաշիմ)* կին
בַּיִת ז (ר בָּתִּים) *բայիթ (բաթիմ)* տուն
חֶדֶר ז (ר חֲדָרִים) *խէդէր (խադարիմ)* սենյակ
חֵיפָה, חֵיפָה נ Խայֆա (քաղաք Իսրայելում) *խէ(յ)ֆա, խայֆա*
יֶלֶד ז (ר יְלָדִים) *յէլէդ (յէլադիմ)* երեխա, տղա
יָפֶה ת ת״פ *յաֆէ* գեղեցիկ, լավ
יְרוּשָׁלַיִם נ *յէռուշալայիմ* Երուսաղեմ
יִשְׂרָאֵל ז *յիսռա'էլ* Իսրայել
כָּל *քոլ* բոլոր, ամեն մի, յուրաքանչյուր
מַזְכִּירָה נ *մազքիռա* քարտուղարուհի
עִיר נ (ר עָרִים) *իռ (առիմ)* քաղաք
עַכְשָׁיו ת״פ *ախշավ* այժմ, հիմա
עַל מ״י *ալ* վրա, մասին
קָטָן ת *կատան* փոքր
רוֹפֵא ז (ר רוֹפְאִים) *ռոֆէ (ռոֆ'իմ)* բժիշկ
שָׁלוֹשׁ ש״מ נ *շալոշ* երեք

זֹאת דִּירָה. הַדִּירָה הַזֹּאת גְּדוֹלָה. זֹאת מַחְבֶּרֶת. הַמַּחְבֶּרֶת הַזֹּאת עַל הַסֵּפֶר.
זֹאת תַּלְמִידָה. הַתַּלְמִידָה הַזֹּאת יָפָה. זֹאת מוֹרָה. הַמּוֹרָה הַזֹּאת רָעָה.
זֹאת עִיר. הָעִיר הַזֹּאת קְטַנָּה. הָעִיר הַקְּטַנָּה הַזֹּאת יָפָה. הָעִיר הַקְּטַנָּה הַזֹּאת בְּיִשְׂרָאֵל.

אֵלֶּה תַּלְמִידִים וְתַלְמִידוֹת. הַתַּלְמִידִים הָאֵלֶּה וְהַתַّלְמִידוֹת הָאֵלֶּה פֹּה.
הַתַּלְמִידִים הָאֵלֶּה טוֹבִים, גַּם הַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה טוֹבוֹת. כָּל הַתַּלְמִידִים וְהַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה[1] טוֹבִים.
אֵלֶּה סְפָרִים. הַסְּפָרִים הָאֵלֶּה חֲדָשִׁים. הַסְּפָרִים הַחֲדָשִׁים הָאֵלֶּה עַל יִשְׂרָאֵל.
אֵלֶּה מוֹרִים. הַמּוֹרִים הָאֵלֶּה רָעִים. אֵלֶּה מוֹרוֹת. הַמּוֹרוֹת הָאֵלֶּה רָעוֹת.
כָּל הַמּוֹרִים הָאֵלֶּה[2] עַכְשָׁיו[3] בְּחֵדֶר.

מִי הָאִישׁ הַזֶּה? הָאִישׁ הַזֶּה רוֹפֵא. וּמַה[10] שְׁמוֹ[11]? שְׁמוֹ דָּנִיאֵל שָׁרוֹן.
מִי הָאִשָּׁה הַזֹּאת? הָאִשָּׁה הַזֹּאת מַזְכִּירָה, וּשְׁמָהּ[12] שָׂרָה גִּידוֹר.
הָאֲנָשִׁים הָאֵלֶּה רוֹפְאִים, הַנָּשִׁים הָאֵלֶּה מַזְכִּירוֹת.
כָּל הָאֲנָשִׁים הָאֵלֶּה[4] יָפִים, גַּם כָּל הַנָּשִׁים הָאֵלֶּה[5] יָפוֹת.
אֵיפֹה עַכְשָׁיו כָּל הַסְּטוּדֶנְטִים[6]? כָּל הַסְּטוּדֶנְטִים עַכְשָׁיו בְּאוּנִיבֶרְסִיטָה.
כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת הָאֵלֶּה קָשׁוֹת מְאֹד.
כָּל הַסְּפָרִים וְהַמַּחְבְּרוֹת הָאֵלֶּה עַל הַשֻּׁלְחָן הַגָّדוֹל הַזֶּה.
כָּל פֶּרַח[13] פֹּה לָבָן. כָּל הַפְּרָחִים הַלְּבָנִים הָאֵלֶּה[7] גְּדוֹלִים וְיָפִים.
הָעָרִים[8] הַגְּדוֹלוֹת[14] בְּיִשְׂרָאֵל הֵן[15] יְרוּשָׁלַיִם, תֵּל־אָבִיב וְחֵיפָה[16].

[1] 3.10. [2] 3.8.1. [3] 3.12. [4] 3.6. [5] 3.3. [6] 3.8.2. [7] 3.13. [8] 3.14.q. [9] 3.3.2.
[10] 2.16.p. [11] 2.15. [12] 2.16.w. [13] 3.14.w. [14] 2.11. [15] 3.17. [16] 1.3.

④ *Թարգմանեք.*

1. Բոլոր նոր գրքերը սպիտակ սեղանի վրա են: 2. Այս տղամարդը լավ ուսուցիչ է, այս կինն էլ է լավ ուսուցչուհի: 3. Այս փոքր տները շատ գեղեցիկ են: 4. Սա շատ փոքր քաղաք է: 5. Բոլոր նոր ուսանողները հիմա այստեղ են: 6. Որտե՞ղ են հիմա բոլոր մարդիկ: 7. Սա նոր ուսուցիչ է, նրա անունն Աբրահամ է, իսկ սա նոր ուսուցչուհի է, նրա անունը Սառա է: 8. Այս բոլոր ձկները շատ համեղ են: 9. Այս սենյակները շատ մեծ են: 10. Այս սպիտակ հեռախոսը ժամանակակից չէ: 11. Երուսաղեմը մեծ և գեղեցիկ քաղաք է: 12. Քո նոր աշակերտը շատ լավն է: 13. Իմ նոր սեղանը վատն է, նրա սպիտակ սեղանը ժամանակակից է: 14. Այս փոքր գիրքը Գալիլեայի և Նեգևի մասին է: Գալիլեայի և Նեգևի մասին այս գիրքն իմ սեղանի վրա է: 15. Իմ լավ ընկերն այժմ Խայֆայում է, նա Թել-Ավիվում չէ: 16. Բոլոր փոքր երեխաները գեղեցիկ են: 17. Այս մեծ ծաղիկը սպիտակ է: 18. Այս բոլոր ծաղիկները սպիտակ են: 19. Թել-Ավիվը մեծ և գեղեցիկ քաղաք է Իսրայե-

4 אַרְבַּע

4.1. ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

	արական	*իգական*
I	«մեր» *-ենու* ՝ נו	
II	«ձեր» *-խէմ* ՝ כם	«ձեր» *-խէն* ՝ כן
III	«նրանց» *-ամ* ՝ ם	«նրանց» *-ան* ՝ ן

שֵׁלֶשׁ բառի օրինակով՝

I	«մեր սեղանը» *շուլխանէնու* ՝ שֻׁלְחָנֵנוּ	
II	*շուլխանխէմ* ՝ שֻׁלְחָנְכֶם «ձեր սեղանը»	*շուլխանխէն* ՝ שֻׁלְחָנְכֶן «ձեր սեղանը»
III	*շուլխանամ* ՝ שֻׁלְחָנָם «նրանց սեղանը»	*շուլխանան* ՝ שֻׁלְחָנָן «նրանց սեղանը»

שֵׁם բառի օրինակով՝

I	«մեր անունը» *շմէնու* ՝ שְׁמֵנוּ	
II	*շիմխէմ* ՝ שִׁמְכֶם «ձեր անունը»	*շիմխէն* ՝ שִׁמְכֶן «ձեր անունը»
III	*շմամ* ՝ שְׁמָם «նրանց անունը»	*շման* ՝ שְׁמָן «նրանց անունը»

ספר բառի օրինակով՝

	արական	*իգական*
I	«մեր գիրքը» *սիֆռէնու* ՝ סִפְרֵנוּ	
II	*սիֆռէխէմ* ՝ סִפְרְכֶם «ձեր գիրքը»	*սիֆռէխէն* ՝ סִפְרְכֶן «ձեր գիրքը»
III	*սիֆռամ* ՝ סִפְרָם «նրանց գիրքը»	*սիֆռան* ՝ סִפְרָן «նրանց գիրքը»

① *Էզակի և հոգնակի թվի դերանվանական վերջածանցներ կցեք հետևյալ բառերին՝* שׁוּר շիուռ *«դաս»*, גַּז դազ *«ձուկ»*, בִּנְיָן բինյան *«շենք, կառույց»*, טֶלֶפוֹן տէֆոն *«հեռախոս»*, תַּלְמִיד թալմիդ *«աշակերտ»*, שָׁלוֹם շալօմ *«առողջություն» (հնչյունափոխված հիմքը՝* שְׁלוֹם- շլօմ-*)*, חָבֵר խավէռ *«ընկեր»* (חֲבֵר- խավէռ-), אָרוֹן առոն *«պահարան»* (אֲרוֹן- առօն), עֵט էտ *«գրիչ»* (עֵט- իտ-), בַּיִת բայիթ *«տուն»* (בֵּית- բէյթ):

ՀՅ ՍՏԱՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐԸ

4.2. Պատկանելությունը դերանվանական վերջածանցներից զատ արտահայտվում է *ՀՅ շէլ* ստացական նախդիրի միջոցով՝ אִשָּׁה שֶׁל יַעֲקֹב *իշա շէլ յա՛ակօվ* «Հակոբի կինը», סֵפֶר שֶׁל תַּלְמִיד *սէֆէռ շէլ թալմիդ* «աշակերտի գիրք», חֲדָרִים שֶׁל מְלוֹן *խադառիմ շէլ մալօն* «հյուրանոցի սենյակներ»: Ըստ որոշելիության աստիճանի, կապակցության անդամները կարող են ստանալ հոդ՝ (הַ)סֵפֶר שֶׁל (הַ)תַּלְמִיד *(հա)սէֆէռ շէլ (հա)թալմիդ* «աշակերտի գիրք(ը)», (הַ)רוֹפֵא שֶׁל (הַ)מְכוֹנִית *(հա)մէխօնիթ շէլ (հա)ռօֆէ* «բժիշկի ավտոմեքենա(ն)»:

4.3. Կապակցության առաջին բառի որոշյալ առումը, բացի որոշիչ հոդից, կարող է արտահայտվել 3-րդ դեմքի դերանվանական վերջածանցով, որը թվով և սեռով համաձայնեցվում է կապակցության երկրորդ բառի հետ՝ סֵפֶר שֶׁל דָּוִד *սիֆռօ շէլ դավիդ* «(նրա՝) Դավթի գիրքը», סִפְרָהּ שֶׁל שָׂרָה *սիֆռահ շէլ սառա* «(նրա՝) Սառայի գիրքը», חֲדָרָם שֶׁל הַתַּלְמִידִים *խադռամ շէլ հաթալմիդիմ* «(նրանց՝) աշակերտների սենյակը», חֲדָרָן שֶׁל הַתַּלְמִידוֹת *խադռան շէլ հաթալմիդօթ* «(նրանց՝) աշակերտուհիների սենյակը»: Այս կարգի կապակցությունները հիմնականում բնորոշ են գրական լեզվին, իսկ խոսակցականում համեմատաբար քիչ են հանդիպում:

בְּ ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ ՀԵՏ

4.4.1. Կցվելով որոշիչ հոդ ունեցող բառին՝ בְּ նախդիրը դուրս է մղում հոդի տառը և կլանում նրա ձայնանիշը.

בְּ + הַ + ooo	=	בַּooo
בְּ + הָ + ooo	=	בָּooo
בְּ + הֶ + ooo	=	בֶּooo

Օրինակ՝ בַּבַּיִת *բաբայիթ* «տանը» (בְּ + הַבַּיִת), בָּאוּנִיברְסִיטֶה *բաունիվէռսիտա* «համալսարանում» (בְּ + הָאוּנִיברְסִיטֶה), בְּעָרִים *բէ՛առիմ* «քաղաքներում» (בְּ + הָעָרִים): Այսպիսով, בַּ בָּ בֶּ ձևերը միևնույն ժամանակ և՛ նախդիր են, և՛ որոշիչ հոդ: בְּה կապակցությունը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ հոդով բառն անվանում է և չակերտների մեջ է՝ בְּ"הַכַּרְמֶל" *բէհաքառմէլ* ««Քարմել» (ամսագրում)», בְּ"הַטְרוּבַּדּוּר" *բէհատռուբադուռ շէլ վէռդի* «Վերդիի «Տրուբադուր»-ում»:

4.4.2. Հոդի սղման դեպքում, բառի առաջին տառի ուժեղ դագեշը պահպանվում է՝ בַּסֵּפֶר *բասէ՛ֆէռ* «գրքում»:

② 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

מַה יֵּשׁ עַל שֻׁלְחָנְכֶם[1]? עַל שֻׁלְחָנֵנוּ[2] יֵשׁ סֵפֶר וּמַחְבֶּרֶת[3].

יֵשׁ לָהֶם עַל שֻׁלְחָנָם[4]? לֹא, עַל שֻׁלְחָנָם אֵין לָהֶם, יֵשׁ רַק חֲמֵאָה וּגְבִינָה[5].

אֵיפֹה הָעֵט[6] וְהָעִפָּרוֹן[7]? הָעֵט וְהָעִפָּרוֹן עַל הַשֻּׁלְחָן הַזֶּה. כָּל הָעִפָּרוֹנוֹת[8] וְהָעֵטִים[9] עַל הַשֻּׁלְחָן הַלָּבָן הַזֶּה.

וְאֵיפֹה הַסֵּפֶר וְהַמַּחְבֶּרֶת? גַּם הַסֵּפֶר וְהַמַּחְבֶּרֶת עַל הַשֻּׁלְחָן הַלָּבָן הַזֶּה.

שֶׁל מִי הַבַּיִת הַקָּטָן הַזֶּה? הַבַּיִת הַקָּטָן הַזֶּה שֶׁל יוֹסֵף[10].

שֶׁל מִי הַמְּכוֹנִית הַגְּדוֹלָה הַזֹּאת? הַמְּכוֹנִית הַגְּדוֹלָה הַזֹּאת שֶׁל הַמּוֹרֶה[11] הַחָדָשׁ[12] הַזֶּה.

אֵיפֹה הַבַּיִת שֶׁל יִצְחָק? הַבַּיִת שֶׁל יִצְחָק בְּחֵיפָה. בֵּיתוֹ שֶׁל יִצְחָק[13] גָּדוֹל וְיָפֶה מְאֹד. גַּם בֵּיתָם[14] שֶׁל יוֹסֵף וְחַנָּה[15] יָפֶה, אֲבָל הוּא לֹא גָּדוֹל, בֵּיתָם[16] קָטָן מְאֹד.

אֵיפֹה הַתַּלְמִיד וְהַמּוֹרֶה? הַתַּלְמִיד וְהַמּוֹרֶה בַּחֶדֶר, הֵם לֹא פֹּה.

אֵיפֹה עַכְשָׁיו אַבְרָהָם וְדִינָה? אַבְרָהָם וְדִינָה עַכְשָׁיו בְּסִדְרָם[17]. סִדְרָם שֶׁל אַבְרָהָם וְדִינָה[18] קָטָן, אֲבָל יָפֶה מְאֹד.

זֶה אָרוֹנְךָ? לֹא, זֶה לֹא אָרוֹנִי, זֶה אָרוֹנוֹ שֶׁל אַבְרָהָם[19], וְזֶה אָרוֹנָה שֶׁל דִּינָה[20].

אֵיפֹה סִדְרָן[1] שֶׁל דִּינָה וְשָׂרָה[2]? שָׁם, אֲבָל עַכְשָׁיו הֵן לֹא בְּסִדְרָן.

הָעִיר הַזֹּאת יָפָה? כֵּן, הָעִיר הַזֹּאת יָפָה מְאֹד. הָעִיר הַיָּפָה הַזֹּאת גְּדוֹלָה? הִיא לֹא גְּדוֹלָה וְלֹא קְטַנָּה. בְּיִשְׂרָאֵל אֵין הַרְבֵּה עָרִים גְּדוֹלוֹת, אֲבָל יֵשׁ הַרְבֵּה עָרִים קְטַנּוֹת. הָעָרִים הַקְּטַנּוֹת בְּיִשְׂרָאֵל יָפוֹת מְאֹד.

הַחֶדֶר שֶׁל אַבְרָהָם גָּדוֹל. מַה יֵּשׁ בַּחֶדֶר (בְּ + הַחֶדֶר)[1] שֶׁל אַבְרָהָם? בַּחֶדֶר שֶׁל אַבְרָהָם יֵשׁ שֻׁלְחָן, [illegible] אָרוֹן גָּדוֹל וּמִטָּה[2]. מַה יֵּשׁ בַּשֻּׁלְחָן (בְּ + הַשֻּׁלְחָן)[3] שֶׁל אַבְרָהָם? בַּשֻּׁלְחָן שֶׁל אַבְרָהָם יֵשׁ הַרְבֵּה מַחְבָּרוֹת. כָּל הַמַּחְבָּרוֹת[4] שֶׁל אַבְרָהָם בַּשֻּׁלְחָן הַזֶּה (בְּ + הַשֻּׁלְחָן הַזֶּה). מַה יֵּשׁ בָּאָרוֹן (בְּ + הָאָרוֹן)[5] שֶׁל אַבְרָהָם? בָּאָרוֹן שֶׁל אַבְרָהָם יֵשׁ הַרְבֵּה סְפָרִים. כָּל הַסְּפָרִים[6] שֶׁל אַבְרָהָם בָּאָרוֹן הַזֶּה (בְּ + הָאָרוֹן הַזֶּה). יֵשׁ [illegible] בַּחֶדֶר (בְּ + הַחֶדֶר)[7] שֶׁל אַבְרָהָם? לֹא, בַּחֶדֶר שֶׁל אַבְרָהָם אֵין סִפָּה, אֲבָל יֵשׁ מִטָּה גְּדוֹלָה.

אֵיפֹה עַכְשָׁיו כָּל הַסְּטוּדֶנְטִים? כָּל הַסְּטוּדֶנְטִים עַכְשָׁיו בָּאוּנִיברְסִיטֶה (בְּ + הָאוּנִיברְסִיטֶה)[8].

גַּם דָּוִד בָּאוּנִיברְסִיטֶה? לֹא, דָּוִד עַכְשָׁיו בַּבַּיִת (בְּ + הַבַּיִת)[9].

הָעִיר[1] הַזֹּאת יָפָה. מַה יֵּשׁ בָּעִיר הַיָּפָה הַזֹּאת (בְּ + הָעִיר הַיָּפָה הַזֹּאת)[2]? בָּעִיר הַיָּפָה הַזֹּאת יֵשׁ הַרְבֵּה בִּנְיָנִים יָפִים. כָּל הַבִּנְיָנִים[3] בָּעִיר[4] הַזֹּאת לְבָנִים.

הַבִּנְיָן הַגָּדוֹל הַזֶּה מָלוֹן הוּא[5]. בְּמָלוֹן הַגָּדוֹל הַזֶּה (בְּ + הַמָּלוֹן הַגָּדוֹל הַזֶּה)[6] יֵשׁ הַרְבֵּה חֲדָרִים. יֵשׁ בַּמָּלוֹן חֲדָרִים גְּדוֹלִים, וְיֵשׁ חֲדָרִים קְטַנִּים, אֲבָל כָּל הַחֲדָרִים[7] בַּמָּלוֹן הַגָּדוֹל הַזֶּה מְאֹד טוֹבִים.

[1] 4.1. [2] 2.16.բ. [3] 2.16.ա. [4] 3.2. [5] 3.14.գ. [6] 4.2. [7] 3.3. [8] 4.3. [9] 4.4.1. [10] 3.17.

③ *Թարգմանեք.*

1. Աբրահամի բնակարանը մեծ է և գեղեցիկ: 2. Դավթի նոր ավտոմեքենան սպիտակ է: 3. Սառայի մահճակալի վրա շատ տետրեր և գրքեր կան: 4. Համալսարանում հիմա ուսանողներ չկան: 5. Աբրահամի տանը հիմա շատ մարդիկ կան: 6. Այս սեղանի վրա կա հաց, պանիր և կարագ: 7. Մատիտն այս գրքի մեջ է, իսկ գիրքը՝ այս տետրի վրա: 8. Շոշանայի սենյակում բազմոց և փոքր պահարան կա: 9. Այս գեղեցիկ շենքը նոր հյուրանոց է: 10. Այս գեղեցիկ շենքերը նոր հյուրանոցներ են: 11. Մեր նոր ընկերն այս մեծ համալսարանի ուսանող է: 12. «Գալիլեայում» հիմա շատ մարդիկ կան, դա շատ լավ հյուրանոց է: 13. Խաննայի սեղանի վրա շատ մատիտներ կան, սակայն գրքեր չկան: 14. Իմ տունը Թել-Ավիվում է, իսկ Դավթի տունը՝ Խայֆայում: Քո նոր տունն էլ է Խայֆայում: 15. Իմ գրիչն այստեղ է, այս գրքի վրա, իսկ որտե՞ղ է քո գրիչը: 16. Ո՞ւմն են այս բոլոր մեքենաները: 17. Դավիթը հիմա տանն է, իսկ նրա ընկեր Հովսեփը՝ համալսարանում: 18. Փոքր քաղաքներում չկան շատ մարդիկ և շատ մեքենաներ: 19. Այս փոքր քաղաքում կան ուսուցիչներ, սակայն բժիշկներ չկան: 20. Հացը սեղանի վրա է, սակայն կարագն ու պանիրը պահարանի մեջ են:

מִלִּים חֲדָשׁוֹת

אֲבָל מ״ח բայց, սակայն *ավալ*
אֵין ת״פ չկա *էյն*
אַרְבַּע ש״מ נ չորս *առբա, արբա*
בַּיִת ז շենք, կառույց *բինյան*
גְּבִינָה נ պանիր *գվինա*
הַרְבֵּה ת״פ շատ, բազմաթիվ *հառբէ*
חֲמָאָה נ կարագ *խէմ'ա*
חַנָּה נ Խաննա *խանա*
יוֹסֵף ז Հովսեփ *յոսէֆ*
יֵשׁ ת״פ կա *յէշ*
מִטָּה נ մահճակալ *միտա*
מְכוֹנִית נ (ר מְכוֹנִיּוֹת) *մէխանիթ (մէխանիյոթ)* ավտոմեքենա
מְלוֹן ז (ר מְלוֹנוֹת) *մալոն (մէլոնոթ)* հյուրանոց
סִפָּה נ *սապա* բազմոց
עִפָּרוֹן ז (ר עֲפָרוֹנוֹת) *էֆոնոթ (էֆոնոթ)* մատիտ
רַק ת״פ միայն *ռակ*
שֶׁל מִי? *շէլ մի* ո՞ւմ(ն է)

5 חָמֵשׁ

Լ ՆԱԽԴԻՐԸ

5.1. Լ կցական նախդիրն իմաստային իր հարուստ երանգավորումների շնորհիվ լայն գործածություն ունի արդի եբրայերենում: Այն, մասնավորապես, նշում է անուղղակի խնդիրը՝ לְצַחַק *լէցահակ* «Իսահակին», לְסַבָּא *լէսաբա* «պապիկին», לְרוֹפְאִים *լէռոֆ'իմ* «բժիշկներին»:

5.2. Անուղղակի խնդիրների ձևերը՝ գործածվելով יֵשׁ «կա» և אֵין «չկա» մակբայների հետ, փոխարինում են եբրայերենում բացակայող «ունենալ/չունենալ» բայը՝ יֵשׁ אִשָּׁה לְאַבְרָהָם *լէավրահամ յէշ իշա* «Աբրահամն ունի կին» (բառացիորեն՝ «Աբրահամին կա կին»), אֵין כֹּעַל לְרִבְקָה *լէռիվկա էյն բա'ալ* «Ռեբեկան չունի ամուսին» (բառացիորեն՝ «Ռեբեկային չկա ամուսին»), יֵשׁ לְדָוִד אָח קָטָן *յէշ լէդավիդ ախ ֆոտան* «Դավիթը փոքր եղբայր ունի»:

5.3. Իր հնչյունային և հնչյունափոխական առանձնահատկություններով Լ նախդիրը նման է בְּ նախդիրին (2.19, 4.4.1.)՝ לְפָרַח - פְּרַח *պէռախ – լէֆէռախ*, לְבָנָן - בִּנָּן *բինյան - լէվինյան*, לְכַסָּא - כִּסָּא *քիսէ - լէխիսէ*, הַזֶּה אָח (ל+המורה) לְמוֹרֶה יֵשׁ *յէշ լամօռէ հազէ ախ* «այս ուսուցիչը եղբայր ունի», הַזֹּאת אֵין סַבְתָּא (ל+הילדה) לְיַלְדָּה *լայալդա հազօթ էյն սաբթա* «այս աղջիկը տատիկ չունի»:

① *Թարգմանեք.*

Հոշանան գեղեցիկ տիկնիկ ունի: Սառան ամուսին չունի: Այս ուսուցիչը շատ աշակերտներ ունի: Հովսեփը մեծ ընտանիք ունի: Հովսեփը Թել-Ավիվում մեծ տուն ունի: Խաննան փոքր աղջիկ ունի: Դանիելն նոր բազմոց ունի: Իսահակը քարտուղարուհի չունի: Իսահակը մեքենա չունի: Հակոբը բջջային հեռախոս չունի: Այս մարդիկ բազմաթիվ լավ ընկերներ ունեն: Դավիթը մեծ սենյակ չունի:

Այս ուսանողները նոր գրքեր չունեն: Դինան Խայֆայում պապիկ և տատիկ ունի: Այս ճարտարագետը քաղաքում փոքր բնակարան ունի:

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

5.4. ל նախդիրը դերանվանական վերջածանցների հետ կազմում է անուղղակի դերանուններ, որոնք համապատասխանում են հայերենի տրական հոլովի անձնական դերանուններին.

	եզակի		*հոգնակի*	
	արական	*իգական*	*արական*	*իգական*
I	«ինձ» *לי li*		«մեզ» *לנו lánu*	
II	*לְךָ lexa* «քեզ»	*לָךְ lax* «քեզ»	*לָכֶם laxém* «ձեզ»	*לָכֶן laxén* «ձեզ»
III	*לוֹ lo* «նրան»	*לָהּ laa* «նրան»	*לָהֶם laaném* «նրանց»	*לָהֶן laaén* «նրանց»

Ուշադրություն դարձրեք, որ 3-րդ դեմքի հոգնակիի ձևերում (לָהֶם, לָהֶן) դերանվանական վերջածանցների փոխարեն հանդես են գալիս անձնական դերանունները:

5.5. Անուղղակի դերանունները יֵשׁ և אֵין մակբայների հետ կազմում են «ես (չ)ունեմ» տիպի կապակցությունները՝ יֵשׁ לִי *yéš li* «ես ունեմ», לִי אֵין *éin li* «ես չունեմ» יֵשׁ לָהֶם ... *yéš laaném* «նրանք ունեն», לָהֶם אֵין *éin laaném* «նրանք չունեն», יֵשׁ לוֹ בַּיִת *yéš lo báyit bétek-aviv* «նա Թել-Ավիվում տուն ունի», ?יֵשׁ לָכֶם מְכוֹנִית *yéš laxém mexoním* «դուք մեքենա ունե՞ք», אֲבָל אֵין לְךָ אַחוֹת, יֵשׁ לְךָ אָח *yéš lexa ahoṗ, avál éin lexa ahót* «դու քույր ունես, սակայն եղբայր չունես»:

5.6. Անուղղակի դերանունը դրվում է יֵשׁ և אֵין մակբայներից առաջ, եթե տրամաբանական շեշտն ընկնում է վերջինների վրա՝ (אֵין) יֵשׁ לִי גַּם *gam li yéš (éin)* «ե՛ս էլ ունեմ (չունեմ)»:

① *Թարգմանեք.*

Աբրահամն մեծ սենյակ ունի, ե՛ս էլ մեծ սենյակ ունեմ: Դու ծնողներ ունե՞ս: Մենք մեծ պահարան չունենք: Նրանք հեռախոս չունեն, մե՛նք էլ հեռախոս չունենք: Ես Իսրայելում լավ ընկերներ ունեմ: Միայն ես նոր ավտոմոբիլ չունեմ: Ես այս մեծ քաղաքում ընկերներ չունեմ: Նրանք հիմա դասեր չունեն, մե՛նք էլ հիմա դասեր չունենք: Մենք Խայֆայում փոքր հյուրանոց ունենք: Դուք այս նոր բնակարանում բնակարան ունե՞ք: Ես ամուսին ունեմ, նա՛ էլ ամուսին ունի:

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

5.7. Ստացական դերանունները կազմվում են שֶׁל ստացական նախդիրին համապատասխան դերանվանական վերջածանցների կցումով.

	եզակի		*հոգնակի*	
	արական	*իգական*	*արական*	*իգական*
I	«իմ» *שֶׁלִּי šélí*		«մեր» *שֶׁלָּנוּ šelánu*	
II	*שֶׁלְּךָ šelexa* «քո»	*שֶׁלָּךְ šelax* «քո»	*שֶׁלָּכֶם šelaxém* «ձեր»	*שֶׁלָּכֶן šelaxén* «ձեր»
III	*שֶׁלּוֹ šelo* «նրա, իր»	*שֶׁלָּהּ šelaa* «նրա, իր»	*שֶׁלָּהֶם šelaaném* «նրանց, իրենց»	*שֶׁלָּהֶן šelaaén* «նրանց, իրենց»

5.8. Ստացական դերանունը դրվում է գոյականից (և եթե կան՝ նրա որոշիչներից[1]) հետո. գոյականն այն դեպքում սովորաբար ստանում է որոշիչ հոդ (ինչպես և հայերենում)՝ הַסֵּפֶר שֶׁלִּי *haséfer šelí* «իմ գիրքը», הָהוֹרִים שֶׁלָּהֶם *hahorím šelaaném* «նրանց ծնողները», הַמִּשְׁפָּחָה הַגְּדוֹלָה שֶׁלָּהּ *hamišpaxa hagdolá šelaa* «նրա մեծ ընտանիքը», הָאָח וְהָאֲחוֹת שֶׁלְּךָ *ha'ax vehaaxót šelexa* «քո եղբայրն ու քույրը», כָּל הַעֲפָרוֹנוֹת הַחֲדָשִׁים שֶׁלָּנוּ *kol haafronot hahadaším šelánu* «մեր բոլոր նոր մատիտները»:

5.9. Այսպիսով, պատկանելությունը կարող է արտահայտվել կամ դերանվանական վերջածանցով՝ ספרי *sifri* «գիրքս», կամ ստացական դերանունով՝ הַסֵּפֶר שֶׁלִּי *haséfer šelí* «իմ գիրքը»: Արդի եբրայերենում՝ հատկապես խոսակցական լեզ-

[1] Չի բացառվում նաև ստացական դերանվան դիրքավորումը գոյականի և նրա որոշիչի միջև:

վում, ավելի տարածված է պատկանելության արտահայտումը ստացական դերանունների միջոցով[1]:

③ *Թարգմանեք՝ գործածելով ստացական դերանուններ.*
Մեր ծնողները, իմ բոլոր ընկերները, քո նոր մեքենան, ձեր գեղեցիկ ծաղիկները, նրանց բոլոր աշակերտները, նրա նոր ամուսինը, նրա նոր կինը, իմ մեծ եղբայրները, մեր նոր հյուրանոցը, քո գեղեցիկ քարտուղարուհին, նրանց համեղ կարագը, ձեր նոր ճարտարագետները:

מן ՆԱԽԴԻՐԸ

5.10. מן *մին* նախդիրն արտահայտում է հայերենի բացառական հոլովի իմաստը՝ מן הבית *մին հաբայիթ* «տնից», מישראל *մին յիսրա'էլ* «Իսրայելից», מן הורים שלי *մին հահորիմ շէլի* «իմ ծնողներից»:

5.11. מן նախդիրն ունի նաև կրճատ կցական ձևեր՝ מ־ *մի* (դասական ուղղագրության մեջ հաջորդ տառը ստանում է ուժեղ դագեշ) և מ־ *մէ* (կոկորդային բաղաձայններից և ר-ից առաջ)՝ מישראל *միյիսրա'էլ* «Իսրայելից», ממשפחה *միմիշպախա* «ընտանիքից», բայց՝ מארמניה *մէ'առմէնյա* «Հայաստանից», מהבית *մէհաբայիթ* «տնից», מיפיה *մէհէյֆա* «Խայֆայից», מעראק *մէ'իռաք* «Իրաքից», מרומניה *մեռումանյա* «Ռումինիայից»: Անջատ և կցական ձևերի միջև իմաստային տարբերություն չկա, և նրանք, բացի մի քանի կայուն կապակցություններից, կարող են փոխարինվել մեկը մյուսով:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

5.12.1. Ածականների համեմատական աստիճանը կազմվում է יותר *յօթէռ* «ավելի» մակբայի միջոցով, որը դրվում է ածականից առաջ կամ, երբեմն, ածականից

[1] Թարգմանություններ կատարելիս դերանվանական վերջածանցները տեղին է օգտագործել, երբ հայտնի է, թե վերջածանցի կցումն ինչ հնչյունափոխություն կառաջացնի բառի հնչյունական կազմում: Այլապես նախընտրելի է գործածել համապատասխան ստացական դերանունները, որոնք չեն ազդում բառի հնչյունական կազմի վրա:

հետո՝ יפה יותר *յօթէռ յաֆէ* «ավելի գեղեցիկ», גדולים יותר *գդօլիմ յօթէռ* «ավելի մեծ»: Երկու երևույթներ համեմատելիս գործածվում է מן (מ־, מ־) ... יותר *յօթէռ ... մին (մի, մէ)* «ավելի ... քան» կապակցությունը՝ המשפחה שלי יותר גדולה מן המשפחה שלך *համիշպախա շէլի յօթէռ գդօլա մին համիշպախա շէլխա* «իմ ընտանիքն ավելի մեծ է, քան քո ընտանիքը (քո ընտանիքից ավելի մեծ է)», את יותר יפה מהאחות שלך *ատ յօթէռ յաֆա մէհա'ախօթ շէլախ* «դու ավելի գեղեցիկ ես, քան քո քույրը (քրոջից ավելի գեղեցիկ ես)»:
5.12.2. Եթե ածականը հոդակիր գոյականի որոշիչն է, ապա հոդ է ստանում יותר բառը՝ האשה היותר יפה *հա'իշա հայօթէռ յաֆա* «ավելի գեղեցիկ կինը»:

④ *Թարգմանեք.*
Քո մեքենան ավելի նոր է: Այս պանիրն ավելի համեղ է: Այս շենքերն ավելի մեծ են: Այս հեռախոսն ավելի ժամանակակից է: Քո կինը Դավթի կնոջից ավելի գեղեցիկ է: Մեր սենյակը ձեր սենյակից ավելի փոքր է: Այս դասն ավելի դժվար է: Սառայի տիկնիկն ավելի լավն է, քան Շոշանայի տիկնիկը: Ավելի մեծ պահանջները նրանց սենյակում են:

ԹՎԱԿԱՆՆԵՐ
(*շէմ միսպար* שם־מספר)

5.13. «Մեկ» թվականը, ինչպես և մյուս թվականները, ունի երկու սեռ, արական՝ אחד *էխադ* և իգական՝ אחת *ախաթ*: Այն դրվում է գոյականից ու նրա լրացումներից հետո և համաձայնեցվում սեռով՝ תלמיד אחד - תלמידה אחת *թալմիդ էխադ - թալմիդա ախաթ* «մեկ աշակերտ - մեկ աշակերտուհի», אח אחד - אחות אחת *ախ էխադ - ախօթ ախաթ* «մեկ եղբայր - մեկ քույր», ספר ארמני אחד - מלה ארמנית אחת *սէֆէր առմէնի էխադ - միլա առմէնիթ ախաթ* «մեկ հայկական գիրք - մեկ հայկական բառ»:

⑤ *Թարգմանեք.*
Մեկ տիկնիկ, մեկ մատիտ, մեկ գիրք, մեկ բառ, մեկ դաս, մեկ ուսուցչուհի, մեկ թիշկ, մեկ ճարտարագետ, մեկ քաղաք, մեկ տուն, մեկ հեռախոս, մեկ գիշեր, մեկ կին, մեկ հայկական անուն, մեկ հայկական համալսարան:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.14. Արամեերենից փոխառված אַבָּא *áppa* «հայրիկ», אִמָּא *ímma* «մայրիկ», סַבָּא *sáppa* «պապիկ» և סַבְתָּא *sávtta* «տատիկ» բառերն ըստ քերականական կանոնների գործածվում են առանց որոշիչ հոդի, քանի որ արամեերենում אָ վերջավորությունը կատարում է հոդի դեր: Այդուհանդերձ, խոսակցական լեզվում այս բառերի գործածությունը հոդի հետ տարածված երևույթ է:

⑥ 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

שְׁמִי דָּנִיאֵל. אֲנִי רוֹפֵא. אֲנִי מִתֵּל־אָבִיב. אֲנִי רוֹפֵא בְּתֵל־אָבִיב. אֲנִי יְהוּדִי. יֵשׁ לִי[2] מִשְׁפָּחָה. הַמִּשְׁפָּחָה שֶׁלִּי[3] לֹא גְּדוֹלָה. יֵשׁ לִי[4] אַבָּא, אִמָּא וְאָח. אֵין לִי[5] אֲחוֹת, יֵשׁ לִי[6] רַק אָח אֶחָד. בְּתֵל־אָבִיב יֵשׁ לִי[7] גַּם הַרְבֵּה חֲבֵרִים.

זֶה הַחֶבְרִי[8] שֶׁלִּי, מֹשֶׁה[9]. גַּם הוּא מִתֵּל־אָבִיב. מֹשֶׁה מְהַנְדֵּס. הוּא מְהַנְדֵּס טוֹב מְאֹד. לְמֹשֶׁה יֵשׁ[10] מִשְׁפָּחָה קְטַנָּה. יֵשׁ לוֹ[11] אִשָּׁה. הָאִשָּׁה שֶׁלּוֹ[12] יָפָה מְאֹד. יֵשׁ לוֹ[13] גַּם יֶלֶד אֶחָד[14] וְיַלְדָּה אַחַת. הַיְלָדִים שֶׁלּוֹ[15] עוֹד קְטַנִּים. לְמֹשֶׁה יֵשׁ כֶּלֶב גָּדוֹל, וּשְׁמוֹ רֶגִי.

זֹאת רִבְקָה. הִיא יְהוּדִיָּה. רִבְקָה לֹא מִתֵּל־אָבִיב, הִיא מֵחֵיפָה[16]. גַּם לְרִבְקָה אֵין[17] מִשְׁפָּחָה גְּדוֹלָה. הַמִּשְׁפָּחָה שֶׁלָּהּ[18] יוֹתֵר קְטַנָּה מִן הַמִּשְׁפָּחָה שֶׁל מֹשֶׁה[19]. יֵשׁ לָהּ[20] רַק בַּעַל. הַבַּעַל שֶׁלָּהּ לֹא מֵחֵיפָה, הוּא מֵאֵילַת. לַבַּעַל שֶׁלָּהּ[21] יוֹתֵר קְטַנָּה מִן הַמִּשְׁפָּחָה שֶׁל מֹשֶׁה[22]. יֵשׁ לָהּ[23] רַק בַּעַל. הַבַּעַל שֶׁלָּהּ לֹא מֵחֵיפָה, הוּא מֵאֵילַת. לַבַּעַל (לְ + הַבַּעַל)[24] שֶׁל רִבְקָה יֵשׁ הוֹרִים בְּאֵילַת. יֵשׁ לוֹ[25] גַּם סַבָּא וְסַבְתָּא בְּנַצְרַת. סַבָּא וְסַבְתָּא שֶׁלּוֹ[26] מְרוֹסִיָּה. נַצְרַת וְאֵילַת הֵן[27] עָרִים גְּדוֹלוֹת בְּיִשְׂרָאֵל.

לַמִּשְׁפָּחָה (לְ + הַמִּשְׁפָּחָה)[28] שֶׁל הַמּוֹרָה שֶׁלָּנוּ[29] יֵשׁ דִּירָה גְּדוֹלָה בְּתֵל־אָבִיב. לַמּוֹרָה (לְ + הַמּוֹרָה)[30] שֶׁלָּנוּ יֵשׁ גַּם בַּיִת קָטָן עַל־יַד תֵּל־אָבִיב. לַמּוֹרָה שֶׁלָּכֶם[31] יֵשׁ מְכוֹנִית חֲדָשָׁה. גַּם לָאִשָּׁה (לְ + הָאִשָּׁה)[32] שֶׁל הַמּוֹרָה שֶׁלָּכֶם[33] יֵשׁ מְכוֹנִית קְטַנָּה. יֵשׁ לָהֶם מְכוֹנִיּוֹת[34] טוֹבוֹת. יֵשׁ לָהֶם גַּם חָתוּל קָטָן. הַחָתוּל[35] שֶׁלָּהֶם לָבָן.

?- יֵשׁ לְךָ[36] אֲחוֹת, דָּוִד
- לֹא, אֵין לִי[37] אֲחוֹת, יֵשׁ לִי רַק אָח אֶחָד[38].
- הָאָח שֶׁלְּךָ[39] פֹּה, בְּתֵל־אָבִיב?
- לֹא, הוּא עַכְשָׁיו לֹא בְּיִשְׂרָאֵל, הוּא בְּרוּסִיָּה. אֲנַחְנוּ יְהוּדִים מְרוּסִיָּה. וְאַתָּ, חַנָּה, יֵשׁ לְךָ[40] אֲחוֹת?
- כֵּן, יֵשׁ לִי אֲחוֹת אַחַת[41]. הִיא סְטוּדֶנְטִית בְּאוּנִיבֶרְסִיטָה[42].
- הָאֲחוֹת שֶׁלְּךָ[43] יָפָה?
- כֵּן, הִיא יָפָה מְאֹד, חַנָּה!
- גַּם אַתְּ יָפָה מְאֹד, חַנָּה!

- תּוֹדָה, דָּוִד, אֲבָל הָאֲחוֹת שֶׁלִּי[44] יוֹתֵר יָפָה[45].
- לָאֲחוֹת[46] שֶׁלְּךָ[47] יֵשׁ בַּעַל?
- עוֹד לֹא, אֲבָל יֵשׁ לָהּ חָבֵר טוֹב.
- גַּם לְךָ[48] יֵשׁ חָבֵר, חַנָּה?
- לֹא, אֵין לִי[49] חָבֵר.
- גַּם לִי אֵין[50] חֲבֵרָה...

[1] 5.11. [2] 5.5. [3] 5.8. [4] 5.13. [5] 3.3. [6] 2.6. [7] 5.2. [8] 5.12.1. [9] 5.3. [10] 5.14. [11] 3.17. [12] 2.7. [13] 4.4.1. [14] 5.6.

⑦ *Թարգմանեք.*

1. Ես Թել-Ավիվում մեծ բնակարան ունեմ, սակայն մեքենա չունեմ: 2. Իմ եղբայրը բազմաթիվ լավ ընկերներ ունի, նա նաև գեղեցիկ ընկերուհի ունի: 3. Այս ճարտարապետը շատ գեղեցիկ կին և փոքր դուստր ունի: 4. Ի՞նչ ունես այս պահարանում, Աբրահամ: 5. Մովսեսն ուսանող է, նրա սեղանի վրա գրքեր և տետրեր կան: 6. Շոշանայի ծնողները Նազարեթում փոքր և գեղեցիկ տուն ունեն: 7. Աբրահամի ընտանիքը մեծ է, սակայն Մովսեսի ընտանիքն ավելի մեծ է: 8. Այս բոլոր նոր ուսանողներն Էյլաթից են: 9. Որտե՞ղ են հիմա քո բոլոր ընկերուհիները, Խաննա: 10. Ռեբեկայի ամուսինը քույրեր չունի, նա միայն մեկ եղբայր ունի: 11. Դավիթն ու Մովսեսը հրեաներ են Հայաստանից, իսկ Սառան և Դինան հրեուհիներ են Ռումինիայից: 12. Խայֆան Թել-Ավիվից փոքր է, սակայն նա ավելի մեծ է, քան Էյլաթը: 13. Ռեբեկան մեկ պապիկ և մեկ տատիկ ունի, սակայն ծնողներ չունի: Նրա պապիկը հրեա չէ, նա հայ է: 14. Այս բոլոր կանանց ամուսինները ճարտարապետներ են: 15. Ո՞ւմն են այս մեծ շունն ու փոքր կատուն: - Շունն իմն է, իսկ կատուն՝ իմ նոր ընկերոջը: 16. Ոչ բոլոր շներն են կատուներից մեծ, իմ շունը քո կատվից փոքր է: 17. Նրա մոր նոր ավտոմեքենան ավելի ժամանակակից է, քան իմ հոր մեքենան: 18. Անունդ ի՞նչ է, աղջի՛կ: - Անունս Ռեբեկա է, ես Երուսաղեմից եմ: 19. Այս հրեայի ընտանիքը շատ մեծ է, նա բազմաթիվ փոքր երեխաներ ունի: 20. Էյլաթում մեր տան կողքին կա նոր ժամանակակից հյուրանոց, սակայն այդ հյուրանոցում առայժմ շատ մարդիկ չկան:

---

[1] Երբ ստացական դերանունը հանդես է գալիս անվանական ստորոգյալի դերում, այն սովորաբար ենթակային կապվում է անձնական դերանվան միջոցով (տե՛ս 3.17):

מִלִּים חֲדָשׁוֹת

հայրիկ *ա՛բա* ז אַבָּא

եղբայր *ախ* ז אָח

մեկ *էխադ* ש״מ ז אֶחָד

քույր, բուժքույր *ախօթ (ախայօթ)* (ר אֲחָיוֹת) נ אָחוֹת

Էյլաթ (քաղաք Իսրայելում) *էյլա՛թ* נ אֵילַת

մայրիկ *իմա՛* נ אִמָּא

Հայաստան *սամէ՛նյա* נ אַרְמֶנְיָה

ամուսին, տեր *բա՛ալ* ז בַּעַל

ծնողներ *հօրիմ* ר הוֹרִים

հինգ *խամէ՛շ* ש״מ נ חָמֵשׁ

կատու *խաթուլ* ז חָתוּל

հրեա, հրեական *յէհուդի (յէհուդիմ)* (ר יְהוּדִים) ז״ת יְהוּדִי

հրեուհի *յէհուդիյա* נ יְהוּדִיָּה

ավելի *յօթէր* ת״פ יוֹתֵר

աղջիկ, դուստր *յալդա* נ יַלְדָה

շուն *քէլէվ (քլավիմ)* (ר כְּלָבִים) ז כֶּלֶב

ճարտարագետ *մէհանդէս* ז מְהַנְדֵּס

Մովսես *մօշէ* ז מֹשֶׁה

ընտանիք *միշպախա* נ מִשְׁפָּחָה

Նազարեթ (քաղաք Իսրայելում) *նացրաթ* נ נַצְרַת

պապիկ *սա՛բա* ז סַבָּא

տատիկ *սա՛վթա* נ סַבְתָּא

դեռ, առայժմ, էլի *օդ* ת״פ עוֹד

կողքին *ալ-յադ* מ״י עַל־יַד (עַל יַד)

Ռեբեկա *ռի՛վկա* נ רִבְקָה

6ա
שֵׁשׁ

ԲԱՅԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6.1. Երբայերենի բայական համակարգի հիմքում երեք, ավելի հազվադեպ՝ չորս բաղաձայններից բաղկացած արմատն է: Բայարմատը լեզվում ինքնուրույն գոյություն չունի և այս կամ այն գործողության ընդհանուր իմաստն արտահայտող քերականական աբստրակցիա է: Այսպես, כתב արմատն արտահայտում է գրելու, למד՝ սովորելու, אכל՝ ուտելու, עבד՝ աշխատելու, הלך՝ գնալու, חזר՝ վերադառնալու ընդհանուր իմաստը:

6.2. Սեմագիտության մեջ ընդունված է բայարմատի 1-ին բաղաձայնը պայմանականորեն նշել פ, 2-րդը՝ ע, 3-րդը՝ ל տառով: Լայն արմատից[1] վերցված այս տառերով կազմվում են միանման քերականական ձևերն ընդհանրացնող և ներկայացնող հատուկ կաղապարներ, որոնք հեշտացնում են լեզվի ուսումնասիրությունը:

6.3. Ըստ բայարմատ կազմող բաղաձայնների որակի, արմատները բաժանվում են גזרה *գիզրա* (հոգնակիում՝ גְּזֵרוֹת *գզառօթ*) կոչվող մի քանի խմբերի, որոնք են.

- «ամբողջական» արմատներ (שְׁלֵמִים *շլէմիմ*), որոնք չեն պարունակում կոկորդային կամ սղվող «թույլ» բաղաձայններ,
- արմատներ, որոնց 1-ին արմատականը կոկորդային բաղաձայն է (նշվում են פ״ג հապավումով, որում פ-ն 1-ին արմատականն է, իսկ ג-ն նշում է կոկորդային բաղաձայնը (גְּרוֹנִי *գրոնի* «կոկորդային» բառից),
- արմատներ, որոնց 2-րդ արմատականը կոկորդային է (ע״ג),
- արմատներ, որոնց 3-րդ արմատականը կոկորդային է (ל״ג),

[1] «Ձեռք, գործել» իմաստով: Այս արմատից կազմված է לפֿ *պօ՛ալ* «բայ» բառը:

- արմատներ, որոնց 1-ին արմատականը נ է (פ״נ),
- արմատներ, որոնց 2-րդ արմատականը י է (ע״י),
- արմատներ, որոնց 2-րդ արմատականը ו կամ י է (ע״ו, ע״י),
- արմատներ, որոնց 3-րդ արմատականը ה է (ל״ה),
- արմատներ, որոնց 2-րդ և 3-րդ արմատականները նույն բաղաձայնն են (ע״ע),
- քառատառ արմատներ:

Այս գիզոաներից մի քանիսն իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթախմբերի: Այսպես, פ״ג և ל״ג գիզոաներում առանձնանում են א տառով սկսվող կամ ավարտվող արմատները (פ״א, ל״א), որոնք հաճախ դիտվում են որպես առանձին գիզոաներ:

ԲԱՅԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

6.4. Միևնույն բայարմատը՝ ընդլայնվելով համապատասխան ածանցների միջոցով, կարող է դրսևորվել մի քանի տարբերակով, որոնցից յուրաքանչյուրն ունի ուրույն իմաստային երանգավորում: Այդ տարբերակները, որոնք յոթն են, կոչվում են בִּנְיָנִים *բինյանիմ* «կառույցներ»: Բայարմատի դրսևորումը տարբեր կառույցների ձևով կարելի է համեմատել հայերենի բայի՝ ածանցների միջոցով փոփոխված իմաստային երանգավորումների շարքի հետ՝ «կոտրել-կոտրվել-կոտրատել-կոտրատվել», «ուտել-ուտվել-ուտացնել» և այլն: Տեսականորեն ցանկացած բայարմատից կարելի է կազմել բոլոր յոթ կառույցները, սակայն գործնականում բայարմատն արդի եբրայերենում դրսևորվում է միջին հաշվով 3-4 կառույցներում:

6.5. Որպես տվյալ կառույցի «ներկայացուցիչ» հանդես է գալիս անցյալ ժամանակի 3-րդ դեմքի եզակի արական ձևը, այսինքն՝ «(Դավիթը) կարդաց, գրեց, կերավ, խփեց»: Այս բայաձևը կոչվում է «ելման բայաձև», քանի որ բոլոր հնարավոր բայաձևերից ամենակարճն է, և նրանից են, փաստորեն, ածանցվում մյուսները: Այս առումով եբրայերենը տարբերվում է հնդեվրոպական լեզուներից, որոնցում որպես ելման բայաձև հանդես է գալիս անորոշ դերբայը (հայերենում՝ «կարդալ, գրել, ուտել, խփել» և այլն): Եբրայերենում անորոշ դերբայը ձևաբանական առումով երկրորդական նշանակություն ունի, քանի որ նրանից հնարա-

վոր չէ ածանցել որևէ այլ ձև (անորոշ դերբայի մասին ավելի մանրամասն ստորև): Այսպիսով, եբրայերենում ելման բայաձևն է իրական անորոշ դերբայը և որպես այդպիսին է հանդես գալիս բառարաններում:

ՖՍՂ ԿԱՌՈՒՅՑԸ
(*բինյան պա՛ալ* בִּנְיַן פָּעַל)

6.6. Բայական յոթ կառույցներից առաջինը բաղկացած է երեք արմատականներից և երկու «ա» ձայնավորներից (առաջինը՝ կամաց, երկրորդը՝ պաթախ)՝ פָּעַל *պա՛ալ* (սահմանափակ թվով բայեր ունեն פָּעַל *պա՛ղ* և פָּעַל *պա՛օլ* կառուցվածքը): Ի տարբերություն մյուս վեց կառույցների, פָּעַל կառույցն ընդլայնված չէ որևէ ածանցով և առանց ձայնանիշների համընկնում է բայարմատի հետ: Այս պատճառով פָּעַל կառույցը կոչվում է նաև קַל *կալ* «պարզ» և ելակետային է դիտվում մյուս կառույցների համար: Այսպիսով, 6.1. պարբերությունում թվարկված արմատները פָּעַל կառույցում ունեն հետևյալ ելման բայաձևերը՝ כָּתַב *քաթավ* «գրեց», לָמַד *լամադ* «սովորեց», אָכַל *ախալ* «կերավ», עָבַד *ավադ* «աշխատեց», הָלַךְ *հալախ* «գնաց», חָזַר *խազար* «վերադարձավ»[1]:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ
(*շէմ պո՛ալ* שֵׁם־פֹּעַל)

6.7. Հին եբրայերենն ուներ անորոշ դերբայի երկու տեսակ՝ «բացարձակ» և «կապակցված»: Արդի եբրայերենում բացարձակ անորոշ դերբայի գործածության ոլորտը խիստ սահմանափակ է (հիմնականում կայուն բառակապակցություններում), և այն առայժմ չի դիտարկվի:

6.8. Կապակցված անորոշ դերբայն ստացել է այդ անվանումը, որովհետև կազմվում է կցական նախդիրների միջոցով. որպես կանոն դա ל նախդիրն է (տարբեր ձայնանիշներով), ավելի հազվադեպ՝ ב, מ և այլ: Օրինակ՝ לִכְתֹּב *լիխթոբ* «գրել» (כָּתַב բայից), לִלְמֹד *լիլմոդ* «սովորել, ուսումնասիրել» (לָמַד), לֶאֱכֹל *լէ՛էխոլ* «ուտել»

[1] Ելման բայաձևերն այսուհետև հայերեն են թարգմանվելու անորոշ դերբայով՝ כָּתַב «գրել», לָמַד «սովորել» և այլն:

(אָכַל), לַעֲבֹד *լա'ավօդ* «աշխատել» (עָבַד), לָלֶכֶת *լալէխէթ* «գնալ» (הָלַךְ), לָחֲזֹר *լախազօր* «վերադառնալ» (חָזַר):

6.9. Ինչպես նշվեց, եբրայերենում անորոշ դերբայը երկրորդական բայաձև է: Ի տարբերություն ելման բայաձևի, անորոշ դերբայում արմատական բաղաձայները կարող են սղվել և փոխարինվել այլ տառերով, ինչպես օրինակ לָלֶכֶת *լալէխէթ* «գնալ» (הָלַךְ բայից) անորոշ դերբայում, որում սղվել է 1-ին արմատական ה տառը, և ավելացել է ոչ արմատական ת տառը: Կան անորոշ դերբայներ, որոնցում պահպանվել է միայն մեկ արմատական բաղաձայն: Սա նշանակում է, որ անորոշ դերբայը ոչ միշտ է հստակ պատկերացում տալիս բայարմատի մասին: Նկատի ունենալով բայարմատի առանցքային դիրքը եբրայերենի բայական համակարգում՝ հասկանալի է դառնում ելման բայաձևի առաջնությունն անորոշ դերբայի նկատմամբ:

6.10. Բայական յոթ կառույցներից անորոշ դերբայ ունեն հինգը: Բացի פָּעַל կառույցից, մյուս չորս կառույցներից յուրաքանչյուրն ունի անորոշ դերբայի կազմության մեկ կաղապար:

6.11. פָּעַל կառույցի բայերն անորոշ դերբայ են կազմում մոտ մեկ տասնյակ կաղապարներով, որոնց յուրացումը լեզվի ուսումնասիրման սկզբնական փուլում անիմաստ է: Ուստի ավելի նպատակահարմար է פָּעַל կառույցի յուրաքանչյուր նոր բայի հետ յուրացնել նրա անորոշ դերբայը[1]:

[1] Բառարանում անորոշ դերբայը ելման բայաձևից հետո փակագծերում նշված առաջին բայաձևն է և հիշտ տարբերակելի է ל կցական նախդիրի շնորհիվ՝ (לָחֲזֹר ...חָזַר):

6F שִׁשִּׁי

ՊԱՅ ԿԱՌՈՒՑՑԻ ԲԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ

6.12. Ձևաբանության տեսանկյունից եբրայերենն ունի միայն երկու ժամանակաձև՝ անցյալ և ապառնի: Ներկա ժամանակը (זְמַן הוֹוֶה *զման հովէ*) արտահայտվում է ենթակայական դերբայների, այսինքն՝ բայից կազմված ածականների միջոցով՝ գրող, սովորող, ուտող, աշխատող» և այլն:

6.13. Ենթակայական դերբայները ձևաբանորեն ածականներ են, ուստի չեն խոնարհվում, այլ ունեն ածականներին բնորոշ չորս ձևերը (տե՛ս 2.5.): פָּעַל կառույցի ենթակայական դերբայները կազմվում են հետևյալ կաղապարներով.

	եզակի	*հոգնակի*
արական	○○ִ○	○ִ○○ִים
իգական	○○ָ○ָה	○ִ○○ִות

Այսպես, לָמַד *լամադ* «սովորել, ուսումնասիրել» և אָכַל *ախալ* «ուտել» բայերն ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

לוֹמֵד[1] – לוֹמֶדֶת – לוֹמְדִים – לוֹמְדוֹת
լոմէդ – լոմէդէթ – լոմդիմ – լոմդօթ

אוֹכֵל – אוֹכֶלֶת – אוֹכְלִים – אוֹכְלוֹת
օխէլ – օխէլէթ – օխլիմ – օխլօթ

[1] Բառարանում ենթակայական դերբայի եզակի արականը ելման բայաձևից հետո փակագծերում նշված երկրորդ բայաձևն է՝ (לָמַד ,...לוֹמֵד):

6.14. Ենթակայական դերբայներն ըստ անձնական դերանունների բաշխվում են հետևյալ կերպ.

אָנִי - אַתָּה - הוּא לוֹמֵד	אָנִי - אַתְּ - הִיא לוֹמֶדֶת	אָנַחְנוּ - אַתֶּם - הֵם לוֹמְדִים	אָנַחְנוּ - אַתֶּן - הֵן לוֹמְדוֹת

6.15. Ներկա ժամանակում פָּעַל կառույցի բայերի «խոնարհումը» կստանա հետևյալ տեսքը.

אֲנִי	לוֹמֵד *կամ* לוֹמֶדֶת	אֲנַחְנוּ	לוֹמְדִים *կամ* לוֹמְדוֹת
אַתָּה	לוֹמֵד	אַתֶּם	לוֹמְדִים
אַתְּ	לוֹמֶדֶת	אַתֶּן	לוֹמְדוֹת
הוּא	לוֹמֵד	הֵם	לוֹמְדִים
הִיא	לוֹמֶדֶת	הֵן	לוֹמְדוֹת

① *Խոնարհեք* כָּתַב, אָכַל, הָלַךְ, סִדֵּר, עָבַד *բայերը:*

2-ՐԴ ԿՈԿՈՐԴԱՅԻՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՎ (ג״פ) ԲԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ

6.16. Քանի որ կոկորդային տառերը շվայի փոխարեն սովորաբար ստանում են խատաֆ-պաթախ, նրանց ենթակայական դերբայները հոգնակի թվում ունեն հետևյալ ձևերը՝ אוֹהֲבוֹת - אוֹהֲבִים - אוֹהֶבֶת - אוֹהֵב *ohէv - ohէvէթ - ohավիմ - ohավօթ* («սիրել»), այսինքն՝ հոգնակիում 2-րդ արմատականից հետո առկա է «ա» ձայնավորը, մինչ ամբողջական բայերի պարագայում այդ դիրքում ձայնավոր չկա:

2-ՐԴ «ԹՈՒՅԼ» ԱՐՄԱՏԱԿԱՆՈՎ (ע״י, ו״ע) ԲԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ

6.17. Բայերը, որոնց 2-րդ արմատականը ו կամ י է, որոշ բայաձևերում կորցնում են այդ տառերը (այստեղից էլ առաջացել է նրանց «թույլ» անվանումը) և ստանում «երկտառ» բայերի տեսք: Այսպես, פָּעַל կառույցում גור արմատն ունի גָּר *gառ* ելման բայաձև («բնակվել, ապրել»), שיר արմատը՝ שָׁר *շառ* («երգել»):

6.18.1. Երկրորդ արմատականը սղվում է նաև ו״ע և ע״ו խմբի բայերի ենթակայական դերբայներում, որոնք կազմում են հետևյալ ձևերը.

גָּר – גָּרָה – גָּרִים – גָּרוֹת
gառ – gառա[1] – gառիմ – gառօթ

שָׁר – שָׁרָה – שָׁרִים – שָׁרוֹת
շառ – շառա – շառիմ – շառօթ

6.18.2. Ուշադրություն դարձրեք, որ ו״ע և ע״ו բայերի ելման բայաձևը և ենթակայական դերբայի եզակի արականը համընկնում են՝ גָּר *gառ,* שָׁר *շառ:* Ուստի, דָּוִד שָׁר *դավիդ շառ* նախադասությունն ըստ ենթատեքստի կարող է թարգմանվել «Դավիթը երգում է» և «Դավիթը երգեց» (կամ «երգում էր»):

② *Ներկա ժամանակում խոնարհեք* גָּר *gառ և* שָׁר *շառ բայերը:*

6.19. ו״ע և ע״ו խմբի բայերի 2-րդ արմատականը վերականգնվում է անորոշ դերբայում՝ לָגוּר *լագուռ,* לָשִׁיר *լաշիռ:* לָגוּר անորոշ դերբայը տիպային է ו״ע խմբի բայերի համար (סוֹלָל կաղապարով), իսկ לָשִׁיר անորոշ դերբայը՝ ע״ו խմբի բայերի համար (סוֹלֵס):

6.20. Թեև ենթակայական դերբայներն արդի եբրայերենում հիմնականում հանդես են գալիս որպես ներկա ժամանակի ձևեր, չպետք է մոռանալ, որ նրանք կարող են հանդես գալ իրենց բուն՝ ենթակայական դերբայի իմաստով՝ תַּלְמִיד לוֹמֵד *թալմիդ լօմէդ* «սովորող աշակերտ», אִשָּׁה אוֹהֶבֶת *իշա ohէvէթ* «սիրող կին», נָשִׁים הוֹלְכוֹת *նաշիմ հօլխօթ* «գնացող կանայք»:

[1] Խոսակցական լեզվում տարածված է նաև առաջին վանկի շեշտումը՝ *gառա:*

ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

6.21. Շարժման ուղղությունը («ո՞ւր» հարցի պատասխանը) արտահայտվում է ל կցական նախդիրով՝ הוּא הוֹלֵךְ לְאוּנִיבֶרְסִיטָה *hu holex luniversitah* «նա գնում է համալսարան», שָׂרָה הוֹלֶכֶת לְסוּפֶר *sara holexet lasufer* «Սառան գնում է կիոսքատրոն»: «Դեպի ո՞ւր» հարցի պարագայում գործածվում է אֶל *el* «դեպի» նախդիրը՝ הוּא הוֹלֵךְ אֶל הָאוּנִיבֶרְסִיטָה *hu holex el hauniversitah* «նա գնում է դեպի համալսարան»:

6.22. Մի շարք բառեր (տեղանուններ, աշխարհագրական բնույթի բառեր և այլն) ուղղություն նշող ձև են կազմում סָ չշեշտվող վերջավորությամբ՝ יְרוּשָׁלַיִמָה *yerušalayma* «(դեպի) Երուսաղեմ»: Այս ձևերից մի քանիսը գործածվում են հոդով՝ הָעִירָה *ha'irah* «(դեպի) քաղաք», הַבַּיְתָה *habayta* «(դեպի) տուն»՝ אֲנִי הוֹלֵךְ הַבַּיְתָה *ani holex habayta* «ես տուն եմ գնում», שָׂרָה חוֹזֶרֶת הָעִירָה *sara xozeret ha'irah* «Սառան քաղաք է վերադառնում»:

בְּ ԵՎ לְ ԿՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

6.23.1. Կցվելով շվայով սկսվող բառերին՝ בְּ և לְ կցական նախդիրներն ստանում են խիրիկ ձայնանիշը՝ բառասկզբում երկու շվայից խուսափելու համար՝ בְּרֹחוֹב גּוֹרוֹן *birxov goronon* «Գորդոնի փողոցում», לְרֹחוֹב בֶּן־גּוּרְיוֹן *lirxov ben-gurion* «(դեպի) Բեն-Գուրիոնի փողոցը»:

6.23.2. Եթե բառի առաջին տառն ունի թեթև դագեշ, այն սղվում է՝ առաջացնելով համապատասխան հնչյունափոխություն՝ לִפְרָחִים - בִּפְרָחִים *lifraxim – bifraxim* «ծաղիկներին»:

ՄԱԿԲԱՅՆԵՐ

6.24. Որոշ ածականներ կարող են հանդես գալ որպես մակբայներ: Մակբայի դերում ածականը սովորաբար հանդես է գալիս եզակի արականով՝ דִּינָה שָׁרָה יָפָה *dinah šarah yafe* «Դինան գեղեցիկ է երգում» (մակբայ), բայց՝ דִּינָה אִשָּׁה יָפָה *dinah iša yafa* «Դինան գեղեցիկ կին է» (ածական):

6.25. Իգական սեռի ածականները հանդես են գալիս որպես մակբայներ, երբ նշում են լեզուների անունները՝ אַרְמִנִית *armanit* «հայերեն», עִבְרִית *ivrit* «եբրայերեն», אַנְגְלִית *anglit* «անգլերեն», גֶּרְמָנִית *germanit* «գերմաներեն», צָרְפָתִית *tsarfatit* «ֆրանսերեն», עֲרָבִית *aravit* «արաբերեն», רוּסִית *rusit* «ռուսերեն»: Այս ձևերը հաճախ դիտվում են նաև որպես իգական սեռի գոյականներ՝ «այսինչ լեզու» իմաստով՝ דָּוִד לוֹמֵד אַרְמָנִית *david lomed armanit* «Դավիթն ուսումնասիրում է հայոց լեզուն», אֲנַחְנוּ לוֹמְדִים עִבְרִית *anaxnu lomdim ivrit* «մենք եբրայերեն ենք ուսումնասիրում»: Հնարավոր է այս ձևերի գործածումը בְּ նախդիրով՝ «այսինչ լեզվով» կամ «այսինչ լեզվից» իմաստներով՝ סֵפֶר בְּגֶרְמָנִית *sefer begermanit* «գերմաներեն (գրված) գիրք», תִּרְגֵּל בְּרוּסִית *tirgel berusit* «վարժություն ռուսերենից»:

ԹՎԱԿԱՆՆԵՐ

6.26. Հաշվելիս, թվաբանական գործողություններ կատարելիս, առանձին թվեր (հեռախոսի, մեքենայի, տան և այլ համարներ) նշելիս գործածվում են իգական սեռի թվականները: Օրինակ, 564321 հեռախոսահամարն ընթերցվում է՝ חֲמֵשׁ-מֵאוֹת-אַרְבַּע-שָׁשִׁים-וְשָׁלוֹשׁ-אֶלֶף-שְׁתַּיִם-אַחַת *xamex-me'ot-arba-šašim-vešalošelef-štayim-axat*:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.27. Անորոշ առում ունեցող ուղիղ խնդիրն անմիջականորեն հետևում է բային՝ הוּא אוֹהֵב לֶאֱכֹל גְּלִידָה *hu ohev le'exol glida* «նա սիրում է **պաղպաղակ ուտել**», הִיא כּוֹתֶבֶת תַּרְגִּיל *hi kotevet targil* «նա **վարժություն է գրում**», כָּל יוֹם אֲנַחְנוּ לוֹמְדִים מִלִּים חֲדָשׁוֹת *kol yom anaxnu lomdim milim xadašot* «ամեն օր մենք **նոր բառեր ենք** սովորում»:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.28. Երբ כֹּל բառին չի հետևում գոյական և նա ինքն է հանդես գալիս որպես գոյական՝ «ամենը, ամեն ինչ, բոլորը» իմաստով, ապա այդ դեպքում նա ձայնա-

վորվում է խողամով և ստանում է հոդ՝ הכל *hաքօլ*, օրինակ՝ הכל בסדר *hաքօլ բէսէդէռ* «ամեն ինչ կարգին է» («Ի՞նչ կա, չկա» հարցին ի պատասխան):

③ 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

דָּוִד גָּר[1] בְּתֵל־אָבִיב. הוּא לוֹמֵד[2] בָּאוּנִיבֶרְסִיטָה. הוּא לוֹמֵד אַנְגְּלִית[3] וְעִבְרִית[3]. הוּא אוֹהֵב[4] לִלְמֹד[5] וְהוּא לוֹמֵד הַרְבֵּה. הוּא הוֹלֵךְ לָאוּנִיבֶרְסִיטָה[6] בַּבֹּקֶר וְחוֹזֵר הַבַּיְתָה[7] אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. בָּעֶרֶב הוּא כּוֹתֵב[2] תַּרְגִּילִים[8].

גַּם שָׂרָה גָּרָה[1] בְּתֵל־אָבִיב. הִיא לֹא לוֹמֶדֶת[2], הִיא עוֹבֶדֶת[2] בְּמִשְׂרָד. הִיא מִזְּכִּירָה. הִיא עוֹבֶדֶת[2] מִן הַבֹּקֶר[9] עַד הָעֶרֶב, וְחוֹזֶרֶת[2] הַבַּיְתָה[7] עֲיֵפָה מְאֹד. שָׂרָה אוֹהֶבֶת[4] לָשִׁיר[10]. הִיא שָׁרָה[1] יָפָה[11].

יוֹסֵף תַּלְמִיד. הוּא לוֹמֵד בְּבֵית־סֵפֶר[12]. אֲבָל יוֹסֵף עָצֵל מְאֹד, הוּא לֹא אוֹהֵב[4] לִלְמֹד[5]. הוּא אוֹהֵב[4] לָאֲכֹל[6] גְּלִידָה[13] אוֹ לָלֶכֶת[1] לְקוֹלְנוֹעַ[14] עִם הַחֲבֵרִים שֶׁלּוֹ. יֵשׁ לוֹ הַרְבֵּה חֲבֵרִים. כָּל הַחֲבֵרִים[15] שֶׁלּוֹ לוֹמְדִים[2] בְּבֵית־סֵפֶר.

שִׂיחָה בְּרְחוֹב[16]

- שָׁלוֹם, רוּת, מָה נִשְׁמָע?
- הַכֹּל[17] בְּסֵדֶר, יַעֲקֹב. מַה שְׁלוֹמְךָ?
- טוֹב, תּוֹדָה. אַתְּ גָּרָה[1] עַכְשָׁיו כָּאן, בְּתֵל־אָבִיב?
- כֵּן, אֲנִי גָּרָה[1] בְּתֵל־אָבִיב.
- אֵיפֹה אַתְּ גָּרָה?
- בְּרְחוֹב[18] גּוֹרְדוֹן, 5[17].
- גַּם אֲנִי גָּר עַכְשָׁיו בְּתֵל־אָבִיב.
- אַתָּה עוֹבֵד[2]?
- לֹא, אֲנִי לֹא עוֹבֵד[2], אֲנִי לוֹמֵד[2]. וְאַתְּ עוֹבֶדֶת[2]?
- כֵּן, אֲנִי עוֹבֶדֶת בְּבֵית־סֵפֶר.
- גַּם דָּוִד עוֹבֵד בְּבֵית־סֵפֶר?
- לֹא, דָּוִד עוֹבֵד בְּמִשְׂרָד חָדָשׁ, בְּרְחוֹב[18] בֶּן־גּוּרְיוֹן.
- דְּרִישַׁת שָׁלוֹם לְדָוִד[1]!
- תּוֹדָה רַבָּה, יַעֲקֹב, לְהִתְרָאוֹת.
- לְהִתְרָאוֹת, רוּת.

[1] 6.18.1. [2] 6.13. [3] 6.25. [4] 6.16. [5] 6.7.-11. [6] 6.21. [7] 6.22. [8] 6.27. [9] 5.10. [10] 6.19. [11] 6.24. [12] 2.19. [13] 3.14.6. [14] 4.4.1. [15] 6.28. [16] 6.23.1. [17] 6.26. [18] 5.1.

④ *Թարգմանեք.*

1. Հակոբը և Հռութը հիմա ապրում են Թել-Ավիվում՝ մեր փողոցում: 2. Դավիթը համալսարան է գնում առավոտյան և տուն վերադառնում կեսօրից հետո: Նա համալսարան է գնում իր ընկերների հետ: 3. Երեկոյան Դինան և Հռութը կինոթատրոն են գնում: 4. Աբրահամը շատ ծույլ է, նա չի սիրում վարժություններ գրել: 5. Այս կանայք քարտուղարուհիներ են, նրանք աշխատում են այս մեծ դրասենյակում: 6. Համալսարանում մենք եբրայերեն ենք սովորում: 7. Աշակերտները չեն սիրում դպրոց գնալ: 8. Դինան ուսուցչի հետ երգել է սովորում: Նա սիրում է երգել: 9. Դուք ապրում եք այս մեծ տա՞նը: - Այո, այս տանը մենք փոքր բնակարան ունենք: 10. Իսահակը սովորում է առավոտից մինչև երեկո, նա սիրում է սովորել: 11. Այս փողոցում կան բազմաթիվ գեղեցիկ շենքեր: 12. Ես չեմ սիրում պաղպաղակ ուտել: 13. Հիմա ես գրում եմ նոր վարժություն ֆրանսերենից: 14. Ես գրասենյակ եմ գնում միայն կեսօրից հետո: 15. Ամեն առավոտ ես հաց և կարագ եմ ուտում, ես չեմ սիրում պանիր ուտել: 16. Սառան աշխատում է առավոտից մինչև երեկո և տուն է վերադառնում շատ հոգնած: 17. Հռութը սիրում է կինոթատրոն գնալ իր ամուսնու հետ: 18. Դպրոցում աշակերտները անգլերեն կամ գերմաներեն են ուսումնասիրում: 19. Ես ապրում եմ իմ ծնողների հետ այս փոքր բնակարանում: 20. Դավիթը շատ ծույլ երեխա է, նա չի սիրում դպրոց գնալ և սովորել:

מִלִּים חֲדָשׁוֹת

אָהַב բ (לְאָהֹב, אוֹהֵב) սիրել *ահավ (լէՀհօվ, օհէվ)*

אוֹ մ״ח կամ *օ*

אַחֲרֵי մ״ս հետո, անց, հետևից *ախառէյ*

אָכַל բ (לֶאֱכֹל, אוֹכֵל) ուտել *ախալ (լէՀէխօլ, օխէլ)*

אַנְגְּלִית ն ת״פ անգլերեն *անգլիթ*

בֵּית־סֵפֶר ז դպրոց *բէ(յ)թ-սէֆէռ*

בֹּקֶר ז առավոտ *բօ́կէռ*

גְּלִידָה ն պաղպաղակ *գլիդա*

גָּר բ (לָגוּר, גָּר) ապրել, բնակվել *գար (լագուռ, գար)*

הָלַךְ բ (לָלֶכֶת, הוֹלֵךְ) գնալ *հալախ (լալէխէթ, հօլէխ)*

חָזַר բ (לַחֲזֹר, חוֹזֵר) վերադառնալ *խազար (լախազօռ, խօզէռ)*

כָּאן ת״פ այստեղ *քան*

כָּתַב բ (לִכְתֹּב, כּוֹתֵב) գրել *քթավ (լիխթօվ, քօթէվ)*

לָמַד բ (לִלְמֹד, לוֹמֵד) սովորել, ուսումնասիրել *լամադ (լիլմօդ, լօմէդ)*

7 שֶׁבַע

א״ל ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ ՊՂՅ ԿԱՌՈՒՑՈՒՄ

7.1. Բայերը, որոնց 3-րդ արմատականը א է (ל״א), פָּעַל կառույցի ելման բայաձևում ձայնավորված են երկու կամացով՝ קָרָא *կառա* «կարդալ» և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

קוֹרֵא – קוֹרֵאת – קוֹרְאִים – קוֹרְאוֹת
կoռէ – կoռէթ – կoռ'իմ – կoռ'oթ

ה״ל ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ ՊՂՅ ԿԱՌՈՒՑՈՒՄ

7.2. Բայերը, որոնց 3-րդ արմատականը ה է (ל״ה), פָּעַל կառույցի ելման բայաձևում նույնպես ձայնավորված են երկու կամացով՝ רָצָה *ռացա* «ուզել, ցանկալ» և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

רוֹצֶה – רוֹצָה – רוֹצִים – רוֹצוֹת
ռoցէ – ռoցա – ռoցիմ – ռoցoթ

7.3. Տոկոորդային բաղաձայններ չունեցող ל״ה բայերն անորոշ դերբայ են կազմում לרצות → רָצָה *լիռցoթ:*

7.4. רָצָה բային կարող է հետևել ինչպես գոյական՝ שָׁרָה רוֹצָה עֲבוֹדָה אַחֶרֶת *սարա ռoցա ավoդա ախէռէթ* «Սառան ուրիշ աշխատանք է ուզում», הַיֶּלֶד רוֹצֶה גְּלִידָה *հայէլէդ ռoցէ գլիդա* «երեխան պաղպաղակ է ուզում», այնպես էլ անորոշ դերբայ՝ אֲנִי רוֹצֶה לִלְמֹד מוּסִיקָה *անի ռoցէ լիլմoդ մու՛սիկա* «ես ուզում եմ երաժշտություն սովորել», הֵם רוֹצִים לַחֲזוֹר הַבַּיְתָה *հէմ ռoցիմ լախազoռ հաբա՛յթա* «նրանք ուզում են տուն վերադառնալ»:

משְׁרָד ז *միսռադ* գրասենյակ, նախարարություն
סֵדֶר ז *սէդէռ* կարգ
עָבַד פ (לַעֲבֹד, עוֹבֵד) *ավադ (լա՛ավoդ, oվէդ)* աշխատել
עִבְרִית נ ת״פ *իվռիթ* եբրայերեն
עַד מ״י *ադ* մինչև
עָיֵף ת (נ עֲיֵפָה) *այէֆ (այէֆա)* հոգնած
עִם מ״י *իմ* հետ
עֵצֶל ת *ացէլ* ծույլ
עֶרֶב ז *էռէվ* երեկո
עֲהֲרִים ז *գoհoռա՛յիմ* կեսօր
קוֹלְנוֹעַ ז *կoլնoա՛* կինոնկար, կինոթատրոն
רַב ת (נ רַבָּה) *ռավ (ռաբա)* շատ, մեծ
רוּת נ *ռութ* Հռութ
רְחוֹב ז (ר רְחוֹבוֹת) *ռէխoվ (ռէխoվoթ)* փողոց
שִׂיחָה נ *սիխա* զրույց, խոսակցություն
שִׁיר פ (לְשִׁיר, שָׁר) *շար (լաշի՛ռ, շառ)* երգել
שֵׁשׁ ש״מ נ *շէշ* վեց
תַּרְגִּיל ז *թարգիլ* վարժություն

אַחֲרֵי הַצָּהֳרַיִם *ախառէ հացoհoռա՛յիմ* կեսօրից հետո, երեկոյան
בֹּקֶר *բարo՛կէռ* առավոտյան
כְּעֶרֶב *բա՛էռէվ* երեկոյան
דָּוִד שְׁלוֹם לְדָוִד *դոիշաթ շալoմ լէդավի՛դ* Դավթին բարև՛ (բարևի՛ր)
הַכֹּל בְּסֵדֶר *հաբoլ բէսէդէռ* ամեն ինչ կարգին է
לְהִתְרָאוֹת *լէհիթռաoթ* ցտեսություն
מַה נִּשְׁמָע? *մա նիշմա* ի՞նչ կա, չկա
מַה שְׁלוֹמְךָ (שְׁלוֹמֵךְ)? *մա շլoմխա (շլoմէխ)* ինչպե՞ս ես
תּוֹדָה רַבָּה *թoդա ռաբա* շատ շնորհակալություն

ՊԱՐՏԱԿԱՆԸ

7.5. *պարտիկ* ածականը համապատասխանում է հայերենի «պետք է, հարկավոր է» կապակցություններին և, ինչպես ՊԱՏ բայը, գործածվում է գոյականների և անորոշ դերբայների հետ՝ *դանիելի պարտիկ մագքիռա* «Դանիելին քարտուղարուհի է պետք», אֲנַחְנוּ צְרִיכִים מְכוֹנִית חֲדָשָׁה *անա՛խնու գոիխիմ մէխօնիք խադաշա* «մեզ նոր ավտոմեքենա է հարկավոր», דִּינָה לֹא צְרִיכָה לָלֶכֶת לַעֲבוֹדָה *դի՛նա լո գոի՛խա լալէ՛խէթ լա՛ավոդա* «Դինան չպետք է աշխատանքի գնա՝», הַתַּלְמִידוֹת הָאֵלֶּה צְרִיכוֹת לִכְתֹּב תַּרְגִּילִים *հաթալմի՛դոթ հա՛էլէ գոի՛խոթ լիխթօվ թարգիլիմ* «այս աշակերտուհիները պետք է վարժություններ գրեն»:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.6. ן կցական շաղկապը որոշ կայուն կապակցություններում հանդես է գալիս հին եբրայերենից ժառանգված ן *վա* ձևով՝ וְחָצִי *վախէցի* «և կես» (ժամեր նշելիս):

7.7. ל կցական նախդիրը հանդես է գալիս կապակցություններում, որոնցում պատկանելության գաղափարը վերացական է կամ անուղղակի՝ מוֹרֶה לְמוּסִיקָה *մո՛ռէ լէմուսիկա* «երաժշտության ուսուցիչ», קוּרְסִים לְעִבְרִית *կու՛ռսիմ լէ՛իվրիթ* «եբրայերենի դասընթացներ»:

① 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

שָׂרָה וְדָנִיאֵל

שָׂרָה עוֹבֶדֶת[1] בְּמִשְׂרַד גָּדוֹל. הַמִּשְׂרַד רָחוֹק מְאֹד מִן הַבַּיִת[2] שֶׁל שָׂרָה. שָׂרָה עוֹבֶדֶת[1] הַרְבֵּה. הִיא קָמָה[3] בְּשָׁעָה שֵׁשׁ בַּבֹּקֶר. הִיא אוֹכֶלֶת[4] אֲרוּחַת־בֹּקֶר בְּשָׁעָה שֵׁשׁ וְחֲצִי[5]. הִיא הוֹלֶכֶת[6] לַמִּשְׂרָד[7] בְּשָׁעָה שֶׁבַע וְחֲצִי[8]. הִיא עוֹבֶדֶת[1] בַּמִּשְׂרָד[9] מִן הַשָּׁעָה[10] שְׁמוֹנֶה וַחֲצִי עַד הַשָּׁעָה חָמֵשׁ אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. אַחֲרֵי הַעֲבוֹדָה שָׂרָה חוֹזֶרֶת[11] הַבַּיְתָה. הִיא אוֹכֶלֶת[4] אֲרוּחַת־עֶרֶב[12] וְקוֹרֵאת[13] סְפָרִים[14]. הִיא אוֹהֶבֶת לִקְרֹא, יֵשׁ לָהּ בַּבַּיִת הַרְבֵּה סְפָרִים. עַכְשָׁיו הִיא קוֹרֵאת סֵפֶר עַל מוּסִיקָה יִשְׂרְאֵלִית מוֹדֶרְנִית. שָׂרָה מְזַכֶּרֶת טוֹבָה, אֲבָל אַחֲרֵי הָעֲבוֹדָה הִיא עֲיֵפָה מְאֹד. הִיא רוֹצָה[15] עֲבוֹדָה אַחֶרֶת[16].

דָּנִיאֵל רוֹפֵא. הוּא עוֹבֵד[1] בְּמִשְׂרָד שֶׁלּוֹ בְּרְחוֹב[17] בֶּן־גּוּרְיוֹן[18]. גַּם אַבָּא שֶׁל דָּנִיאֵל רוֹפֵא. הוּא עוֹבֵד[1] עִם

[1] Ժխտական ձևն արտահայտում է ոչ թե արգելք, այլ պարտավորության բացակայություն՝ «պարտավոր չէ գնալ»:

דָּנִיאֵל. אֲבָל עַכְשָׁיו אַבָּא שֶׁל דָּנִיאֵל חוֹלֶה, הוּא לֹא הוֹלֵךְ[1] לַעֲבוֹדָה[2]. הוּא יוֹשֵׁב[3] בַּבַּיִת וְקוֹרֵא[4] עִתּוֹנִים[5]. גַּם הַמִּזְכֶּרֶת שֶׁל דָּנִיאֵל חוֹלֶה. רַק דָּנִיאֵל עוֹבֵד[1] בְּמִשְׂרָד וְהוּא עָיֵף מְאֹד. הוּא צָרִיךְ[6] מִזְכֶּרֶת חֲדָשָׁה.

סְטוּדֶנְט וּמוֹרֶה[7]

- סְלִיחָה, כָּאן גָּר[8] בְּנְיָמִין צוּר?
- כֵּן, הוּא גָּר כָּאן, זֶה אֲנִי.
- אַתָּה מוֹרֶה לְמוּסִיקָה[9], לֹא?
- כֵּן, אֲנִי מוֹרֶה לְמוּסִיקָה.
- אֲנִי סְטוּדֶנְט בָּאוּנִיבֶרְסִיטָה, אֲנִי רוֹצֶה[10] לִלְמֹד מוּסִיקָה[11]. אֲנִי מְאֹד אוֹהֵב מוּסִיקָה.
- אַתָּה רוֹצֶה לִלְמֹד מוּסִיקָה? טוֹב מְאֹד. אֵין לִי עַכְשָׁיו תַּלְמִידִים. מָה שִׁמְךָ?
- שְׁמִי שִׁמְעוֹן לֵוִי.
- נָעִים מְאֹד. מֵאַיִן אַתָּה?
- אֲנִי מִיְרוּשָׁלַיִם[12], אֲבָל עַכְשָׁיו אֲנִי גָּר[8] וְלוֹמֵד[13] בְּתֵל־אָבִיב.
- מָה אַתָּה לוֹמֵד בָּאוּנִיבֶרְסִיטָה?
- אֲנִי לוֹמֵד צָרְפָתִית וְגֶרְמָנִית.

[1] 6.13. [2] 5.10. [3] 6.18.1. [4] 7.6. [5] 6.21. [6] 6.27. [7] 7.1. [8] 7.2. [9] 7.4. [10] 6.23.1. [11] 7.5. [12] 2.16.բ. [13] 7.7. [14] 5.11.

② *Թարգմանեք.*

1. Դինան հիմա նստած է իր տանը և գիրք է կարդում: 2. Ամեն օր Սիմոնը վեր է կենում ժամը յոթին և գնում աշխատանքի: 3. Հոութն ուզում է կինոթատրոն գնալ իր ընկերուհիների հետ, սակայն նա անգլերենի դաս պետք է սովորի: 4. Ես չեմ ուզում աշխատել այս գրասենյակում, այն շատ հեռու է իմ տնից: 5. Այս ուսանողն ապրում է համալսարանից շատ հեռու՝ ուրիշ քաղաքում: 6. Ես առավոտյան չեմ ուտում, ես ուտում եմ միայն կեսօրից հետո: 7. Իմ քույրը սովորել չի սիրում, նա սիրում է միայն գրքեր և թերթեր կարդալ: Նրա սենյակում շատ գրքեր և թերթեր կան: 8. Ես չեմ գնում աշխատանքի, ես շատ հիվանդ եմ: 9. Բենյամինը պետք է անգլերեն սովորի, սակայն նա շատ ծույլ է: 10. Դինան պետք է նախաճաշի և աշխատանքի գնա, նա պետք է աշխատի մինչև ժամը 5:30: 11. Ինձ նոր մատիտներ ու գրիչներ են հարկավոր: 12. Դու չպետք է վեր կենաս առավոտյան ժամը վեցին: 13. Ես ուզում եմ երգել սովորել, սակայն մեր փոքր քաղաքում լավ ուսուցիչներ չկան: 14. Բենյամինը համալսարանում արաբերեն է ուսումնասիրում: 15. Այս մեծ շունն առավոտվանից նստած է մեր տան կողքը, որտեղի՞ց է նա: 16. Ներողությո՛ւն, ես պետք է տուն վերադառնամ, իմ կինը շատ հիվանդ է: 17. Փոքր կատուս շատ է սիրում ձուկ ուտել: 18. Այս գրիչը չի գրում, դու ուրիշ գրիչ կամ մատիտ ունե՞ս: 19. Ժամը 4-ից մինչև ժամը 6-ը ես պետք է նստեմ տանը՝ իմ փոքր քրոջ հետ: 20. Ես չեմ սիրում դպրոց գնալ, բայց պետք է գնամ, բոլոր

երեխաները պետք է սովորեն: 21. Իմ ամբողջ ընտանիքն ապրում է Թել-Ավիվում, միայն պապիկս է ապրում Էյլաթում, նա չի ուզում ապրել մեծ քաղաքում: 22. Որտեղի՞ց են քո ծնողները: - Նրանք Ռուսաստանից են, սակայն այժմ նրանք էլ են ապրում Իսրայելում՝ ավագ (մեծ) եղբորս հետ:

מִלִּים חֲדָשׁוֹת

אחר ת (נ אַחֶרֶת) *ուրիշ, այլ ախէռ (ախէռէթ)*
նախաճաշ ארוּחַת־בֹּקֶר נ *առուխաթ-բօ՛կէռ*
ընթրիք ארוּחַת־עֶרֶב נ *առուխաթ-էռէկ*
Բենյամին בִּנְיָמִין ז *բինյամին*
հիվանդ חוֹלֶה ת *խօլէ*
կես חֵצִי ז *խէցի*
օր יוֹם ז (ר יָמִים) *յօմ (յամիմ)*
նստել, նստած լինել יָשַׁב פ (לָשֶׁבֶת, יוֹשֵׁב) *յաշավ (լաշէվէթ, յօշէվ)*
որտեղի՞ց מֵאַיִן ת״פ *մէ՛այն*
երաժշտություն מוּסִיקָה נ *մուսիկա*
ներողություն סְלִיחָה נ *սլիխա*
աշխատանք עֲבוֹדָה נ *ավօդա*
թերթ עִתּוֹן ז *իթօն*
պետք է צָרִיךְ ת *ցառիխ*
ֆրանսերեն צָרְפָתִית נ ת״פ *ցառֆաթիթ*
վեր կենալ קָם פ (לָקוּם, קָם) *կամ (լակում, կամ)*
կարդալ קָרָא פ (לִקְרֹא, קּוֹרֵא) *կառա (լիկռօ, կօռէ)*
հեռու רָחוֹק ת *ռախօկ*
ուզել רָצָה פ (לִרְצוֹת, רוֹצֶה) *ռացա (լիռցօթ, ռօցէ)*
յոթ שֶׁבַע ש״מ נ *շէվա*
ութ שְׁמוֹנֶה ש״מ נ *շմօնէ, շմօ՛նէ*
Սիմոն שִׁמְעוֹן ז *շիմ՛օն*
ժամ שָׁעָה נ *շա՛ա*

ժամը 5-ն է הַשָּׁעָה חָמֵשׁ *հաշա՛ա խամէշ*
ժամը 6-ին בְּשָׁעָה שֵׁשׁ *բէշա՛ա շէշ*
ժամը 7:30-ին בְּשָׁעָה שְׁבַע וָחֵצִי (בְּשֶׁבַע וָחֵצִי) *բէշա՛ա շէվա վախէցի (բէշէվա վախէցի)*
ժ. 7-ից մինչև ժ. 8-ը מִן הַשָּׁעָה שֶׁבַע עַד הַשָּׁעָה שְׁמוֹנֶה *մին հաշա՛ա շէվա ադ հաշա՛ա շմօնէ*

8 שְׁמוֹנֶה

ԲԱՅԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. רָאָה *ռա՛ա* «տեսնել», עָשָׂה *ասա* «անել» և עָנָה *անա* «պատասխանել» բայերը պատկանում են ל״ה խմբին (7.2., 7.3.): Նրանց ենթակայական դերբայներն ունեն հետևյալ ձևերը.

רוֹאֶה – רוֹאָה – רוֹאִים – רוֹאוֹת
ռօ՛է – ռօ՛ա – ռօ՛իմ – ռօ՛օթ

עוֹשֶׂה – עוֹשָׂה – עוֹשִׂים – עוֹשׂוֹת
օսէ – օսա – օսիմ – օսօթ

① *Կազմեք* עָנָה անա *«պատասխանել» բայի ենթակայական դերբայները:*

8.2. שָׁאַל *շա՛ալ* «հարցնել» բայը պատկանում է 2-րդ կոկորդային արմատականով խմբին (6.16.) և հոգնակիի ձևերում շվայի փոխարեն ունի խատաֆ-պաթախ.

שׁוֹאֵל – שׁוֹאֶלֶת – שׁוֹאֲלִים – שׁוֹאֲלוֹת
շօ՛էլ – շօ՛էլէթ – շօ՛ալիմ – շօ՛ալօթ

8.3. יָדַע *յադա* «իմանալ, գիտենալ, կարողանալ» բայը պատկանում է 3-րդ կոկորդային արմատականով խմբին և ունի ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

יוֹדֵעַ – יוֹדַעַת – יוֹדְעִים – יוֹדְעוֹת
յօդէա – յօդ՛ա՛թ – յօդ՛իմ – յօդ՛օթ

8.4. בָּא *բա* «գալ» բայը պատկանում է י״ע խմբին (6.17-6.19., արմատը՝ בוא) և ունի ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

בָּא – בָּאָה – בָּאִים – בָּאוֹת
բա – բա'ա – բա'իմ – բա'օթ

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

8.5. Քանակական թվականները (שֵׁם־מִסְפָּר מוֹנֶה *շէմ միսպար մօնէ*), բացի 1-ից (5.13., «երկու» թվականի մասին՝ հաջորդ գլուխներում) դրվում են հաշվելի բառից առաջ և համաձայնեցվում նրա հետ սեռով (խոսքն առայժմ իգական սեռի գոյականների և թվականների մասին է)՝ שְׁלוֹשׁ תַּלְמִידוֹת *շալօշ թալմիդօթ* «3 աշակերտուհի», אַרְבַּע מוֹרוֹת *առբա (ա՛ռբա) մօռօթ* «4 ուսուցչուհի», חָמֵשׁ בָּבוֹת *համէշ բուբօթ* «5 տիկնիկ», שֵׁשׁ מִלִּים *շէշ միլիմ* «6 բառ», שֶׁבַע נָשִׁים *շէվա նաշիմ* «7 կին», שְׁמוֹנֶה שָׁעוֹת *շմօնէ (շմօ՛նէ) շա'օթ* «8 ժամ», תֵּשַׁע מַחְבְּרוֹת *թէշա մախբառօթ* «9 տետր», עֲשָׂרָה מִשְׁפָּחוֹת *էսէռ միշպախօթ* «10 ընտանիք»:

② *Թարգմանեք.*
3 քույր, 4 կին, 5 բնակարան, 6 տիկնիկ, 7 ընկերուհի, 8 աղջիկ, 9 ուսուցչուհի, 10 քարտուղարուհի, 3 տետր, 4 ավտոմեքենա, 5 ընտանիք, 6 ուսանողուհի, 7 բազմոց, 8 թխվածք, 9 քաղաք, 10 ժամ, 7 աշակերտուհի, 8 մահճակալ:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.6. (տե՛ս 6.27.) Եթե ուղիղ խնդիրը որոշիչ հոդ կամ դերանվանական վերջածանց ունի կամ արտահայտված է հատուկ անունով, ապա նրա առջև դրվում է אֶת *էթ* մասնիկը՝ יוֹסֵף כּוֹתֵב אֶת הַתַּרְגִּיל *յօսէֆ քօթէվ էթ հաթառգիլ* «Հովսեփը գրում է վարժությունը» (համեմատեք՝ תַּרְגִּיל יוֹסֵף כּוֹתֵב *յօսէֆ քօթէվ թառգիլ* «Հովսեփը վարժություն է գրում»), אֲנִי רוֹאֶה אֶת תַּלְמִידִי *անի ռօ'է էթ թալմիդի* «ես տեսնում եմ աշակերտիս», אֲנוּ אוֹהֲבִים אֶת יְרוּשָׁלַיִם *ա՛նու օհավիմ էթ յէռուշալա՛յիմ* «մենք սիրում ենք Երուսաղեմը»:

8.7. Եթե բայն ունի մեկից ավելի ուղիղ խնդիր, ապա նրանցից յուրաքանչյուրն ստանում է אֶת մասնիկը՝ בְּנְיָמִין אוֹהֵב אֶת רִבְקָה וְאֶת רוּת *բինյամին օհէվ էթ ռի՛վկա վէ'էթ ռութ* «Բենյամինը սիրում է Ռեբեկային և Հռութին»:

8.8. Խոսակցական լեզվում אֶת մասնիկը հաճախ գործածվում է יֵשׁ לִי տիպի կապակցությունների հետ, երբ գոյականը, որն այս պարագայում ընկալվում է որպես ուղիղ խնդիր, հոդակիր է՝ יֵשׁ לִי אֶת הַסֵּפֶר הַזֶּה *յէշ լի էթ հասէ՛ֆէռ հազէ* «ես ունեմ այս գիրքը»:

Ֆ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԸ

8.9. Բարդ ստորադասական նախադասություններում ստորադասական նախադասությունը գլխավորին է միանում פ *շէ* կցական հարաբերական անփոփոխ շաղկապի միջոցով, որը համապատասխանում է հայերենի «որ» և «որը» կապերին (իրենց թվային և հոլովական բոլոր ձևերով)՝ אֲנִי רוֹאֶה שֶׁאַתָּה עָיֵף *անի ռօ'է շէ'ատ այէ՛ֆա* «ես տեսնում եմ, որ դու հոգնած ես», יֵשׁ מִלִּים שֶׁאֲנִי לֹא יוֹדֵעַ *յէշ միլիմ շէ'անի լօ յօդէ՛ա* «կան բառեր, որոնք ես չգիտեմ», אֲנִי שָׁם שֶׁיֵּשׁ לִי מַזְכִּירָה טוֹבָה *անի՛ ֆամէ՛խ շէյէշ լի մազքիռա տօվա* «ես ուրախ եմ, որ լավ քարտուղարուհի ունեմ», אֲנִי יוֹדֵעַ שֶׁאַתּ יוֹדַעַת שֶׁהֵן יוֹדְעוֹת *անի յօդէ՛ա շէ'ատ յօդա՛ատ շէհէն յօդ'օթ* «ես գիտեմ, որ դու գիտես, որ նրանք գիտեն»:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.10. כַּמָּה *քամա* (կամ *քա՛մա*) բառը հարցական նախադասություններում թարգմանվում է «քանի՞»՝ כַּמָּה חֲתוּלִים יֵשׁ לְסַבְתָּא שֶׁלָּךְ? *քամա խաթուլիմ յէշ լէսա՛վթա շէլ-խա* «քանի՞ կատու ունի քո տատիկը», իսկ ոչ հարցական նախադասություններում՝ «մի քանի»՝ יֵשׁ כַּמָּה חֲתוּלִים וּכְלָבִים לְסַבְתָּא שֶׁלּוֹ *լէսա՛վթա շէլո յէշ քամա խաթուլիմ ուխլավիմ* «նրա տատիկն ունի մի քանի կատուներ և շներ»: Ինչպես երևում է օրինակներից, כַּמָּה բառից հետո գոյականները հոգնակի թվում են:

④ *Թարգմանեք.*

1. Հիմա ես նոր աշխատանք ունեմ, նա ոչ հեշտ է և ոչ դժվար: 2. Մեր ուսուցիչն ասում է, որ մենք պետք է ամեն օր շատ աշխատենք՝ առավոտվանից մինչև երեկո: 3. Ինչո՞ւ ես հարցնում, ես չեմ ուզում պատասխանել քեզ: 4. Ինչո՞ւ դասերի չեք գալիս, հիվա՞նդ եք: 5. Ես գիտեմ, որ Դինան շատ լավ է երգում և սիրում է երգել: 6. Որտեղի՞ց են ձեր նոր ընկերները: – Նրանք Երուսաղեմից են, սակայն այժմ ապրում և աշխատում են մեր քաղաքում: 7. Մենք այսօր շատ աշխատանք չունենք և ուզում ենք համերգի գնալ մեր նոր ընկերների հետ: 8. Ի՞նչ ես ասում նրանց: – Ես ասում եմ, որ այսօր չեմ ուզում համալսարան գնալ, ես պետք է աշխատեմ հայրիկիս հետ: 9. Սողոմոնը լավ բժիշկ է, ամեն օր նրա ընդունարան (պրասենյակ) բազմաթիվ հիվանդներ են գալիս. հիմա էլ ես նրա ընդունարանում մի քանի հիվանդներ եմ տեսնում: 10. Քանի՞ նոր բառ կա այսօրվա դասում: – Գրիտեմ, միգուցե ինը կամ տասը: 11. Մինչև ժամը հինգը ես պետք է արաբերենի մի քանի վարժություններ անեմ: 12. Ես ուզում եմ հարցնել այս կնոջն իր երեխաների մասին, որոնք սովորում են իմ երեխաների հետ: 13. Ես ուզում եմ ասել նրան, որ ես համաձայն չեմ: 14. Դու ինձ չես ասում՝ քանի՞ ժամ պետք է աշխատեմ գրասենյակումդ, բայց ես պետք է իմանամ: 15. Այսօր երեկոյան ժամը ութին մենք գնում ենք համերգի մեր ծնողների հետ: 16. Ես չգիտեմ ի՞նչ է անում Սողոմոնն ամբողջ օրը, բայց ես գիտեմ, որ նա առավոտվանից նստած է իր սենյակում: Ես նաև գիտեմ, որ ամեն երեկո նա իր դասերն է անում: 17. Ի՞նչ ես դու անում այստեղ՝ երեկոյան ժամը տասին: 18. Մենք հարցնում ենք այս աշակերտներին, սակայն նրանք մեզ չեն պատասխանում, նրանք չեն ուզում պատասխանել մեզ: 19. Այսօրվա դասի նոր բառերն ավելի հեշտ են, դուք պետք է սովորեք այս բոլոր բառերը: 20. Նա ինձ գերմաներեն ասում է, որ նրանց փոքր քաղաքում մի քանի լավ հյուրանոցներ կան:

מִלִּים חֲדָשׁוֹת

אולי ת״פ *ուլայ* միգուցե
אָמַר פ (לוֹמַר, אוֹמֵר) *ամար (լօմար, օմէր)* ասել
בָּא פ (לָבוֹא, בָּא) *բա (լաւօ, բա)* գալ
גֶּרְמָנִית נ ת״פ *գէրմանիթ* գերմաներեն
הַיּוֹם ת״פ *հայօմ* այսօր
יָדַע פ (לָדַעַת, יוֹדֵעַ) *յադա (լադա՛աթ, յօդէ՛ա)* իմանալ, գիտենալ, կարողանալ
כַּמָּה ת״פ *քամա, քա՛մա* քանի՞, մի քանի
לָמָּה ת״פ *լա՛մա* ինչո՞ւ

③ *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

דָּנִיאֵל וְשָׂרָה בָּרְחוֹב

יוֹם אֶחָד דָּנִיאֵל הוֹלֵךְ בָּרְחוֹב. הוּא רוֹאֶה[1] אֶת שָׂרָה[2].
- שָׁלוֹם, שָׂרָה - אוֹמֵר[3] דָּנִיאֵל לְשָׂרָה[4] - מָה שְׁלוֹמֵךְ? אֲנִי רוֹאֶה שֶׁאַתְּ[5] עֲיֵפָה מְאֹד.
- כֵּן, דָּנִיאֵל - אוֹמֶרֶת[6] לוֹ[7] שָׂרָה - הָעֲבוֹדָה שֶׁלִּי קָשָׁה מְאֹד. אֲנִי עוֹבֶדֶת עֶשֶׂר שָׁעוֹת[8] כָּל יוֹם[9], מֵהַשָּׁעָה תֵּשַׁע בַּבֹּקֶר עַד הַשָּׁעָה שֶׁבַע אַחֲרֵי הַצָּהֳרַיִם, וְחוֹזֶרֶת[10] הַבַּיְתָה[11] עֲיֵפָה מְאֹד.
- אוּלַי אֶת רוֹצָה[12] עֲבוֹדָה אַחֶרֶת[13], עֲבוֹדָה יוֹתֵר קַלָּה[14]? - שׁוֹאֵל[15] דָּנִיאֵל אֶת שָׂרָה[16].
- אַתָּה רוֹצֶה[17] לוֹמַר[18] שֶׁיֵּשׁ לְךָ[19] עֲבוֹדָה?
- כֵּן, שָׂרָה, יֵשׁ לִי עֲבוֹדָה בְּמִשְׂרָד - עוֹנֶה לָהּ[20] דָּנִיאֵל - אֲנִי צָרִיךְ מִזְכִּירָה חֲדָשָׁה[1]. הַמִּזְכִּירָה שֶׁלִּי חוֹלָה, הִיא לֹא בָּאָה[2] לַעֲבוֹדָה[3]. אֲנִי יוֹדֵעַ[4] שֶׁאַתְּ[5] מִזְכִּירָה טוֹבָה מְאֹד.
- כַּמָּה שָׁעוֹת[6] אֲנִי צְרִיכָה לַעֲבֹד[7] בְּמִשְׂרָד שֶׁלְּךָ?
- מִן הַשָּׁעָה תֵּשַׁע בַּבֹּקֶר עַד הַשָּׁעָה חָמֵשׁ אַחֲרֵי הַצָּהֳרַיִם. שְׁמוֹנֶה שָׁעוֹת[8]. מָה אַתְּ אוֹמֶרֶת[9]?
- טוֹב מְאֹד, דָּנִיאֵל, אֲנִי מַסְכִּימָה לַעֲבֹד בְּמִשְׂרָדְךָ.
- תּוֹדָה רַבָּה, שָׂרָה. אֲנִי שָׂמֵחַ שֶׁיֵּשׁ לִי עַכְשָׁיו מִזְכִּירָה טוֹבָה וְיָפָה.

שִׂיחָה בְּטֶלֶפוֹן

- שָׁלוֹם, רוּת. מָה שְׁלוֹמֵךְ?
- בְּסֶדֶר, דָּוִד, וּמָה שְׁלוֹמְךָ?
- גַּם אֲנִי בְּסֶדֶר. בְּנְיָמִין בַּבַּיִת?
- לֹא, הוּא לֹא בַּבַּיִת, הוּא בָּאִילַת, עִם שְׁלֹמֹה.
- בָּאִילַת? מָה הֵם עוֹשִׂים בָּאִילַת?
- אֲנִי לֹא יוֹדַעַת[10]. הוּא לֹא אוֹמֵר לִי[11].
- הוּא לֹא בָּא[12] לְקוֹנְצֶרְט[13] הַיּוֹם?
- לֹא, הוּא לֹא בָּא. אֲנִי אוֹמֶרֶת לְךָ[14] - הוּא בָּאִילַת.
- וְאַתְּ? אַתְּ בָּאָה[15] לְקוֹנְצֶרְט?
- גַּם אֲנִי לֹא בָּאָה.
- לָמָּה אַתְּ לֹא רוֹצָה לָבוֹא[16]? אַתְּ אוֹהֶבֶת מוּסִיקָה[17], לֹא?
- אֲנִי צְרִיכָה לִלְמֹד[18] גְּרָמָנִית. בַּשִּׁעוּר הַחָדָשׁ יֵשׁ הַרְבֵּה מִלִּים חֲדָשׁוֹת שֶׁאֲנִי[19] עוֹד לֹא יוֹדַעַת[20]. אֲנִי צְרִיכָה לִלְמֹד אֶת כָּל הַמִּלִּים הַחֲדָשׁוֹת הָאֵלֶּה?
- אַתְּ לוֹמֶדֶת הַרְבֵּה מְאֹד, רוּת! אַתְּ לֹא צְרִיכָה לִלְמֹד כָּל הַיּוֹם[1], מֵהַבֹּקֶר עַד הָעֶרֶב.
- לְהִתְרָאוֹת, דָּוִד!

[1] 8.1. [2] 8.6. [3] 6.13. [4] 5.1. [5] 8.9. [6] 5.4. [7] 8.5. [8] 3.14.ա. [9] 6.22. [10] 7.2. [11] 7.4.
[12] 5.12.1. [13] 8.2. [14] 7.5. [15] 8.4. [16] 6.21. [17] 8.3. [18] 8.10. [19] 6.27. [20] 3.14.բ.

מסכים ת համաձայն *մասքիմ*
ענה פ (לענות, עונה) պատասխանել *անա (լա՛նօթ, օնէ)*
עשה פ (לעשות, עושה) անել *ասա (լա՛ասօթ, օսէ)*
עשר ש״מ נ տասը *էսէր*
קונצרט ז համերգ *կօնցէրտ*
קל ת թեթև, հեշտ *կալ*
ראה פ (לראות, רואה) տեսնել *ռա՛ա (լիռ՛օթ, ռօ՛է)*
שאל פ (לשאל, שואל) հարցնել *շա՛ալ (լիշ՛օլ, շօ՛էլ)*
שיחה נ զրույց, խոսակցություն *սիխա*
שלמה ז Սողոմոն *շլօմօ*
שמח ת ուրախ *սամէախ*
תשע ש״מ נ ինը *թէշա*

אני בסדר *անի բէսէդէր* ես լավ եմ
של היום *շէլ հայօմ* այսօրվա

9 תֵּשַׁע

ԲԱՅԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. כָּאַב *բա՛ավ* «ցավել», כָּעַס *բա՛աս* «բարկանալ» և קִצֵּץ *ցախակ* «ծիծաղել» բայերը պատկանում են 2-րդ կոկորդային արմատականով բայերի խմբին (6.16., 8.2.) և ունեն ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

כּוֹאֵב – כּוֹאֶבֶת – כּוֹאֲבִים – כּוֹאֲבוֹת
բօ՛էվ – բօ՛էվէթ – բօ՛ավիմ – բօ՛ավօթ

[1]כָּאַב բայը պահանջում է անուղղակի դերանուն՝ սեռով ու թվով համաձայնեցվելով ցավի պատճառը նշող բառի հետ՝ מָה כּוֹאֵב לְךָ? *մա բօ՛էվ լէխա* «ի՞նչդ է ցավում» (բառացիորեն՝ «ի՞նչ է ցավում քեզ»), הָעַיִן כּוֹאֶבֶת לִי *հա՛այն բօ՛էվէթ լի* «աչքս է ցավում»:

① *Կազմեք* כָּעַס բա՛աս *«բարկանալ» և* קִצֵּץ ցախակ *«ծիծաղել» բայերի ենթակայական դերբայները:*

9.2. יָצַג *յացա* «դուրս գալ» բայը պատկանում է א״ל խմբին (7.1.) և ունի ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

יוֹצֵא – יוֹצֵאת – יוֹצְאִים – יוֹצְאוֹת
յօցէ – յօցէթ – յօց՛իմ – յօց՛օթ

[1] Ինչպես նշվել է, մարմնի զույգ անդամների անվանումներն անկախ վերջավորությունից իգական սեռի են:

9.3. שָׁתָה *շաթա* «խմել» բայը պատկանում է ״ה՝ խմբին (7.2., 7.3., 8.1.) և ունի ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

שׁוֹתֶה – שׁוֹתָה – שׁוֹתִים – שׁוֹתוֹת
շօթէ – շօթա – շօթիմ – շօթօթ

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

9.4. Դասական թվականները (שֵׁם־מִסְפָּר סוֹדֵר *շէմ միսպար սօդէր*) ձևաբանական և շարահյուսական առումներով ածականներ են: Նրանք դրվում են գոյականից հետո և համաձայնեցվում նրա հետ սեռով, թվով և առումով՝ הַיּוֹם הָרִאשׁוֹן *հայօմ հառիշօն* «առաջին օրը», הָאִשָּׁה הָרִאשׁוֹנָה *հա'իշա հառիշօնա* «առաջին կինը», הַתַּלְמִידִים הָרִאשׁוֹנִים *հաթալմիդիմ հառիշօնիմ* «առաջին աշակերտները», מִלִּים רִאשׁוֹנוֹת *միլիմ ռիշօնօթ* «առաջին բառեր»:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԸ

9.5. כַּאֲשֶׁר *քա'աշէր* «երբ» ստորադասական շաղկապը գործածվում է բարդ ստորադասական նախադասություններում՝ կապելով ստորադաս նախադասությունը գլխավորին՝ כַּאֲשֶׁר אֲנִי חוֹזֵר הַבַּיְתָה מֵהַעֲבוֹדָה, אֲנִי אוֹכֵל אֲרוּחַת־עֶרֶב עִם הַמִּשְׁפָּחָה שֶׁלִּי *քա'աշէր անի խօզէր հաբայթա մէհա'ավօդա, անի օխէլ առուխաթ-էռէվ իմ համիշպախա շէլի* «երբ աշխատանքից տուն եմ վերադառնում, ընթրում եմ ընտանիքիս հետ», כַּאֲשֶׁר אֲנִי אוֹכֵל, אֲנִי לֹא קוֹרֵא *քա'աշէռ անի օխէլ, անի լօ կօռէ* «երբ ես ուտում եմ, չեմ կարդում», כַּאֲשֶׁר אַבָּא קוֹרֵא עִתּוֹן, הוּא אוֹהֵב לִשְׁתּוֹת תֵּה *քա'աշէր աբա կօռէ իթօն, հու օհէվ լիշթօթ թէ* «երբ հայրիկը թերթ է կարդում, նա սիրում է թեյ խմել»: כַּאֲשֶׁר շաղկապը չի գործածվում որպես «ե՞րբ» հարցական դերանուն:

ՀՈՐԴՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ

9.6. Եբրայերենում գոյություն ունի հորդորման հատուկ ձև, որը կազմվում է בְּבַקָּשָׁה *բէկակաշա* «խնդրեմ» բառի և բայի անորոշ դերբայի համադրությամբ՝ בְּבַקָּשָׁה לֵאֱכֹל *բէկակաշա լէ'էխօլ* «կերե՛ք, խնդրեմ», בְּבַקָּשָׁה לִשְׁתּוֹת *բէկակաշա լիշթօթ*

«խմե՛ք, խնդրեմ»: Սա հորդորման ընդգծված քաղաքավարի ձև է և, որպես կանոն, գործածվում է ֆորմալ իրավիճակներում, հատկապես՝ անծանոթ կամ քիչ ծանոթ մարդկանց հետ:

② *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

הַיּוֹם הָרִאשׁוֹן שֶׁל שָׂרָה בַּמִּשְׂרָד הַחָדָשׁ

לְשָׂרָה יֵשׁ[1] עֲבוֹדָה חֲדָשָׁה. הָעֲבוֹדָה הַחֲדָשָׁה שֶׁלָּהּ לֹא קָשָׁה. הִיא הַמַּזְכִּירָה הַחֲדָשָׁה שֶׁל דּוֹקְטוֹר דָּנִיאֵל שָׁרוֹן. עַכְשָׁיו שָׂרָה יוֹשֶׁבֶת בְּמִשְׂרָדוֹ שֶׁל דָּנִיאֵל[2]. הִיא רוֹאָה[3] שֶׁבַּמִּשְׂרָד[4] אֵין סֵדֶר: הָרְדִיו[5] עַל הַכִּסֵּא, הַטֶּלֶפוֹן תַּחַת הַשֻּׁלְחָן, הַשָּׁעוֹן עַל הָאָרוֹן, הָאָרוֹן עַל־יַד הַחַלּוֹן. שָׂרָה חוֹשֶׁבֶת: מָה לַעֲשׂוֹת?

- עַל מָה אַתְּ חוֹשֶׁבֶת כָּל הַזְּמַן? - שׁוֹאֵל[6] דָּנִיאֵל אֶת שָׂרָה[7].
- אֲנִי רוֹצָה לַעֲשׂוֹת סֵדֶר בְּמִשְׂרָדְךָ - עוֹנָה[8] לוֹ[9] שָׂרָה.
- אֲנִי חוֹשֵׁב שֶׁזֶּה[10] רַעְיוֹן מְצֻיָּן! - אוֹמֵר דָּנִיאֵל וְיוֹצֵא[11] מֵהַחֶדֶר[12].

שָׂרָה שָׂמָה[13] אֶת הַטֶּלֶפוֹן[14] עַל הַשֻּׁלְחָן, אֶת הָרְדִיו[15] עַל־יַד הָאָרוֹן, אֶת הַכִּסֵּא[16] תַּחַת הַשֻּׁלְחָן, אֶת הָאָרוֹן[17] עַל־יַד הַקִּיר, וְאֶת הַשָּׁעוֹן[18] עַל הַקִּיר. עַכְשָׁיו הַכֹּל בְּסֵדֶר.

כַּאֲשֶׁר[19] דָּנִיאֵל בָּא, הוּא רָאָה[20] שֶׁמִּשְׂרָדוֹ נָקִי וּמְסֻדָּר.

- תּוֹדָה רַבָּה, יָפָה מְאֹד! - אוֹמֵר דָּנִיאֵל לְשָׂרָה[21].

אִישׁ חוֹלֶה

לְמִשְׂרָד[22] שֶׁל דָּנִיאֵל בָּא[23] אִישׁ זָקֵן. הוּא כּוֹעֵס[24], כִּי אֵין לוֹ זְמַן. שָׂרָה אוֹמֶרֶת לוֹ[25]:

- בְּבַקָּשָׁה לְשֶׁבֶת[26], אֲדוֹנִי. מָה כּוֹאֵב לְךָ[27]?
- כּוֹאֶבֶת לִי הָעַיִן[28].
- הָעַיִן כּוֹאֶבֶת לְךָ כָּל הַזְּמַן?
- לֹא כָּל הַזְּמַן. הִיא כּוֹאֶבֶת רַק כַּאֲשֶׁר[29] אֲנִי שׁוֹתֶה תֵּה[30].
- אֲנִי חוֹשֶׁבֶת שֶׁאַתָּה[31] לֹא צָרִיךְ רוֹפֵא[32], אֲדוֹנִי.
- אָז מָה אֲנִי צָרִיךְ?
- אַתָּה צָרִיךְ לְהוֹצִיא[33] אֶת הַכַּפִּית[34] מִן הַכּוֹס[35], כַּאֲשֶׁר[36] אַתָּה שׁוֹתֶה תֵּה.

הָאִישׁ כּוֹעֵס וְהוֹלֵךְ. שָׂרָה צוֹחֶקֶת[37].

[1] 9.4. [2] 5.2. [3] 4.3. [4] 8.1. [5] 8.9. [6] 8.2. [7] 8.6. [8] 5.4. [9] 9.2. [10] 5.11.
[11] 6.18.1. [12] 8.7. [13] 9.5. [14] 5.1. [15] 6.21. [16] 9.1. [17] 9.6. [18] 6.27. [19] 7.5. [20] 5.10.

[21] «երբ Դանիելը եկավ ... տեսավ» (6.5.):
[22] «եկավ»:

③ *Թարգմանեք.*

1. Աբրահամն իր բոլոր գրքերը դնում է սեղանի վրա, որովհետև պահարան չունի: 2. Սողոմոնը չի սիրում շատ մտածել: 3. Մեր տան կողքին նոր դպրոց կա: 4. Այսօր մեր գրասենյակը մաքուր է և կարգավորված: 5. Հովսեփը չգիտի ինչ անել, նա նստած է իր սենյակում և մտածում է: 6. Ես չեմ սիրում թեյ խմել, երբ նախաճաշում եմ: 7. Ինչո՞ւ ես ծիծաղում, ի՞նչ են նրանք ասում քեզ: 8. Կարդացե՛ք, խնդրեմ, այս նոր վարժությունը: 9. Այս բոլոր աշակերտները շատ ծույլ են, նրանք սովորել չեն սիրում և դպրոց չեն գալիս: 10. Նա ասում է ինձ, որ ուզում է երաժշտություն սովորել, սակայն լավ ուսուցիչ չունի: 11. Ինչո՞ւ ես այս բոլոր նոր բաժակները դնում պահարանի մեջ: 12. Ես կարծում եմ, որ դա հոյակապ գաղափար է՝ երեկոյան գնալ կինոթատրոն: 13. Նա շատ ծեր և հիվանդ մարդ է, նա իր տնից դուրս չի գալիս: 14. Ես ուզում եմ իմանալ՝ ինչի՞ վրա ես դու ամբողջ ժամանակ ծիծաղում: 15. Ամեն առավոտ, երբ տնից դուրս եմ գալիս և գնում աշխատանքի, մեր տան կողքին մեծ սև շուն եմ տեսնում: 16. Ինչո՞ւ եք միշտ բարկանում երեխաների վրա, պարո՛ն, Դուք երեխաներ չե՞ք սիրում: 17. Ես չգիտեմ ինչո՞ւ են աչքերս առավոտվանից ցավում: - Որովհետև առավոտվանից կարդում ես: 18. Նա ամբողջ ժամանակ ինձ ասում է, որ նրանց քաղաքը մեր քաղաքից մաքուր է: 19. Ո՞ւմն է այս կատուն, որ նստած է մեր բնակարանի պատուհանների տակ: 20. Ես այսօր թերթ կարդալու ժամանակ չունեմ:

מִלִּים חֲדָשׁוֹת

պարոն *ադոն* אָדוֹן ז
այդ ժամանակ, ուրեմն *ազ* אַז ת״פ
ժամանակ *զման* זְמַן ז
ծեր, ծերունի *զակէն* זָקֵן תו״ז
պատուհան *խալօն (խալօնօթ)* חַלּוֹן ז (ר חַלּוֹנוֹת)
մտածել, կարծել *խաշավ (լախշօվ, խօշէվ)* חָשַׁב פ (לְחַשֵּׁב, חוֹשֵׁב)
դուրս գալ *յացա (լացէթ, յօցէ)* יָצָא פ (לָצֵאת, יוֹצֵא)
ցավել *քա՛ավ (լիխ՛օվ, քօ՛էվ)* כָּאַב פ (לִכְאֹב, כּוֹאֵב)
երբ *քա՛աշէռ* כַּאֲשֶׁר מ״ח
բաժակ *քօս (քօսօթ)* כּוֹס זו״ן (ר כּוֹסוֹת)
որովհետև, որ *քի* כִּי מ״ח
բարկանալ *քա՛աս (լիխ՛օս, քօ՛էս)* כָּעַס פ (לִכְעֹס, כּוֹעֵס)
թեյի գդալ *քապիթ* כַּפִּית נ
հանել *լէհօցի* לְהוֹצִיא פ

կարգավորված *մէսուդառ* מְסֻדָּר ת
հոյակապ *մէցույան (մէցույէնէթ)* מְצֻיָּן ת (נ מְצֻיָּנֶת)
մաքուր *նակի* נָקִי ת
աչք *ային* עַיִן נ
ծիծաղել *ցախակ (լիցիխօկ, ցօխէկ)* צָחַק פ (לִצְחֹק, צוֹחֵק)
պատ *կիռ (կիռօթ)* קִיר ז (ר קִירוֹת)
առաջին *ռիշօն* רִאשׁוֹן ת
ռադիո *ռադյո* רַדְיוֹ ז
գաղափար, միտք *ռա՛յօն* רַעְיוֹן ז
դնել *սամ (լասիմ, սամ)* שָׂם פ (לָשִׂים, שָׂם)
ժամացույց *շա՛օն* שָׁעוֹן ז
խմել *շաթա (լիշթօթ, շօթէ)* שָׁתָה פ (לִשְׁתּוֹת, שׁוֹתֶה)
թեյ *թէ* תֵּה ז
տակ(ը) *թա՛խաթ* תַּחַת מ״ח

պարո՛ն (առանց անունի) *ադոնի* אֲדוֹנִי
խնդրե՛մ *բէվակաշա* בְּבַקָּשָׁה
ամբողջ ժամանակ, միշտ *քոլ հազման* כָּל הַזְּמַן
կարգի բերել *լա՛ասօթ սէդէռ* לַעֲשׂוֹת סֵדֶר
ինչի՞ մասին, ինչի՞ վրա *ալ մա* עַל מַה?

10 עֶשֶׂר

ՖԻՍ ԿԱՌՈՒՑՑԸ

10.1. פִּעֵל կառույցի ելման բայաձևերը ձայնավորված են «ի - է» ձայնավորներով (խիրիկ-յոդ - ցեռե, դասական ուղղագրության մեջ խիրիկ - ցեռե՝ פִּעֵל. ներկայումս ավելի ընդունված է յոդ տառով գրությունը): Այս կառույցը հին եբրայերենում արտահայտում էր ինտենսիվ, բազմակի կամ հարկադրական գործողություն (հայերենում՝ կոտրել - կոտրատել, սովորել - սովորեցնել և այլն), սակայն արդի եբրայերենում այս կառույցի բայերն իրենց իմաստային երանգավորումով գրեթե չեն տարբերվում פָּעַל կառույցից՝ արտահայտելով «սովորական» գործողություն՝ דִּבֵּר *դիբէր* «խոսել», סִפֵּר *սիպէր* «պատմել», מִיהֵר *միհեր* «շտապել»: Որոշ բայեր պահպանել են ինտենսիվության, բազմակիության կամ հարկադրության երանգավորումը՝ לִמֵּד *լիմէդ* «սովորեցնել, դասավանդել» (פָּעַל կառույցում՝ לָמַד *լամադ* «սովորել, ուսումնասիրել»), הִילֵךְ *հիլէխ* «գնալ-գալ, հետուառաջ անել» (הָלַךְ *հալախ*՝ «գնալ») և այլն:

10.2. פִּעֵל կառույցի բայերը ենթակայական դերբայ են կազմում מְ *մէ* նախածանցի միջոցով, հետևյալ կաղապարներով (դասական ուղղագրության մեջ երկրորդ արմատականը, եթե կոկորդային կամ ר չէ, բոլոր բայաձևերում ստանում է ուժեղ դագեշ).

	եզակի	*հոգնակի*
արական	מְפֹעָל	מְפֹעָלִים
իգական	מְפֹעֶלֶת	מְפֹעָלוֹת

Այսպիսով, דִּבֵּר *դիբէր* «խոսել» բայը կազմում է ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

מְדַבֵּר – מְדַבֶּרֶת – מְדַבְּרִים – מְדַבְּרוֹת
մէդաբէր – մէդաբէրէթ – մէդաբրիմ – մէդաբրոթ

דָּן אוֹמֵר שֶׁהוּא מְדַבֵּר עִבְרִית טוֹב *դան օմէր շէհու մեդաբեր իվրիթ տօվ* «Դանն ասում է, որ եբրայերեն լավ է խոսում»:

① *Կազմեք* סִפֵּר սիպէր *«պատմել» և* לִמֵּד լիմէդ *«դասավանդել» բայերի ենթակայական դերբայները:*

10.3. מִיהֵר *միհեր* «շտապել» բայի 2-րդ արմատականը կոկորդային է, ուստի ենթակայական դերբայի հոգնակիի ձևերում շվան փոխարինվում է խատաֆ-պաթախով.

מְמַהֵר – מְמַהֶרֶת – מְמַהֲרִים – מְמַהֲרוֹת
մէմահէր – մէմահէրէթ – մէմահարիմ – մէմահարոթ

10.4. פִּעֵל կառույցի բայերն անորոշ դերբայ են կազմում մեկ ընդհանուր פִּעֵל կաղապարով՝ לְדַבֵּר *լէդաբէր*, לְלַמֵּד *լէլամէդ*, לְסַפֵּר *լէսապէր*, לְמַהֵר *լէմահէր*:

ԲԱՅԱԿԵՐՏ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

10.5. Եբրայերենի կարևոր ձևաբանական երևույթներից է բայակերտ գոյականը, որը եբրայերենի քերականության մեջ կոչվում է «գործողության անուն»: Յուրաքանչյուր կառույց (բացի կրավորական սեռ արտահայտողներից) ունի բայակերտ գոյականի կազմության իր կաղապարը:

10.6. פָּעַל կառույցի բայերը հիմնականում գոյական են կազմում פְּעֻלָּה կաղապարով՝ קְרִיאָה *կրի՛ա* «ընթերցում», כְּתִיבָה *քթիվա* «գրություն», יְדִיעָה *յէդի՛ա* «գիտելիք», יְשִׁיבָה *յէշիվա* «նիստ» և այլն: פָּעַל կառույցի բազմաթիվ բայեր գոյական են կազմում նաև այլ կաղապարներով:

10.7. Ի տարբերություն פָּעַל կառույցի, פִּעֵל կառույցի գրեթե բոլոր բայերը գոյական են կազմում մեկ՝ סִיפּוּר կաղապարով՝ דִּיבּוּר *դիբուր* «խոսք», לִימּוּד *լիմուդ* «ուսուցանում», סִיפּוּר *սիպուր* «պատմություն, պատմվածք» և այլն:

10.8. ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1	אֶחָד	*էխադ*	6	שִׁשָּׁה	*շիշա*
2	שְׁנַיִם	*շնայիմ*	7	שִׁבְעָה	*շիվ'ա*
3	שְׁלוֹשָׁה	*շլօշա*	8	שְׁמוֹנָה	*շմօնա*
4	אַרְבָּעָה	*առբա'ա*	9	תִּשְׁעָה	*թիշ'ա*
5	חֲמִשָּׁה	*խամիշա*	10	עֲשָׂרָה	*ասառա*

שְׁלוֹשָׁה אֲחִים *շլօշա ախիմ* «3 եղբայր», אַרְבָּעָה אֲנָשִׁים *առբա'ա անաշիմ* «4 մարդ», חֲמִשָּׁה בָּתִּים *խամիշա բաթիմ* «5 տուն», שִׁשָּׁה יְהוּדִים *շիշա յէհուդիմ* «6 հրեա», שִׁבְעָה עִטִּים *շիվ'ա իտիմ* «7 գրիչ», שְׁמוֹנָה מְהַנְדְּסִים *շմօնա մէհանդէսիմ* «8 ճարտարագետ», תִּשְׁעָה רְחוֹבוֹת *թիշ'ա ռեխօվօթ* «9 փողոց», עֲשָׂרָה עֵירוֹת *ասառա կիռօթ* «10 պատ»:

② *Թարգմանեք.*

3 վարժություն, 4 աշակերտ, 5 դաս, 6 անուն, 7 սեղան, 8 փողոց, 9 բժիշկ, 10 բաժակ, 3 հայ, 4 հրեա, 5 թերթ, 6 հիվանդ, 7 ընկեր, 8 ամուսին, 9 շենք, 10 մարդ, 3 եղբայր, 4 գրասենյակ, 5 ուսանող, 6 գիրք, 7 մատիտ, 8 ուսուցիչ, 9 ճարտարագետ, 10 աթոռ, 3 բաժակ, 4 երեխա, 5 օր, 6 սենյակ:

ԿՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

10.9. ְ կապակցությունով սկսվող բառերին կցվելիս בְּ և לְ նախդիրներն ստանում են խիրիկ ձայնանիշ, իսկ յոդ տառի շվան սղվում է (בְּ + יְ = בִּי) יְרוּשָׁלַיִם ← בִּירוּשָׁלַיִם՝ *յէռուշալայիմ - բիռուշալայիմ* «Երուսաղեմում», יְלָדִים ← לִילָדִים՝ *յէլադիմ - լիլադիմ* «երեխաներին, երեխաների համար»:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.10. Երկու գոյականներից կազմված բառերում որոշիչ հոդը կցվում է երկրորդ բաղադրիչին՝ בֵּית־הַקָּפֶה *բէ(յ)թ-հակաֆէ* «սրճարանը», בֵּית־הַסֵּפֶר *բէ(յ)թ-հասէֆէռ* «դպրոցը», בֵּית־הַחוֹלִים *բէ(յ)թ-հախօլիմ* «հիվանդանոցը»:

③ 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

בְּבֵית־קָפֶה

דָּנִיאֵל וְשָׂרָה יוֹשְׁבִים בְּבֵית־קָפֶה. הֵם אוֹכְלִים, שׁוֹתִים[1] וּמְדַבְּרִים[2][3]. דָּנִיאֵל אוֹכֵל עֻגָּה גְּדוֹלָה וְשׁוֹתֶה קָפֶה שָׁחוֹר. שָׂרָה אוֹכֶלֶת עֻגָּה קְטַנָּה וְשׁוֹתָה מִיץ. דָּנִיאֵל מְסַפֵּר[2] לְשָׂרָה[1] סִפּוּר[2] מְצַחֵק וְהִיא צוֹחֶקֶת[3].

- אַתָּה לֹא רוֹצֶה חָלָב עִם הַקָּפֶה? - שׁוֹאֶלֶת שָׂרָה אֶת דָּנִיאֵל.

- לֹא, אֲנִי אוֹהֵב קָפֶה בְּלִי חָלָב - עוֹנֶה דָּנִיאֵל לְשָׂרָה[1].

בְּרֶגַע זֶה אִישׁ וְאִשָּׁה בָּאִים[5] לְבֵית־הַקָּפֶה[4]. שָׂרָה שׁוֹאֶלֶת אֶת דָּנִיאֵל:

- אַתָּה יוֹדֵעַ[6] מִי הֵם?

- הֵם הַחֲבֵרִים שֶׁלִּי - עוֹנֶה דָּנִיאֵל.

הָאִישׁ וְהָאִשָּׁה בָּאִים[7] אֵל שֻׁלְחָנָם[8] שֶׁל דָּנִיאֵל וְשָׂרָה[11]. הָאִישׁ אוֹמֵר:

- שָׁלוֹם, דָּנִיאֵל, שָׁלוֹם, גְּבֶרֶת!

- שָׁלוֹם, אַהֲרוֹן. בְּבַקָּשָׁה לְהַכִּיר[12]: זֹאת גְּבֶרֶת שָׂרָה גִּידוֹר.

- עֶרֶב טוֹב - אוֹמֶרֶת שָׂרָה - נָעִים מְאֹד. שְׁמִי שָׂרָה.

- זֶה דּוֹקְטוֹר אַהֲרוֹן בֶּן־אַלְעָזָר - אוֹמֵר דָּנִיאֵל לְשָׂרָה[1].

- מַה שְּׁלוֹמֵךְ, דָּנִיאֵל? - שׁוֹאֵל אַהֲרוֹן.

- טוֹב, תּוֹדָה, וּמַה שְּׁלוֹמֵךְ?

- אֲנִי בְּסֶדֶר - אוֹמֵר אַהֲרוֹן - בְּבַקָּשָׁה לְהַכִּיר[12]: זֹאת הָאִשָּׁה שֶׁלִּי, לֵאָה. הִיא מוֹרָה, הִיא מְלַמֶּדֶת[2] עִבְרִית.

- נָעִים מְאֹד - אוֹמְרִים דָּנִיאֵל וְשָׂרָה.

- אַתֶּם גָּרִים כָּאן, בְּתֵל־אָבִיב? - שׁוֹאֶלֶת שָׂרָה.

- לֹא, אֲנַחְנוּ גָּרִים בִּירוּשָׁלַיִם[13]. לֵאָה וַאֲנִי מִירוּשָׁלַיִם. אֲנַחְנוּ כָּאן, בְּתֵל־אָבִיב, לִשְׁנָה אַחַת. אֲנִי עוֹבֵד בְּבֵית־הַחוֹלִים[9] דָּנָה לִילָדִים[13], וְלֵאָה מְלַמֶּדֶת[2] בְּבֵית־הַסֵּפֶר[9] שֶׁעַל־יַד[14] בֵּית־הַחוֹלִים[9].

- בְּבַקָּשָׁה לִשְׁבֶת[15]. מַה אַתֶּם רוֹצִים לִשְׁתּוֹת?

- לֹא, תּוֹדָה רַבָּה, אֲנַחְנוּ מְמַהֲרִים[16] מְאֹד. בְּפַעַם אַחֶרֶת. שָׁלוֹם!

- שָׁלוֹם וּלְהִתְרָאוֹת[10]! - אוֹמְרִים דָּנִיאֵל וְשָׂרָה.

[1] 9.3. [2] 10.2. [3] 2.16.ա.բ. [4] 5.1. [5] 10.7. [6] 9.1. [7] 8.4. [8] 6.21.
[9] 10.10. [10] 8.3. [11] 4.3. [12] 9.6. [13] 10.9. [14] 8.9. [15] 10.3. [16] 2.16.ա.

ծանոթանալ, ճանաչել *լէհաքիռ* לְהַכִּיר פ

դասավանդել, սովորեցնել *լիմէդ (լէլամէդ, մէլամէդ)* לִימֵּד פ (לְלַמֵּד, מְלַמֵּד)

շտապել *միհէռ (լէմահէռ, մէմահէռ)* מִיהֵר פ (לְמַהֵר, מְמַהֵר)

հյութ *մից* מִיץ ז

ծիծաղելի *մացխիկ* מַצְחִיק ת

պատմել *սիպէռ (լէսապէռ, մէսապէռ)* סִיפֵּר פ (לְסַפֵּר, מְסַפֵּר)

պատմվածք, պատմություն *սիպուռ* סִיפּוּר ז

անգամ *պա՛ամ (պէ՛ամիմ)* פַּעַם נ (ר פְּעָמִים)

սուրճ *կաֆէ* קָפֶה ז

պահ *ռէգա* רֶגַע ז

սև *շախոռ* שָׁחוֹר ת

տարի *շանա (շանիմ)* שָׁנָה נ (ר שָׁנִים)

«Դանա» մանկական հիվանդանոց *բէ(յ)թ-խոլիմ դա՛նա լիլադիմ* בֵּית־חוֹלִים דָּנָה לִילָדִים

ուրիշ անգամ *բէֆա՛ամ ախէռէթ* בְּפַעַם אַחֶרֶת

այդ պահին *բէռէգա զէ* בְּרֶגַע זֶה

շատ (մի քանի) անգամ *հառբէ (քամա) պէ՛ամիմ* הַרְבֵּה (כַּמָּה) פְּעָמִים

շատ տարիներ *հառբէ շանիմ* הַרְבֵּה שָׁנִים

քանի՞ անգամ *քամա պէ՛ամիմ* כַּמָּה פְּעָמִים?

մեկ տարով *լէշանա ախաթ* לְשָׁנָה אַחַת

բարի երեկո *էռէվ տով* עֶרֶב טוֹב

մեկ անգամ *պա՛ամ ախաթ* פַּעַם אַחַת

մի րոպե՛, մի րոպե՛ *ռէգա, ռէգա* רֶגַע, רֶגַע

④ *Թարգմանեք.*

1. Լիան անգլերեն է դասավանդում Երուսաղեմում՝ Եբրայական համալսարանում (הָאוּנִיבֶרְסִיטָה הָעִבְרִית): 2. Նրանք ինձ ամբողջ ժամանակ ասում են, որ ես պետք է խոսեմ Հակոբի հետ մեր աշխատանքի մասին: 3. Մենք շատ ժամանակ ունենք, մենք չպետք է շտապենք: 4. Այս սենյակում նստած են 10 աշակերտներ և 4 աշակերտուհիներ: 5. Ո՞վ է այս աղջիկը, որ նստած է պատուհանի մոտ և գիրք է կարդում: 6. Հռութը հինգ մեծ տիկնիկ ունի, բայց նա ասում է, որ իրեն ևս մեկ տիկնիկ է հարկավոր: 7. Այս կանայք աշխատում են նոր հիվանդանոցում, նրանք բուժքույրեր են: 8. Դու եբրայերեն խոսո՞ւմ ես: - Այո, ես խոսում եմ եբրայերեն, որովհետև երկար (շատ) տարիներ Թել-Ավիվում եմ ապրում: Թել-Ավիվում բոլորը (բոլոր մարդիկ) եբրայերեն են խոսում: 9. Ես գիտեմ, որ տիկին Լիան եբրայերեն է դասավանդում երեխաներին, որոնք եբրայերեն չգիտեն: 10. Ես տուն եմ շտապում, որովհետև պետք է երեք նոր պատմվածք կարդամ: 11. Ես ծիծաղում եմ, որովհետև ծիծաղելի պատմություն եմ կարդում եբրայերեն(ով): 12. Ուզո՞ւմ ես ծանոթանալ Իսրայելից մեր նոր ընկերների հետ: - Այո՛, հիմա, գուցե մի ուրիշ անգամ: 13. Ես Երուսաղեմ եմ շտապում, որովհետև իմ տատիկը, որն այնտեղ է ապրում, հիվանդ է: 14. Նախաճաշի հետ ես խմում եմ հյութ կամ սև սուրճ առանց կաթի: 15. Երբ ամուսինս երեկոյան տուն է վերադառնում, նա ինձ պատմում է հիվանդանոցում իր աշխատանքի մասին: 16. Մայրիկդ բարկանում է, որովհետև դու քո սենյակը կարգի չես բերում: 17. Ես չգիտեմ այս վարժության առաջին բառը, ես պետք է հարցնեմ ուսուցչուհուս: 18. Օրվա մեջ քանի՞ անգամ ես սուրճ խմում: - Ես օրվա մեջ սուրճ եմ խմում միայն մեկ անգամ: - Իսկ ես մի քանի անգամ եմ սուրճ խմում: Երբ աշխատում եմ, պետք է շատ սուրճ խմեմ: 19. Ամեն առավոտ ես տեսնում եմ Հովսեփին, երբ տնից փողոց (לְרְחוֹב) եմ դուրս գալիս: 20. Մաքուր սենյակում հաճելի է նստել:

מִלִּים חֲדָשׁוֹת

Ահարոն *ահառոն* אַהֲרוֹן ז

հիվանդանոց *բէ(յ)թ-խոլիմ* בֵּית־חוֹלִים ז

սրճարան *բէ(յ)թ-կաֆէ* בֵּית־קָפֶה ז

առանց *բլի* בְּלִי מ״י

տիկին *գվէռէթ (գվառոթ)* גְּבֶרֶת נ (ר גְּבָרוֹת)

խոսել *դիբէռ (լէդաբէռ, մէդաբէռ)* דִּיבֵּר פ (לְדַבֵּר, מְדַבֵּר)

կաթ *խալավ* חָלָב ז

Լիա *լէա* לֵאָה נ

11 אַחַת־עֶשְׂרֵה

Հաջորդ 10 դասերում կիրառվում են ձայնավորման հետևյալ սկզբունքները.
ա) չեն նշվում՝
- համր շվան *(բառասկզբում նշվում է, երբ ազդում է հաջորդ ձայնանիշի վրա)*
- ուժեղ դագեշը
- տառերի թեթև դագեշը
բ) խոլամ *և* կուբուց *ձայնանիշները հիմնականում փոխարինվում են* וֹ *և* וּ *տառերով.*
գ) խիրիկ *ձայնանիշին կարող է հետևել* י *տառը* (יִ):

11.1. ԵՐԿՈՒ ՍԵՌԵՐԻ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿ

արական	*իգական*		*արական*	*իգական*	
שִׁשָּׁה	שֵׁשׁ	6	אֶחָד	אַחַת	1
שִׁבְעָה	שֶׁבַע	7	שְׁנַיִם	שְׁתַּיִם	2
שְׁמוֹנָה	שְׁמוֹנֶה	8	שְׁלוֹשָׁה	שָׁלוֹשׁ	3
תִּשְׁעָה	תֵּשַׁע	9	אַרְבָּעָה	אַרְבַּע	4
עֲשָׂרָה	עֶשֶׂר	10	חֲמִשָּׁה	חָמֵשׁ	5

3-ից 10-ը թվականները, որոնք աղյուսակում ներկայացված են որպես արական սեռի, ձևաբանության առումով իգական սեռի են, ինչը հուշում է ה վերջավորությունը, իսկ որպես իգական սեռի ներկայացվածներն արական սեռին են: Սա արտահայտում է սեմական լեզուներին բնորոշ՝ թվականների և գոյականների հակառակ սեռով համաձայնեցումը, այսինքն՝ արական սեռի գոյականների հետ գործածվում են իգական սեռի թվականները և հակառակը:

«ԵՐԿՈՒ» ԹՎԱԿԱՆԸ

11.2.1. Հաշվելի գոյականից առաջ שְׁנַיִם/שְׁתַּיִם թվականը ստանում է שְׁנֵי/שְׁתֵּי *շնէյ / շթէյ* ձևերը՝ שְׁנֵי סְפָרִים *շնէյ սֆառիմ* «երկու գիրք», שְׁתֵּי מַחְבְּרוֹת *շթէյ մախբառոթ* «երկու տետր»:

11.2.2. Գոյականը նման կապակցությունում կարող է հոդ ստանալ և հայերեն թարգմանվել համապատասխանաբար՝ שְׁנֵי הַבָּנִים *շնէյ հաբանիմ* «երկու որդիներ», שְׁתֵּי הַבָּנוֹת *շթէյ հաբանոթ* «երկու դուստրերը»:

11.2.3. שְׁנַיִם/שְׁתַּיִם ամբողջական ձևերը գործածվում են, երբ թվականին գոյական չի հաջորդում՝ כַּמָּה סְפָרִים יֵשׁ לְךָ? - שְׁנַיִם *քամա սֆառիմ յէշ լէխա – շնայիմ* «Քանի՞ գիրք ունես: - Երկու», כַּמָּה מַחְבְּרוֹת יֵשׁ לְשָׂרָה? - שְׁתַּיִם *քամա մախբառոթ յէշ լէսարա – շթայիմ* «Քանի՞ տետր ունի Սառան: - Երկու»:

Ⓘ *Կցեք «երկու» թվականը հետևյալ բառերին.*
Որդի, դուստր, հարց, բժիշկ, կին, գիրք, տուն, ուսուցչուհի, ընտանիք, սեղան, աթոռ, բառ, պատ, պատուհան, բաժակ:

ՏԱՐԻՔԻ ՆՇՈՒՄԸ

11.3. Տարիքը նշվում է בֶּן *բէն* (կապակցության մեջ՝ בֶּן) «որդի» և בַּת *բաթ* «դուստր» բառերի և իգական սեռի թվականի համադրումով՝ בֶּן כַּמָּה אַתָּה, יְהוּדָה? *բէն քամա ատա, յէհուդա* «Քանի՞ տարեկան ես, Եհուդա», אֲנִי בֶּן עֶשֶׂר *անի բէն էսէր* «10 տարեկան եմ», בַּת כַּמָּה שָׂרָה? *բաթ քամա սարա* «Քանի՞ տարեկան է Սառան», הִיא בַּת שֵׁשׁ *հի բաթ խամէշ* «Նա հինգ տարեկան է»:

בְּ ԵՎ לְ ԿՑԱԿԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

11.4. Միանալով խատաֆային ձայնանիշով սկսվող բառին՝ בְּ և לְ նախդիրները ստանում են նրա հիմնական (ոչ շվա) ձայնանիշը՝ בְּאֶמֶת - בַּעֲבוֹדָה, אֱמֶת - עֲבוֹדָה («կլանված» հոդով ձևը՝ בָּעֲבוֹדָה), אֲנָשִׁים - לַאֲנָשִׁים («կլանված» հոդով՝ לָאֲנָשִׁים):

Ⓘ 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

הַמִּשְׁפָּחָה שֶׁל אַהֲרוֹן בֶּן־אֱלִיעֶזֶר

אַהֲרוֹן בֶּן־אֱלִיעֶזֶר הוּא רוֹפֵא מִירוּשָׁלַיִם, אֲבָל עִכְשָׁיו הוּא גָּר וְעוֹבֵד בְּתֵל־אָבִיב. יֵשׁ לוֹ אִשָּׁה, לֵאָה. הִיא מְלַמֶּדֶת עִבְרִית בְּבֵית־סֵפֶר. יֵשׁ לָהֶם שְׁלוֹשָׁה יְלָדִים - שְׁתֵּי בָּנוֹת וּבֵן אֶחָד. הַיְלָדִים שֶׁלָּהֶם קְטַנִּים.

מִלִּים חֲדָשׁוֹת

אַחַת־עֶשְׂרֵה ש״מ נ *ախաթ-էսրէ* տասնմեկ
אֱמֶת נ *էմէթ* ճշմարտություն
אֶסְתֵּר נ *էսթէր* Էսթեր
בֵּן ז (ר בָּנִים) *բէն (բանիմ)* որդի
בַּת נ (ר בָּנוֹת) *բաթ (բանոթ)* դուստր
גַּן־יְלָדִים ז *գան-յէլադիմ* մանկապարտեզ
דְּבוֹרָה נ *դվորա* Դեբորա
חֶשְׁבּוֹן ז *խէշբօն* հաշիվ, թվաբանություն
יְהוּדָה ז *յէհուդա* Եհուդա
מְעַט ת״פ *մէ՛ատ* մի քիչ
רָקַד פ (לִרְקוֹד, רוֹקֵד) *ռակադ (լիռկօդ, ռօկէդ)* պարել
שְׁאֵלָה נ *շէ՛էլա* հարց
שִׂיחַק פ (לְשַׂחֵק, מְשַׂחֵק) *սիխէկ (լէսախէկ, մէսախէկ)* խաղալ

כְּאֶמֶת *քէ՛էմէթ* իրոք, իսկապես
וְעוֹד *վէ՛օդ* զումարած

אֶסְתֵּר הִיא[1] בַּת חָמֵשׁ[2]. הִיא הוֹלֶכֶת לְגַן־יְלָדִים. דְּבוֹרָה הִיא[3] בַּת שֵׁבַע[4]. הִיא לוֹמֶדֶת בְּבֵית־סֵפֶר. יְהוּדָה הוּא[5] בֵּן עֶשֶׂר[6], גַּם הוּא לוֹמֵד בְּבֵית־סֵפֶר. יְהוּדָה וּדְבוֹרָה[7] הוֹלְכִים כָּל בּוֹקֶר[8] לְבֵית־סֵפֶר. הֵם מְדַבְּרִים[9] עִבְרִית וּמְעַט[10] אַנְגְלִית. עַכְשָׁיו הַהוֹרִים וְהַיְלָדִים יוֹשְׁבִים עַל־יַד הַשֻּׁלְחָן וְאוֹכְלִים אֲרוּחַת־בּוֹקֶר.

- יֵשׁ לָכֶם מוֹרֶה לְאַנְגְלִית[11] חֲדָשָׁה? - שׁוֹאֶלֶת אִמָּא אֶת יְהוּדָה.
- כֵּן, יֵשׁ לָנוּ מוֹרֶה חֲדָשָׁה וְהִיא מְלַמֶּדֶת[12] טוֹב[13] מְאוֹד - עוֹנֶה יְהוּדָה. - הִיא יְהוּדִיָּה מֵאַנְגְלִיָּה. גַּם הַבַּעַל שֶׁלָּהּ מוֹרֶה לְאַנְגְלִית, אֲבָל הוּא לֹא מֵאַנְגְלִיָּה, הוּא מֵאֲמֶרִיקָה. הוּא מְלַמֵּד בְּבֵית־סֵפֶר אַחֵר.
- גַּם הַמּוֹרֶה לְעִבְרִית שֶׁלָּנוּ טוֹבָה מְאוֹד - אוֹמֶרֶת דְּבוֹרָה.
- אֶסְתֵּר, מַה אַתֶּם עוֹשִׂים בְּגַן־יְלָדִים שֶׁלָּכֶם כָּל הַיּוֹם[14]? - שׁוֹאֵל אַבָּא אֶת אֶסְתֵּר.
- אֲנַחְנוּ שָׁרִים, רוֹקְדִים וּמְשַׂחֲקִים[15]. אֲנַחְנוּ גַּם לוֹמְדִים מְעַט חֶשְׁבּוֹן.
- כְּאֱמֶת[16]? אֶת יוֹדַעַת חֶשְׁבּוֹן? אַחַת וְעוֹד אַחַת[17] כַּמָּה זֶה? - שׁוֹאֵל אַבָּא.
- אֵין לִי שְׁאֵלוֹת יוֹתֵר קָשׁוֹת[18]?! - כּוֹעֶסֶת אֶסְתֵּר - זֶה קַל מְאוֹד: שָׁלוֹשׁ[19]!
- כֵּן, עַכְשָׁיו אֲנִי רוֹאֶה שֶׁאַתְּ[17] כְּאֱמֶת יוֹדַעַת חֶשְׁבּוֹן! - צוֹחֵק אַבָּא.

[1] 3.17. [2] 10.2. [3] 10.8. [4] 11.2.1. [5] 2.16.բ. [6] 11.3. [7] 2.16.ա. [8] 3.14.ա.
[9] 2.16.ա.,բ. [10] 7.7. [11] 6.24. [12] 3.14.բ. [13] 10.3. [14] 11.4. [15] 6.26. [16] 5.12.1. [17] 8.9.

③ *Թարգմանեք.*

1. Մանկապարտեզում Էսթերը խաղում է առավոտից մինչև երեկո: 2. Այս ուսուցիչը թվաբանություն է դասավանդում: 3. Առավոտյան մենք նախաճաշում ենք և շտապում համալսարան: 4. Քանի՞ տարեկան է Դավիթը: - Նա 4 տարեկան է: 5. Շոշանան չի սիրում սովորել, նա սիրում է միայն երգել ու պարել: 6. Աբրահամը վերադառնում է աշխատանքից, ճաշում է և խաղում իր երկու որդիների հետ: 7. Ամբողջ երեկո Հռութը խոսում է հեռախոսով իր ընկերուհիների հետ: 8. Ես պետք է սովորեմ այս դասի նոր բառերը: 9. Ո՞ւմն է այս սպիտակ գիրքը: - Իմն է: 10. Այս տղան չի խոսում, նա դեռ շատ փոքր է: 11. Այստեղ երկու հարց կա. այս երկու հարցերը շատ դժվար են: 12. Մովսեսն ունի երկու որդի և երկու դուստր. նրա երկու որդիներն ու երկու դուստրերը սովորում են դպրոցում: 13. Այս մարդը շատ տարիներ ապրում է Իսրայելում, սակայն եբրայերեն չի խոսում: - Ոչ, նա խոսում է մի քիչ եբրայերեն: 14. Մեր մեծ ընտանիքում երեք ուսուցչուհի և երեք բժիշկ կա: 15. Քո տատիկը բարկանում է, որովհետև դու չես սիրում նախաճաշի հետ կաթ խմել: 16 Ես պետք է խոսեմ տիկին Ֆելդմանի հետ այս հոյակապ գաղափարի մասին, սակայն ոչ հիմա, մեկ ուրիշ անգամ: Գաղափարն, իրոք, հոյակապ է: 17. Դու, իրոք, պետք է կարգի բերես քո սենյակը: 18. Դու անընդհատ (ամբողջ ժամանակ) սև սուրճ ես խմում, դա լավ չէ: 19. Իմ երկու ծնողները դասավանդում են մեր քաղաքի համալսարանում: 20. Այս պատմվածքում կա միայն հինգ նոր բառ:

12 שְׁתֵּים־עֶשְׂרֵה

ԿԱՊԱԿՑՎԱԾ ՎԻՃԱԿ
(*սմիխութ* סמיכות)

12.1. Պատկանելության հարաբերությունները եբրայերենում (այդ թվում՝ լայն և վերացական իմաստով) կարող են արտահայտվել երկու գոյականների կամ գոյականի ու հատուկ անվան անմիջական՝ առանց שֶׁ մասնիկի համադրությամբ: Օրինակ՝ סֵפֶר תַּלְמִיד *սէֆէր թալմիդ* «աշակերտի գիրք», קוֹל יִשְׂרָאֵל *կol յիսրա'էլ* «Իսրայելի ձայնը»: Այդպիսի կապակցությունները կոչվում են «կապակցված վիճակ» (סמיכות *սմիխութ*, եվրոպական սեմագիտության մեջ՝ status constructus): Կապակցության առաջին անդամը կոչվում է נִסְמָך *նիսմախ* «հենվող», երկրորդը՝ סוֹמֵךְ *սoմէխ* «հենարան»:

12.2. Հնչյունաբանական առումով կապակցված վիճակի անդամները մեկ բառ են կազմում, որի շեշտը երկրորդ բառի շեշտն է: Շեշտի կորուստը կամ թուլացումը կարող է նիսմախի մեջ որոշ հնչյունական փոփոխություններ առաջացնել (ձայնավորների փոփոխություն կամ աղում, նոր տառերի ավելացում): Այսպես, בַּיִת *բայիթ* բառը նիսմախում ունի בֵּית *բէյթ* (կամ *բէթ*) ձևը՝ בֵּית דָּוִד *բէ(յ)թ դավիդ* «Դավթի տունը»: Նիսմախի հնչյունափոխված վիճակը (בֵּית) հակադրվում է բառի սովորական՝ «բառարանային» ձևին (בַּיִת), որը կոչվում է «բացարձակ վիճակ» (status absolutus): Նախորդ պարբերության סֵפֶר և סוֹפֵר բառերը որևէ հնչյունափոխության չեն ենթարկվում, և նրանց նիսմախային ձևերը համընկնում են բացարձակ վիճակի հետ:

12.3. Գոյություն ունեն նիսմախային ձևերի կազմության մի քանի օրինաչափություններ: Այսպես, վերջին կամ միակ վանկի կամաց և ցեռե ձայնանիշները սովորաբար փոխարինվում են պաթախ և սեգոլ ձայնանիշներով (այսինքն՝ հին եբրայերենում երկար ձայնավորը փոխարինվում էր կարճով), ինչը չի ազդում արտասանության վրա՝ גָּדוֹל - גְּדֹל, גָּדוֹל - גְּדֹל, בֵּן - בְּנֵי և այլն: Այդպիսով, տարիքին վերաբերող կապակցություններում (11.3.) հանդես է գալիս בֵּן բառի սեգոլով նիսմախային בֶּן ձևը՝ בֶּן כְּמָה, בֶּן חֲמֵשׁ:

12.4.1. Իգական սեռի գոյականների סה վերջավորությունը փոխարինվում է סת *-աթ* վերջավորությամբ՝ דִּירַת יִצְחָק *դիրաթ յիցխակ* «Իսահակի բնակարանը», מִשְׁפַּחַת גִּלְעָד *միշպախաթ գիլէ'ադ* «Գիլէադ(ների) ընտանիքը»:
12.4.2. Որոշ բառերում տեղի է ունենում նաև ներքին հնչյունափոխություն՝ אֵשֶׁת אוּרִיָּה *էշէթ ուրիյա* «Ուրիի կինը» (אִשָּׁה *իշա* բառից), שְׁעַת עֲבוֹדָה *շէ'աթ ավօդա* «աշխատանքի ժամ» (שָׁעָה *շա'ա* բառից), שְׁנַת לִימוּדִים *շնաթ լիմուդիմ* «ուսումնական տարի» (שָׁנָה *շանա* բառից):

12.5. Հոգնակի թվի ות־ վերջավորությունը չի փոփոխվում՝ דִּירוֹת אַבְרָהָם *դիրօթ ավրահամ* «Աբրահամի բնակարանները», בּוּבוֹת דִּינָה *բուբօթ դինա* «Դինայի տիկնիկները»:

12.6. Սմիխութով կազմվում են կայուն կապակցություններ, որոնք չեն կարող փոխարինվել שֶׁ մասնիկով կազմված կապակցություններով: Նշելով մեկ կոնկրետ առարկա կամ երևույթ՝ դրանք սովորաբար միացվում են մակեֆ նշանով կամ պարզ գծիկով՝ בֵּית־סֵפֶר *բէ(յ)թ-սէֆէր* «դպրոց» (բառացիորեն՝ «գրքի տուն»), גַּן־יְלָדִים *գան-յէլադիմ* «մանկապարտեզ» («երեխաների պարտեզ»), אֲרוּחַת־צָהֳרַיִם *արուխաթ-ցohoռայիմ* «ճաշ» («կեսօրի ուտելիք») և այլն:

12.7. Պետք է նկատի ունենալ, որ նիսմախը հոդ չի ստանում, մինչ սոմեխը կարող է հոդակիր լինել, և այդ դեպքում ողջ կապակցությունը ստանում է որոշյալ առում՝ סֵפֶר תַּלְמִיד «աշակերտի գիրք» (անորոշ առում) - סֵפֶר הַתַּלְמִיד «աշակերտի գիրքը» (որոշյալ առում), בֵּית־סֵפֶר «դպրոց» - בֵּית־הַסֵּפֶר «դպրոցը» (10.10.): Որոշյալ են նաև կապակցությունները, որոնց սոմեխը հատուկ անուն է՝ סֵפֶר אֶפְרַיִם *սէֆէր էֆռայիմ* «Եփրեմի գիրքը», קוֹל יִשְׂרָאֵל *կol յիսրա'էլ* «Իսրայելի ձայնը»:

12.8. Սմիխութի մեջ կարող են կապակցվել երկուսից ավելի բառեր՝ կազմելով «սմիխութային շղթա»՝ חֹדֶר דִּירַת הָרוֹפֵא «բժշկի բնակարանի սենյակը» (חֹדֶר *խօդեր* բառի հնչյունափոխված նիսմախն է): Նման շղթաների մեջ որոշյալ հոդ կարող է ստանալ միայն ամենավերջին բառը: Բերված օրինակում דִּירַת

բառը חֶדֶר דִּירָה «բնակարանի սենյակ» կապակցության սոմեխն է, սակայն միաժամանակ דִּירַת הָרוֹפֵא կապակցության նիսմախն է, ուստի հոդ ստանալ չի կարող: Եթե այս կապակցությանն ավելանա בֵּית־חוֹלִים բառը («հիվանդանոցի բժշկի բնակարանի սենյակը»), ապա הָרוֹפֵא բառը կկորցնի իր հոդը, քանի որ կդառնա בֵּית־חוֹלִים רוֹפֵא «հիվանդանոցի բժիշկ» կապակցության նիսմախը, իսկ հոդը կանցնի շղթան եզրափակող בֵּית־חוֹלִים բառին՝ חֶדֶר דִּירַת בֵּית־הַחוֹלִים רוֹפֵא: Պետք է սակայն նկատի ունենալ, որ արդի եբրայերենը խուսափում է երեքից ավելի անդամ ունեցող սմիխութային շղթաներից՝ «մասնատելով» դրանք שֶׁל մասնիկի միջոցով, օրինակ այսպես՝ חֶדֶר הַדִּירָה שֶׁל רוֹפֵא בֵּית־הַחוֹלִים:

12.9. Եթե սմիխութային շղթայի անդամներից մեկն ունի ածականով արտահայտված որոշիչ, ապա հոդը կցվում է հետևյալ օրինաչափությամբ.

- եթե որոշիչը վերաբերում է առաջին անդամին (նիսմախին), ապա հոդը կցվում է միայն այդ որոշիչին՝ סֵפֶר תְּלִמִיד הַחָדָשׁ *սէֆէր թալմիդ հէխադաշ* «աշակերտի նոր գիրքը», מַחְבֶּרֶת תַּלְמִיד הַחֲדָשָׁה *մախբէռէթ թալմիդ հախադաշա* «աշակերտի նոր տետրը»:

- եթե որոշիչը վերաբերում է երկրորդ անդամին (սոմեխին), ապա հոդ ստանում են և՛ սոմեխը, և՛ որոշիչը՝ סֵפֶר הַתַּלְמִיד הַחָדָשׁ *սէֆէր հաթալմիդ հէխադաշ* «նոր աշակերտի գիրքը», מַחְבֶּרֶת הַתַּלְמִיד הַחֲדָשָׁה *մախբէռէթ հաթալմիդ հէխադաշա* «նոր աշակերտի տետրը»:

Ինչպես երևում է բերված օրինակներից, այն դեպքերում, երբ գոյականները սմիխութային շղթայում տարբեր սեռերի են, ըստ սեռի համաձայնեցումը թույլ է տալիս հեշտությամբ որոշել, թե որ գոյականին է վերաբերում որոշիչը:

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐՆ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

12.10. Դերանվանական վերջածանցի կցման դեպքում, իգական սեռի գոյականների ה֣ վերջավորությունը փոխարինվում է սմիխութային (סת) ת֣ վերջավորությամբ, որին և կցվում են վերջածանցները.

	արական	*իգական*
I	«բնակարանս» *դիռաթի* דִּירָתִי	
II	*դիռաթխա* דִּירָתְךָ «բնակարանդ»	*դիռաթէխ* דִּירָתֵךְ «բնակարանդ»
III	*դիռաթո* דִּירָתוֹ «նրա բնակարանը»	*դիռաթահ* דִּירָתָהּ «նրա բնակարանը»
I	«մեր բնակարանը» *դիռաթէնու* דִּירָתֵנוּ	
II	*դիռաթխէմ* דִּירַתְכֶם «ձեր բնակարանը»	*դիռաթխէն* דִּירַתְכֶן «ձեր բնակարանը»
III	*դիռաթամ* דִּירָתָם «նրանց բնակարանը»	*դիռաթան* דִּירָתָן «նրանց բնակարանը»

① *Դերանվանական վերջածանցներ կցեք* בּוּבָּה, מוֹרֶה, עוּגָה, יַלְדָּה, תַּלְמִידָה *բառերին:*

12.11. Մի խումբ բառերում դերանվանական վերջածանցի կցումն առաջացնում է հնչյունափոխություն, օրինակ՝ ձայնավորի սղում.

I	«ընտանիքս» *միշպախթի* מִשְׁפַּחְתִּי	
II	מִשְׁפַּחְתְּךָ *միշպախթէխա* «ընտանիքդ»	מִשְׁפַּחְתֵּךְ *միշպախթէխ* «ընտանիքդ»
III	מִשְׁפַּחְתּוֹ *միշպախթո* «նրա ընտանիքը»	מִשְׁפַּחְתָּהּ *միշպախթահ* «նրա ընտանիքը»
I	«մեր ընտանիքը» *միշպախթէնու* מִשְׁפַּחְתֵּנוּ	
II	מִשְׁפַּחְתְּכֶם *միշպախթէխէմ* «ձեր ընտանիքը»	מִשְׁפַּחְתְּכֶן *միշպախթէխէն* «ձեր ընտանիքը»
III	מִשְׁפַּחְתָּם *միշպախթամ* «նրանց ընտանիքը»	מִשְׁפַּחְתָּן *միշպախթան* «նրանց ընտանիքը»

② 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

דִּירָה בְּתֵל־אָבִיב וּבֵית' בְּעִיר קְטָנָה

לֵאָה: אַתָּה יוֹדֵעַ, מִשְׁפַּחַת גִּלְבּוֹעַ[1] - אֶפְרַיִם וְחַנָּה - מוֹכְרִים אֶת דִּירָתָם[2].

אַהֲרוֹן: בֶּאֱמֶת? לָמָּה הֵם רוֹצִים לִמְכּוֹר אֶת דִּירָתָם[3]?

- הֵם אוֹמְרִים שֶׁהֵם לֹא רוֹצִים לָגוּר בְּתֵל־אָבִיב. אוּלַי הֵם לֹא אוֹהֲבִים אֶת תֵּל־אָבִיב.
- מַה רַע בָּעִיר הַזֹּאת?
- אֶפְרַיִם רוֹצֶה שֶׁקֶט, וּפֹה[4], בְּרְחוֹבֵנוּ[5], תָּמִיד יֵשׁ רַעַשׁ.
- אֵיזֶה רַעַשׁ? אֵין פֹּה רַעַשׁ.
- יֵשׁ פֹּה רַעַשׁ מְכוֹנִיּוֹת[6] וְקוֹלוֹת אֲנָשִׁים[7], בְּיוֹם וּבַלַּיְלָה[8], וּמוּסִיקָה[9] כָּל הַיּוֹם. אַתָּה יוֹדֵעַ שֶׁהַרְבֵּה סְטוּדֶנְטִים גָּרִים בְּרְחוֹב שֶׁלָּנוּ. אוּלַי הֵם לֹא אוֹהֲבִים מוּסִיקָה.

לֵאָה יוֹצֵאת[10] מִן הַדִּירָה וּפוֹגֶשֶׁת[11] אֶת חַנָּה גִּלְבּוֹעַ.

- שָׁלוֹם, חַנָּה, מַה שְׁלוֹמֵךְ?
- בְּסֵדֶר, תּוֹדָה. סְלִיחָה, אֲנִי מְמַהֶרֶת. אֶת יוֹדַעַת, אֲנַחְנוּ מוֹכְרִים אֶת דִּירָתֵנוּ[12] וְעוֹבְרִים לְעִיר אַחֶרֶת.
- מִדּוּעַ אַתֶּם רוֹצִים לִמְכּוֹר אֶת דִּירָתְכֶם[13] וְלַעֲבוֹר לְעִיר אַחֶרֶת?
- כָּאן אֵין מָקוֹם, הַדִּירָה שֶׁלָּנוּ קְטַנָּה מְאוֹד.
- אֶת רוֹצָה לוֹמַר לִי שֶׁבְּתֵל־אָבִיב אֵין דִּירוֹת יוֹתֵר גְּדוֹלוֹת[14]? אֵיזוֹ דִּירָה אַתֶּם צְרִיכִים[15]?
- כֵּן, יֵשׁ דִּירוֹת יוֹתֵר גְּדוֹלוֹת, אֲבָל הַדִּירוֹת הַגְּדוֹלוֹת בְּתֵל־אָבִיב יְקָרוֹת[16] מְאוֹד. אֶת יוֹדַעַת, בֵּית בְּעִיר קְטַנָּה עוֹלֶה[17] כְּמוֹ דִּירָה קְטַנָּה בְּתֵל־אָבִיב.
- אֲבָל אֲנִי חוֹשֶׁבֶת שֶׁהָעִיר הַחֲדָשָׁה שֶׁלָּכֶם רְחוֹקָה מִתֵּל־אָבִיב.
- אוּלַי, אֲבָל אֶפְרַיִם רוֹצֶה בֵּית פְּרָטִי עִם גִּינָה יָפָה. הוּא עוֹבֵד כָּל הַיּוֹם, מִן הַבּוֹקֶר עַד הַלַּיְלָה, וְהוּא צָרִיךְ שֶׁקֶט[18].
- וְאֵיךְ בֵּיתְכֶם הֶחָדָשׁ?
- בֵּית לָבָן, מוֹדֶרְנִי עִם מִוּסָךְ גָּדוֹל לִשְׁתֵּי מְכוֹנִיּוֹת[19].
- כַּמָּה חֲדָרִים יֵשׁ בַּבַּיִת?
- יֵשׁ סָלוֹן גָּדוֹל, מִטְבָּח וּשְׁלוֹשָׁה חֲדָרִים: חֲדַר־שֵׁינָה[20], חֲדַר־עֲבוֹדָה[21] וַחֲדַר־יְלָדִים[22]. יֵשׁ גַּם חֲדַר־אַמְבַּטְיָה[23] גָּדוֹל וְגִינָה.
- וְאַתְּ מַסְכִּימָה לַעֲבוֹד בַּגִּינָה כָּל הַיּוֹם?
- אֲנִי? לַעֲבוֹד בַּגִּינָה? לֹא וְלֹא[24]! אֲנִי רוֹפְאָה וְאֲנִי[25] רוֹצָה לַעֲבוֹד רַק בְּבֵית־חוֹלִים.

[1] 2.16.բ. [2] 12.4.1. [3] 12.10. [4] 6.23.1. [5] 12.1. [6] 2.7. [7] 12.5. [8] 9.2. [9] 5.12.1. [10] 7.5. [11] 2.3.3. [12] 8.1. [13] 11.2.1. [14] 12.6. [15] 2.17. [16] 7.6.

③ *Թարգմանեք.*

1. Դու գիտե՞ս ինչ արժե այս բնակարանը: 2. Սողոմոնի բնակարանը շատ փոքր է, և նա ուզում է վաճառել այդ բնակարանը: 3. Դեբորան ամբողջ օրն աշխատում է խոհանոցում: 4. Հակոբի ենթասենյակում կա շատ մեծ պահարան: 5. Հոութն ու Եփրեմը խաղում են մանկական սենյակում: 6. Մայրս ճաշից հետո սիրում է կարդալ պարտեզում: 7. Դանիելն ուզում է ապրել փոքր քաղաքում, որովհետև նա աղմուկ չի սիրում: 8. Ինչո՞ւ եք ուզում վաճառել ձեր տունը և տեղափոխվել ուրիշ քաղաք: 9. Կանայք միշտ խոսում են այլ կանանց մասին: 10. Դավթի կինը շատ գեղեցիկ ձայն ունի: 11. Ամեն առավոտ ես հանդիպում եմ այս մարդուն մեր փողոցում, սակայն չգիտեմ նրա անունը և չգիտեմ՝ ո՞վ է նա: 12. Ես ուզում եմ տեղափոխվել այս բնակարանից, սակայն իմ ընտանիքը չի ուզում: Նրանք ասում են, որ մեզ նոր բնակարան հարկավոր չէ: 13. Մեր ուսուցչուհին ապրում է փոքր մասնավոր տան մեջ՝ դպրոցից ոչ հեռու: 14. Նրա նոր տիկնիկը քո տիկնիկից ավելի թանկ է: 15. Սառայի աշակերտուհին ամեն օր գալիս է եբրայերեն սովորելու: 16. Բոլոր մասնավոր տներն այս փողոցում ունեն փոքր այգիներ և ավտոտնակներ: 17. Ես տեսնում եմ, որ այստեղ տեղ չկա երեք մեքենայի համար, կա միայն երկու փոքր մեքենայի համար: 18. Ի՞նչ սուրճ ես ուզում՝ սև, թե՞ կաթով: 19. Ինչո՞ւ ես շտապում, այսօր շատ աշխատա՞նք ունես: 20. Նրա փոքր դուստրը մանկապարտե՞զ է գնում, թե՞ դպրոց:

מִלִּים חֲדָשׁוֹת

ինչպիսի՞, ի՞նչ *էյզէ / էյզօ* (էյզէ՝ ա՛ռ/էզ՝ մ՛ա՛գ)
ինչպե՞ս, ինչպիսի՞ *էյխ (էխ)* ת״פ
լոգարան *ամբա՛տյա* אַמְבַּטְיָה
Եփրեմ *էֆրա՛յիմ* אֶפְרַיִם
Ճաշ *առուխաբ-ցոհորա՛յիմ* אָרוּחַת־צָהֳרַיִם
պարտեզ *գինա* גִּינָה
լոգասենյակ *խադար-ամբա՛տյա* חֲדַר־אַמְבַּטְיָה
աշխատասենյակ *խադար-ավոդա* חֲדַר־עֲבוֹדָה
ննջասենյակ *խադար-շէկնա* חֲדַר־שֵׁינָה
թանկ, թանկագին *յակար (յէկարա)* יָקָר ת (נ׳ יְקָרָה)
ինչպես (համեմատելիս) *քմո* כְּמוֹ ת״פ
գիշեր *լա՛յլա (լէյլօթ)* לַיְלָה ז (ר׳ לֵילוֹת)
ինչո՞ւ *մադո՛ւա* מַדּוּעַ ת״פ

מוּסָך ז (ר מוּסָכִים) *մուսախ (մուսաքիմ)* ավտոտնակ

מִשְׁכָּן ז *միշքախ* խոհանոց

מָכַר פ (לִמְכּוֹר, מוֹכֵר) *մախառ (լիմքոռ, մօխէռ)* վաճառել

מָקוֹם ז (ר מְקוֹמוֹת) *մակօմ (մէկօմօթ)* տեղ, վայր

מוֹשֵׁר ז *սօֆէռ* գրող

מָלוֹן ז *մալօն* հյուրասենյակ, սրահ

עָבַר פ (לַעֲבוֹר, עוֹבֵר) *ավառ (լա՛ավոռ, օվէռ)* տեղափոխվել, անցնել

עָלָה פ (לַעֲלוֹת, עוֹלֶה) *ալա (լա՛ալօթ, օլէ)* բարձրանալ, արժենալ

פָּגַשׁ פ (לִפְגּוֹשׁ, פּוֹגֵשׁ) *պագաշ (լիֆգօշ, պօգէշ)* հանդիպել

פְּרָטִי ת *պռատի* մասնավոր, սեփական

קוֹל ז (ר קוֹלוֹת) *կօլ (կօլօթ)* ձայն

רֹאשׁ ז *ռա՛աշ* աղմուկ

שְׁקֶט ז *շէկէտ* լռություն

שְׁתַּיִם־עֶשְׂרֵה ש״מ נ *շթէմ-էռէ* տասներկու

תָּמִיד ת״פ *թամիդ* միշտ

יוֹם וּבְלֵילָה *բայօմ ուվալա՛յլա* օր ու գիշեր

כַּמָּה עוֹלֶה *քամա օլէ* ի՞նչ արժե

לֹא נָלוֹ *լօ վալօ* ոչ մի դեպքում

13 שְׁלוֹשׁ־עֶשְׂרֵה

ՔԱՌԱՏԱՌ ԲԱՅԵՐ

13.1. Քառատառ բայերը հիմնականում հարում են לְצַלְצֵל կառույցին (*ցիլցէլ պանգէ»*) և ենթակայական դերբայներ են կազմում հետևյալ կաղապարներով.

	եզակի	*հոգնակի*
արական	מְ֝סֹסֹסִים	מְ֝סֹסֹסֹת
իգական	מְ֝סֹסֹסֹת	מְ֝סֹסֹסוֹת

מְצַלְצֵל – מְצַלְצֶלֶת – מְצַלְצְלִים – מְצַלְצְלוֹת
մէցալցէլ – մէցալցէ՛լէթ – մէցալցէլիմ – մէցալցէլօթ

13.2. Անորոշ դերբայը կազմվում է סֹסֹסֹל կաղապարով՝ לְצַלְצֵל *լէցալցէլ*:

① *Կազմեք* תִּרְגֵּם թիոգէմ *«թարգմանել»*, לִפְלֹט տիլպէն *«զանգահարել»* և לִכְלֹךְ լիխլէխ *«կեղտոտել» բայերի ենթակայական և անորոշ դերբայները: Ուշադրություն դարձրեք, որ* לִפְלֹט *բայը կազմված է փոխառված* פְּלָפוֹן *բառից:*

ԼՈՒՆ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԸ

13.3. לוּן *յախօլ* պակասավոր բայը պատկանում է לְעֹל פָּעַל կառույցի (פָּעַל לְעֹל) *պա՛օլ* ենթակառույցին և համապատասխանում է հայերենի «կարող (եմ, ես, է...)» բառին: Ներկա ժամանակում այն ունի հետևյալ ձևերը՝ לוּן - יְכוֹלָה - יְכוֹלִים - יְכוֹלוֹת *յախօլ – յէխօլա – յէխօլիմ – յէխօլօթ:* לוּן բայն իրենից հետո պահանջում է անորոշ դերբայ, սակայն ինքն անորոշ դերբայ չունի՝ אֲנִי יָכוֹל לְדַבֵּר עִבְרִית *անի յախօլ*

13.6. פָּתַח *պաթախ* «բանալ» բայը պատկանում է 3-րդ կոկորդային արմատականներով բայերի խմբին և ունի ենթակայական դերբայի հետևյալ ձևերը.

פּוֹתֵחַ – פּוֹתַחַת – פּוֹתְחִים – פּוֹתְחוֹת
պօթէ՛խ – պօթա՛խաթ – պօթխիմ – պօթխօթ

13.7. ל կցական նախդիրը կարող է արտահայտել հայերենի «համար» բառի իմաստը՝ דִּירָה לְמְכִירָה *դիռա լիմխիռա* «բնակարան վաճառքի համար», אֵין פֹּה מָקוֹם לְמִקְרָר וּלְתַנּוּר *էն պօ մակօմ լիմկառէռ ուլէթանուռ* «այստեղ տեղ չկա սառնարանի և գազօջախի համար», יְלָדִים קְטַנִּים זֶה רֵעַשׁ *լիլադիմ կտանիմ զէ ռա՛աշ* «փոքր երեխաների համար սա աղմուկ է»:

Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.

דִּירָה לְמְכִירָה[1]

הִפְעֲמוֹן מְצַלְצֵל. אֲפִרִים הוֹלֵךְ לִפְתּוֹחַ אֶת הַדֶּלֶת.
- שָׁלוֹם, אֲדוֹנִי!
- שָׁלוֹם! שְׁמִי זְבוּלוּן לוִי.
- נָעִים מְאוֹד. אַתָּה רוֹצֶה לִקְנוֹת דִּירָה?
- כֵּן, אֲנִי מְחַפֵּשׂ דִּירָה בְּמֶרְכַּז הָעִיר.
- הִנֵּה, זֶה הַחֶדֶר הַגָּדוֹל, וְזֶה...
- רֶגַע, רֶגַע! אֲנִי יָכוֹל לְשֶׁבֶת?
- כֵּן, בְּבַקָּשָׁה לְשֶׁבֶת עַל הַכּוּרְסָה הַזֹּאת.
- אוּלַי אֲנִי יָכוֹל לִשְׁתּוֹת כּוֹס מַיִם?
- כֵּן, בְּבַקָּשָׁה.
- לָמָּה אֵין פֹּה שֻׁלְחָן?
- אֲנִי יָכוֹל לִפְתּוֹחַ חַלּוֹן. אַתָּה יָכוֹל לִרְאוֹת מֵהַחַלּוֹן עֵצִים וּפְרָחִים יָפִים וְדָשָׁא יָרוֹק.
- אֵין פֹּה מִרְפֶּסֶת?
- יֵשׁ מִרְפֶּסֶת מִטְּבָח.
- זֶה הַמִּטְבָּח? אֵין פֹּה הַרְבֵּה מָקוֹם! יֵשׁ לִי מִקְרָר גָּדוֹל וְתַנּוּר גָּדוֹל.

[1] Ուշադրություն դարձրեք, որ זֶה הַחֶדֶר הַגָּדוֹל՝ նախադասության մեջ որոշիչ հոդը գործածված է ճիշտ այնպես, ինչպես հայերենում՝ «սա մեծ սենյակն է» (համեմատեք זֶה חֶדֶר גָּדוֹל՝ «սա մեծ սենյակ է» տարբերակի հետ):

լէդաբէռ իվռիթ «ես կարող եմ եբրայերեն խոսել», דְּבוֹרָה לֹא יְכוֹלָה לְנַגֵּן גִּיטָרָה *դվօռա լօ յէխօլա լէնագէն գիտա՛ռա* «Դեբորան չի կարող կիթառ նվագել», אֲנַחְנוּ לֹא יְכוֹלִים לְתַרְגֵּם אֶת הַמִּלִּים הָאֵלֶּה *անա՛խնու լօ յէխօլիմ լէթառգէմ էթ համիլիմ հա՛էլէ* «մենք չենք կարող թարգմանել այս բառերը», הַיְלָדוֹת יְכוֹלוֹת לְשַׂחֵק עִם בּוּבּוֹת כָּל הַיּוֹם *հայալդօթ յէխօլօթ լէսախէկ իմ բուբօթ քօլ հայօմ* «աղջիկները կարող են ամբողջ օրը խաղալ տիկնիկների հետ»:

שְׁאֵלָה מַעֲבָרִית

13.4.1. אֶפְשָׁר *էֆշառ* մակբայը համապատասխանում է հայերենի «կարելի է, հնարավոր է» կապակցություններին և անորոշ դերբայի հետ կազմում է անդեմ կապակցություններ՝ אֶפְשָׁר לִרְאוֹת אֶת הַדִּירָה? *էֆշառ լիռո՛օթ էթ հադիռա* «Կարելի՞ է տեսնել բնակարանը», סְלִיחָה, אֶפְשָׁר לְדַבֵּר עִם גְּבֶרֶת לוִי? *սլիխա, էֆշառ լէդաբէռ իմ գվէռէթ լէվին* «Ներեցեք, կարելի՞ է խոսել տիկին Լևինի հետ»:

13.4.2. «Չի կարելի, հնարավոր չէ» ձևերը կազմվում են אִי ժխտական մասնիկով՝ אִי אֶפְשָׁר *ի էֆշառ* (կարող է նաև գրվել մակեֆով կամ պարզ գծիկով՝ אִי־אֶפְשָׁר): Օրինակ՝ חָבֵר אִי אֶפְשָׁר לִקְנוֹת *խավէռ ի էֆշառ լիկնօթ* «ընկեր հնարավոր չէ գնել», אִי־אֶפְשָׁר לַעֲלוֹת בְּכָל הַמַּדְרֵגוֹת הָאֵלֶּה *ի էֆշառ լա՛ալօթ բէխօլ համադռէգօթ հա՛էլէ* «հնարավոր չէ բարձրանալ այս բոլոր աստիճաններով»:

אֵצֶל שֵׁמוֹת עֲצָמִים

13.5.1. Մի խումբ բառեր ունեն միայն հոգնակի թիվ՝ מַיִם *մա՛յիմ* «ջուր»:

13.5.2. Այսպիսի բառերին վերաբերող ածականները, բայերն ու դերանունները դրվում են հոգնակի թվում՝ מֵאַיִן בָּאִים הַמַּיִם הַטְּעִימִים הָאֵלֶּה? *մէ՛այն բա՛իմ համայիմ հատէ՛իմիմ հա՛էլէ* «որտեղի՞ց է գալիս (հոսում) այս համեղ ջուրը»:

13.5.3. Միայն հոգնակի թիվ ունեցող գոյականների շարքին են պատկանում արամեական ծագում ունեցող որոշ բառեր, որոնք պահպանել են արամեերենի հոգնակի թվի יִן -*ին* վերջավորությունը՝ נִישׂוּאִין *նիսու՛ին* «ամուսնություն», גְּרוּשִׁין *գէռուշի՛ն* «ապահարզան»: Այս բառերը կարող են գործածվել նաև יִם վերջավորությամբ՝ נִישׂוּאִים, גְּרוּשִׁים[1]:

[1] Միայն հոգնակիով գործածվող բառերը բառարանում նշված են (זָכָר רַבּוּי) ז״ר հապավումով, եթե արական, և (נְקֵבָה רַבּוּי) נ״ר հապավումով, եթե իգական սեռի են:

יֵשׁ מָקוֹם מַסְפִּיק לְמַקְרֵר וּלְתַנּוּר.
אֶפְשָׁר לְטַלְפֵּן[12]?
סְלִיחָה, אֵין פֶּה טֶלֶפּוֹן.
מַה זֶה? אֵין שֶׁמֶשׁ, אֵין מַרְפֶּסֶת, אֵין טֶלֶפּוֹן, אֵין מַעֲלִית וְיֵשׁ הַרְבֵּה מַדְרֵגוֹת. אֲנִי אִישׁ זָקֵן, אֵין לִי כֹּחַ, וַאֲנִי[13] לֹא יָכוֹל לַעֲלוֹת[14] בְּמַדְרֵגוֹת!

* * *

אֶפְשָׁר לִרְאוֹת[15] אֶת הַדִּירָה?
בְּבַקָּשָׁה, גְּבֶרֶת.
כַּמָּה חֲדָרִים יֵשׁ כָּאן? שְׁנַיִם[16]?
כֵּן, שְׁנֵי חֲדָרִים[17]. כָּאן הַמִּקְלַחַת וְכָאן[18] בֵּית־הַשִּׁמּוּשׁ.
אֵין אַמְבַּטְיָה?
לֹא, יֵשׁ רַק מִקְלַחַת.
וְלָמָּה יֵשׁ פֹּה רַעַשׁ?
זֶה לֹא רַעַשׁ, זֹאת מוּסִיקָה קְלַאסִית.
לֹא, לִילָדִים[19] קְטַנִּים זֶה רַעַשׁ. וּמִי גָּר שָׁם?
מִשְׁפָּחַת בֶּנְיָמִין צוּר, אֲנָשִׁים נְחֻמָּדִים מְאֹד.
זֶה הוּא מְנַגֵּן?
כֵּן, הוּא מוֹרֶה לְמוּסִיקָה.
אֲנִי חוֹשֶׁבֶת שֶׁאֲנַחְנוּ צְרִיכִים לְחַפֵּשׂ דִּירָה אַחֶרֶת!

[1] 13.7. [2] 10.6. [3] 13.1. [4] 7.2.-7.3. [5] 10.2. [6] 12.3. [7] 12.7. [8] 13.3. [9] 9.6. [10] 2.16.
[11] 12.1. [12] 13.4.1. [13] 2.17. [14] 11.2.3. [15] 11.2.1. [16] 1.12.2. [17] 10.9. [18] 13.7.

③ *Թարգմանեք.*

1. Այս շենքում վերելակ չկա, մենք պետք է աստիճաններով բարձրանանք: 2. Ես բնակարան եմ փնտրում, սակայն Երուսաղեմում բոլոր բնակարանները շատ թանկ են: 3. Մենք ուզում ենք սառնարան ու վառարանը դնել խոհանոցում, սակայն այնտեղ տեղ չկա: 4. Ոչ բոլոր ծաղիկներն ու ծառերն են արև սիրում: 5. Հնարավոր չէ ամբողջ օրը նստել ցնցուղի տակ: 6. Երեխաները խաղում են պարտեզում՝ խոտի վրա: 7. Աբրահամն ու նրա կինը նստած են իրենց պատշգամբում բազկաթոռների վրա և սուրճ են խմում: 8. Զաքուդոնն ուզում է գնել այս տունը, սակայն նա ասում է, որ այս փողոցում շատ աղմուկ կա: 9. Ամեն գրող սիրում է նստել լռության մեջ և մտածել: 10. Դավիթն, իրոք, շատ հաճելի մարդ է: 11. Չի կարելի նրան ասել ողջ ճշմարտությունը: 12. Որտե՞ղ կարելի է տեսնել Մովսեսին: 13. Առավոտից ես փնտրում եմ իմ նոր հեռախոսը: 14. Ես չեմ կարող

աստիճաններով բարձրանալ, որովհետև ծեր եմ և ուժ չունեմ: 15. Ահարոնը զուգարանից դուրս չի գալիս, որովհետև նա այնտեղ թերթ է կարդում: 16. Երբ արև կա, ես բացում եմ բոլոր պատուհանները: 17. Առանց դասական երաժշտության ես չեմ կարող սովորել իմ դասերը: 18. Քաղաքի կենտրոնում կարելի է տեսնել բազմաթիվ գեղեցիկ շենքեր: 19. Որտե՞ղ կարելի է Իսրայելի մասին գրքեր գնել: 20. Այս սենյակում հնարավոր չէ դասեր սովորել, այստեղ միշտ շատ մարդիկ կան:

מִלִּים חֲדָשׁוֹת

בֵּית־שִׁמּוּשׁ ז *բէ(յ)թ-շիմուշ* զուգարան
דֶּלֶת נ (ר דְּלָתוֹת) *դէլէթ (դլաթօթ)* դուռ
דֶּשֶׁא ז *դէշէ* խոտ
הִנֵּה מ״י *հինէ* ահա
זְבוּלוּן ז *զվուլուն* Զաբուդոն
חִפֵּשׂ פ (לְחַפֵּשׂ, מְחַפֵּשׂ) *խիպէս (լէխապէս, մէխապէս)* փնտրել
טִלְפֵּן פ (לְטַלְפֵּן, מְטַלְפֵּן) *տիլպէն (լէտալպէն, մէտալպէն)* զանգահարել
יָכוֹל ת *յախօլ* (է) կարող
יָרוּק ת (נ יְרוּקָה) *յառուկ (յէռուկա)* կանաչ
כּוֹחַ ז (ר כֹּחוֹת) *քօխ (քօխօթ)* ուժ
כּוּרְסָה ז (ר כּוּרְסוֹת, כּוּרְסָאוֹת) *քուրսա (քուրսօթ, քուրսա՛օթ)* բազկաթոռ
לִכְלֵךְ פ (לְלַכְלֵךְ, מְלַכְלֵךְ) *լիխլէխ (լէախլէխ, մէլախլէխ)* կեղտոտել
מַדְרֵגָה נ *մադռէգա* աստիճան
מַיִם ז״ר *մայիմ* ջուր
מַכִּירָה נ *մէխիռա* վաճառք
מַסְפִּיק ת *մասպիկ* բավական, բավարար
מַעֲלִית נ *մա՛ալիթ* վերելակ
מִקְלַחַת נ *միկլա՛խաթ* ցնցուղ
מִקְרָר ז *մէկառէռ* սառնարան
מֶרְכָּז ז *մէռքազ* կենտրոն
מִרְפֶּסֶת נ *միռպէսէթ* պատշգամբ
נֶחְמָד ת *նէխմադ* հաճելի, սիրալիր
נִיגֵּן פ (לְנַגֵּן, מְנַגֵּן) *նիգէն (լէնագէն, մէնագէն)* նվագել

Բասակրտական լեզվում տարածված է նաև տլֆֆն *տիլֆէն* արտասանական տարբերակը:

עץ ז *էց* ծառ

שמון ז *պա'ամօն* զանգ, զանգակ

פתח פ (לפתוח, פותח) *(պաթախ (լիֆթօ՛ախ, պաթէ՛ախ)* բանալ

צלצל פ (לצלצל, מצלצל) *(ցիլցէլ (լէցալցէլ, մէցալցէլ)* զանգել

קלאסי ת *կլա՛սի* դասական

קנה פ (לקנות, קונה) *(կանա (լիկնօթ, կօնէ)* գնել

קצת ת״פ *կցաթ* մի քիչ

שלוש־עשרה ש״מ נ *շլօշ-էառէ* տասներեք

שמש נ *շէմէշ* արև

תנור ז *թանուր* վառարան, գազօջախ

תרגם פ (לתרגם, מתרגם) *(թիրգամ (լէթարգէմ, մէթարգէմ)* թարգմանել

14 ארבע־עשרה

הפעיל ԿԱՌՈՒՑՔԸ

14.1. הפעיל *հիֆ'իլ* կառույցի բայերը կազմված են ה նախաձանցով և 2-րդ ու 3-րդ արմատականների միջև ավելացող י տառով (הסס՝ הזמין *հիզմին* «հրավիրել, պատվիրել» (זמן արմատից), התחיל *հիթխիլ* «սկսել» (תחל արմատից), הסכים *հիսքիմ* «համաձայնվել» (סכם արմատից): Այս կառույցի բայերից շատերն ունեն «պարտադրողական» իմաստ՝ כָּתַב «գրել» - הכתיב *հիխթիվ* «գրել տալ, թելադրել»:

14.2. Ինչպես և פִּיעֵל կառույցում, הפעיל կառույցի բայերի ենթակայական դերբայները կազմվում են מ նախաձանցով, որն այս կառույցում ձայնավորված է պաթախով.

	եզակի	*հոգնակի*
արական	מסס֑ים	מסס֑ים
իգական	מסס֑ה	מסס֑ות

מזמין – מזמינה – מזמינים – מזמינות
մազմին – մազմինա – մազմինիմ – մազմինօթ

14.3. הפעיל կառույցի անորոշ դերբայները կազմվում են להסס֑ կաղապարով՝ להזמין *լէհազմին* «հրավիրել, պատվիրել»:

14.4. Ուշադրություն դարձրեք, որ բոլոր բայաձևերն ունեն ընդհանուր סס֑ հիմք՝ הזמין, מזמין, להזמין:

14.5. הפעיל կառույցի բայերը բայակերտ գոյական են կազմում הסס֑ה կաղապարով՝ הזמנה *հազմանա* «հրավեր, պատվեր» (הזמין բայից):

① *Կազմեք* הִתְחִיל հիթխիլ *«սկսել»*, הִסְכִּים հիսքիմ *«համաձայնվել» և* הֵכִתִּיב հիիխթիվ *«թելադրել» բայերի ենթակայական, անորոշ դերբայները և բայակերտ գոյականները: Ուշադրություն դարձրեք, որ նախորդ դասերի* מְסַכִּים *«համաձայն» բառը* הִסְכִּים *բայի ածականաբար գործածված ենթակայական դերբայն է:*

ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

14.6. Ուղիղ խնդրի אֶת մասնիկը կարող է ստանալ դերանվանական վերջածանցներ՝ կազմելով խնդրառական դերանուններ, որոնք համապատասխանում են հայերենի հայցական հոլովի դերանուններին: Բացի 2-րդ դեմքի հոգնակիից մյուս ձևերում אֶת մասնիկի «է» ձայնավորը փոխարինվում է «օ» ձայնավորով.

	եզակի թիվ		*հոգնակի թիվ*	
	արական	*իգական*	*արական*	*իգական*
I	«ինձ» *օթի* אוֹתִי		«մեզ» *օթանու* אוֹתָנוּ	
II	*օթխա* אוֹתְךָ «քեզ»	*օթախ* אוֹתָךְ «քեզ»	*էթխէմ* אֶתְכֶם «ձեզ»	*էթխէն* אֶתְכֶן «ձեզ»
III	*օթօ* אוֹתוֹ «նրան»	*օթահ* אוֹתָהּ «նրան»	*օթամ* אוֹתָם «նրանց»	*օթան* אוֹתָן «նրանց»

Օրինակ՝ אֲנִי אוֹהֵב אוֹתְךָ *անի օհէվ օթախ* կամ אֲנִי אוֹהֶבֶת אוֹתְךָ *անի օհէվէթ օթխա* «ես քեզ սիրում եմ», אוֹתוֹ אֲנִי לֹא רוֹאֶה *անի լօ ro'է օթօ* «ես նրան չեմ տեսնում», הֵם מְזַמְּנִים אוֹתָנוּ לְמִסְעָדָה *հէմ մազմինիմ օթանու լէմիս'ադա* «նրանք մեզ ռեստորան են հրավիրում»[1]:

ԵՐԿԱԿԻ ԹԻՎ

14.7. Երկակի թիվը (זוּג מִסְפָּר *միսպար զուգի*) եբրայերենում ունի գործածության սահմանափակ ոլորտ՝ հիմնականում ընդգրկելով ժամանակահատված նշող բառերը («ժամ, օր, տարի» և այլն) և մի քանի թվականներ («երկու հարյուր, երկու հազար»): Երկակի թիվը կազմվում է סִי֫ *այիմ* վերջածանցով՝ יוֹמַיִם *յոմայիմ* «երկու օր», פַּעֲמַיִם *պա'ամայիմ* «երկու անգամ»[1]: Որոշ դեպքերում տեղի է ունենում հնչյունափոխություն՝ שָׁבוּעַ - שְׁבוּעַיִם *շավու՛ա – շվուայիմ* «երկու շաբաթ»: שָׁנָה/שְׁנָתַיִם *շնա՛յիմ/շթա՛յիմ* «երկու» թվականը ձևաբանորեն նույնպես երկակի թիվում է: Երկակի թվի ժամանակահատված նշող բառերի հետ «երկու» թվականը չի գործածվում:

14.8. Իգական սեռի գոյականների պարագայում סִי֫ վերջածանցը կցվում է նիսմախային ձևին՝ שָׁנָה - שְׁנָתַיִם *շնաթա՛յիմ* «երկու տարի», שָׁעָה - שְׁעָתַיִם *շէ'աթա՛յիմ* «երկու ժամ»:

14.9. סִי֫ վերջածանցով կազմվում է նաև որոշ գոյականների հոգնակի թիվը: Դա, մասնավորապես, վերաբերում է մարմնի զույգ անդամներ նշող և այլ «զույգավոր» գոյականներին՝ אֹרֶךְ יָדַיִם *ո՛ռբա յադա՛յիմ* «չորս ձեռք», חֲמֵשׁ עֵינַיִם *խամէշ էնա՛յիմ* «հինգ աչք», שְׁלוֹשׁ נְעָלַיִם *շալօշ նա'ալա՛յիմ* «երեք կոշիկ»:

14.10. סִי֫ վերջավորություն ունեն երկու միևնույն կեսերից բաղկացած առարկաների անվանումները՝ מִכְנָסַיִם *միխնասա՛յիմ* «անդրավարտիք», מִשְׁקָפַיִם *միշկաֆա՛յիմ* «ակնոց»: Այս բառերը պատկանում են միայն հոգնակի թիվ ունեցող բառերի խմբին:

14.11. Ածականները, դերանուններն ու բայերը երկակի թիվ չունեն. երկակի թվի գոյականների հետ նրանք դրվում են հոգնակի թվում՝ הַיָּמִים הָאֵלֶּה קְשִׁים מְאֹד *հայամա՛յիմ հա'էլէ կաշի՛մ մէ'օդ* «այս երկու օրերը շատ ծանր են», הָעֵינַיִם כּוֹאֲבוֹת לִי *հա'էնա՛յիմ քօ'ավօթ լի* «աչքերս ցավում են», אֲנִי רוֹצֶה לִקְנוֹת מִשְׁקָפַיִם חֲדָשִׁים *անի ռօթէ լիկնօթ միշկաֆա՛յիմ խադաշիմ* «ես ուզում եմ նոր ակնոց գնել»:

«ԱՅՆ» ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԸ

14.12. Եբրայերենը չունի «այն» ցուցական դերանվան իմաստն արտահայտող հատուկ ձև: Որպես այդպիսին գործածվում են համապատասխան թվի և սեռի

[1] Քանի որ հայերենում տրական և հայցական հոլովի դերանունները նույն ձևերն ունեն (ինձ, քեզ, նրան, մեզ, ձեզ, նրանց), պետք է ուշադիր լինել՝ לְהַנִּיחַ אוֹתוֹ ... אוֹתִי, לְךָ - אוֹתְךָ - לִי զույգերը չշփոթելու համար:

[1] Ձևայնավորված ամբողջական ուղղագրության մեջ երկակի թվի վերջածանցը սովորաբար ունի երկու ' տառ (יַיִם), որպեսզի տարբերելի լինի հոգնակի թվի ים վերջավորությունից՝ יוֹמַיִם, פְּעָמַיִם:

3-րդ դեմքի անձնական դերանունները, որոնց հող է կցվում՝ הַבַּיִת הַהוּא *hapayit hahu* «այն տունը», הַמִּסְעָדָה הַהִיא *hamis'ada hahi* «այն ռեստորանը», הַמְּלֻצָּרִים הָהֵם *hamlcuarim hahem* «այն մատուցողները», הַכַּוָּנִיּוֹת הָיְרִיקוֹת הָהֵן *hamekhoniot hayrikot hahen* «այն կանաչ ավտոմեքենաները»:

② *Թարգմանեք.*

Այն ճարտարագետը, այն աշակերտուհին, այն երեխաները, այն կինը, այն կանայք, այն պաղպաղակը, այն հյութը, այն ուսանողուհիները, այն մեծ նարինջները, այն գեղեցիկ քաղաքները, այն մեծ փողոցները, այն սպիտակ դուռը, այն կանաչ անդրավարտիքը, այն նոր ակնոցը:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.13. צָרִיךְ «պետք է» բառը, ինչպես և שָׁפִיר «կարելի է, հնարավոր է» բառը, անորոշ դերբայի հետ կարող է կազմել անդեմ կապակցություններ՝ צָרִיךְ לָלֶכֶת לְבֵית־הַסֵּפֶר *cariχ lalexet lebet-hasefer* «պետք է գնալ դպրոց», צָרִיךְ לִלְמוֹד הַרְבֵּה *cariχ lilmod harbe* «պետք է շատ սովորել», לֹא צָרִיךְ לֶאֱכוֹל בַּלַּיְלָה *lo cariχ leexol balayla* «գիշերը պետք չէ ուտել», וְאוֹתוֹ לְשָׁאוֹל צָרִיךְ *cariχ lišʼol oto* «պետք է հարցնել նրան»:

③ 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

אֲרוּחַת־צָהֳרַיִם בְּמִסְעָדָה

שָׂרָה יוֹשֶׁבֶת בַּמִּשְׂרָד וְכוֹתֶבֶת[1] בַּמַּחְבֶּרֶת. הַשָּׁעָה אַחַת וַחֲצִי. שָׂרָה עֲיֵפָה וּרְעֵבָה[2]. לְדָנִיאֵל יֵשׁ הַיּוֹם הַרְבֵּה חוֹלִים. הוּא עוֹבֵד הַרְבֵּה וְגַם הוּא עָיֵף וְרָעֵב. דָּנִיאֵל אוֹמֵר לְשָׂרָה:

- שָׂרָה, דַּי לַעֲבוֹד! אֲנִי מְזַמִּין[3] אוֹתְךָ[4] לַאֲרוּחַת־צָהֳרַיִם. אֶת מַסְכִּימָה?
- תּוֹדָה רַבָּה, דָּנִיאֵל, אֲבָל יֵשׁ לִי הַרְבֵּה עֲבוֹדָה. אוּלַי אֶפְשָׁר לָלֶכֶת[5] בְּיוֹם אַחֵר.
- אֶת לֹא רְעֵבָה?
- כֵּן, אֲנִי רְעֵבָה מְאוֹד. לָאָן אֶפְשָׁר לָלֶכֶת[6]?

דָּנִיאֵל הוֹלֵךְ אֶל הַטֶּלֶפוֹן.

- אֶת רוֹאָה אֶת הַמִּסְעָדָה הַקְּטַנָּה הַהִיא[7], תַּחַת הַבִּנְיָן הַחָדָשׁ הַהוּא[8]? אֲנִי אוֹכֵל שָׁם פַּעֲמַיִם[9] אוֹ שָׁלוֹשׁ פְּעָמִים בַּשָּׁבוּעַ. הָאוֹכֶל שָׁם טָעִים מְאוֹד.

דָּנִיאֵל וְשָׂרָה יוֹצְאִים מִן הַמִּשְׂרָד וְהוֹלְכִים לְמִסְעָדָה. בַּמִּסְעָדָה הֵם יוֹשְׁבִים עַל־יַד הַטֶּלֶפוֹן.

- אֵיפֹה הַמְּלֻצָּר? אֲנִי לֹא רוֹאֶה אוֹתוֹ[10] - אוֹמֵר דָּנִיאֵל.
- אֲנִי רוֹאֶה אוֹתוֹ[10], הִנֵּה הוּא!

הַמְּלֻצָּר בָּא אֶל שׁוּלְחָנָם שֶׁל דָּנִיאֵל וְשָׂרָה.

- שָׁלוֹם, גְּבֶרֶת, שָׁלוֹם, דּוֹקְטוֹר שָׁרוֹן - אוֹמֵר הַמְּלֻצָּר - מַה אַתֶּם רוֹצִים לְהַזְמִין[11]?
- אֲנִי רוֹצָה בָּשָׂר עִם יְרָקוֹת - אוֹמֶרֶת שָׂרָה.
- אֶת לֹא רוֹצָה בָּשָׂר עִם יְרָקוֹת[12]? אוּלַי אֶת רוֹצָה מָרָק? - שׁוֹאֵל דָּנִיאֵל אֶת שָׂרָה.
- לֹא, תּוֹדָה, אֲנִי אוֹכֶלֶת רַק מָנָה אַחַת.
- וּמַה אַתָּה מְזַמִּין[11], דּוֹקְטוֹר שָׁרוֹן?
- מָנָה רִאשׁוֹנָה[13] אֲנִי אוֹכֵל מָרָק, מָנָה שְׁנִיָּה[13] אֲנִי אוֹכֵל דָּג.
- מַה אַתֶּם רוֹצִים לִשְׁתּוֹת?
- אֲנִי רוֹצֶה מִיץ תַּפּוּזִים[14] - אוֹמֶרֶת שָׂרָה.
- וַאֲנִי[14] רוֹצֶה יַיִן אָדוֹם - אוֹמֵר דָּנִיאֵל.

הַמְּלֻצָּר הוֹלֵךְ וּבָא[15] עִם הַמָּנוֹת.

- בְּתֵאָבוֹן! - אוֹמֵר הַמְּלֻצָּר לְדָנִיאֵל וּלְשָׂרָה[2].

הֵם לֹא אוֹהֲבִים אוֹתִי

- זְבוּלוּן, אַתָּה לֹא רוֹצֶה לָקוּם? צָרִיךְ לָלֶכֶת[1] לְבֵית־הַסֵּפֶר!
- אִמָּא, אֲנִי לֹא רוֹצֶה לָלֶכֶת לְבֵית־הַסֵּפֶר!
- מַדּוּעַ אַתָּה לֹא רוֹצֶה?
- הַמּוֹרִים לֹא אוֹהֲבִים אוֹתִי[2]!
- הֵם לֹא אוֹהֲבִים אוֹתְךָ[2]? אֲבָל אַתָּה צָרִיךְ לָלֶכֶת לְבֵית־הַסֵּפֶר!
- לֹא. אֲנִי לֹא רוֹצֶה! גַּם הַתַּלְמִידִים לֹא אוֹהֲבִים אוֹתִי[2]!
- זְבוּלוּן, דַּי לְדַבֵּר! אַתָּה צָרִיךְ לָלֶכֶת! סוֹף־סוֹף אַתָּה מְנַהֵל בֵּית־הַסֵּפֶר[3].

[1] 1.12.2. [2] 2.16.ш. [3] 14.2. [4] 14.6. [5] 11.4. [6] 13.4.1. [7] 14.12. [8] 14.7. [9] 4.3. [10] 14.3. [11] 9.4. [12] 12.1. [13] 2.17. [14] 2.16.բ. [15] 14.13.

① *Թարգմանեք.*

1. Զաբուլոնը սիրում է իր ընկերներին ռեստորան հրավիրել: 2. Հոությը համաձայն չէ (չի համաձայնվում) իր ամուսնու հետ: 3. Այն փոքր փողոցում երեք շատ լավ ռեստորաններ կան: 4. Եթե միս չեմ ուտում, ամբողջ օրը քաղցած եմ: 5. Սեղանի վրա միայն բանջարեղեն և հաց կա: 6. Ամբողջ երեկո Իսահակը նստած է

տանը և գինի է խմում: 7. Բոլոր երեխաները սիրում են նարնջի հյութ խմել: 8. Այն ռեստորանում միայն երկու կին են նստած: 9. Մանկապարտեզում երեխաները խաղում են, սակայն նրանք նաև սովորում են: 10. Այն բժիշկները վերադառնում են հիվանդանոցից: 11. Եթե ախորժակ չունեմ, չեմ ուտում: 12. Շաբաթը երկու կամ երեք անգամ ես հեռախոսով խոսում եմ ընկերներիս հետ: 13. Ես ուզում եմ գնել քեզ այն կարմիր ծաղիկները: 14. Այս միսը համեղ չէ, ես չեմ ուզում այն[1] ուտել: 15. Մենք բանջարեղեն ենք գնում շաբաթվա վերջում: 16. Դու համաձա՞յն ես, որ մսի հետ պետք է խմել կարմիր գինի, իսկ ձկան հետ՝ սպիտակ: 17. Առավոտյան ես խմում եմ միայն նարնջի հյութ: 18. Բավական է խոսես հեռախոսով, դու շատ դասեր ունես: 19. Դպրոցի տնօրենը խոսում է աշակերտների հետ իր աշխատասենյակում: 20. Բավական է առավոտվանից գինի խմես:

מִלִּים חֲדָשׁוֹת

שׁוֹר ז (נ אֲדוּמָה) *ադում (ադումա)* կարմիր

אֹכֶל ז *օխէլ* կերակուր

אִם מ״ח *իմ* եթե, արդյոք

אַרְבַּע־עֶשְׂרֵה ש״מ נ *առբա-էսէ* տասնչորս

בָּשָׂר ז *բասար* միս

דַּי ת״פ *դայ* բավական է (+ անորոշ դերբայ)

הִזְמִין פ (לְהַזְמִין, מַזְמִין) *հիզմին (լէհազմին, մազմին)* հրավիրել, պատվիրել

הִסְכִּים פ (לְהַסְכִּים, מַסְכִּים) *հիսքիմ (լէհասքիմ, մասքիմ)* համաձայնվել

יַיִן ז (ר יֵינוֹת) *յային (յէյնօթ)* գինի

יְרָקוֹת ז״ר *յէռակօթ* բանջարեղեն

כְּשֶׁ ת״פ *նո՞ւր լէ՛ան* (դեպի)

מִטְבָּח ז *մէյցառ* մատուցող

מַעֲדָנִיָּה נ *մանա* սկուտեղ, կերակրատեսակ

מְנַהֵל ז *մէնահէլ* տնօրեն

מִסְעָדָה נ *միս՛ադա* ռեստորան

עֵרֶק ז *մառակ* ապուր

עֶרֶב ז *ա՛էլ* վերջ

פָּצוּעַ ת *ռա՛էլ* քաղցած

שַׁבָּת נ (ר שַׁבָּתוֹת) *շավնա (շավնօթ)* շաբաթ

[1] Նկատի առեք հայերենում «այն» բառի երկակի գործածությունը:

15 חֲמֵשׁ־עֶשְׂרֵה

לעֹבֵד KԱՌՈՒՑՑԸ

15.1. לעֹבֵד *նիֆ'ալ* կառույցի բայերն կազմված են נ նախածանցով (OOOנ) և արտահայտում են לעֹבֵד կառույցի բայերի կրավորական սեռը՝ כָּתַב «գրել» - נִכְתַּב *նիխթավ* «գրվել», לָמַד «ուսումնասիրել» - נִלְמַד *նիլմադ* «ուսումնասիրվել, դասավանդվել»: Բայերի մի մասը չունի կրավորական իմաստ՝ נִכְנַס *նիխնաս* «մտնել»: Ելման բայաձևում և նրանից կազմված ձևերում 1-ին արմատականը հանդես է գալիս առանց դագեշի՝ נִכְתַּב, իսկ 2-րդը՝ դագեշով՝ נִשְׁבַּר *նիշբար* «կոտրվել»:

15.2. Ի տարբերություն לעֹבֵד և לעֹבֵד կառույցների, לעֹבֵד կառույցի բայերի ենթակայական դերբայները կազմվում են առանց מ նախածանցի՝ պահպանելով נ կառույցակերտ նախածանցը.

	եզակի	*հոգնակի*
արական	OOOנ	OOOים
իգական	OOOת	OOOות

נִכְנַס – נִכְנֶסֶת – נִכְנָסִים – נִכְנָסוֹת
նիխնաս – նիխնէսէթ – նիխնասիմ – նիխնասօթ

15.3. Ուշադրություն դարձրեք, որ ելման բայաձևը՝ OOOנ, և եզակի արականի ենթակայական դերբայը՝ OOOנ, տարբերվում են միայն 2-րդ արմատականի ձայնանիշով, իսկ արտասանությամբ նույնն են՝ נִכְנַס *նիխնաս* «մտավ» - נִכְנָס *նիխնաս* «մտնող, մտնում է»:

15.4.1. לעֹבֵד կառույցի բայերի անորոշ դերբայները կազմվում են OOOלְהִ կադապարով (1-ին արմատականը միշտ թեթև դագեշով է, 2-րդը՝ առանց դագեշի)՝ לְהִכָּנֵס *լէհիքանէս*, לְהִשָּׁבֵר *լէհիշավէռ:* Տարածված է նաև անորոշ դերբայի OOOלְהִי գրությունը:

15.4.2. Բայերը, որոնց 1-ին արմատականը ר է, անորոշ դերբայում խիրիկի փոխարեն ձայնավորվում են ցերե ձայնանիշով՝ לְהֵרָדֵם *լէհէռադեմ* «քուն մտնել» (ելման բայաձևը՝ נִרְדַּם *նիռդամ):*

15.4.3. Բայերը, որոնց 3-րդ արմատականը ח կամ ע է, անորոշ դերբայում հանդես են գալիս (OOOלְהַ) OOOלְהַ կադապարով՝ לְהַפְעִיל *լէհիպագա*, לְהַפְתִּיחַ *լէհիպաթսխ*, לְהַשְׁלִיחַ *լէհիշալախ*, לְהַרְגִּיעַ *լէհէռագա:*

① נִכְנַס *Կազմեք* נִלְמַד նիլմադ *«ուսումնասիրվել» և* כָּתַב նիխտավ *«գրվել» բայերի ենթակայական և անորոշ դերբայները:*

לעֹבֵד ԿԱՌՈՒՑՑԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԸ

15.5. לעֹבֵד կառույցի բայերը ենթակայական դերբայից զատ ունեն նաև հարակատար դերբայ, որը կազմվում է OIOO կադապարով՝ כָּתוּב «գրել» - כָּתוּב *քաթուվ* «գրված», מָכַר «վաճառել» - מָכוּר *մախուռ* «վաճառված», אָהַב «սիրել» - אָהוּב *ահուվ* «սիրված, սիրելի»: Զնաբանորեն այս դերբայներն ածականներ են:

15.6. Եթե բայի 3-րդ արմատականը ח կամ ע է, հարակատար դերբայը կազմվում է սողոսկած պաթախով (OIOO)՝ פָּתוּחַ *պաթուախ* «բաց», יָדוּעַ *յադուա* «հայտնի»:

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15.7. Ենթակայական դերբայի հոգնակի արական ձևերը՝ գործածվելով առանց անձնական դերանունների, կազմում են անդեմ ձևեր՝ מָה מוֹכְרִים פֹּה? *մա մօխռիմ պօ* «ի՞նչ են վաճառում այստեղ», אוֹמְרִים שֶׁ... *օմռիմ շէ* «ասում են, որ...», מָה מְסַפְּרִים עַל זְבוּלוּן? *մա մէսապռիմ ալ զվուլուն* «ի՞նչ են պատմում Զաբուղոնի մասին»:

15.8. Հողից առաջ מָה հարցական դերանունը ձայնավորվում է կամացով՝ מָה הַשָּׁעָה? *մա հաշա'ա* «ժամը քանի՞սն է»:

② 🎧 *Կարդացեք, թարգմանեք և արտագրեք հետևյալ տեքստը.*

לֹאָה צְרִיכָה רְהִיטִים

לֹאָה: מָה מוֹכְרִים[1] בַּחֲנוּת הַזֹּאת, אַתָּה יוֹדֵעַ?
אַהֲרֹן: כֵּלִים וְרְהִיטִים[2] מוֹכְרִים פֹּה.
- אֲנִי רוֹצָה לִרְאוֹת מַשֶּׁהוּ.
- מָה יֵשׁ לִרְאוֹת?
- רְהִיטִים. פֹּה כָּתוּב[3] שֶׁבַּחֲנוּת הַזֹּאת יֵשׁ הֲנָחָה שֶׁל עֶשְׂרִים אֲחוּזִים עַד סוֹף הַחוֹדֶשׁ[4].
- אֲנַחְנוּ לֹא צְרִיכִים רְהִיטִים!
- לֹא, אֲנַחְנוּ צְרִיכִים שׁוּלְחָן חָדָשׁ! הַשּׁוּלְחָן שֶׁלָּנוּ יָשָׁן וְלֹא יָפֶה. אֲנִי רוֹצָה שׁוּלְחָן לָכָן!
- אֵיזֶה הַכְּסָאוֹת[5] שֶׁלָּנוּ שְׁחוֹרִים[6]!
- נָכוֹן! אֲנַחְנוּ צְרִיכִים גַּם כִּסְאוֹת לָבָנִים[7]. עוֹד מְעַט פֶּסַח וַאֲנִי רוֹצָה לְהַזְמִין אֶת כָּל הַחֲבֵרִים שֶׁלִּי. צָרִיךְ לִקְנוֹת[8] שׁוּלְחָן וְכִסְאוֹת[9] חֲדָשִׁים.
- יֵשׁ לָנוּ שׁוּלְחָן וְכִסְאוֹת יְשָׁנִים אֲבָל יָפִים!
- אַתָּה לֹא יוֹדֵעַ! הָרְהִיטִים הַלְּבָנִים[10] מוֹדֶרְנִיִּים[11] מְאוֹד עַכְשָׁיו וְגַם זוֹלִים[12], כִּי כָּל הַמְּחִירִים יוֹרְדִים הַיָּמִים אֵלֶּה.
- אוּלַי אֶת רוֹצָה גַּם שְׁטִיחַ לָכָן?
- לֹא, יֵשׁ לָנוּ שְׁטִיחִים יָפִים. אֲבָל אֲנִי רוֹאֶה שֶׁיֵּשׁ פֹּה מִטּוֹת גְּדוֹלוֹת וְלֹא יְקָרוֹת מְאוֹד, וְגַם אֲרוֹנוֹת.
- מָה זֶה?! אֵין מִטּוֹת בַּבַּיִת? אֵין אֲרוֹנוֹת?!
- מִטָּתוֹ[13] שֶׁל יְהוּדָה[14] קְטַנָּה מִדַּי, וְלִדְבוֹרָה[15] אֵין אָרוֹן. אַתָּה לֹא רוֹצֶה לְהַכְנֵס[16] לַחֲנוּת וְלִרְאוֹת?
- אֲנִי לֹא רוֹצֶה שׁוּם דָּבָר[17]! אֲנִי רוֹצֶה רַק לָלֶכֶת הַבַּיְתָה!

בְּדִיחָה יְשָׁנָה

מֹשֶׁה חוֹזֵר הַבַּיְתָה מְאוּחָר בַּלַּיְלָה וְנִכְנָס[18] לַחֶדֶר[19] הַשֵּׁנָה. הַשָּׁעָה אַחַת. אֶסְתֵּר, אִשְׁתּוֹ[20] שֶׁל מֹשֶׁה[1], שׁוֹאֶלֶת אוֹתוֹ[2]:
- מָה[3] הַשָּׁעָה, מֹשֶׁה, אַתָּה יוֹדֵעַ?
- מָה הַשָּׁעָה? הַשָּׁעָה עֶשֶׂר.
בְּרֶגַע זֶה הַשָּׁעוֹן מְצַלְצֵל[4] פַּעַם אַחַת.
- מֹשֶׁה, מָה אַתָּה חוֹשֵׁב, לָמָּה הַשָּׁעוֹן מְצַלְצֵל פַּעַם אַחַת?
- לָמָּה? מוּתָק, הַשָּׁעוֹן הַזֶּה לֹא מְצַלְצֵל אֶפֶס!

[1] 15.7. [2] 13.5.1. [3] 15.5. [4] 12.1. [5] 2.9. [6] 2.11. [7] 2.17. [8] 14.13. [9] 1.12.2. [10] 13.5.2.
[11] 12.10. [12] 4.3. [13] 6.23.1. [14] 15.4.1. [15] 15.2. [16] 11.4. [17] 12.11. [18] 14.6. [19] 15.8. [20] 13.1.

[1] Ինչպես երևում է այս նախադասությունից, եբրայերենում՝ ինչպես և արևելահայերենում, գործում է երկակի ժխտման սկզբունքը, այսինքն՝ ժխտական դերանունների հետ գործածվում է բայի ժխտական ձևը («**ոչինչ չեմ** ուզում», «**ոչ ոք չպետք է**» և այլն):

③ *Թարգմանեք.*

רוּסִיָּה הוֹדִיעָה כִּי הִיא מוֹכֶרֶת לְאִירָאן עוֹד שְׁנֵי כּוּרִים גַּרְעִינִיִּים. רוּסִיָּה גַּם בּוֹנָה כּוּר גַּרְעִינִי גָּדוֹל בְּאִירָאן. אִירְגּוּת־הַבְּרִית וְיִשְׂרָאֵל יֵשׁ דְּאָגָה רַבָּה בְּגַלַּל מְכִירַת הַכּוּרִים לְאִירָאן.

שְׁנֵי רָאשֵׁי הַמְּדִינוֹת יִתְפַּגְּשׁוּ[20] לְדִיבּוּר עַל הַמַּצָּב בְּעִיראַק

עֹלֶה יַרְדֵּן בָּא בְּיוֹם ה'[21] לְקַהִיר וְנִפְגַּשׁ עִם נָשִׂיא[22] מִצְרַיִם. הַנּוֹשֵׂא הָעִקָּרִי שֶׁל הַשִּׂיחוֹת הָיָה הַמַּצָּב בְּעִיראַק. הַמֶּלֶךְ מְבַקֵּשׁ תּוֹכְנִית חֲדָשָׁה בְּעִנְיַן מְדִינָה זוֹ.

[1] 45.1. [2] 30.5. [3] 37.9.1. [4] 34.2. [5] 37.4. [6] 14.10. [7] 40.2. [8] 34.1. [9] 35.7. [10] 9.11. [11] 33.4. [12] 35.3. [13] 45.2. [14] 39.13. [15] 38.5. [16] 34.7. [17] 37.1. [18] 45.3. [19] 37.10. [20] 40.1. [21] 9.12. [22] 35.1. [23] 41.1.1. [24] 24.10.

② *Թարգմանեք.*

1. Երեկ մենք չէինք կարողանում քնել և ամբողջ գիշեր խաղաթուղթ էինք խաղում: 2. Արդյոք դու գիտե՞ս, թե ո՞վ է այն մարդը, որը կկարողանա լուծել այս պրոբլեմը: 3. Ես չեմ սիրում, երբ շշուկով են խոսում, բայց նաև չեմ սիրում, երբ բարձրաձայն են խոսում: 4. Դու իրավացի ես, չարժե հրաժարվել այս աշխատանքից: 5. Ես չեմ կարողանա գալ քեզ մոտ այսօր երեկոյան, որովհետև շատ աշխատանք ունեմ: 6. Բոլորը մեր քաղաքում ծիծաղում էին նրա վրա, որովհետև նա տնից միշտ թիկնոցով և հովանոցով էր դուրս գալիս: 7. Ես աղքատ մարդ եմ, իմ ամբողջ ունեցվածքը կարելի է դնել այս փոքր ճամպրուկի մեջ: 8. Այս նվագախումբը հնարավոր չէ լսել, գնա՛նք այստեղից: 9. Ապա մի լսի՛ր ինչպես են երգում թռչուններն այս այգում, երբ շողում է արևը: 10. Երբ փոքր էի, հայրս ամեն ծնունդյանս օրը խոստանում էր ինձ հեծանիվ գնել համար, իսկ հիմա ես եմ խոստանում որդուս հեծանիվ գնել նրան: 11. Մեր քաղաքն արժե այցելել միայն աշնանը: 12. Սա է օրվա գլխավոր թեման՝ տնտեսական իրավիճակը մեր երկրում: 13. Պատերազմն Իրանի ու Իրաքի միջև տևեց տասը տարի: 14. Իսրայելն իր առաջին ատոմային ռեակտորը կառուցել է Ֆրանսիայի օգնությամբ: 15. Մեծ

մասահոգություն կա, որ բանակցությունները Միրիայում իրավիճակի հարցով շատ դանդաղ կլինեն: 16. «Երրորդ աշխարհի» ղեկավարները Կահիրեում կքննարկեն իրենց տնտեսական պրոբլեմները: 17. Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը եկող ամսվա վերջում կմեկնի Միացյալ Նահանգներ: 18. Երբ ինձ դժվար է, ես միշտ աղոթում եմ, սակայն համոզված չեմ, որ աստված լսում է աղոթքներս: 19. Իսրայելն ուզում է, որ ոչ մի երկիր չօգնի Իրանին ատոմային ռեակտորներ կառուցել: 20. Ես համոզված եմ, որ եթե հովանոց չվերցնեմ՝ անձրև կգա:

46 אַרבּעים וְשֵׁשׁ

פ״ע/ל״ה ԲԱՅԵՐՆ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

46.1. פ״ע/ל״ה խմբի բայերն ապառնի ժամանակում ունեն խոնարհման հետևյալ պատկերը (עָשָׂה):

אני	אֶעֱשֶׂה	אנחנו	נַעֲשֶׂה
אתה	תַּעֲשֶׂה	אתם	תַּעֲשׂוּ
את	תַּעֲשִׂי	אתן	תַּעֲשׂוּ
הוא	יַעֲשֶׂה	הם	יַעֲשׂוּ
היא	תַּעֲשֶׂה	הן	יַעֲשׂוּ

46.2. Հրամայական եղանակի ձևերն են՝ עֲשֵׂה / עֲשִׂי / עֲשׂוּ:

① *Ապառնի ժամանակում խոնարհեք* עָלָה, עָנָה *բայերը և կազմեք նրանց հրամայական եղանակը:*

ל״ה ԲԱՅԵՐԸ ԿԱՌՈՒՑՑԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

46.3. פִּיעֵל կառույցի ל״ה խմբի բայերն ապառնի ժամանակում ունեն խոնարհման հետևյալ պատկերը (חִיכָּה):

אני	אֲחַכֶּה	אנחנו	נְחַכֶּה
אתה	תְּחַכֶּה	אתם	תְּחַכּוּ
את	תְּחַכִּי	אתן	תְּחַכּוּ
הוא	יְחַכֶּה	הם	יְחַכּוּ
היא	תְּחַכֶּה	הן	יְחַכּוּ

46.4. Հրամայական եղանակի ձևերն են՝ חַכֵּה / חַכִּי / חַכּוּ:

① *Ապառնի ժամանակում խոնարհեք* נִיסָּה, בִּילָה *բայերը և կազմեք նրանց հրամայական եղանակը:*

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

46.5. ָ կապակցությունից առաջ ן շաղկապը, ինչպես և בְּ־, לְ־ կցական նախդիրները, ձայնավորվում է խիրիկով, իսկ ָ կապակցությունը կորցնում է շվան՝ תֵּל־אָבִיב וִירוּשָׁלַיִם ... *վիռուշալայիմ,* հորեր և երեխաներ ... *վիլադիմ:*

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

על הורים וילדים[1]

כל ההורים רוצים שֶׁלִּילָדִים שלהם יִהְיֶה טוב בַּחַיִּים. כּוֹלָם רוצים שֶׁהֵם יַצְלִיחוּ. שֶׁהֵם יִהְיוּ בריאים, עֲשִׁירִים וּמְאוּשָּׁרִים. לא כל ההורים יודעים מה לַעֲשׂוֹת כְּדֵי שֶׁלִּילָדִים יִהְיֶה בָּאֱמֶת טוב, יֵשׁ הורים שֶׁחושבים שֶׁהם יודעים מה הֶכִי טוב. ההורים כְּאֵלֶּה בְּטוּחִים שֶׁיְּלָדִים אֵינָם יודעים כלום, אֵינָם רוצים לָדַעַת מה רוצים הַצְּעִירִים. הם רוצים רק שֶׁהַיְּלָדִים שלהם יַעֲשׂוּ מה שֶׁהם - ההורים - מְחַלִּיטִים בִּשבילָם. הורים כְּאֵלֶּה מחליטים מה "הַיֶּלֶד" יַעֲשֶׂה, מה הוא יִלְמַד, מי יִהְיוּ הַחֲבֵרִים שלו, מה הוא יִקְרָא, מה הוא יִרְאֶה, וְעוּד...

אני רוצֶה לְסַפֵּר לָכֶם על אורי. ההורים שלו רָצוּ שֶׁהוא יִלְמַד בְּאוניברסיטה, אבל הוא לא רָצָה. הוא רָצָה שֶׁהם לא יַגִּידוּ לו מה לַעֲשׂוֹת. אורי רָצָה לִנסוֹעַ לְטַיֵּל. הוא רצה לראות מְקוֹמוֹת חדשים, עָרִים חדשות, לְהַכִּיר אנשים מְעַנְיְנִים. הוא אָמַר שֶׁהוא לא יודע מה הוא רוצֶה להיות. הוא בִּיקֵשׁ מאבא שלו שֶׁלא יַחְלִיט בִּשבילו: "אני אֶסְכָּה" שָׁנָה, וְאז אַחְלִיט בְּעַצְמִי! אני לא רוצֶה שֶׁאתם תַּחְלִיטוּ! אני לא מְבַקֵּשׁ שֶׁתַּעֲזְרוּ לִי, אבל לְפָחוֹת, אַל תַּפְרִיעוּ לִי, אני אֶעֱשֶׂה תוכניות בְּעַצְמִי, וּבְעַצְמִי אֶעֱנֶה על כל הַשְּׁאֵלוֹת!"

זה לא הָיָה קַל. לְהורים של אורי הָיָה קָשֶׁה מאוד לוֹנֵתֵר על תוכניותֵיהֶם". אורי עָבַד קָשֶׁה וְחָסַךְ כֶּסֶף בְּעַצְמוֹ. הוא הִבְטִיחַ לְהוֹרָיו" שֶׁאחרי הַטִּיּוּל, הוא יֵלֵךְ" ללמוד. הוא אָמַר לָהֶם את זה כְּדֵי שֶׁהם לא יִדְאֲגוּ, אבל הוא בָּאֱמֶת הִתְכַּוֵּן לִלְמוֹד, הוא רק לא יָדַע מה ללמוד.

כְּשֶׁאורי חָזַר מהטיול הוא הָלַךְ ללמוד אֲמָנוּת. ההורים שלו לא הָיוּ מְאוּשָּׁרִים מִזֶּה. הם רָצוּ שֶׁהוא יִהְיֶה עוֹרֵךְ־דִּין, או רופא, או מְהַנְדֵּס, אבל לא הָיִתָה לָהֶם בְּרֵרָה. אורי כְּבָר אינו יֶלֶד קָטָן וְהוא הֶחְלִיט בְּעַצְמוֹ.

[1] *սխալներ:*

דרך לעיתון

מזכיר האו״ם[i] מבקר בישראל

מזכיר האו״ם בא ביום ג׳ לביקור בישראל. זהו[ii] ביקורו הראשון בישראל. לפני־כן הוא ביקר במדינות האזור ונפגש עם ראשי המדינות. ביום ב׳ נפגש מזכיר האו״ם עם המנהיגים הפלסטיניים. בישראל הוא ייפגש[iii] עם הנשיא, עם ראש הממשלה ועם שר החקלאות. בשיחות אלה יעלו לדיון[i] הנושאים העומדים[iii] בראש המדשות: תהליך השלום, פתרון בעיית לבנון, ועוד.

בעיות של זוגות צעירים

לזוגות צעירים בעיר אור־יהודה אין דירות. הצעירים נכנסו מספר פעמים[ii] לדירות ריקות[iii], אבל המשטרה הוציאה אותם משם. הזוגות הצעירים גם הפגינו מול הכנסת. עד עכשיו לא מצאו פתרון לבעיה שלהם. הזוגות הצעירים החליטו לקרוא עיר אוהלים בארצשדיון. הם יקבלו שם חשמל ומים.

[1] 46.5. [2] 39.1. [3] 41.3. [4] 30.5. [5] 45.1. [6] 46.1. [7] 34.2. [8] 34.4. [9] 39.11. [10] 39.5.
[11] 46.3. [12] 44.1. [13] 35.6. [14] 35.5. [15] 37.3. [16] 32.8. [17] 45.2. [18] 41.1.1. [19] 6.20.

④ *Թարգմանեք.*

1. Երբ փոքր էի, միշտ ցանկանում էի, որ ծնողներս իմ փոխարեն չորոշեն: 2. Ամեն առավոտ նա գալիս է նոր ծրագրով, սակայն երեկոյան արդեն չի հիշում այն: 3. Եթե ինձ չխանգարեն, ես կկարողանամ ավարտել այս գիրքը մինչև ամսվա վերջը: 4. Առնվազն շաբաթը երկու անգամ նա գալիս է մեզ մոտ և պատմում մեզ իր երկար պատմությունները: 5. Եթե չես օգնելու ինձ՝ գոնե մի՛ խանգարիր: 6. Ես համոզված եմ, որ նա չի կարողանա հրաժարվել այս ծրագրից: 7. Ամեն անգամ դու մի նոր բան ես խոստանում ինձ և հետո մոռանում: 8. Ես զգում եմ, որ ոչանց փաստաբանի չեմ կարողանա գտնել այս պրոբլեմի լուծումը և դուրս գալ այս դժվար իրավիճակից: 9. Նա հարուստ է և առողջ, սակայն երջանիկ չէ, որով հետև երեխաներ չունի: 10. Ինձ դժվար էր մենակ ապրել դատարկ բնակարանում: 11. Իմ ծնողներն ուզում էին, որ ես բժիշկ կամ փաստաբան դառնամ, սակայն ես որոշեցի ժամանակակից արվեստ ուսումնասիրել: 12. Երկու պետությունները քննարկում են ՄԱԿ-ի խաղաղության ծրագիրը: 13. Ամենակարևոր թեման, որը քննարկման դրվեց, տնտեսության վիճակն էր: 14. Սիրիայի արտաքին գործերի նախարարն ասում է, որ իսրայելյան բանակը պետք է դուրս գա Լիբանանից: 15. Արևմտյան ափի պրոբլեմի լուծումը խաղաղ գործընթացի կարևոր մասն է: 16. Առնվազն տարին երկու անգամ ուսանողները ցույց են անում հա-

[i] «քննարկման կդրվեն»:
[ii] «մի քանի անգամ»:
[iii] *ռէկ.*

մայարաների առջև: 17. Այս մարդիկ որոշեցին վրաններ դնել մարզադաշտում, որովհետև այլ ընտրություն չունեին: 18. Վերջին տարիներին մեր քաղաքում բազմաթիվ ժամանակակից շենքեր կառուցեցին, սակայն գրեթե բոլոր բնակարանները նրանցում դատարկ են: 19. Ոստիկանությունը ռադիոյով հայտարարեց, որ երկու տղամարդ է փնտրում: 20. Վարչապետն ասում է, որ երիտասարդ զույգերը ևս երկու տարի պետք է սպասեն իրենց պրոբլեմների լուծմանը:

47 אַרבּעים וְשֶׁבַע

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

אֵיפה לָגוּר?

נָחָמה סטוּדֶנטית. היא לוֹמֶדֶת שָׁנה שנייה בְּפַקוּלטה לאַרכֵיאוֹלוֹגיה. שנת[a] הלימוּדים כּבָר הַתחילה וְהיא עוד לא הֶחליטה[1] אֵיפה לָגוּר. בַּשָּׁנה שֶׁעָבְרה גָּרה נָחָמה אֶצֶל קרוֹבֶיהָ[2]. נוֹחַ מאוד לגוּר שם, אבל לְנָחָמה הָיוּ כּמה בְּעָיוֹת. קרוֹבֶיהָ גָּרים בְּדירה גדוֹלה וְנוחה לא רחוק מִמֶּרכַּז הָעִיר, אבל יש שם רַעַשׁ של מְכוֹניוֹת וְאוֹטוֹבּוּסים. לפעָמים, כְּשֶׁאוֹטוֹבּוּס עוֹבֵר בְּרחוֹב, אי אֶפשָׁר אפילוּ לשמוע רַדיו. נָחָמה לא יְכוֹלה לְלמוֹד שם, לא תמיד הָיה לה מַשֶׁק לְלֶכֶת לְסַפרייה, וְגם נִמאָס לָה לשמוע את השְׁאֵלוֹת של דוֹדה: "אֵיפה הָיית? לָאָן את הוֹלֶכֶת? לְמֹדת את שיעוּרֶיךָ? הוּא גָּבוֹהַּ?"

נחמה יְכוֹלה לגוּר בְּמָעוֹן הסטוּדנטים, אבל גם שם יש רַעַשׁ. בְּמָעוֹן זוֹל לגוּר, וַאֲפשָׁר לְלֶכֶת בְּרֶגֶל מִשם לאוניברסיטה, אבל בְּדֶרֶך כּלל יש שוּתָף לַחֶדר. לִפעוּת פַּעַם בְּשבוּע יש מְסיבּה עד אֶמצַע הלילה, וְלִפעָמים צָרִיך לְלֶכֶת לִמְסיבּה, גם אם אין מַשֶׁק.

אוּלַי כְּדַאי לגוּר בְּדירה שכּוּרה[3]? נחמה יְכוֹלה לשכּוֹר דירה עם עוד כּמה סטוּדנטים, אבל כּל כּך יָקָר בִּירוּשלַיִם! וְהיא לא יוֹדֶעֶת, אִם[b] שוּתָף לדירה יותר טוב מִשוּתָף לחדר. צָרִיך לְחַפֵּשׂ דירה, וְקָשֶׁה לְמצוֹא דירה מתאימה, וּבְאֵיזוֹ שכּוּנה כְּדַאי לְחַפֵּשׂ? וּמה יִהיֶה, אם בְּאֶמצַע השָׁנה יַחליט שוּתָף אֶחָד לַעֲזוֹב את הדירה? צָרִיך יִהיֶה לְחַפֵּשׂ שוּתָף חָדָשׁ, או לשלם הרבּה יותר.

מה יִהיֶה? נחמה מוּכרָחה לגוּר בְּאֵיזֶה מָקוֹם...

דֶּרֶך לעיתון

שֹׁר החוּץ של יַפָּן מְבַקֵּר בְּיִשׂרָאֵל

שֹׁר החוּץ של יַפָּן בּא בְּיוֹם ב׳ לְבִיקוּר קָצָר של יום אֶחָד בְּיִשׂרָאֵל. זה הָיה הביקוּר הָרִאשוֹן של שֹׁר־חוּץ מִיַּפָּן לְיִשׂרָאֵל. שֹׁר החוּץ בִּיקֵר בְּ"יַד וַשֵּׁם", בְּמַחֲנֵה־הפּלִיטים לְיַד יִרוּשלַיִם, וְנִפגַּשׁ לשיחוֹת קצָרוֹת עם רָשֵׁיא המדינה,

רֹאש הממשלה וְשֹׁר החוּץ. שֹׁר החוּץ של יַפָּן אָמַר, כּי עד היום פְּעָלָה יַפָּן בְּמִזרָח התיכּוֹן בְּעִנייָנִי[c] כּלכָּלה, וְעכשיו רוֹצָה יַפָּן לַעֲזוֹר לְהָבִיא שלוֹם לאֵזוֹר. שֹׁר החוּץ הִיפָּנִי אָמַר עוד, כּי יַפָּן הִיא בְּעַד מְדִינה פּלֶסטִינִית.

כּמה יָמִים יִלמְדוּ[4] התלמידים?

בְּמִשרַד החינוּך מְכינים הַצָּעה לְהַגדִיל את מִספַּר יְמֵי[d] הלימוּדים בְּשָׁנה. לפי ההַצָּעה יִלמְדוּ בְּבָתֵּי־סֵפֶר 290[1] יָמִים בְּשָׁנה, בִּמקוֹם 220[e] יָמִים. לא בָּרוּר עַדַיִן אִם[f] הַנהָלַת המִשרָד תְּקַבֵּל את ההַצָּעה.

[1] 31.3.2. [2] 35.5. [3] 40.1. [4] 15.5. [5] 31.5.1. [6] 39.1. [7] 34.2.

② *Թարգմանեք.*

1. Դավիթն ուզում է ապրել իր ազգականների տանը, որովհետև այնտեղից նա կարող է ոտքով գնալ համալսարան: 2. Բնակարանները քաղաքի կենտրոնում բնդհանրապես ավելի թանկ են: 3. Եթե գնաս աջ՝ կհասնես կինոթատրոն, եթե գնաս ձախ՝ կհասնես հիվանդանոց: 4. Ես այսօր որևէ մեկին տեսնելու ցանկություն չունեմ: 5. Ես ուզում եմ իմանալ՝ ինչքա՞ն ժամանակով կարելի է վարձել այս բնակարանը: 6. Ինչպե՞ս կարող եմ պարապել հանրակացարանում, եթե այնտեղ համարյա ամեն օր երեկույթ կա: 7. Ես ստիպված եմ լքել այս թաղամասը և տեղափոխվել քաղաքի կենտրոնից հեռու: 8. Ես արթնացա գիշերվա կեսին, որովհետև ինչ-որ մեկը բղավում էր բակում: 9. Ես ուրիշ աշխատանք եմ փնտրում, որովհետև ամեն օր մեր տնօրենին տեսնելուց կուշտ եմ: 10. Աղմուկի պատճառով ես չեմ կարող կարդալ գրադարանում: 11. Աշխարհի բազմաթիվ պետություններ ճանաչել են (հռչակել) պաղեստինյան պետությունը: 12. Ճապոնական պատվիրակությունը Երուսաղեմում հանդիպեց պաղեստինյան ղեկավարների հետ: 13. Բանակցությունների գլխավոր թեման կլինի իրավիճակը Մերձավոր Արևելքում: 14. Պատվիրակությունն այցելեց փախստականների ամենամեծ ճամբար Գազայի գոտում: 15. Տարածաշրջանի պետությունները կհանդիպեն հաջորդ շաբաթ Լոնդոնում և կքննարկեն տնտեսության հարցերը: 16. Բոլորը Մերձավոր Արևելքում խաղաղություն են ուզում, սակայն չգիտեն ինչպես այն բերել այս տարածաշրջան: 17. Կրթության նախարարությունն ուզում է ավելացնել դպրոցներում ուսուցիչների թիվը, սակայն չի գտնում նրանց: 18. Մինչև հիմա պարզ չէ, թե որքան դրամ են ստանալու բժիշկները փոքր քաղաքներում՝ ըստ կառավարության նոր առաջարկի: 19. ՄԱԿ-ի պատվիրակությունն այցելեց փախստականներին, ովքեր լքել են Սիրիան՝ այդ երկրում պատերազմի պատճառով: 20. Անցած ուսումնական տարի մենք սովորեցինք 280 օր՝ 270-ի փոխարեն:

[a] מאתים ושבעים
[b] מאתים ועשרים

48 ארבעים ושמונה

ԲԱՅԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

48.1. (Տե՛ս 27.1.) Եթե բայի առաջին արմատականը צ է, ապա הִתְפַּעֵל կառույցի օՏՏՈՏ տարբերակում ת տառը փոխարինվում է ט տառով՝ הִצְטַעֵר (արմատը՝ צער):

ԱԾԱԿԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՍՄԻԽՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

48.2. Որպես սմիխութի առաջին անդամ կարող է հանդես գալ նաև ածականը, որը գոյականի նմանությամբ կարող է ենթարկվել հնչյունափոխության՝ שִׁכּוּי: Այս դեպքում «մարգիկների(g) լավագույնները», גְּדוֹל הַמְּשׁוֹרְרִים «բանաստեղծների(g) մեծագույնը», גְּדוֹלֵי יִשְׂרָאֵל «Իսրայելի մեծամեծները», פְּשׁוּטֵי עַם «հասարակ մարդիկ»: Այս շարքին է պատկանում 44-րդ դասում գործածված «դրամով լի» կապակցությունը: Նման կապակցությունները հաճախ կազմում են բարդ որոշիչ և սովորաբար կապվում են գծիկով՝ קְטַן־אָמוּנָה «սակավահավատ», גָּדוֹל־קוֹמָה «ցածրահասակ»: Ածականը այդպիսի որոշիչում թվով և սեռով համաձայնվում է որոշյալի հետ՝ אב מְרוּבֵּה־יְלָדִים «բազմազավակ հայր», מִשְׁפָּחוֹת מְרוּבּוֹת־יְלָדִים «բազմազավակ ընտանիքներ», בְּחוּרָה כְּחוּלַת־עֵינַיִם «կապուտաչյա օրիորդ», יְלָדִים כְּחוּלֵי־עֵינַיִם «կապուտաչյա պատանիներ», יֶלֶד יְפֵה־פָנִים «գեղեցկադեմ տղա», יַפַּת־פָּנִים «գեղեցկադեմ աղջիկ»: Զնաբանորեն այս խմբին պատկանում են նաև ենթակայական և հարակատար դերբայներով կազմված սմիխութային կապակցությունները՝ אֲנָשִׁים לוֹבְשֵׁי (בְּגָדִים) לְבָנִים «ապիտակ հագած մարդիկ», יְקִירֵי

ԱՅԼ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

48.3. Ինչպես երևում է նախորդ դասերի մի քանի օրինակներից, שום բառը գոյականի հետ համապատասխանում է հայերենի «ոչ մի» ժխտական դերանվանը՝ שום עבודה «ոչ մի աշխատանք», שום מָקוֹם «ոչ մի տեղ», שום דָּבָר «ոչ մի բան, ոչինչ»:

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

סטודנט - עוֹזֶרֶת־בית

סטודנטים עוסקים בַּעֲבודות שונות כְּדֵי לְפַרְנֵס את עַצְמָם. יש סטודנטים שומרי לילה, מְלַצְּרִים, גַּנָּנִים[1], פּוֹעֲלֵי בִּנְיָן וַאֲפילו עוזרות־בית[2].

פִּנְחָס לומד ביולוגיה ועובד עוֹזֶרֶת־בית. הוא אומר: "אני אוהב עבודות־בית. אני לא רוצה להיות פָּקִיד. אני שונֵא גְּרוּת וּמְשֹׁרְדִים. לָכֵן הֶחְלַטְתִּי לַעֲבוד כְּעוֹזֶרֶת־בית[3]. זאת עבודה טובה יותר מעבודות אחרות וְהִיא מוצאת חֵן בְּעֵינַי". אֶפשר לַעֲבוד מְעַט וּלְהַרוויח הרבה". פִּנְחָס הוא בֵּן לְמִשפחה מְרוּבַּת־יְלָדים[4]. יש לו חֲמישה אחים. מגיל צָעיר הוא היה מוכרח לַעֲזור לְאִמו בַּעבודות הבית. היום הוא "מוּמְחֶה" בִּשטיפת כֵּלים, בַּכביסה[5] וּבִשטיפת רצפה. כאשר הִגיע פִּנְחָס בַּפַּעַם הָרִאשונה לַעבודה, לא הֵבִינה בַּעֲלַת הבית מדוע בא אֵלֶיהָ פִּנְחָס. היא אמרה: "מִשֶּׁהוּ לא בְּסֵדֶר. זאת טָעות! בִּיקַשְׁתִּי שֶׁיִּשלחו[6] לי עוֹזֶרֶת־בית". "אני הָעוֹזֶרֶת" ענה פִּנְחָס. "לא יכול להיות! אני רוצה בָּחורה, שֶׁתַּעֲזוֹר לי לִשטוף כֵּלים, לִשטוף רצפה, לְכַבֵּס..." "נסי[7] אותי וְתִרְאִי[8] בְּעצמך. אני בָּטוּחַ שֶׁלֹּא תִּצְטַעֲרִי[9]" אמר פִּנְחָס. בַּעֲלַת הבית הִסכימה לְנַסות את פִּנְחָס, וְהיום היא לא רוצה עוֹזֶרֶת־בית אֲחֶרֶת. היא חוֹשֶׁבֶת שֶׁהָעוֹזֶרֶת שלה היא הָכִי טובה[10].

פִּנְחָס אומר: "יש אנשים שֶׁאומרים שֶׁעבודות־בית - כביסה, שטיפת כֵּלים, בִּישול[11]. הן לא בִּשביל גֶּבֶר. אני חושב שֶׁלֹּא צריך לְהַתְבַּיֵּשׁ בְּשום עבודה[12]".

דרך לעיתון

סגן נְשִׂיא[13] ארה"ב יָבוא לְבִיקוּר

סגן נְשִׂיא ארה"ב יָבֹא בְּיִשְׂרָאֵל בְּסוף החודש, בְּיום הַעֲצָמָאוּת של ישראל. זו הַפַּעַם הָרִאשונה שֶׁסגן נְשִׂיא ארה"ב מְבַקֵּר בִּיקוּר[14] רשמי בְּיִשְׂרָאֵל. רק פַּעַם אחת בִּיקֵּר בְּיִשְׂרָאֵל מנהיג אֲמֶרִיקָנִי חָשוּב יותר. זה היה הַנָּשִׂיא ריצ'ארד ניקסון, שֶׁבִּיקֵּר בְּיִשְׂרָאֵל חודשים מְעַטִּים לִפְנֵי שֶׁהִתְפַּטֵּר בִּשנת 1974[1].

[1] אֶלֶף תשע מאות שבעים וארבע

סגן נשיא ארה"ב יבקר במצרים

סגן הנשיא של ארצות־הברית יבקר גם במצרים, אחרי ביקורו בישראל. הוא רוצה לקבל מנשיא מצרים הצעות חדשות בעניין הפלסטינים והשטחים. הוא יגיע לישראל ביום ו׳ השבוע. איתו יבואו גם מנהיגים יהודיים מארצות־הברית.

[1] 22.6.1. [2] 29.2. [3] 30.4.1. [4] 35.5. [5] 48.2. [6] 10.6. [7] 35.7. [8] 34.2. [9] 44.1. [10] 46.4. [11] 39.11. [12] 48.1. [13] 34.1. [14] 41.3. [15] 10.7. [16] 48.3. [17] 36.5. [18] 39.5. [19] 31.7.

② *Թարգմանեք.*

1. Ես ատում եմ արթնանալ վաղ առավոտյան և աշխատանքի գնալ: 2. Նա բոլորին ասում է, որ ճաշ եփելու մեծ մասնագետ է: 3. Նա մինչև հիմա չի ամուսնացել, որովհետև դեռ իսկական տղամարդ է փնտրում և չի կարողանում գտնել նրան: 4. Ես շատ եմ ափսոսում, որ չես կարողանա վաղը մեզ հետ լինել: 5. Ես ստիպված եմ աշխատել ամբողջ օրը, որպեսզի ապահովեմ իմ բազմազավակ ընտանիքի ապրուստը: 6. Այգու դարպասի մոտ պահակը մի փոքրիկ սևաչյա աղջիկ տեսավ: 7. Երբ վերջացնեմ լվանալ ամանները, կսկսեմ լվանալ հատակը: 8. Ինձ չհաջողվեց ավարտել այս գործը մի մեծ սխալի պատճառով: 9. Ես չեմ կարողանա քեզ հետ երեկույթի գնալ, որովհետև ամեն շաբաթ օր մեծ լվացք ունեմ: 10. Բազմազավակ ընտանիքներն այս տարի կառավարությունից օգնություն ստանալու հույս ունեն: 11. Փոխնախագահը հայտարարեց, որ համաձայն չէ կառավարության նոր առաջարկի հետ: 12. Պատվիրակության ղեկավարն օդանավակայանում հայտարարեց, որ պատրաստվում է արտաքին գործերի նախարարի հետ քննարկել հարաբերությունները երկու պետությունների միջև: 13. Ֆինանսների նախարարը հայտարարեց, որ մինչև տարվա վերջն անհնար կլինի կանգնեցնել աղաճը: 14. Նախարարի տեղակալն ասաց, որ մտադիր չէ տեսություններ հարցեր քննարկել: 15. Մինչև հիմա չգիտեն, թե ինչու պաշտոնաթող եղավ պաշտպանության նախարարը: 16. Փոխնախագահը ճապոնական պատվիրակության հետ հանդիպեց նախագահի պալատում: 17. Պաղեստինցիների առաջնորդները մինչև տարվա վերջ պետք է պատասխան տան նոր առաջարկներին: 18. Անկախության օրը՝ հուլիսի 4-ը, Միացյալ Նահանգների կարևորագույն տոնն է: 19. Արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը կնախապատրաստի նախագահի պաշտոնական այցը: 20. Մասնագետները համոզված են, որ այս տարածքում շատ վտանգավոր է ատոմային ռեակտոր կառուցել:

49 ארבעים וְתֵשַׁע

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

"מאה שערים"

"מאה שערים" היא השכונה הרביעית שקמה מחוץ לחומות העיר העתיקה של ירושלים. בשנת 1875[1] גמרו לבנות בה עשרה בתים. היא הייתה רחוקה מהעיר העתיקה, והיה מסוכן לגור בה. לכן בנו את הבתים קרובים זה לזה כמו חומה. בתוך חומת הבתים הייתה חצר גדולה. באמצע החצר היה בור מים של כל השכונה. בחצר היה גם בית־כנסת וגם תנור גדול. בתנור זה אפו אנשי[2] השכונה לחם ועוגות. במשך הזמן בנו הרבה בתים בתוך החצר. עכשיו קשה לראות שהיתה שם פעם[3] חצר.

מדוע קוראים לשכונה "מאה שערים"? אולי מפני שרצו לבנות בה מאה בתים. ויש אומרים[4] שקראו לשכונה בשם זה, כי היו בה מאה שערים. אבל, באמת, יש בה רק שישה שערים.

בשכונה גרים יהודים דתיים מאוד. ברחובות השכונה רואים גברים עם פאות וזקנים ונשים עם מטפחות־ראש. בשבתות שקט בשכונה, ולא עוברות בה מכוניות. על הקירות ברחובות כתוב בעברית ולפעמים גם ביידיש: "בת ישראל, התורה מחכה אותך ללבוש תלבושת[5] צנועה!"

דרך לעיתון

שר הקליטה: "הַשלייה תגדל"

בפגישה עם עולים חדשים מדרום[6]־אַמריקה אמר שר הקליטה, כי הוא מקווה שבשנה הבאה יגדל מספר העולים לארץ. הוא קרא[7] לישראלים להתפוגנן[8] לקליטת העולים.

---

[1] אלף שמונה מאות שבעים וחמש
[2] אלה שמתאמצים
[3] אלה שרצה

כל קצין צריך לשאת נשק

שי' המלחמה הודיע, כי כל קצין בְּמָדים צריך לָשֵׂאת נֶשֶׁק, גם כְּשֶׁהוא מחוץ לַמַּחֲנֶה. הקצין אינו[1] צריך לָשֵׂאת נשק כְּשֶׁהוא לוֹבֵשׁ בְּגָדִים אֲזְרָחִיים. עד עכשיו היו קצינים צריכים לָשֵׂאת נֶשֶׁק רק בְּתוֹךְ הַמַּחֲנֶה.

[1] 6.20. [2] 2.12. [3] 34.2. [4] 24.4. [5] 45.1.

② *Թարգմանեք.*

1. Բարձր պարիսպների պատճառով զինվորները չկարողացան քաղաք մտնել և վերադարձան իրենց ճամբարը: 2. Ուշ ժամին մեր քաղաքում շատ վտանգավոր է զբոսնել փողոցներով: 3. Ժամանակի ընթացքում քաղաքի կենտրոնում կառուցեցին բազմաթիվ նոր շենքեր: 4. Կինս շատ լավ է թխում, սակայն, ցավոք սրտի, նա չի սիրում թխել: 5. Ես չճանաչեցի կնոջդ գլխաշորով: 6. Նա մորուք ունի, որովհետև ամեն առավոտ սափրվելուց ձանձրացել է: 7. Դու ասում էիր, որ նա համեստ է, սակայն նա անդադար խոսում է իր մասին: 8. Ես կարծում եմ, որ չարժե այս հագուստով գնալ համերգի, անհրաժեշտ է ավելի համեստ մի բան հագնել: 9. Կրոնը պարտադրում է մահմեդականներին աղոթել օրական հինգ անգամ: 10. Անդրավարտիքով կանանց չարժե մտնել կրոնական հրեաների թաղերը: 11. Երբ փոքր էի, երազում էի սպա լինել, համազգեստ հագնել և զենք կրել: 12. Հրամանատարն ասաց զինվորներին, որ վաղը նրանք չեն կարողանա լքել ճամբարը: 13. Եթե հայրենադարձությունն ավելանա, ինչպես հայտարարում է հայրենադարձության նախարարը, հայրենադարձներին շատ դժվար կլինի աշխատանք գտնել Իսրայելում: 14. Մեր երկրում անհնար է խանութում զենք գնել: 15. Հաջորդ ամիս արտաքին գործերի նախարարը կայցելի Հարավային Ամերիկայի մի քանի երկրներ: 16. Ոստիկանը ոստիկան է, նույնիսկ երբ քաղաքացիական հագուստ է կրում: 17. Միայն հիմա եմ ես հասկանում, թե որքան կարևոր էր նախապատրաստվել այս դժվար ժամանակներին: 18. Օդանավակայանում ես խոպոպներով բազմաթիվ տղամարդկանց տեսա, ովքեր գրքերը ձեռքերին միասին աղոթում էին: 19. Համալսարանում ես գերմաներեն և արամեերեն եմ ուսումնասիրել, ուստի կարողացա հասկանալ, թե ինչ է գրված իդիշով այս թղթի պատերի վրա: 20. Հավատացյալ հրեաներն ամեն օր մի քանի ժամ Թորա են կարդում:

50 חֲמִישִׁים

Ա՛Լ ԲԱՅԵՐԸ לעֲפָנָ ԿԱՌՈՒՑՈՒՄ

50.1. נקרא «կոչվել, ընթերցվել» բայի ենթակայական դերբայի ձևերն են՝

נִקְרָא – נִקְרֵאת – נִקְרָאִים – נִקְרָאוֹת

50.2. Անցյալ ժամանակ.

אני	נִקְרֵאתִי	אנחנו	נִקְרָאנוּ
אתה	נִקְרָאתָ	אתם	נִקְרָאתֶם
את	נִקְרָאת	אתן	נִקְרָאתֶן
הוא	נִקְרָא	הם	נִקְרְאוּ
היא	נִקְרְאָה	הן	נִקְרְאוּ

50.3. Ապառնի ժամանակ.

אני	אֶקָּרֵא	אנחנו	נִיקָּרֵא
אתה	תִּיקָּרֵא	אתם	תִּיקָּרְאוּ
את	תִּיקָּרְאִי	אתן	תִּיקָּרְאוּ
הוא	יִיקָּרֵא	הם	יִיקָּרְאוּ
היא	תִּיקָּרֵא	הן	יִיקָּרְאוּ

50.4. Հրամայական եղանակ՝ הִיקָּרֵא / הִיקָּרְאִי / הִיקָּרְאוּ:

50.5. Անորոշ դերբայի ձևն է לְהִיקָּרֵא:

① *Բոլոր ժամանակներում խոնարհեք* נמצא *բայը և կազմեք նրա հրամայական եղանակի ու անորոշ դերբայի ձևերը:*

② *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

יַם־הַמֶּלַח

יַם־הַמֶּלַח הוא הַמָּקוֹם הַנָּמוּךְ בְּיוֹתֵר עַל פְּנֵי[1] כַּדּוּר־הָאָרֶץ - כְּמַעַט 400 מֶטֶר[2] מִתַּחַת פְּנֵי־הַיָּם. יַם־הַמֶּלַח הוּא בְּעַצְמוֹ אַגַּם גָּדוֹל בֵּין יִשְׂרָאֵל לְיַרְדֵּן[3]. יֵשׁ בָּעוֹלָם אֲגַמִּים הַרְבֵּה יוֹתֵר גְּדוֹלִים מִמֶּנּוּ[4], אֲבָל הוּא מְיוּחָד מִמֶּנּוּ, כִּי בְּמַיִם שֶׁלּוֹ יֵשׁ הַרְבֵּה מֶלַח וּמִינְרָלִים וְלָכֵן הוּא נִקְרָא[5] "יַם־הַמֶּלַח". בִּגְלַל הָאַחוּז הַגָּבוֹהַּ שֶׁל מֶלַח וּמִינְרָלִים שׁוּם בַּעַל־חַיִּים[6] לֹא יָכוֹל לִחְיוֹת בּוֹ וְשׁוּם צֶמַח[7] לֹא יָכוֹל לִגְדּוֹל בּוֹ, וּכְשֶׁפּוּת אַחֲרוֹת הוּא נִקְרָא "יַם־הַמָּוֶת". אֲנָשִׁים מִכָּל הָעוֹלָם בָּאִים לְיַם־הַמֶּלַח, כִּי הַמַּיִם שֶׁלּוֹ טוֹבִים לְגוּף - הֵם מַרְפְּאִים מַעֲצָמִים וּמַחֲלוֹת. בְּסְבִיבַת שֶׁל יַם־הַמֶּלַח יֵשׁ הַרְבֵּה מְלוֹנוֹת. זֶהוּ[8] אֶחָד מֵאֵזּוֹרֵי הַתַּיָּרוּת הַחֲשׁוּבִים בְּיוֹתֵר בְּיִשְׂרָאֵל וּבְיַרְדֵּן.

לָמָּה יֵשׁ בְּיַם־הַמֶּלַח כָּל־כָּךְ הַרְבֵּה מִינְרָלִים וּמֶלַח? הָאֲגַם נִמְצָא[9] בְּמִדְבַּר יְהוּדָה, אֵזוֹר חַם וְיָבֵשׁ מְאוֹד. הַמַּיִם שֶׁמַּגִּיעִים אֵלָיו מִצָּפוֹן מִתְיַבְּשִׁים מֵהַר מְאוֹד בְּגְלַל הַחוֹם וּמַשְׁאִירִים אֶת כָּל הַמִּינְרָלִים וְהַמֶּלַח בָּאֲגַם. הַמַּיִם הַמְּלוּחִים שֶׁל יַם־הַמֶּלַח דּוֹמִים יוֹתֵר לְשֶׁמֶן מֵאֲשֶׁר לְמַיִם. אָסוּר לִשְׁתּוֹת אוֹתָם, וְאִי־אֶפְשָׁר לִצְלוֹל בָּהֶם, לָכֵן זֶה לֹא מְסוּכָּן לִשְׁחוֹת בְּיַם־הַמֶּלַח.

דֶּרֶךְ לְעִיתּוֹן

גִּידוּל[10] בְּמִסְפַּר הָעוֹלִים

בַּחֹדֶשׁ מַאי עָלוּ אַרְצָה[11] יוֹתֵר מִ־3000[12] אִישׁ[13]. זֶהוּ[14] גִּידוּל שֶׁל 25 אֲחוּזִים לְעוּמַּת חֹדֶשׁ מַאי בַּשָּׁנָה שֶׁעָבְרָה. הַשָּׁנָה גָּדֵל מִסְפַּר הָעוֹלִים מֵאַרְגֶנְטִינָה וּמֵמַעֲרַב־אֵירוֹפָּה. לְעוּמַּת הַגִּידוּל בְּמִסְפַּר הָעוֹלִים מִמְّדִינוֹת אֵלֶּה, יֵשׁ יְרִידָה[15] בְּמִסְפַּר הָעוֹלִים מֵרוּסִיָּה. זֶה מִפְּנֵי שֶׁיּוֹתֵר מִמַּחֲצִית הַיְּהוּדִים שֶׁיּוֹצְאִים מֵרוּסִיָּה לֹא מַגִּיעִים לְיִשְׂרָאֵל. בְּדֶרֶךְ לְאֶרֶץ רַבִּים[16] נִשְׁאָרִים בְּאֵירוֹפָּה, אֲחֵרִים נוֹסְעִים לְאַרְה"ב.

מִשְׂרַד הַחִינּוּךְ קוֹרֵא לְאֶזְרָחִים

בִּמְקוֹמוֹת שׁוֹנִים בָּאָרֶץ יֵשׁ יְלָדִים שֶׁאֵינָם הוֹלְכִים[17] לְבֵית־סֵפֶר. הֵם יוֹשְׁבִים בַּבַּיִת אוֹ מְטַיְּלִים בְּרְחוֹבוֹת, בְּלִי לַעֲשׂוֹת[18] כְּלוּם. לִפְעָמִים הֵם עוֹזְרִים לְהוֹרֵיהֶם בַּעֲבוֹדָתָם. מִשְׂרַד הַחִינּוּךְ מְבַקֵּשׁ מִכָּל אֶזְרְחֵי[19] הַמְּדִינָה לְהוֹדִיעַ לוֹ עַל כָּל יֶלֶד שֶׁאֵינוֹ לוֹמֵד[20] וְאֵינוֹ עוֹבֵד[21]. כֵּךְ יַעֲזְרוּ[22] הָאֶזְרָחִים לְמִשְׂרַד הַחִינּוּךְ לְהַחֲזִיר אֶת הַיְלָדִים הָאֵלֶּה לְלִימּוּדִים.

[1] 28.1. [2] 41.4. [3] 34.7. [4] 50.1. [5] 48.3. [6] 4.11. [7] 45.2. [8] 10.7. [9] 31.6. [10] 32.9. [11] 10.6. [12] 45.1. [13] 44.1.

[i] «շատերը»:
[ii] «առանց անելու»:

③ *Թարգմանեք.*

1. Շատերն ասում են, որ մեծ կենդանի են տեսել այս լճում: 2. Մեռյալ ծովում հեշտ է լողալ, որովհետև նրա աղի ջրի մեջ հնարավոր չէ սուզվել: 3. Այս վայրը հպակի է իր տեսակի մեջ, որովհետև ամենացածրն է երկրագնդի վրա: 4. Ես կարծում եմ, որ չարժե դիտել մի կինոնկար, որը կոչվում է «Մեր և մահ»: 5. Վարչապետն իր հիվանդության պատճառով արտասահման այցի չմեկնեց: 6. Երկրի հյուսիսում մեծ լիճ է գտնվում, և այնտեղ երբեմն անձրև է գալիս: 7. Նա ավելի նման է մորը, քան հորը: 8. Այս շրջանում շատ հյուրանոցներ կան, որովհետև զբոսաշրջիկները գալիս են այստեղ ամբողջ աշխարհից: 9. Ասում են, որ այս բույսը շատ արագ վերքեր է բուժում: 10. Կրթության նախարարն ասում է, որ երեխաներին անհրաժեշտ է փողոցներից վերադարձնել դպրոցներ: 11. Անապատը, որը գտնվում է Իսրայելի հարավում, կոչվում է Նեգև: 12. Կառավարությունն ուզում է, որ նոր հայրենադարձները բնակվեն և աշխատեն փոքր քաղաքներում: 13. Պետությունը, որը երեք հազար տարի առաջ գտնվում էր Սիրիայի հյուսիսում, կոչվում էր «Մարի»: 14. Նոր քաղաքը, որը կառուցում են հյուսիսում, կոչվում է «Արևի քաղաք»: 15. Աղքատ երկրներում ոչ բոլոր երեխաներն են դպրոց գնում, որովհետև շատերը ստիպված են աշխատել և օգնել իրենց ծնողներին դրամ վաստակել: 16. Դու ամբողջ օրը տանն ես նստած առանց որևէ բան անելու, բավակա՛ն է արդեն: 17. Մի՛ հարցրու՝ ի՞նչ կարող է քո երկիրն անել քեզ համար, հարցրո՛ւ, թե դու ի՞նչ կարող ես անել երկրիդ համար: 18. Ես կարծում եմ, որ դպրոցներում պետք է ոչ միայն գրել և կարդալ սովորեցնել, այլ նաև ինչպես լավ քաղաքացի լինել: 19. Անցած տարվա դիմաց այս տարի արդյունաբերությունում կար 5-տոկոսանոց աճ: 20. Արդյունաբերությունում աճի դիմաց կար 10-տոկոսանոց անկում Եվրոպայի երկրների հետ առևտրում:

51 חֲמישים ואחת

«ԵՐԲԵՔ» ԲԱՌԸ

51.1. «Երբեք» բառը եբրայերենում ունի երեք իմաստային տարբերակ.

ա) מֵעוֹלָם, եթե գործողությունը վերաբերում է անցյալին՝ אני מעולם לא מעולם לא היו בעירנו ביקרתי במצרים «ես երբեք չեմ այցելել Եգիպտոս», «մեր քաղաքում երբեք այսքան ցածր ջերմաստիճան չի եղել»:

բ) לְעוֹלָם, եթե բայն ապառնի ժամանակում է՝ אני לעולם לא אאמין לך «ես երբեք քեզ չեմ հավատա», לעולם לא אֶעֱזוֹב אותך «ես քեզ երբեք չեմ լքի»:

գ) אף פַּעַם (բառացիորեն՝ «ոչ մի անգամ»), ցանկացած ժամանակային ենթատեքստում կամ դրանից դուրս՝ אף פעם לא מאוחר ללמוד «երբեք ուշ չէ սովորել», אני אף פעם לא שותה קפה בבוקר «ես առավոտյան երբեք սուրճ չեմ խմում», אף פעם לא תֵדַע שֶׁאֲהַבְתִּי אותה «նա երբեք չի իմանա, որ ես նրան սիրել եմ», אף פעם אני לא אֹכַלְתִּי גבינה ולא אֹכַל «ես կյանքում երբեք պանիր չեմ կերել և չեմ ուտի»:

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

בְּגָדִים וּמֶזֶג־הָאֲוִיר

בקיץ, כְּשֶׁחַם לי, אני לוֹבֵשׁ בְּגָדִים קַצָּרִים, שוֹתֶה רק מִשְׁקָאוֹת קרים וְהוֹלֵךְ לַיָּם או לַבְּרֵיכָה. אִישְׁתִּי אוֹמֶרֶת, שֶׁבַּקַּיִץ לוֹבְשִׁים בְּגָדִים יותר צְבָעוֹנִיִּים. אני לא מבין למה, אבל שִׂמְתִּי לֵב[1] שֶׁהִיא צוֹדֶקֶת: בַּקַּיִץ אנשים בָּאֱמֶת לוֹבְשִׁים בְּגָדִים פְּרְחוֹנִיִּים, וּבַחוֹרֶף כְּמַעַט שֶׁלֹּא. בְּגָדִים פְּרְחוֹנִיִּים הם בְּדֶרֶךְ כְּלָל קַצָּרִים או אֲבִיבִּיִּים. אֶפְשָׁר לְהַשּׁוּב שֶׁבְּגָדִים פְּרְחוֹנִיִּים מְסַמְּמִים פְּחוֹת מִבְּגָדִים בְּצֶבַע אֶחָד. מה

[1] «ուշադրություն դարձրի»:

רואים בָּרְחוֹב כְּשִׁיּוּרֵד גֶּשֶׁם וּכְשֶׁלֹּא־נִשְׁקָר? רואים הרבה בְּגָדִים כֵּהִים וּמְטָרִיּוֹת צִבְעוֹנִיּוֹת. מֵעִין שֶׁדַּוּוּקָא לְמִטְרִיּוֹת יֵשׁ אופי אֲבִיבִּי!

הָאֱמֶת היא[1], שֶׁבָּאָרֶץ לא כֹּל־כָּךְ קַר, גם בַּחוֹרֶף. נָכוֹן שֶׁבִּירוּשָׁלַיִם וּבַגָּלִיל יֵשׁ לִפְעָמִים שֶׁלֶג, אבל הַטֶּמְפֶּרַטּוּרָה אף פַּעַם[2] לא יוֹרֶדֶת הרבה מִתַּחַת לָאֶפֶס. בָּאָרֶץ הַקַּיִץ אָרוּךְ וְהַחוֹרֶף קָצָר וְקַל. בָּאֵילַת, לְמָשָׁל, כְּמַעַט שֶׁאֵין חוֹרֶף, וּבְתֵל־אָבִיב יֵשׁ חוֹרֶף של כמה חודשים, אבל זֶהוּ[3] חוֹרֶף קָרִיר, וְלֹא קַר. בִּירוּשָׁלַיִם קַר יותר. אני בָּטוּחַ שֶׁבְּאָרוֹן־הַבְּגָדִים של תֵּל־אָבִיבִּי, של קְאִילִתִּי וְשל הִירוּשָׁלַמִּי יֵשׁ בְּגָדִים קִצָּיִים דֵּי דומים, אבל בְּגָדִים חוֹרְפִּיִּים אחרים לְגַמְרֵי. אֵילִתִּי שֶׁנּוֹסֵעַ לִירוּשָׁלַיִם בַּחוֹרֶף, צָרִיךְ לִקְנוֹת בְּגָדִים שֶׁהוּא מְעוֹלָם[4] לא לָבַשׁ וּלְעוֹלָם[5] לא יִלְבַּשׁ[6] בָּאֵילַת. בְּעֻמָּם, אני בְּכֹלָל לא בָּטוּחַ שֶׁיּוּכַל יִמְצָא[7] בַּחֲנֻיּוֹת בָּאֵילַת בְּגָדִים שֶׁמַּתְאִימִים לַחוֹרֶף בִּירוּשָׁלַיִם.

דרך לעיתון

מַחְסוֹר בְּדִירוֹת

השָׁנָה יִהְיֶה מַחְסוֹר בְּדִירוֹת זוֹלוֹת. בַּשָּׁנִים 1991-1996[8] בָּנָה מִשְׂרַד השיכון כ־10.000[9] דִּירוֹת לְזוּגוֹת צְעִירִים, אבל מִסְפָּר זה של דירות לא יַסְפִּיק[1] השָׁנָה. בַּפְּגִישָׁה עם זוגות צְעִירִים אָמַר שר השיכון, כִּי מִשְׂרָדוֹ יַגְדִּיל[2] בָּעָתִיד את מִסְפַּר הדירות שֶׁהוּא בּוֹנֶה בְּעָרִים קטנות.

הַרְשָׁמָה[3] לְמוֹסְדוֹת[4] הַחִינּוּךְ

השָׁבוּעַ הִתְחִילָה הַרְשָׁמָה לְכָל מוֹסְדוֹת החינוך. הלימודים בְּמוֹסָדוֹת אֵלֶּה יַתְחִילוּ[5] כְּ־1 בְּסֶפְּטֶמְבֶּר.

תַּחֲזִית מֶזֶג־הָאֲוִיר: הַחוֹרֶף חוֹזֵר!

בְּיָמִים שלישי, רביעי וַחֲמישי יֵרְדוּ[6] גְּשָׁמִים בְּכל הָאָרֶץ. הַטֶּמְפֶּרַטּוּרוֹת יִהְיוּ נְמוּכוֹת וּבְהָרֵי הַצָּפוֹן יֵרֵד[7] שֶׁלֶג. זוהי[8] הַתַּחֲזִית של הַשֵּׁרוּת הַמֶּטֵאורוֹלוֹגִי.

[1] 51.1. [2] 45.2. [3] 34.3. [4] 34.4. [5] 30.4.1. [6] 32.9. [7] 39.1. [8] 14.5. [9] 37.1.

② *Թարգմանեք.*

1. Անցյալ տարի աշունն ավելի ցուրտ էր, քան ձմեռը: 2. Դու, իրոք, ուզում ես այս հարկավոր շորերով դասական երաժշտության համերգի՞ գնալ: 3. Մարդիկ այս քաղաքում բոլորովին ուրիշ են, նրանք մեզ նման չեն: 4. Ես երբեք չեմ մոռանա ձեր օգնությունը: 5. Ամռանը ես մտադիր եմ մնալ քաղաքում և առավոտից մինչև երեկո գիրք կարդալ: 6. Գունեղ շորերը գարնանային բնույթ ունեն, սակայն ես

[1] «ճշմարտությունն այն է»:
[2] אֶלֶף תשע מאות תשעים וְאַחַת (תשע״ים וְשָׁ״ם)

երբեք դրանք չեմ հագնում: 7. Ես չեմ սիրում, երբ երիտասարդ մարդիկ մուգ գույներ են հագնում: 8. Այսօր ես ուտում եմ միայն պաղպաղակ և խմում միայն պտղի վացուցիչ ըմպելիքներ: 9. Ուշադրություն դարձրո՛ւ, որ բոլոր տղամարդիկ այդ թաղամասում մորուք ունեն, և բոլոր կանայք՝ գլխաշորեր: 10. Ո՞վ կարող է ասել ինչո՞ւ է Իսրայելի անվտանգության ծառայությունը կոչվում Շին-Բեթ: 11. Օգ երևութաբանական ծառայությունն արև էր խոստանում, սակայն առավոտվանից անձրև է գալիս: 12. Դրա համար ես երբեք ուշադրություն չեմ դարձնում եղանակի կանխատեսմանը, ինչ կլինի՝ կլինի: 13. Եթե սար բարձրանաք, կկարողանաք խաղալ ձյան հետ, եթե իջնեք ծովի մոտ, կկարողանաք լողալ երեկոնում: 14. Փոքր քաղաքներում կարելի է գտնել ավելի էժան բնակարան, սակայն այնտեղ ոչ միշտ աշխատանք կա երիտասարդ մասնագետների համար: 15. Կառավարությունը երբեք չի քննարկել բնակարանների պակասի հարցը, սակայն պատրաստվում է դա անել վաղը: 16. Կրթական հաստատությունները լրջորեն բավականաչափ դրամ չեն ստանում: 17. Հաշվառումն արդեն վաղուց սկսվել է, դուք պետք է շտապեք: 18. Ճշմարտությունն այն է, որ ես նրան երբեք չեմ սիրել, միայն կարծել եմ, թե սիրում եմ: 19. Ես համոզված եմ, որ դրամը, որը դու ունես, քեզ չի հերիքի, որպեսզի գնես նույնիսկ մեկ սենյականոց բնակարան[1] փոքր քաղաքում: 20. Այս տարի պարապմունքները ուսումնական բոլոր հաստատություններում կսկսվեն սեպտեմբերի 3-ին:

[1] דירה בת חדר אחד

52 חֲמִישִׁים וּשְׁתַּיִם

נ"פ בְּעָבָר לְעַבְר קָאנוֹנִיזַציָה

52.1. נ"פ բայերը לעבר կառույցի ենթակայական դերբայում և անցյալ ժամանակում կորցնում են 1-ին արմատական נ տառը, որը կլանվում է נ կառույցակերտ հնչյունանցի կողմից՝ נגש ← ש(נ)נ «մոտենալ» (անորոշ դերբայը՝ לִגְשֶׁת):

52.2. Ենթակայական դերբայի ձևերն են՝ נגשת - נגשים - נגשת - נגש:

52.3. Անցյալ ժամանակ.

אני	נגשתי	אנחנו	נגשנו
אתה	נגשתָ	אתם	נגשתֶם
את	נגשת	אתן	נגשתֶן
הוא	נגש	הם	נגשו
היא	נגשה	הן	נגשו

52.4. Ապառնի ժամանակում לעבר կառույցի נ"פ բայերը ենթարկվում են ընդհանուր սկզբունքին (41.1.1.), սակայն որոշ բայեր, այդ թվում נגש բայը, ապառնիում նույնպես խոնարհվում են առանց נ արմատականի.

אני	אֶגַּש	אנחנו	נִגַּש
אתה	תִּגַּש	אתם	תִּגְשׁוּ
את	תִּגְשִׁי	אתן	תִּגְשׁוּ
הוא	יִגַּש	הם	יִגְשׁוּ
היא	תִּגַּש	הן	יִגְשׁוּ

52.5. Հրամայական եղանակի ձևերն են՝ גשו / גשי / גַּש:

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

נָשִׁים... נָשִׁים...

נשים, נשים, הן כּוּלָן דומות... אתה יודֵע מה קרה לי עם צִפּוֹרה? לִפני שבּוּע הִכּרתי אותה, וּשְׁמוּאֵל יָצָאנוּ לְכַלּוֹת. רק יָצָאנוּ[1] מֵהבּית, אמרה לי צִפּוֹרה: "אתה יודֵע, אני בְּעֹד שְׁוּיוֹן בֵּין גברים לְבֵין לְבֵין נשים[1]. בּוא נַעֲשֶׂה[2] הֶסכּם: פַּעַם אני אֲשַׁלֵּם וּפַעַם אתה תְּשַׁלֵּם". ניסיתי[3] לִהיות גֶּנְטְלְמֶן וְאָמַרתי: "נשים אף פַּעַם[4] לא מְשַׁלְּמוֹת". ניסיתי לְהִתּוֹנֵכֵּחַ איתה, אבל צִפּוֹרה היא אישה חֲזָקָה וְעַקְשָׁנִית. הִסכּמתי.

נו, טוב, נָסַעְנוּ בְּאוֹטוֹבּוּס הָעִירה. צִפּוֹרה שילמה. הָלַכְנוּ לְקוּלְנוֹע. אני שִׁלַּמתי בְּעֹד כַּרטיסים. רָאינוּ סֶרֶט לא רע. בַּהַפְסָקָה שָׁאֲלָה צִפּוֹרה בְּחִיּוּך: "אתה רוצה לִשתות מִיץ? אני צְמֵאָה מאוד". נו, אז שָׁתִינוּ. היא שילמה. זה היה התור שלה. אחרי הַסֶּרֶט הָלַכְנוּ לִרקוד בְּדִיסקוֹטֶק. זה היה חִיּוּרי. הֶסכֵּם זה הֶסכֵּם. כְּשֶׁיָּצָאנוּ מִשם שָׁאלתי: "אולי נֵלֵך לְמִסעדה לֶאֱכוֹל?" צִפּוֹרה אמרה שֶׁהיא כְּבָר אֲכֻלָה היום. אבל אני אמרתי שאני רָעֵב מאוד. נִכנסנוּ לְמִסעדה. לִפי חֶשבּוּנִי עכשיו היה תור צִפּוֹרה לְשַׁלֵּם. רָאיתי שהיא מוּדאָגֶת. הִזמַנתי אֲרוּחה בַּת שְׁלוֹשׁ מָנוֹת[1] גדולות וְטוֹבות. צִפּוֹרה הִזמינה קפה.

וְאז קָרָה הָאָסוֹן. רָאיתי אותו מֵרָחוֹק, אבל לא יָכוֹלתי[2] לַעֲשׂוֹת שוּם דָּבָר. מוֹכֵר גַּפְרוּרִים נִכנס לְמִסעדה וְהִתקָרֵב אֵלֵינוּ. עָשִׂיתי לו סִימָנִים של "לא" בְּיָדַיִם, אבל הוא נִגַּשׁ[2] לְשׁוּלְחָנֵנוּ וְשָׁאַל: "גַּפְרוּרִים?" "כּן" אמרה צִפּוֹרה, "אני כּל כּך צריכה גַּפְרוּרִים". וּמִיָּד אחר כּך היא הִזמינה בְּלֵב שָׁמֵחַ עוּגה גדולה לְקפה. אני בָּקוּשִׁי בָּלַעתי את הָאוֹכֶל.

בְּעֹד כַּרטיסי אוֹטוֹבּוּס הביתה שילמה צִפּוֹרה...

דרך לעיתון

חַיִּים חדשים של בַּת מַאה[1]

לִפני שבּוּע עָלְתָה אַרצה[1] אישה בַּת מַאה. בִּנמֵל־תְּעוּפה היא אמרה בְּחִיּוּך: "אני לא יוֹדֶעֶת, אם[1] אני אוּכַל[1] לַעֲבוֹד בְּקִיבּוּץ, אבל אני בְּטוּחה שֶׁיִּהיֶה לי טוב בָּאָרֶץ[1]." היא עָלְתָה לָאָרֶץ עם הבַּת וְעם הנֶכֶד וְהנֶכדה שלה.

זַמֶּרֶת[1] ישׂראלית בְּתַחֲרוּת בֵּין־לְאוּמִית

יָעֵל גָּל, זַמֶּרֶת בַּת 20 מֵחֵיפה, הִשתַּתפה[1] בְּתַחֲרוּת בֵּין־לְאוּמִית בְּפָרִיז. היא זָכתה בַּפְּרָס הָרִאשון בַּתַּחֲרוּת. בַּתַּחֲרוּת הִשתַּתפו 75 זַמָּרִים[1] וְזַמָּרוֹת[1] מִכָּל אַרצוֹת[1] אֵירוֹפּה.

[1] «հազիվ դուրս էինք եկել»:
[1] «երեք կերակրատեսակից բաղկացած ճաշ»:

הנָשים עָזרו לַמִּשטָרה

המִשטָרה עָצרה 7 גברים שֶׁשִּׁיחקו בְּקלָפים. על שולחן הקלָפים הָיוּ כְּ־4.000[1] שקל. הנשים עָזרו לַמִּשטָרה למצוא את הגברים בְּאֶחָד מִבָּתֵּי־הקפה. הן סִיפרו לַמִּשטָרה, כי בְּעלֵיהֶן מְכַזְּבִים את כּל הכּסף של המִשפחה בְּמִשחֲקֵי[1] הקלָפים.

[1] 41.4. [2] 46.1. [3] 26.4. [4] 51.1. [5] 40.1. [6] 52.3. [7] 11.3. [8] 31.6. [9] 31.5.1. [10] 40.2. [11] 22.6.2. [12] 27.1. [13] 22.6.1. [14] 30.4.1. [15] 32.9.

① *Թարգմանեք.*

1. Ես փորձում էի վիճել, սակայն, ի վերջո, ստիպված էի համաձայնվել նրա հետ: 2. Մինչև հիմա ես չեմ հասկանում՝ ի՞նչ է հավասարությունը կանանց և տղամարդկանց միջև: 3. Եղբայրս շատ կամակոր է, դրա համար շատ դժվար է վիճել նրա հետ: 4. Մի՛ մոտեցիր ինձ, ես չեմ ուզում տեսնել քեզ և խոսել քեզ հետ: 5. Այս լուցկին թաց է, տուր ինձ ուրիշ լուցկի: 6. Նա գիտի, որ ես երբեք նրան չեմ սիրել, սակայն միշտ ժպիտով է խոսում հետս: 7. Ընկերս հեռվից ձեռքերով նշաններ էր անում ինձ, սակայն ես ոչինչ չհասկացա: 8. Դու այնքան շատ ես կեր, որ նույնիսկ խոսում ես դժվարությամբ: 9. Ես շատ ծարավ եմ, սակայն վախենում եմ խմել այս ջուրը: 10. Իմ հաշվարկով նրանք արդեն պետք է տանը լինեն: 11. Ոստիկանությունը բոլոր քաղաքացիներին խնդրում է ուշ ժամին իրենց տներից դուրս չգալ: 12. Մեր երգիչները պատրաստվում են մասնակցել միջազգային մրցույթի և վստահ են, որ շահելու են առաջին մրցանակը: 13. Մեր երկրի պատվիրակությունը կմասնակցի միջազգային կոնֆերանսին, որը կբացվի հաջորդ շաբաթ Փարիզում: 14. Ոստիկանությունը ձերբակալեց գործարանի տնօրենին օդանավակայանում, երբ նա փորձում էր լքել երկիրը: 15. Թոռնիկս չի կարողանում քնել եթե ես նրան գիրք չեմ կարդում: 16. Մի՛ վատնիր քո բոլոր փոդերն առանց մտածելու: 17. Ես երբեք չեմ կարողանա հասկանալ, թե ինչպես է աշխատում համակարգիչը: 18. Այն երիտասարդ կանայք մոտեցան մեզ և ինչ-որ բան ասացին, սակայն մենք չհասկացանք նրանց լեզուն: 19. Երեք օր անց կինը վերջապես գտավ իր ամուսնուն քաղաքի հիվանդանոցներից մեկում: 20. Ես չեմ ուզում, որ դու մենակդ վճարես այս բոլոր թանկարժեք նվերների համար:

53 חֲמִישִׁים וּשְׁלוֹשׁ

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

53.1.1. Դերբայական դարձվածները, այսինքն՝ դերբայներն իրենց լրացումներով, իմաստով մոտ են־שֶׁ շաղկապով կազմված ստորադասական նախադասություններին הָאִישׁ הָעוֹלֶה בְּמַדְרֵגוֹת «աստիճաններով բարձրացող մարդը» = הָאִישׁ שֶׁעוֹלֶה בְּמַדְרֵגוֹת «մարդը, որը բարձրանում է աստիճաններով», הַמְּגַלְּגְּלִים הַנִּכְנָסִים לְעִיר הֵם רוֹמָאִים «քաղաք մտնող զինվորները հռոմեացիներ են», הַסִּפּוּר יָדוּעַ, הַקָּשׁוּר בְּמֶלֶךְ דָּוִיד «սա հայտնի պատմություն է, կապված Դավիթ արքայի հետ»: Դերբայի դիրքում կարող է հանդես գալ նաև בָּאָה՝ բառը רֹאֵה הַמֶּמְשָׁלָה יָבֹאוּ בְּאַזּוֹרִים הַצְּרִיכִים תְּמִיכָה כַּלְכָּלִית «Վարչապետը կայցելի տնտեսական աջակցության կարիք ունեցող շրջանները»: Դարձվածի դերբայը, անկախ գոյականի առումից, միշտ հանդես է գալիս հոդով:

53.1.2. Եթե դարձվածն ունի մեկից ավելի դերբայ, ապա հոդ է ստանում դրանցից միայն առաջինը՝ הָאִישׁ הָעוֹלֶה בְּמַדְרֵגוֹת וּמְדַבֵּר עִם הַיָּלֶד הוּא הַשָּׁכֵן שֶׁלִּי «աստիճաններով բարձրացող և երեխայի հետ խոսող մարդն իմ հարևանն է»:

Դերբայական դարձվածները հիմնականում բնորոշ են գրական լեզվին: Խոսակցականում ավելի տարածված են־שֶׁ շաղկապով կապակցությունները, առավել ևս, որ նրանք իմաստային առումով ավելի ճկուն են, քանի որ կարող են արտահայտել ժամանակային երանգավորումներ:

ԲԱՅԱԿԱՆ ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

53.2. נָפַל «ընկնել» բայը՝ פ״נ խմբի բայերի զգալի մասի պես ապառնի ժամանակում խոնարհվում է առանց 1-ին արմատական נ բաղաձայնի.

אני	אֶפּוֹל	אנחנו	נִפּוֹל
אתה	תִּפּוֹל	אתם	תִּפְּלוּ
את	תִּפְּלִי	אתן	תִּפְּלוּ
הוא	יִפּוֹל	הם	יִפְּלוּ
היא	תִּפּוֹל	הן	יִפְּלוּ

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԸ אֲשֶׁר

53.3. אֲשֶׁר «որը» հարաբերական շաղկապը, որը բավականին տարածված էր հին եբրայերենում, արդի եբրայերենում գործածվում է համեմատաբար հազվադեպ, հիմնականում «բարձր ոճի» տեքստերում (կարելի է համեմատել հայերենի «քանզի», «վասնզի» բառերի հետ), ինչպես նաև כַּאֲשֶׁר և מֵאֲשֶׁר բառերի կազմում: Իր իմաստով אֲשֶׁר շաղկապը համընկնում է־שֶׁ-ի հետ, երբ վերջինս գործածվում է որպես հարաբերական շաղկապ («որը»), բայց ոչ որպես ստորադասական («որ»)՝ הַסּוֹפֵר, אֲשֶׁר זָכָה (שֶׁזָּכָה) בְּפְרַס נוֹבֶל «գրողը, որը շահել է Նոբելյան մրցանակ»: Ինչպես և־שֶׁ կցական շաղկապը, אֲשֶׁר շաղկապը անփոփոխ է:

לְכָל ԲԱՌԸ ԺԽՏԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

53.4. לְכָל բառը אין մասնիկով ժխտական կապակցությունների մեջ թարգմանվում է «ոչ մի», այսինքն՝ իր իմաստով մոտ է שום բառին (48.3.)՝ אין לְכָל דֶּרֶךְ «ոչ մի ճանապարհ չկա», אין לְכָל אֶפְשָׁרוּת «ոչ մի հնարավորություն չկա»:

---

(1) Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.

מְצָדָה

סִיפּוּר מְצָדָה הוּא סִיפּוּר מְפוּרְסָם, הַקָּשׁוּר בַּמֶּרֶד הַגָּדוֹל שֶׁל הַיְּהוּדִים בָּרוֹמָאִים[1]. בִּשְׁנַת 70 לִסְפִירַת הַנּוֹצְרִים הָרְסוּ הָרוֹמָאִים אֶת יְרוּשָׁלַיִם וְשָׁרְפוּ אֶת בֵּית הַמִּקְדָּשׁ. כְּאֶלֶף יְהוּדִים בָּרְחוּ לִמְצָדָה, הַנִּמְצֵאת עַל הַר גָּבוֹהַּ לְיַד יַם הַמֶּלַח. הַמִּפְקָד שֶׁלָּהֶם הָיָה אֶלְעָזָר בֶּן יָאִיר. הֵם הֵכִינוּ הַרְבֵּה אוֹכֶל, וְהָיָה לָהֶם גַּם

---

[1] «հռոմեացիների դեմ»:

רב. הָרוֹמָאִים לֹא רָצוּ לוֹנַחַר עַל מְצָדָה, אֲבָל לֹא יָכְלוּ לִכְבּוֹשׁ אוֹתָהּ, מִפְּנֵי שֶׁהָיְתָה גְּבוֹהָה מְאוֹד. הַמִּצְוָה הָיְתָה קָשָׁה וַאֲרוּכָּה, וְרַק אַחֲרֵי יוֹתֵר מִשָּׁנָה הִצְלִיחוּ הָרוֹמָאִים לְהִיכָּנֵס לְמְצָדָה. כַּאֲשֶׁר הֵבִין אֶלְעָזָר בֶּן יָאִיר כִּי הָרוֹמָאִים יַצְלִיחוּ[6] לְהִיכָּנֵס לְמְצָדָה וְכִי אֵין כָּל דֶּרֶךְ[7] לְבְרוֹחַ, אָסַף אֶת הָאֲנָשִׁים שֶׁלּוֹ וְאָמַר לָהֶם: "נִלְחַמְנוּ בָּרוֹמָאִים כְּדֵי לִהְיוֹת חוֹפְשִׁיִּים, אֲנַחְנוּ לֹא רוֹצִים לִהְיוֹת עֲבָדִים. עָלֵינוּ לִבְחוֹר[8] בֵּין שְׁתֵּי בְּרֵרוֹת: גַּיְרוּרִים לְבֵין[9] חַיֵּי עֲבָדִים. טוֹב לָנוּ לָמוּת וְלֹא נִפּוֹל[10] בִּידֵי[11] הָרוֹמָאִים. נָמוּת[12] חוֹפְשִׁיִּים וְלֹא עֲבָדִים".

הָאֲנָשִׁים כּוּלָּם הִסְכִּימוּ. הֵם חָשְׁבוּ שֶׁטּוֹב יוֹתֵר לָמוּת מֵאֲשֶׁר לִהְיוֹת עֲבָדִים. כֹּל אֶחָד מִן הַגְּבָרִים הָרַג אֶת בְּנֵי מִשְׁפַּחְתּוֹ. עֲשָׂרָה גְּבָרִים הָרְגוּ אֶת כֹּל הָאַחֵרִים. אַחַר כָּךְ הָרַג אֶחָד אֶת הַתִּשְׁעָה הָאַחֵרִים וְאַחַר כָּךְ הָרַג אֶת עַצְמוֹ. כַּאֲשֶׁר נִכְנְסוּ הָרוֹמָאִים לְמְצָדָה, מָצְאוּ בָהּ 960 הֲרוּגִים. רַק אַחַר כָּךְ מָצְאוּ שְׁתֵּי נָשִׁים וְחָמִישָׁה יְלָדִים, שֶׁסִּיְּפְרוּ אֵיךְ מֵתוּ[13] אַנְשֵׁי[14] מְצָדָה.

דרך לעיתון

מיסים גבוהים על דירות ריקות

אין בארץ יש מחסור בדירות לזוגות צעירים ולעולים חדשים. מצד שני, יש בארץ כ-20[2] אלף דירות ריקות שאינן נרשמות בהן. בעלי הדירות האלה לא רוצים להשכיר אותן. משרד השיכון החליט, שאדם שלא גר בדירתו ולא משכיר אותה[3] לאחרים ישלם מס גבוה על דירתו הריקה.

ארנסט המינגוואי היה אומר[4]

ארנסט המינגוואי היה סופר מפורסם, אשר[5] זכה בפרס נובל לספרות בשנת 1954. הוא לא אהב אנשים שמדברים הרבה, וכך היה אומר: "די שנתיים כדי ללמוד לדבר, אבל צריך חמישים שנה כדי ללמוד את חכמת השתיקה".

בבית־משפט

השופט לנבי: "האם[6] אתה מודה[7] שגנבת את הכסף מהקופה?"
הנאשם: "אני מודה".
השופט: "אולי תסביר לנו איך יכולת לפתוח את הקופה?"
הנאשם: "אדוני השופט, אני לא מוכן לתת שיעורים חינם..."

[1] 53.1.1. [2] 30.4.1. [3] 40.1. [4] 39.1. [5] 53.4. [6] 35.8. [7] 41.4. [8] 53.2.
[9] 10.9. [10] 36.1. [11] 32.5. [12] 43.1. [13] 53.3. [14] 22.6.1. [15] 31.5.2. [16] 43.2.2.

② *Թարգմանեք.*

1. Պատմությունները հունական ու հռոմեական հերոսների մասին շատ հայտնի և սիրված էին Հին աշխարհում: 2. Տաճարում աղոթող հրեաները Երուսաղեմ են եկել Հուդայի բոլոր քաղաքներից: 3. Հռոմեացիները կարողացան արագ գրավել երկիրը, որովհետև հրեաներն ուժեղ բանակ և ուժեղ ղեկավար չունեին: 4. Բազմաթիվ պետություններ գնում են իսրայելյան զենքը, որովհետև այն ավելի էժան

է քան ռուսականը կամ ամերիկյանը: 5. Ապստամբության ղեկավարը հավաքեց իր զինվորներին և ասաց, որ փախուստի ոչ մի ճանապարհ չկա, և որ բոլորը [illegible] է ընտրեն ստրուկների կյանքի և հերոսների մահվան միջև: 6. Ուսանողը, [illegible] սպանեց վարչապետին, հերոս էր այս թաղի մարդկանց աչքերում: 7. Երկու [illegible] տարվա ընթացքում հրեաներն ամբողջ աշխարհում երազում էին վերադառնալ Երուսաղեմ: 8. Երբ հռոմեացիները մտան Երուսաղեմ, նրանք ավերեցին քաղաքի պարիսպները և այրեցին տաճարն ու թագավորի պալատը: 9. Ես [illegible] կարող վճարել բոլոր հարկերը, որովհետև անցյալ ամիս բոլորովին դրամ չեմ վաստակել: 10. Գողերը չկարողացան բանալ դրամարկղը և տարան (վերցրին) այն իրենց հետ: 11. Մի կողմից լավ է, որ քաղաքում բազմաթիվ ժամանակակից շենքեր են կառուցել, մյուս կողմից վատ է, որ գրեթե բոլոր բնակարանները նրանցում դատարկ են: 12. Ես որոշել եմ իմ երկրորդ բնակարանն ուսանողներին վարձով տալ, արդյոք պե՞տք է հարկ վճարեմ այն դրամից, որ կստանամ նրանցից: 13. Եթե ձեռքս մի քիչ դրամ ընկնի, ինձ սպիտակ կոստյում կգնեմ: 14. Դարո՞ղ ես արդյոք ասել՝ Իսրայելի վարչապետներից ո՞վ է ստացել խաղաղության Նոբելյան մրցանակ: 15. Պարոն արտաքին գործերի նախարար, ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ այս հանդիպման համար: 16. Դատավորը բոլորին խոստովանեց, որ երբեք այսքան ծեր գող չէր տեսել: 17. Եթե կուզեք, ես կրկնեցնեմ ձեզ, ինչպես կարելի է նորոգել այս սարքը: 18. Ես կարծում եմ, որ դու կհամաձայնվես, որ ավելի լավ է այսօր այստեղ մնալ, քան գիշերն այդքան երկար ճանապարհ ընկնել (դուրս գալ): 19. Այսօր ոչ մի հնարավորություն չկա իմանալու, թե ինչպես են մահացել այս բոլոր մարդիկ. արդյոք ինչ-որ մեկը նրանց սպանե՞լ է, թե՞ նրանք ինքներն իրենց են սպանել: 20. Ինձ երկու ամիս բավական է, որպեսզի սովորեմ նույնիսկ աշխարհի ամենադժվար լեզուն: 21. Մարդ տակ նստած և գիրք կարդացող մարդը քեռուս տղան է: 22. Եբրայերեն խոսող մարդկանցից ոչ ոք չկարողացավ կարդալ, թե ի՞նչ է գրված այս հինավուրց պարսպի վրա:

54 חֲמישים וארבע

ՀԻՍՈՒՍ ԵՎ ՀԻՍՈՒՍԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

54.1. Բայերը, որոնց 2-րդ և 3-րդ արմատականներն արտահայտված են միևնույն բաղաձայնով (גנן), հիսուս կառույցում ելման բայաձև են կազմում OO֟ կադապարով՝ կրկնվող բաղաձայններից մեկի սղումով՝ הָגַן «պաշտպանել»:

54.2. Անորոշ դերբայը կազմվում է OO֟לְהָ կադապարով՝ לְהָגֵן:

54.3. Ենթակայական դերբայի ձևերն են՝ מָגֵן - מָגֵנָה - מְגֻנִּים - מְגֻנּוֹת:

54.4. Անցյալ ժամանակ.

אני	הָגַנְתִּי	אנחנו	הָגַנּוּ
אתה	הָגַנְתָּ	אתם	הָגַנְתֶּם (הֲגַנְתֶּם)
את	הָגַנְתְּ	אתן	הָגַנְתֶּן (הֲגַנְתֶּן)
הוא	הָגַן	הם	הָגְנוּ
היא	הָגְנָה	הן	הָגְנוּ

54.5. Ապառնի ժամանակ.

אני	אָגֵן	אנחנו	נָגֵן
אתה	תָּגֵן	אתם	תָּגְנוּ
את	תָּגְנִי	אתן	תָּגְנוּ
הוא	יָגֵן	הם	יָגְנוּ
היא	תָּגֵן	הן	יָגְנוּ

54.6. Հրամայական եղանակ՝ הָגֵן / הָגְנִי / הָגְנוּ:

ՀԻՍՈՒՍ ԵՎ ՀԻՍՈՒՍԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

54.7. Որոշ բայեր הִתְפַּעֵל կառույցում հանդես են գալիս նת- նախածանցով, ինչը բային տալիս է կրավորական երանգ՝ נִתְקַבֵּל «ընդունվել», נִתְמָנָה «նշանակվել»: Այս ձևերը տարբերակելի են միայն անցյալ ժամանակում, քանի որ մյուս բոլոր բայաձևերը կազմվում են הִתְפַּעֵל կառույցի ընդհանուր սկզբունքներով (מִתְקַבֵּל, אֶתְקַבֵּל, לְהִתְקַבֵּל): Տեսականորեն הִתְפַּעֵל կառույցի ցանկացած բայ կարող է հանդես գալ נִתְפַּעֵל տարբերակով, սակայն իրականում բայերը հստակորեն տարբերակվում են ըստ הת- և נת- նախածանցների, և ճնշող մեծամասնությունը հարում է הִתְפַּעֵל հիմնական բանաձևին:

(1) *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

הכדוים בישראל

הכדוים בישראל גרים בעיקר בנגב הצפוני, בדרך למדבר יהודה. המטיל בסביבות באר־שבע יכול לראות את האוהלים השחורים שלהם. לפני שקמה מדינת ישראל נדדו הכדוים על פני שטחים גדולים. מ־1948 נודדים הכדוים בשטח קטן יותר בגלל הגבולות המדיניים.

מי הם הכדוים? הכדוים הם שבטים ערביים הַחַיִּים[1] במדבר. הם מגדלים עיזים, כבשים וגמלים. הם מפוזרים במדינות רבות. יש בדווים בערב הסעודית, בעיראק, בירדן, בסוריה ומעט בלבנון, במצרים, בסודאן וגם בישראל.

בשבט הבדווי יש כמה משפחות קרובות זה לזה[2]. בראש השבט עומד שיח, שהוא גם השופט. תפקיד השיח עובר מאב לבן, אבל לפעמים מקבל את התפקיד האיש החזק ביותר במשפחה. יש לבדווים מסורת עתיקה, ואף אחד, אפילו השיח, לא יכול לשנות אותה. הוא חייב לשמור אותה ולשפוט לפיה. במסורת זו יש שני מנהגים חשובים: הכנסת אורחים וגאולת דם.

הכנסת אורחים היא מנהג קדוש לכל בדווי, עשיר ועני. לפי מנהג זה, בעל הבית חייב לקבל לביתו לא רק קרובי משפחתו או חבריו, אלא גם זרים. בעל הבית צריך לתת אוכל לאורחיו ולהגן על חייהם. מנהג אחר הוא גאולת הדם: אם רצחו מישהו מבני המשפחה, המשפחה צריכה להרוג את הרוצח או את אחד מקרוביו.

המודרניזציה משפיעה גם על הבדווים. בישראל, למשל, עוברים הבדווים לאט־לאט לערים, ובמקום האוהלים בונים בתים מודרניים.

---

[1] Ուշադրություն դարձրեք, որ זה ձևը արտահայտության մեջ זה դերանունը կարող է պահպանել արական սեռի ձևը նույնիսկ իգական սեռի գոյականի հետ:
[2] «ըստ նրա»:

דרך לעיתון

דרוזי - מְפַקֵּד חֲטִיבָה

בְּעִבְרִית נִתְמְנָה זוֹ הַפַּעַם הָרִאשׁוֹנָה[ii] דרוזי לְתַפְקִיד מְפַקֵּד חֲטִיבָה. הוּא קִיבֵּל דַּרְגָּה של אַלּוּף־מִשְׁנֶה. זֶהוּ הַקָּצִין הַשֵּׁנִי בְּדַרְגַּת אַלּוּף־מִשְׁנֶה שֶׁהוּא דרוזי.

שֹׁר הַשִּׁיכּוּן מְבַקֵּר בְּכְפָרִים דרוזיים

שֹׁר הַשִּׁיכּוּן בִּיקֵּר בַּכְּפָרִים הדרוזיים בַּגָּלִיל. בִּזְמַן בִּיקּוּרוֹ הוּא הוֹדִיעַ, כִּי חַיָּלִים דרוזיים שֶׁנִּמְרוּ אֶת שֵׁרוּתָם בְּצַהַ"ל, יְקַבְּלוּ עֶזְרָה מִן הַמֶּמְשָׁלָה כְּמוֹ חַיָּלִים יְהוּדִיִּים.

שֹׁר הַמִּסְחָר וְהַתַּעֲשִׂייָה מְבַקֵּר בְּכְפָרִים עֲרָבִיִּים

שֹׁר הַמִּסְחָר וְהַתַּעֲשִׂייָה בִּיקֵּר בְּמִסְפַּר כְּפָרִים עֲרָבִיִּים. הוּא נִפְגַּשׁ עִם רָאשֵׁי הַכְּפָרִים, וְקָרָא לָהֶם לִפְעוֹל לְפִיתּוּחַ תַּעֲשִׂייָה בִּכְפָרֵיהֶם. הַשֹּׁר הִבְטִיחַ לַעֲזוֹר לְכָל מִפְעָל חָדָשׁ וְאָמַר, כִּי הַמֶּמְשָׁלָה תִּהְיֶה מוּכָנָה לְהַשְׁקִיעַ בַּמִּפְעָלִים הַחֲדָשִׁים.

[1] 40.3. [2] 53.1.1. [3] 54.2. [4] 54.7.

② *Թարգմաներ.*

1. Հինավուրց արաբական ցեղերն հայտնի էին իրենց գեղեցիկ բանաստեղծություններով: 2. Հրեաները, ինչպես և հայերը, սփռված են տարբեր երկրներով մեկ և տարբեր լեզուներով են խոսում: 3. Անապատում կարելի է միայն ուղտեր բուծել (աճեցնել), այլ կենդանիներ այստեղ չեն կարող ապրել ջրի պակասի պատճառով: 4. Բեդվիները մինչև այսօր պահպանում են իրենց հինավուրց սովորությունները և նույնիսկ դատում են ըստ դրանց: 5. Սահմանն այս երկու արաբական պետությունների միջև անցնում է անապատով: 6. Ոչինչ չի կարող ազդել այս հին ավանդույթի վրա, նույնիսկ ժամանակակից կյանքը: 7. Ոստիկանությունը չգիտի որտեղ փնտրել այդ վտանգավոր մարդասպանին և հույս ունի օգնություն ստանալ քաղաքացիներից: 8. Երբ հրեաները դեռ պետություն չունեին, նրանք քոչում էին անապատում իրենց այծերի և ոչխարների հետ և ապրում էին վրաններում: 9. Յուրաքանչյուր ցեղ պաշտպանում է իր տարածքի սահմանները, դրա համար այս տարածաշրջանում ցեղերի միջև միշտ պատերազմ է ընթանում (պատերազմ կա): 10. Յուրաքանչյուր սպա երազում է ստանալ նոր կոչում: 11. Հռոմեացիներն ասում էին՝ եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվի՛ր պատերազմի: 12. Ես չեմ կարող բանակ գնալ, որովհետև իմ կրոնը պարտադրում է ինձ զենք չկրել: 13. Բոլորս՝ տղամարդիկ և կանայք, զինվորներ ենք, մենք պաշտպանել և պաշտպանելու ենք մեր երկիրը զենքը ձեռքերիս: 14. Մինչև թա-

[i] *ցանկալ:*
[ii] «առաջին անգամը լինելով»:

զավորների ժամանակաշրջանը հրեական ցեղերի գլխին կանգնած էին «դատավորները»: 15. Դրուզները ծառայում են իսրայելյան բանակում՝ երկրի հրեա քաղաքացիների պես: 16. Դրուզները տարբերվում են մյուս արաբներից իրենց կրոնով ու սովորություններով, սակայն խոսում են նույն լեզվով: 17. Այս բարձր սարերում ապրող և տարբեր լեզուներով խոսող ցեղերը մինչ օրս պահպանում են արյան վրիժառության սովորությունը: 18. Սպան, որը գնդի հրամանատար էր նշանակվել, գեղապետի կոչում էր ստացել երկու տարի առաջ: 19. Բանակում ծառայելուց հետո գյուղապետի որդին վերադարձավ իր գյուղն ու սկսեց դասավանդել դպրոցում: 20. Վարչապետն ամեն օր խոսում է արդյունաբերության զարգացման մասին, սակայն իր կառավարությունը մտադիր չէ դրամ ներդնել նոր ձեռնարկությունների մեջ:

55 חמישים וחמש

10-ից բարձր դասական թվականները

55.1. Եբրայերենը չունի հատուկ ձևեր 10-ից բարձր դասական թվականների համար: Որպես այդպիսիք գործածվում են քանակական թվականները, որոնց կցվում է որոշիչ հոդ, և որոնք սեռով համաձայնեցվում են գոյականի հետ՝ המאה «դարը», השתים עשרה «12-րդ դարը», השישיר החמישים «12-րդ մրցանակը», הפרס השנים עשר «50-րդ դասը», המומה החמישים «50-րդ հարկը», הסיפור העשרים ושלושה «23-րդ պատմվածքը», הסטודנטית העשרים ושלוש «23-րդ ուսանողուհին»:

בלי նախդիրի դերանվանական վերջածանցների հետ

55.2. בלי նախդիրին կցվում են հոգնակի թվի դերանվանական վերջածանցները, ընդ որում, ինքը նախդիրը հնչյունափոխվում է.

בלעדי	בלעדינו
בלעדיך/בלעדייך	בלעדיכם/בלעדיכן
בלעדיו/בלעדיה	בלעדיהם/בלעדיהן

① *Կարդացեք, թարգմանեք և ստեղնաշարով հավաքեք հետևյալ տեքստը.*

ירושלים - עיר דוד המלך

יש כמה מקומות בירושלים ששמם קשור בשמו של דוד המלך. למשל, "מגדל דוד" ליד שער יפו ו"קבר דוד" בהר ציון. האם היו מקומות אלה בתוך ירושלים של המלך דוד, בתוך "עיר דוד"?

הארכיאולוגים חושבים שלא כך הדבר. הם אומרים שהמגדל ליד שער יפו הוא מתקופה יותר מאוחרת - מתקופת הבית השני, מימי הורדוס המלך (המאה הראשונה לפסה"נ). הם טוענים גם, שהקבר של דוד המלך לא יכול להיות בהר ציון, כי הר ציון רחוק מעיר דוד. סיפורים על "קבר דוד" בהר ציון התחילו רק במאה ה-12[1].

היום, אחרי חפירות ארכיאולוגיות של מאה שנה בערך, כבר יודעים איפה בדיוק היתה עיר דוד. עיר דוד היתה מדרום להר[2] הבית, הוא הר המוריה. גבולות העיר היו: מעין הגיחון ממזרח, ברכת השילוח בדרום והר המוריה בצפון. מעין הגיחון היה מקור[2] המים החשוב ביותר של ירושלים בתקופת מלחמה אי אפשר היה להביא משם מים לתוך העיר, ולכן בנה חזקיהו המלך תעלה מתחת לאדמה, כדי להעביר את המים ממעין הגיחון לתוך העיר. גם היום אפשר להיכנס לתעלה וללכת מה ממעין הגיחון עד ברכת השילוח.

